Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~753 13/X 38~~
~~010 20/XII 38~~
100 5/II 39

ՊՐՈՖ. Ռ. ՎԻՊՊԵՐ

ԴԱՍԱԳԻՐՔ
ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

30 MAY 2011
2 SEP 2006
9(3)
Վ-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

Պրոֆ. Ռ. Վ Ի Պ Պ Ե Ր

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

369
38

ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1925

12.08.2013

1313

№ 211

Տիրաժ 4,000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.

I

ՔԱՐԱԴԱՐԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Հնության ուսումնասիրությունը։ Պատմություն ենք մենք անվանում այն գիտությունը, որ ուսումնասիրում է մարդկային ցեղի բախտը յերկրագնդի վրա։ Այդ գիտությունը դյուրությամբ կարող է հավաքել բազմաթիվ տեղեկություններ մեր ժամանակին մերձավոր շրջանների մասին։ Քաղաքակրթված հասարակության մեջ հոգս են քաշում, որ անցյալի մասին հիշողություն մնա, գրի յեն անցկացնում յեղելությունները ու մարդկային կարգերը։ Բայց որքան ավելի յետ ենք գնում դեպի հին դարերը, այնքան ավելի քիչ ենք պատահում այդպիսի հոգատարության, այնքան ավելի քիչ են գրավոր հիշողությունները։

3000 տարի մեր ժամանակից առաջ, այսինքն 1000 տարի Քրիստոսից առաջ, Յեվրոպայում վոչ-վոք գրի չեր անցկացնում իրադարձությունները կամ իր ժամանակակիցների կենցաղը։ Յեթե մենք կամենում ենք վորևե բան իմանալ այդ ժամանակի և ավելի հին դարերի մասին, մենք հարկադրված ենք գետինը փորփրել, դուրս հանել նրա թաղված շերտերը, վորոնց վրա մարդիկ ապրել են միքանի հազար տարի առաջ։ Այն ժամանակ մեր առաջ յերևան են գալիս բնակարանների և գերեզմանների, գործիքների և զենքերի, անոթների, հագուստների, զարդարանքների և հին մարդկանց խաղալիքների մնացորդներ, վերջապես այդ մարդկանց սեփական մնացորդները, ինչպես նաև մնացորդները այն կենդանիների և բույսերի, վորոնք ծառայում եյին նրանց։ Այդ հետքերի հիման վրա կարելի յե պատկերացնել, թե ինչպես է յեղել մարդուն շրջապատող բնությունը, ինչպիսի տնտեսություն է նա վարել, ինչպես է նա հագնվելիս յեղել, ինչպես է նա աշխատել և ժամանակ անցկացրել։

Այդ մնացորդներն ուսումնասիրող գիտությունը մենք անվանում ենք **հնագիտություն։**

Այրաբնակ մարդիկ։ Ամենահին մարդկային բնակությունները մեր ժամանակից հարյուր հազարավոր տարիներով հեռու շրջանի յեն պատկանում։ Առաջ Յեվրոպայում կլիման տաք և խոնավ եր։ Այդ ժամանակաշրջանի մարդու մասին մենք գրեթե վոչինչ չգիտենք. հողի խորին շերտերում գտնվում են գործիքների նման սրածայր քարերի կույտեր, բայց դեռ չեն գտնվել մարդու մնացորդներ։ Հետո հսկայական սառուցները յերկարորեն ծածկեցին Յեվրոպայի կեսից ավելին. սառուցների մնացորդները մինչև այժմ կան Ալպերի բարձր գագաթների վրա։

Յերբ սառուցը մղվեց դեպի հյուսիս, մեր յերկրներում դեռ միքանի

հազար տարի ցուրտ եր: Այդ ժամանակ Յեվրոպայում թափառում եյին խոշոր կենդանիներ, վորոնք այժմ անհետացել են կամ շատ հազվադեպ են— ռնգեղջյուր, մամոնտ, այսինքն վիթխարի փիղ, վոր յերկար և խիտ բուրդ ուներ և խիստ ծռված ժանիքներ, բիսոն, հնադարյան ահագին ցուլ, վարազ, մեծ (այժմ հյուսիսային կոչվող) յեղջերու, այրերի առյուծ և այրակյաց արջ:

Այդ ժամանակի վայրենիների մասին կարելի յե վորոշ գաղափար կազմել: Խորը, հողի մեջ թաղված այրերից դուրս են հանում նրանց կմախքները, կտորտանքների կույտեր, վոր գործիքի տեղ են ծառայել նրանց,—ճաշացորդներ, վորոնցից յերևում ե, թե ինչ եյին նրանք վորպես սնունդ գործածում: Այդ մարդկանց կյանքը վտանգներով լի յեր. նրանց ապրուստի միջոցները շատ սուղ եյին: Տղամարդիկ դուրս եյին գալիս վորսորդության, հետապնդում եյին վայրենի կենդանիներին, հարմար տեղ եյին գտնում և սպանում եյին նրանց դագանակով, սուր փայտով, սուր վոսկրով կամ քարով: Նրանք հարձակվում եյին նոր սպանված կենդանու դիակի վրա, կտրում, դուրս եյին հանում վոսկրները և ագահորեն ծծում եյին տաք ուղեղը: Կանայք մնում եյին բնակարանների մոտ, հավաքում եյին վայրենի պտուղներ և սերմեր, գետնի տակից դուրս բերելով արմատիքներ: Իրենք այրերը, վորոնց մեջ մարդն ապաստարան եր գտնում ցրտից և փոթորկից, ապահով չեյին. մարդուն յերբեմն հաջողվում եր վորևե գազանից խլել նրա բունը, բայց հաճախ ինքն ել ստիպված եր լինում տեղի տալ ավելի սարսափելի հակառակորդի առջև: Այրակյաց մարդը հագուստ չուներ: Ցրտից նա պաշտպանվում եր սպանված գազանի մորթով. նրա յերկար մազերը ծածանվում եյին քամուց: Իր մարմինը նա ներկ եր քսում կամ նկար եր փորում նրա վրա: Նրա կյանքում վոչինչ կայուն բան չկար. հարևան անտառում վորսի կենդանիները վոչնչացնելուց հետո՝ նա ստիպված եր գցել իր բնակավայրը և նորը փնտռել:

Մի մեծ առավելություն ուներ նա համեմատած կենդանիների հետ. նա գիտեր կրակ անել ծառի չոր կտորների շփման միջոցով: Խարույկը, վոր վառվում եր այրի մեջտեղում, հավաքում եր ընտանիքը դժվար վորսորդությունից հետո. նրա շուրջը տաքանում եյին և անց եյին կացնում գիշերը. խարույկի վրա միս եյին խորովում:

Հին Քարադարը. Յերկար ժամանակ մարդիկ գործադրում եյին փայտը, քարերը, կենդանիների վոսկրները, յեղջյուրներն ու ատամներն այնպես, ինչպես վոր գտնում եյին նրանց բնության մեջ: Քիչ-քիչ նրանք սկսեցին մշակման յենթարկել գործիքները—քերել, սրել, տաշել իրանց նյութը: Քարերի մեջ առանձնապես լավ ե կայծքարը իր կտրվածքի սուր անկյուններով, բայց նրա ծայրերը, կողերն ու սրությունները կարելի յե ավելի ևս ուղղել համբերատար աշխատանքով: Յեթե կայծքարի ծայրին յերկար խփես ուրիշ քարով և փոքրիկ կտորներ կտրես, կարելի յե ստանալ սլաք, կտրող գործիքի սայր, իսկ յեթե այդ ձևով մշակման յենթարկված կայծքարը ամրացնես փայտի ճեղքվածքի մեջ ու կապես կենդանու ջլով, կստանաս կացին, դանակ, քերիչ, բիզ, բուրղու: Այսպիսի գործիքներով կարելի յե կտրել կենդանու միսը, քերթել նրա կաշին, քերել ու ծակել կաշին. այդ ծա-

կերը ջլեր կամ բույսի չորացրած թելեր անցկացնելով, մարդը հնարավորություն ուներ իր համար վերնազգեստ կարելու:

Բազմաթիվ սերունդների կյանք ե անցել այդպիսի վայրենի կենցաղի մեջ. գիտնական հնագետները հին ժամանակները կոչել են **Քարադար**՝ տարբերելու համար հետագա դարերից—պղնձյա կամ բրոնզյա, յերբ մարդիկ մետաղ ձեռք բերել սովորեցին: Քարի մշակումը յերկար ժամանակ շատ կոպիտ եր, անկատար: Ուստի հնագետները տարբերություն են դնում հնագույն, **Հին** քարադարի (**պալեոլիտիկ**) և **Նոր**, հետագա քարադարի միջև (**Նեոլիտիկ**):

Մի զարմանալի ընդունակություն ցույց ավեց հին քարադարի մարդը: Վոսկրների և յեղջյուրների վրա, վոր նրան գործիքի տեղ եյին ծա-

Հին քարադարի գործիքներ—բահիչ, տապարի բերան, յեղջերույի յեղջյուրից կերտած մարդու գլուխ, ճարմանդ յեղջերույի յեղջյուրից, վրան ձիեր կերտված:

ռայում, ծառերի և այրերի ներքին պատերի վրա վորևե սրածայր քարով նա փորում եր նկարներ, մեծ մասամբ կենդանիների՝ մամոնտի, յեղջերուի, բիսոնի, վայրենի ձիու պատկերներ: Այդ նկարների յեզրերը նա սև

ներկով էր գծում, իսկ ներսը՝ կարմրավուն, դեղին կամ մոխրագույն։ Նկարները ցույց են տալիս դիտելու կարողություն և չիտակ տեսողություն։ Ահա յերկու յեղջերուներ սպառնականորեն ցցել են իրար դեմ իրենց յեղջյուրները. ահա կատաղած բիսոնը քստմնեցրել է իր մազերը և դուրս ցցել իր հսկայական սապատավոր մեջքը։ Կամ դարձյալ—մամոնտի վոսկրից, ժանիքից, քարից տաշած է մարդու պատկերը, խրխնջացող վայրենի ձիու, գետնի վրա նստած յեղջերուների պատկերը։ Այդ նկարների և պատկերների մեջ մարդկային **արվեստի** սկիզբն է դրված։ Նրանք չեյին ծառայում վորևե օգտակար բանի. վայրենին զվարճանում էր, զբաղեցնում էր իրան, զարդարում էր, ինչով վոր կարող էր, իր ձանձրալի կյանքը. դիտող և խիզախ վորսորդը նկարում էր այն, ինչ վոր նրա աչքերի առաջ էր կանգնած։

Անասնապահության և հողագործության սկիզբը։ Այսպես անցան հազարավոր տարիներ։ Կլիման Յեվրոպայում կրկին փոխվեց։ Նա դարձավ միքիչ ավելի ջերմ և խոնավ։ Անհետացան խոշոր կենդանիների շատ տեսակներ՝ մամոնտը, այրաբնակ արջը, հնադարյան մեծ ցուլը, և բազմացան մեր ժամանակին հատուկ կենդանիները։ Մարդիկ սկսեցին ապրել բաց տեղերում, բուսականությամբ հարուստ գետերի հովիտներում, անտառների ծայրում, ծովի ափերին։ Նրանք այլևս չեյին թափառում, փնտռելով վորսով առատ տեղեր։ Նրանք ձգտում եյին ավելի հաստատուն կերպով նստել և պաշար անել տարվա սովային ամիսների համար։ Այդ նպատակով մարդիկ սկսեցին իրենց հարկավոր վայրենի կենդանիներին և թռչուններին բռնել և ցանկապատերի յետևում պահել, իսկ դրանցից վոմանց սկսեցին ընտանի դարձնել։ Ամենից առաջ ընտանի դարձավ շունը, վոր ինքնաբերաբար միացավ մարդուն և դարձավ նրա ընկերը վորսորդության ժամանակ։ Ավելի ուշ՝ ընտանի դարձրին վոչխարներին, այծերին և խոզերին։ Ընտանիացած կենդանիներն սկզբում մանր և վատ եյին. մեծ մասամբ նրանց պահում եյին միայն վորպես մսացուներ։ Այս կերպ վորսորդության կողքին յերևան յեկավ **անասնապահությունը**։

Զարգացավ նույնպես կանանց վաղեմի պարապմունքը—բուսական սնունդ ձեռք բերելը։ Փոխանակ գնալու և փնտռելու պատահականորեն բուսած կանաչեղեն և արմատիք, կանայք սկսեցին տնկել և ցանել իրենց տան մոտ այն տեսակները, վորոնցից ամենից ավելի սնունդ եյին ստանում.—պտղատու ծառեր և մանավանդ հացահատիկներ՝ գարի, կորեկ, ցորեն։ Վորպեսզի հացահատիկները լավ բուսնեն, հողը փորելով փափկացնում եյին **բրիչով**, այսինքն մի փայտով, վորի մի ծայրը յետ էր ծռված կամ վորի ծայրին կեռ կար։ Դա դեռևս հողագործություն չէր. ավելի ճիշտ կլիներ այսպիսի տնտեսությունն անվանել **բանջարանոցային** տնտեսություն։ Սկզբում հաց թխել չեյին իմանում։ Հացահատիկը կամ աղանձում եյին, կամ աղում եյին ձեռքի աղացքով (այսինքն յերկու իրար վրա դրված քարերով) և յեփում եյին այդ վատ աղված ալյուրը։

Ինշան այն բանի, վոր կերակուր ձեռք բերելու աշխատանքը բաժանված է, տղամարդկանց գերեզմանը դնում եյին վորսորդական սայրեր, կնոջ հետ թաղում եյին նրա ձեռքաղացը։

Ցցավոր շինությունները։ Անասնապահ տղամարդիկ և բանջարաբույծ

կանայք արդեն չեյին փնտռում պատահական ապաստարաններ ժայռերի միջև և ծառերի վրա։ Նրանք սկսեցին **տներ** շինել այն ապաստանների նման, վոր գտնում եյին բնության մեջ։ Կամ խոշոր քարերից նրանք դարսում-սարքում եյին այր, կամ փորում եյին փոս, հողարուն և դնում նրա վրա կլոր կտուր, վոր ծառի ճյուղերից կամ ցախավելից էր պինդ հյուսված։ Կամ վերջապես շինում եյին ցցավոր փայտե խրճիթ լճերի և ճահիճների ջրի վրա։ Այդ շենքերի տեսքը հենց ցույց է տալիս, թե վորքան առաջ եյին գնացել այդ մարդիկ այրերի բնակիչներից։

Ափից վոչ հեռու, ջրի հատակի վրա ցցեր եյին զարնում. Ջրի վրա մնացած նրանց ծայրերը միացնում եյին ըստ լայնության անցնող ձողիկներով և նրանց վրա շարում եյին գերաններ. այդ անհարթ հատակը ծածկում եյին կավով, ավազով և կալաքարով, իսկ նրա վրա շինում եյին մի քանի խրճիթներ։ Ցցերի վրա կառուցված այդ գյուղակը միացնում եյին ափի հետ, բայց այնպես, վոր հեշտ լիներ նրանց իրարից բաժանել։ Մարդ կարող էր նույնպես իր բնակարանից դուրս գալ նավակով, վոր շինված էր լինում ծառի խոշոր բնից։ Ջրի վրա շինված տնակները լավ ապաստարան եյին ներկայացնում վայրենի գազանների դեմ. Նրանց մյուս առավելությունըն էլ կայանում էր նրանում, վոր այստեղ անմիջապես կարելի յեր մեծ քանակությամբ ձուկ վորսալ։ Լճերի ափին, ցցավոր գյուղակների դիմաց, գտնվում եյին անտառներ և արոտատեղիներ, ուր բնակիչները վորսի եյին գնում կամ իրենց տավարն եյին արածացնում. իսկ լայնարձակ թփուտների միջով ձգվում եյին նրանց բանջարանոցների և արտերի նեղ շերտերը։



Ցցաշեն տներ լճի վրա։

Վոչ ամենուրեք պատահում են մեծ լճեր. յեթե, սակայն, մարդիկ բնակություն եյին հաստատում այնպիսի տեղերում, ուր չկար մեծ ջուր, նրանք կրկին շինում եյին իրենց տնակները սովորական ձևով։ Այսպես՝ առաջ յեկան ցցերի վրա շինած գյուղեր ցամաքի վրա. այդ գյուղերը շինում եյին գետի մոտ, ուր նա կարող էր լցնել ափը, կամ անտառային փոքրիկ մարգագետինների վրա, ուր ծառերը կտրված եյին։ Հողի վրա շինված գյուղը պաշտպանության համար շրջապատում եյին փոսով և հողապատնեշով. հողապատնեշը շինում եյին թեք կերպով խաչաձև գցված ցցերից, վորոնց վրա հող եյին թափում. Ներսից հողակույտի կողքին դնում եյին յերկար ձողեր, նրանց միջև յեղած տարածությունը լցնում եյին կավով և ցախի կապոց-

ներով, իսկ վրան լցնում էին ավազ ու քար և պնդացնում։ Դուրս էր գալիս մի քառանկյունի բերդ, որ իր կողքերով ուղղված էր դեպի աշխարհի չորս կողմը։ Ցցավոր խրճիթները մեծ չէին, մեկ և կես կամ յերկու սաժեն լայնություն էին ունենում, շինված էին լինում ուղիղ գերաններից, որոնք իրար էին միացվում ճյուղերով և ցեխով և ծեփվում էին խոնավ կավով։ Պատուհաններ և ծխնելույզներ չկային. առաջվա պես բնակարանի մեջտեղը խարույկ էին վառում. այդ կրակի ծուխը դուրս էր գալիս վերևից կամ պատի մեջ արված անցքից։ Տունը բաժանված էր լինում յերկու մասի. մեկի մեջ պահում էին տավարը, մյուսի մեջ ապրում էին մարդիկ. այստեղ մեջտեղում անում էին քարե ծածկոցներ խարույկի համար։

Խոնավ և կեղտոտ պիտի թվար մեզ այժմ ցցավոր գյուղը։ Չորս կողմում, ամենուրեք՝ ջուր. ամեն տեսակ թափոնները, աղբը թափում էին բարձր տախտակամածից ուղղակի վայր։ Այդ բոլոր թափոններից հավաքվում էին անհագին կույտեր, որոնք բարձրանում էին մինչև տան հատակը։ Հեշտությամբ կարող էր այրվել մի այդպիսի նեղլիկ փայտյա գյուղակ. այդ դեպքում հին գյուղակից մնացած մոխրախառն աղբակույտի վրա կրկին ամրացնում էին ցցեր և շինում էին նոր գյուղակ։

Նոր քարադարը։ Ծառեր կտրելու, մեծ ձողեր տաշելու համար պետք էին խիստ ամուր և խոշոր գործիքներ։ Ցցավոր շինությունների մարդիկ մեծ հմտությամբ կտրում և տաշում էին քարերը. նրանք ծակում էին քարե կացինները, որպեսզի նրանց մեջ ոսկրից, յեղջյուրից, փայտից կոթ դնեն. ուրագների շուրջը փորում էին ակոսիկներ, որպեսզի կապեն նրանց կո-



Նոր քարադարի գործիքներ՝ աղեղիկ, տեգի ծայր, տաշված կացիններ:

թերը կենդանու ջլերով կամ թելաշատ կանաչով։ Մեծ սայրերը հաճախ լինում էին հարթ հղկված։ Այժմ կային գործիքների և զենքերի բազմազան տեսակներ—աղոցիկներ, խանչալներ, նետեր, տեգեր, ճախարակներ և այլն։

Գործիքներ պատրաստելը և տներ շինելը դարձավ դժվարին կանոնավոր զբաղմունք, **արհեստ**, որ պահանջում էր առանձին հմտություն և ուժ. այդ աշխատանքով զբաղված էին լինում տղամարդիկ։ Վորոշ տեղերում այժմ յերևան են հանում արհեստանոցների հետքեր, ուր աշխատելիս են յեղել միասին բազմաթիվ քարտաշներ, ճախարակագործներ, զինագործներ։ Թարմ նյութի մեծ պաշար էր պետք նրանց։ Ամենալավ կայծքարերը գտնվում էին հողի տակ, ուստի նրանց ստանալու համար փորում էին խորը ջրհորներ կամ հանքահորեր։ Տղամարդկանց արհեստների կողքին յերևան յեկան կանանց արհեստները։ Կանայք գործում էին յեղեգից և բարակ ճյուղերից կողովներ։ Գործած կողովը չի կարելի ուղղակի դնել կրակի վրա, բայց յեթե այն ծեփես մածուցիկ կավով, նրա մեջ կարելի յե կերակուր յեփել և անգամ ջուրը չթափել նրանից, միաժամանակ կավը կչորանա ու կամրանա։ Այսպիսի տեսք է ունեցել առաջին ամանը, վոր սկսեցին պատրաստել կանայք։ Հետո նրանք տեսան, վոր գործված կողովն ավելորդ է և սկսեցին պուտկներ, կժեր, կերակրամաններ պատրաստել միայն կավի շերտերից կամ գնդերից. հետո չորացնում էին նրանց արևի տակ։

Մի ուրիշ արհեստ ևս սովորացրեց կանանց նրանց ծանոթությունը բույսերին։ Նրանք նկատեցին կտավատի և կանեփի թելաշատ ծղոտները, սովորեցին մանել և թել քաշել և դրանից թոկ շինել, վերջապես գործվածքներ պատրաստել։ Խրճիթում յերևացին մանելու ճախարակը և ջուլհակի դազգյահը, վորով կանայք կտավ էին գործում։

Նոր քարադարի մարդիկ հագնում էին թևեր ունեցող յերկար շապիկ և կապում էին իրենց մեջքերը. իրենց վրա գցում էին նաև պատմուճան. ինչպես տղամարդիկ, նույնպես, մանավանդ, կանայք զարդարում էին իրենց վիզը, ձեռքերը, ոտքերը, գլխի սանրվածքը մանյակներով, ապարանջաններով, ասեղներով և մատանիներով, վոր շինված էին հղկված գույնզգույն քարերից, ատամներից, խեցիներից և այլն։ Նոր քարադարի արհեստավորները տեղ-տեղ այնքան շատ գործիքներ և ամաններ էին պատրաստում, վոր ավելացածն սկսեցին ծախել դուրսը։ Առևտրականների քարավանները ճանապարհ ընկան գետերով, լեռնային ուղիներով և անցքերով. ապրանքները տանում էին ուսերով, կառքերով, ուղտերով, ձիերով և նավակներով։ **Առևտուրը** տանում-գցում էր ապրանքը վարպետից շատ հեռու։ Իր հերթին հեռվից բերում էին քարերի գեղեցիկ տեսակներ, վորոնք նյութ էին ծառայում զանազան իրեր շինելու համար։

Հողագործության յեվ բրոնզե դարի սկիզբը։ Նկատելով, վոր հացն ավելի լավ է բսնում, յերբ հողը ավելի խորն է հերկվում, մարդիկ մեծացրին բրիչը, ամրացրին նրա կեռը և յերկարացրին նրա կոթը, և այդպիսով ստացվեց **գութանը**։ Գութանը պետք է քարշ տալ ամբողջ արտի վրայից, առանց կանգ առնելու. կարճ ածուի փոխարեն կստացվի յերկար ակոս։ Սկզբում մարդիկ իրենք էին քարշ տալիս գութանը։ Հետո սկսեցին առաջից մի ուժեղ յեզ լծել, իսկ յետևից մարդն էր գնում, վոր գութանը ուղիղ գծով մղի և, ճնշելով այն, խորացնի ակոսը։ Ուժեղ գործիքով և տնային կենդանու օգնությամբ աշխատելու այդ յեղանակն տրդեն մեր **հողագործությունն է**։ Շուտ չընտանեցրին յեզան, բայց հենց վոր մարդը

տիրեց նրան, սկսեց նրանով ծանր իրեր տեղափոխել, նրան լծել սայլին։ Նույն նպատակով մարդս ընտանեցրեց և արագաշարժ ձին։ Այդ աշխատանքները, որ հարում էին վորսորդության և հովվության, մեծ մասամբ կանանց ուժերից վեր էին, վորոնք (կանայք) հնուց ի վեր պարապում էին հողի մշակությամբ բանջարանոցներում։

Հողագործության հետ միասին զարգացավ նաև անասնապահությունը։ Սննդի մի նոր առարկա ևս գտավ մարդը։ Վայրենի կովի կաթը հազիվ էր բավականանում հորթին, ընտանեցած կովն ավելի լավ սննդի շնորհիվ սկսեց տալ ավելի առատ կաթ, վորի մնացորդը մարդիկ վերցնում էին իրենց համար։ Այդ նոր գյուտի հիշատակը պահպանվեց յերկար. կաթը մնաց վորպես տոնական սնունդ, վոր բաժանում էին աստծու հետ, գետին թափելով նրա մի մասը։ Մարդիկ նոր գործադրություն գտան նաև վոչխարների և այծերի համար. նրանց լավագույն տեսակների բուրդն սկսեցին կտրել և այդ բրդից պատրաստել ամուր և գեղեցիկ գործվածքներ։ Մարդուս ամբողջ կենցաղի մեջ մեծ փոփոխություն տեղի ունեցավ, և նա գիտակցում էր, թե վորքան նոր հարստություն բերեց իր հետ կենդանիներին ընտանացնելը։ Ուստի շատ տեղերում սկսեցին պաշտել ցուլը կամ հորթը վորպես աստվածային ուժ, յերևակայելով, վոր աստվածային ուժը մտած է և ապրում է այդ կարող և բարերար կենդանու մեջ։

Այն, ինչ վոր հաջողվեց անել կենդանիների հետ, հաջողվեց անել և միքանի վայրի բույսերի հետ. փոխադրելով նրանց իր մոտ անտառից կամ տափաստանից, իր տան շրջապատից ներս, քաղհանելով ածուների վրայից գիժ խոտերը, լավ թփերի ճյուղերը պատվաստելով վատերին, մարդս բարելավեց նրանց տեսակը։ Պատվաստած բույսերից ամենակարևորները դարձան խաղողը և ձիթենին։

Մեծ տնտեսությունների մեջ կարիք զգացվեց գոմի, հացի ամբարների և պահեստատեղիների՝ պտուղների և բանջարեղենի համար։ Քարե գործիքները չափազանց փոքր և փխրուն էին նոր աշխատանքների համար։ Պետք էր գտնել շատ պինդ նյութ, վորից կարելի լիներ պատրաստել մեծ, ամուր ծայրեր գութանի համար, ծանր կացիններ և մուրճեր, մեծ բահեր։ Այդպիսի նյութ ծառայեցին **մետաղները**։ Հազվադեպ է պատահում, վոր անխառն մետաղները գտնվեն իրենց բնական վիճակի մեջ. սովորաբար նրանք խառն են լինում հանածոյի մեջ քարի և հողի այլևայլ տեսակների հետ։ Պետք է մեծ հմտություն հանածոն ճանաչելու, խառնուրդից մետաղ պատրաստելու և այս կամ այն ձևը նրան տալու համար. դրա համար պետք է կրակ գործադրել։

Ամենից հեշտ հալվում է **պղինձը**։ Դա առաջին մետաղն էր, վոր սկսեց գործածել մարդը։ Բայց պղինձը չափազանց կակուղ է. պղնձե ծայրը կամ սայրը շուտով է ծռվում և բթանում։ Ուստի այն կարծրացնելու համար սկսեցին պղնձին միացնել անագ. այդ խառնուրդից ստացվեց **բրոնզը**։ Բրոնզե իրեր պատրաստելու համար պետք էր կամ մի կաղապար շինել քարից և կավից և նրա մեջ լցնել հալված մետաղը, կամ մետաղյա շերտերը ծեծել մուրճով և այդպիսով տալ նրանց սայրերի, մեխերի, նավթուլների, բարակ թերթերի և այլն ձև։

Առաջ յեկան մեծ արհեստանոցներ մետաղներից իրեր պատրաստելու համար. մինչև այժմ վորոշ տեղերում մնացել են հնադարյան մեծ դարբնոցների հետքեր։ Նրանք գտնվում էին այն տեղերի մոտ, ուր հանքեր կային։ Յեթե ժողովուրդը փոխադրվում էր ուրիշ բնակավայր, դարբիններն ու ձուլողները մնում էին իրենց հին տեղում. նրանք ստիպված էին լինում արդեն աշխատել ոտար մարդկանց համար։ Վորպես ոտարներ, դարբինները վորոշ ժողովուրդների մոտ արհամարհված էին. ուրիշ ժողովուրդներ, ընդհակառակը, նրանց բարձր էին գնահատում, համարում էին իմաստուն, ի վերուստ ներշնչված մարդիկ, վորովհետև նրանց ծանր գործը թըվում էր միաժամանակ խորամանկ և խորհրդավոր գործ։

Մետաղից շինված իրերի հետ յերևան յեկավ փարթամության և հարստության վորոշ տեսակ։ Մետաղից շինված փայլուն, հարթ և հնչուն, դեղին, սպիտակ և կարմրավուն իրերը շատ էին դուր գալիս մարդկանց. նրանք ագահությամբ ձգտում էին ձեռք բերել այդ իրերը։ Լավագույն զարդարանք էին համարում ապարանջանները, մանյակները, ձեռքի շղթաները, մատանիները, ողերը, բրոնզե, վոսկե և արծաթե կոճակները։ Մետաղյա շերտերով սկսեցին ծածկել տների կտուրներն ու պատերը, շեմքերը և դռների շրջանակները։ Ննջեցյալների դեմքերին դնում էին դիմակներ, վոր բարակ վոսկե թերթիկներից էին շինված լինում։ Ով վոր կամենում էր ինքն իրեն գովել, պարծենալ, ասում էր, թե իր տանը շատ մետաղ կա ամեն տեսակի։

Մենք չգիտենք, թե յերբ է սկսվել և վորքան է տևել քարադարը։ Իսկ ինչ վերաբերում է մետաղների գործադրության սկզբնավորությանը Յեվրոպայում, նրա ժամանակը վորոշվում է մոտավորապես 3000 թվին Քրիստոսից առաջ։

Մարդկանց միությունները։ Այրաբնակ մարդիկ ապրում էին ցիրուցան, առանձին-առանձին ընտանիքներով։ Միայն խոշոր վորսորդության համար ժամանակավորապես հավաքվում էին նրանք փոքրիկ խմբերով, միքանի տասնյակ մարդկանցով։ Նոր քարադարի մարդիկ ապրում էին ավելի խոշոր հասարակություններով և գյուղերով։ Անասնապահները կազմում էին **բանակներ**։ Յերբ վորոշ շրջանում կերն սպառվում էր, ամբողջ բանակը միաժամանակ տեղափոխվում էր մի ուրիշ շրջան։ Հողագործներն ապրում էին հոծ գյուղերում և կազմում էին **համայնք**, բաժանելով իրար միջև անտառով շրջապատված դաշտը կամ գետահովտի մի մասը. ամեն մի ընտանիք կազմում էր առանձին աշխարհ. քանի կենդանի և ուժեղ էր ծերունի հայրը, նրա չափահաս ամուսնացած վորդիները չէին բաժանվում, ընդունելով նրան **տան տեր**։ Յերբ ամբողջ բանակի կամ համայնքի համար ծագում էր վորևէ կարևոր հարց, տների տերերը կամ ծերերը **խորհուրդ** էին կազմում։ Խստաբարո և կռվարար անասնապահները հաճախ կռվի էին բռնվում հարևանների հետ, հարձակումներ էին գործում նրանց վրա՝ ավարը խլելու համար։ Հողագործներն իրենց բարքով ավելի մեղմ էին և վախենում էին պատերազմից, վորի ժամանակ վոտնակոխ էին լինում նրանց արտերն ու բանջարանոցներն ու փչանում նրանց շատ տարիների աշխատանքը։ Անասնապահներին հարձակման համար, հողագործներին պաշտ-

պանության համար պետք էր միանալ և միություններ կազմել։ Միության մեջ մտնողներն **առաջնորդ** էին ընտրում հարձակման ու պաշտպանության ժամանակի համար վորևե մարդու, վոր հայտնի չէր լինում իր ուժով և ճարպկությամբ։ Նրան լսում էին միայն կռվի ժամանակ. յերբ կռվից հետո նրանք ցրվում էին կրկին իրենց տները, նախկին առաջնորդը դառնում էր սովորական մահկանացու, և դարձյալ ուժ էին ստանում ծերերը՝ ամեն մեկն իր ընտանիքում։

Նոր քարադարի մարդկանց միությունները շատ փոքր էին՝ մեր ժամանակի պետությունների և նույնիսկ նահանգների հետ համեմատած։ Թե այդ միությունները, թե առևտուրն ու արհեստավորների թափառումները, մերձեցնում էին զանազան տեղերի մարդկանց, հարկադրում նրանց իրար հետ բացատրվել **ընդհանուր լեզվով**։ Միևնույն բարբառն ու նման բարքեր ունեցող մարդիկ կազմում էին մի **ցեղ**, գիտակցում էին իրենց մոտիկությունը։ Խաղաղ ժամանակը ցեղը չէր յենթարկվում ընդհանուր հրամանի։ Յուրաքանչյուր գյուղ վարում էր իր փակ կյանքը։ Յեթե հարևանների մեջ վեճ էր ծագում, կամ մեկը վիրավորանք էր հասցնում մյուսին, կռվածները կարող էին ապավինել միայն իրենց ուժերին. յուրաքանչյուրը պաշտպանվում էր վիրավորողի կամ հակառակորդի դեմ, ինչպես վոր կարող էր. հավաքում էր իր մերձավորներին, վրեժխնդիր էր լինում, աշխատում էր վնաս հասցնել թշնամուն։ Բայց յերբեմն դիմում էին հաշտարար միջնորդի՝ վորևե խելացի ծերունու կամ իմաստուն համարված մարդու **դատին**։

Այնտեղ, վորտեղ պատերազմը հաճախակի յերևույթ է, յերիտասարդ և ուժեղ, մոտավորապես 18-ից մինչև 30 տարեկան հասակի մարդկանց միջև, առաջ էին գալիս սերտ **յեղբայրակցություններ**։ Իրենց միությունը նրանք վավերացնում էին վորևե խորհրդավոր ծեսով, որինակ՝ նրանցից յուրաքանչյուրը դուրս էր թողնում իրենից միքանի կաթիլ արյուն և իրար էին խառնում մի փոսիկի մեջ. դրանից հետո նրանք համարվում էին յեղբայրներ։ Մեծացող յերիտասարդներին ավելի հասակավոր ընկերներն իրենց շրջանն ընդունելուց առաջ յենթարկում էին ծանր փորձությունների. ուղարկում էին մեն-մենակ վտանգավոր վորսորդության, կապում էին ծառին և նետերի տարափ էին թափում նրանց վրա և այլն։ Յեթե ծաղրի և հարվածների տարափի տակ յերիտասարդներն արիություն էին ցույց տալիս, նրանք արժանի էին համարվում մտնելու յեղբայրակցության մեջ։ Անվանյալ յեղբայրները մեծ մասամբ թողնում էին իրենց ընտանիքներն ու առանձին բնակարանները և ապրում էին ամբողջ յեղբայրակցությամբ միասին, մեծ **տղամարդկանց տան մեջ**։ Դա մի մեծ սրահ էր, վոր ծառայում էր վորպես ընդհանուր ննջարան և ճաշարան՝ շրջապատված ծածկույթով և հաճախ ամրացված. նրա մեջ պահվում էր և զենք։ Միության առանձին անդամն ամեն բանում պետք է յենթարկվեր ընկերների ընդհանուր կամքին. հաճախ, որինակ, նա չէր համարձակվում ամուսնանալ և ընտանիք ունենալ, քանի դեռ մնում էր յեղբայրակցության մեջ։

Յեղբայրակցությունը կամ միությունը սովորաբար իր ընտրյալ առաջնորդն ուներ։ Յերբեմն ընդունակ, յեռանդուն առաջնորդը դրավում էր իր

միության մեջ շատ նոր մարդիկ. հաջող արշավանքներից հետո նրա և ընկերների մոտ հավաքվում էր մեծ ավար։ Նրա համբավը տարածվում էր ամբողջ յերկրում. ամենքն աշխատում էին նրա սիրտն առնել. ամեն կողմից ուղարկում էին նրան վողջույններ և նվերներ։ Նա կարող էր իր յետևից տանել ամբողջ ցեղը, յեթե, որինակ, սնունդը պակասում էր շրջանում։ Այն ժամանակ ծայր էր տալիս ուժեղ հուզումը... բազմաթիվ ընտանիքներ կանանց և յերեխաների հետ պոկ էին գալիս իրենց տեղերից, հավաքում էին իրենց ունեցած-չունեցածը սայլերի վրա և ճանապարհ էին ընկնում իրենց հզոր առաջնորդի յետևից. տեղի յէր ունենում ժողովրդի **տեղափոխություն**։ Ինքն առաջնորդը դառնում էր **իշխան**, **խան** կամ **թագավոր**, այսինքն մշտական իշխանավոր, վոր մնացած մարդկանցից շատ բարձր էր կանգնած։

Հին հավատալիքներն ու ծեսերը։ Հնագույն մարդիկ իրենց ննջեցյալներին թաղում էին իրենց օջախներին մոտ գտնվող այրերում և հավանորեն շուտով մոռանում էին նրանց մասին։ Նոր քարադարի գերեզմանները բռնում են տնից առանձնացած տեղեր և շատ խնամքով են շինված։ Թաղվածի կմախքը հաճախ գտնում են նստած վիճակի մեջ՝ դեպի կզակը ծալած ծնկներով. նրանց շուրջը կարգով դրված են լինում զանազան իրեր։ Յերևում է, վոր թաղողները վորոշ գաղափար են ունեցել անդրշիրիմյան կյանքի մասին։

Մահվան յերևույթն ամենից ավելի ուժեղ կերպով ազդում էր մարդուս վրա։ Նա ներշնչում էր մարդուն հետևյալ մտքերը։ Մարդը, վորին հնձեց մահը, դեռ միքիչ առաջ շարժվում, խոսում, ուտում, աշխատում էր։ Այժմ նրա մարմինը անշարժ է և սառած։ «Նա գնաց», ասում էր ինքն իրեն մերձավորը. մնաց միայն բնակարանը, վորի մեջ նա ապրում էր։ Բայց հանդուցյալի գծերի մեջ պահպանվել է նմանություն կենդանի մարդու հետ։ Սրանից յեզրակացնում էին, վոր գնացածը այն էակի **նմանակն** է, վոր մնացել է այժմ վորպես անշարժ մարմին։ Յերբ նա վողջ էր, նմանակի մարմնի մեջն էր. նրանից դուրս էր գալիս ջերմ շունչ, նա «վոգի» յեր։ Ուստի կարծում էին, վոր նմանակը կամ վոգին շոգիի նման է և, ինչպես շոգի կամ քամի, հեշտությամբ թռչում-հեռանում է։

Յերբ գալիս է մահը, վոգին կամ հոգին բոլորովին հեռանում է մարմնից։ Քնի ժամանակ վոգին թողնում է մարմինը ժամանակավորապես։ Յերազն այն է, ինչ վոր վոգին տեսնում է իր դեգերումների ժամանակ, յերբ մարմինն անշարժ պառկած է իր տեղում։

Վոգին կարող է հեռանալ մարմնից, բայց առանց մարմնի նա չի կարող ապրել։ Կորցնելով իր նախկին մարմինը, նա փնտրում է մի ուրիշը։ Մարդուս միջից նա կարող է փոխադրվել գազանի, թռչունի մեջ։ Վայ նրան, յեթե նա ապաստարան չի գտնում, յեթե նա ստիպված է յերկարորեն դեգերել։ Բայց վայ այն ժամանակ ննջեցյալի մերձավոր մարդկանց—նա կսկսի տանջել նրանց, «խեղդել» գիշեր ժամանակ, վախեցնել քնի ժամանակ, փոթորկի պահին, վոռնալ քամու պես կտրի վրա և այլն։

Ուստի պետք է կամ ազատվել նրանից, այսինքն փակել նրա առջև տան դուռը, փախցնելով նրան բուռն աղաղակներով, կամ խորամանկ խաբեբա-

պանության համար պետք եր միանալ և միություններ կազմել։ Միության մեջ մտնողներն **առաջնորդ** եյին ընտրում հարձակման ու պաշտպանության ժամանակի համար վորևե մարդու, վոր հայտնի յեր լինում իր ուժով և ճարպկությամբ։ Նրան լսում եյին միայն կռվի ժամանակ. յերբ կռվից հետո նրանք ցրվում եյին կրկին իրենց տները, նախկին առաջնորդը դառնում եր սովորական մահկանացու, և դարձյալ ուժ եյին ստանում ծերերը՝ ամեն մեկն իր ընտանիքում։

Նոր քարադարի մարդկանց միությունները շատ փոքր եյին՝ մեր ժամանակի պետությունների և նույնիսկ նահանգների հետ համեմատած։ Թե այդ միությունները, թե առևտուրն ու արհեստավորների թափառումները, մերձեցնում եյին զանազան տեղերի մարդկանց, հարկադրում նրանց իրար հետ բացատրվել **ընդհանուր լեզվով**։ Միևնույն բարբառն ու նման բարքեր ունեցող մարդիկ կազմում եյին մի **ցեղ**, գիտակցում եյին իրենց մոտիկությունը։ Խաղաղ ժամանակը ցեղը չեր յենթարկվում ընդհանուր հրամանի։ Յուրաքանչյուր գյուղ վարում եր իր փակ կյանքը։ Յեթե հարևանների մեջ վեճ եր ծագում, կամ մեկը վիրավորանք եր հասցնում մյուսին, կռվածները կարող եյին ապավինել միայն իրենց ուժերին. յուրաքանչյուրը պաշտպանվում եր վիրավորողի կամ հակառակորդի դեմ, ինչպես վոր կարող եր. հավաքում եր իր մերձավորներին, վրեժխնդիր եր լինում, աշխատում եր վնաս հասցնել թշնամուն։ Բայց յերբեմն դիմում եյին հաշտարար միջնորդի՝ վորևե խելացի ծերունու կամ իմաստուն համարված մարդու **դատին**։

Այնտեղ, վորտեղ պատերազմը հաճախակի յերևույթ ե, յերիտասարդ և ուժեղ, մոտավորապես 18-ից մինչև 30 տարեկան հասակի մարդկանց միջև, առաջ եյին գալիս սերտ **յեղբայրակցություններ**։ Իրենց միությունը նրանք վավերացնում եյին վորևե խորհրդավոր ծեսով, որինակ՝ նրանցից յուրաքանչյուրը դուրս եր թողնում իրենից մի քանի կաթիլ արյուն և իրար եյին խառնում մի փոսիկի մեջ. դրանից հետո նրանք համարվում եյին յեղբայրներ։ Մեծացող յերիտասարդներին ավելի հասակավոր ընկերներն իրենց շրջանն ընդունելուց առաջ յենթարկում եյին ծանր փորձությունների. ուղարկում եյին մեն-մենակ վտանգավոր վորսորդության, կապում եյին ծառին և նետերի տարափ եյին թափում նրանց վրա և այլն։ Յեթե ծաղրի և հարվածների տարափի տակ յերիտասարդներն արիություն եյին ցույց տալիս, նրանք արժանի եյին համարվում մտնելու յեղբայրակցության մեջ։ Անվանյալ յեղբայրները մեծ մասամբ թողնում եյին իրենց ընտանիքներն ու առանձին բնակարանները և ապրում եյին ամբողջ յեղբայրակցությամբ միասին, մեծ **տղամարդկանց տան մեջ**։ Դա մի մեծ սրահ եր, վոր ծառայում եր վորպես ընդհանուր ննջարան և ճաշարան՝ շրջապատված ծածկույթով և հաճախ ամրացված. նրա մեջ պահվում եր և զենք։ Միության առանձին անդամն ամեն բանում պետք ե յենթարկվեր ընկերների ընդհանուր կամքին. հաճախ, որինակ, նա չեր համարձակվում ամուսնանալ և ընտանիք ունենալ, քանի դեռ մնում եր յեղբայրակցության մեջ։

Յեղբայրակցությունը կամ միությունը սովորաբար իր ընտրյալ առաջնորդն ուներ։ Յերբեմն ընդունակ, յեռանդուն առաջնորդը գրավում եր իր

միության մեջ շատ նոր մարդիկ. հաջող արշավանքներից հետո նրա և ընկերների մոտ հավաքվում եր մեծ ավար։ Նրա համբավը տարածվում եր ամբողջ յերկրում. ամենքն աշխատում եյին նրա սիրտն առնել. ամեն կողմից ուղարկում եյին նրան վողջույններ և նվերներ։ Նա կարող եր իր յետևից տանել ամբողջ ցեղը, յեթե, որինակ, սնունդը պակասում եր շրջանում։ Այն ժամանակ ծայր եր տալիս ուժեղ հուզումը... բազմաթիվ ընտանիքներ կանանց և յերեխաների հետ պոկ եյին գալիս իրենց տեղերից, հավաքում եյին իրենց ունեցած-չունեցածը սայլերի վրա և ճանապարհ եյին ընկնում իրենց հզոր առաջնորդի յետևից. տեղի յեր ունենում ժողովրդի **տեղափոխություն**։ Ինքն առաջնորդը դառնում եր **իշխան**, **խան** կամ **թագավոր**, այսինքն մշտական իշխանավոր, վոր մնացած մարդկանցից շատ բարձր եր կանգնած։

Հին հավատալիքներն ու ծեսերը։ Հնագույն մարդիկ իրենց ննջեցյալներին թաղում եյին իրենց ոջախներին մոտ գտնվող այրերում և հավանորեն շուտով մոռանում եյին նրանց մասին։ Նոր քարադարի գերեզմանները բռնում են տնից առանձնացած տեղեր և շատ խնամքով են շինված։ Թաղվածի կմախքը հաճախ գտնում են նստած վիճակի մեջ՝ դեպի կզակը ծալված ծնկերով. նրանց շուրջը կարգով դրված են լինում զանազան իրեր։ Յերևում ե, վոր թաղողները վորոշ գաղափար են ունեցել անդրշիրիմյան կյանքի մասին։

Մահվան յերևույթն ամենից ավելի ուժեղ կերպով ազդում եր մարդու վրա։ Նա ներշնչում եր մարդուն հետևյալ մտքերը։ Մարդը, վորին հենց մահը, դեռ մի քիչ առաջ շարժվում, խոսում, ուտում, աշխատում եր։ Այժմ նրա մարմինը անշարժ ե և սառած։ «Նա գնաց», ասում եր ինքն իրեն մերձավորը. մնաց միայն բնակարանը, վորի մեջ նա ապրում եր։ Բայց հանգուցյալի գծերի մեջ պահպանվել ե նմանությունը կենդանի մարդու հետ։ Սրանից յեզրակացնում եյին, վոր գնացածը այն եյակի **նմանակն** ե, վոր մնացել և այժմ վորպես անշարժ մարմին։ Յերբ նա վողջ եր, նմանակի մարմնի մեջն եր. նրանից դուրս եր գալիս ջերմ շունչ, նա «վոգի» յեր։ Ուստի կարծում եյին, վոր նմանակը կամ վոգին շոգու նման ե և, ինչպես շոգի կամ քամի, հեշտությամբ թռչում-հեռանում ե։

Յերբ գալիս ե մահը, վոգին կամ հոգին բոլորովին հեռանում ե մարմնից։ Քնի ժամանակ վոգին թողնում ե մարմինը ժամանակավորապես։ Յերազն այն ե, ինչ վոր վոգին տեսնում ե իր դեգերումների ժամանակ, յերբ մարմինն անշարժ պառկած ե իր տեղում։

Վոգին կարող ե հեռանալ մարմնից, բայց առանց մարմնի նա չի կարող ապրել։ Կորցնելով իր նախկին մարմինը, նա փնտռում ե մի ուրիշը։ Մարդու միջից նա կարող ե փոխադրվել գազանի, թռչունի մեջ։ Վայ նրան, յեթե նա ապաստարան չի գտնում, յեթե նա սոված ե յերկարորեն դեգերել։ Բայց վայ այն ժամանակ ննջեցյալի մերձավոր մարդկանց—նա կսկսի տանջել նրանց, «խեղդել» գիշեր ժամանակ, վախեցնել քնի ժամանակ, փոթորկի պահին, վոռնալ քամու պես կտրի վրայ և այլն։

Ուստի պետք ե կամ ազատվել նրանից, այսինքն փակել նրա առջև տան դուռը, փախցնելով նրան բուռն աղաղակներով, կամ խորամանկ խաբեբա-

յությամբ, կամ պետք է հոգ տանել նրա մասին, հանգստացնել նրան, այսինքն հնարավորություն տալ նրան կրկին ապրելու իր նախկին մարմնի մեջ։ Դրա համար պետք է լավ պահպանել մարմինը հողի տակ կամ կարծր քարերից շինված կամարի տակ։ Բայց այնտեղ ննջեցյալին պետք է ամեն բան տալ, վորի կարիքը նա ունի սովորական կյանքում. պետք է դնել այնտեղ գործիքներ, հագուստներ, զարդարանքներ. պետք է ժամանակ առ ժամանակ հանգուցյալի հոգուն տալ սնունդ և ջուր, այսինքն կամ տանել գերեզմանի վրա դնել կամ լցնել նրա վրա, կամ առանձին որեր տնային կերակրի մի մասը հանել, դուրսը դնել և հիշել հանգուցյալին ուտելու ժամանակ։ Ննջեցյալին դնում են կորացած դիրքի մեջ, ինչպես լինում է ծնվող մանուկը, վորովհետև հավատում են, վոր նա նորից ծնվելու յե։

Վոգիները յեվ աստվածները։ Յեթե ննջեցյալը զորեղ մարդ եր, որինակ, մեծ ընտանիքի տեր եր կամ առաջնորդ, նրա վոգին մահից հետո առանձին մեծարանքի յեր արժանանում։ Նրանից վախենում եյին այժմ ավելի, քան առաջ. նա կարող եր այժմ անտեսանելիորեն թռչել մի ուրիշ տեղ. ամեն դժբախտություն վերագրում եյին նրա բարկությանը։ Այդ հավատը մինչև այժմ պահպանվել է անհանգիստ «տնարնակ վոգու» գաղափարի մեջ, մի վոգու, վոր ապրում է ծխնելույզի մեջ կամ տան շեմքի տակ։

Կարծում եյին նույնպես, վոր կարելի յե վոգին գրավել և մտցնել բարձր քարե սյան մեջ, վոր դրվում է գերեզմանի կամ ճամպարաժանի վրա։ Հզոր վոգիների համար շինում եյին մի ամբողջ **քարե տուն**. նրանք պետք է ապրեն ավելի յերկար, քան կենդանի մարդիկ, հետևաբար նրանց պետք է և շատ հաստատուն հավիտենական բնակարան։

Իրար կողք-կողքի ամրապես դարսած ահագին քարերից կազմում եյին մի մեծ սենյակ, վոր շատ ավելի խոշոր եր, քան բնակության համար հատկացրած խրճիթը։ Քարե սենյակներից մեկը, վոր գտնված է մեր որերում Սպանիայում, համարյա 12 սաժեն յերկարություն ունի և 3 սաժեն լայնություն։ Վերևից կտուրը շինում եյին ծանր քարերից, դեպի դուռը տանում եր մի յերկար, ավելի փոքր քարերից կազմված անցք, վորով կարելի յեր շարժվել միայն սողալով։ Այդպիսի քարե մեծ գերեզմանները հաճախ ծածկված են լինում հողով, վոր բարձրանում է նրանց վրա կուրգանի (բլրի) ձևով։ Բլրի ստորոտի շուրջը ծածկված է լինում քարերով։ Պատահում են նույնպես կանոնավոր շրջագծեր ահագին սրբազան քարերից և ամբողջ դաշտեր, վորոնք ծածկված են լինում քարե սյուների ու կոտրների շարքերով, ծառուղու նման։ Խոշոր քարերից կառուցված շենքեր (**մեգալիտական**) պատահում են Ղրիմում, Կովկասում, Սպանիայում, Իտալիայում և Հունաստանում, բայց ամենից շատ նման շենքեր պահպանվել են Բրետանում, այսինքն հյուսիս-արևմտյան Ֆրանսիայում և նրա դեմ ընկած հարավ-արևմտյան Անգլիայում. նրանք կրում են այն անունները, վոր ստացել են Բրետանում՝ մեծ սյունը կոչվում է **մենխիր**,



Դամբարան սալ քարերից։

ծածկված սենյակը՝ **դոլմեն** և քարակույտերից կառուցված շրջապարիսպը՝ **կրոմլեխ**։

Մարդիկ հավատում եյին, վոր իրենց շուրջը թռչում են բազմաթիվ վոգիներ։ Այդ վոգիները միայն մարդկանցից չե վոր դուրս են յեկել։ Ամեն կենդանի եյակ մարդս պատկերացնում եր իրեն նման։ Վոգիներն ապրում են կենդանիների մեջ, մանավանդ այն կենդանիների մեջ, վորոնք թվում են մարդուն խորհրդավոր, որինակ, ոձերի մեջ։ Բայց վոգիներն ապրում են նույնպես ծառերի, առուների, գետերի և նույնիսկ քարերի մեջ։ Այդ վոգիները մերթ բարի, մերթ չար են մարդուս հանդեպ, մերթ ոգնում են նրան գտնելու վորևե բան, որինակ, հալածվող վորսը, ուղին անտառի մեջ, կորցրած իրը, մերթ նրանք խանգարում են նրան, որինակ, շեղում են ճանապարհից, կոտրում են վայրենի կենդանու վրա գցած նետը, ներս են քաշում մարդուն խորը տեղ, յերբ նա խեղդվում է, և այլն։ Հիվանդությունը բացատրում եյին նրանով, վոր չար կամ անհանգիստ վոգին մտել է մարդուս մեջ։

Վոգիների մեջ կան ավելի զորեղները, **աստվածությունները**։ Աստվածությունների վողորմածությունը մարդիկ աշխատում եյին հայցել վորևե զրկանքի կամ տանջանքի միջոցով, որինակ՝ հրաժարվելով ավելի համեղ կերակրից և նույնիսկ բոլորովին հրաժարվելով սննդից միքանի որ կամ իրենց վերք հասցնելով։ Աստվածներին **զոհաբերություն** եյին անում, այսինքն ուտելու եյին տալիս ամենալավ բաները, վոր ունեյին—զորեղ յեզ կամ նորածին հորթ։ Մորթված կենդանու արյունը՝ գետին թափված՝ տրվում եր վոգիներին։ Կարծում եյին, վոր յեթե վոգին խմում է տաք արյունը, այսինքն այն, ինչի մեջ նա առաջ ապրում եր, նա կրկին կվերակենդանանա, կվերստանա ուժ, վոր խոսի և հայտնվի կենդանի մարդկանց։ Յերբ մարդիկ շատ մեծ սարսափով եյին բռնվում, նրանք պատրաստ եյին լինում տալ վոգիներին մարդկային արյուն, սպանել նրանց համար գերիներին կամ նույնիսկ մերձավոր ազգականներին, որինակ՝ հայրն սպանում եր իր զավակին։

Գուշակողները։ Ամեն մարդ չեր կարող վանել վոգիները և դուրս քշել նրանց մարդու միջից՝ նրան բուժելու համար։ Յերբ դժբախտություն եր պատահում, որինակ, յերբ սկսում եյին կոտորվել անասունները, կամ հիվանդանում եյին մարդիկ, կանչում եյին կախարդին, հաքիմին. նա ցնցում եր հիվանդին՝ նրա միջից դուրս քշելու համար վոգին, տալիս եր նրան առանձին խմիչք, արտասանում եր սարսափելի կամ խորհրդավոր խոսքեր, վորոնցից վախենում է վոգին, կամ վորոնք, ընդհակառակը, դուր են գալիս նրան։ Յերբ յերաշտ եր լինում, գուշակողները կոչ եյին անում, վոր «անձրև անի», գրավելով վոգին, վոր ապրում է թուխպի մեջ։

Յեթե չեր յերևում, թե վորտեղ է վոգին նստած, կամ չեր հասկացվում, թե ինչ է նա կամենում, կախարդն սկսում եր գուշակել. գցում եր փոքրիկ քարեր, փայտեր և նայում եր, թե ինչպես են նրանք ընկնում. մորթում եր մի անասուն և նայում նրա փորոտիքին.—այդ բոլորը նրա համար նշաններ եյին, վոր միայն նա գիտեր մեկնաբանել։ Կամ կախարդն ինքն եր կապում իր մեջ վոգուն—շշմեցնում եր իրեն դափի դնդնդոցով և բումբյունով, խելահեղորեն վեր-վեր եր թռչում, գլխապտույտ լինելու աստի-

ճան պտույտ էր գալիս իր շուրջը, ուժասպառ ընկնում էր գետին և բղավում էր ուշաթափ վիճակի մեջ. Նրա աղաղակները համարվում եյին վոգու իսկ իմաստուն խոսքերը: Այսպիսի յեղանակով կարելի յեր իմանալ գաղտնի թշնամու կամ այն գողի անունը, վոր փախցրել է ձին և այլն:

Կախարդ դառնում եր հաճախ շատ խելացի և շնորհալի մարդը, յերգեր հորինողը, խոտեր և ծաղիկներ ճանաչողը. կախարդի առանձնահատուկ խելքը շրջապատողներն ընդունում եյին վորպես վոգու ներշնչում: Կախարդ մարդը կարող եր ճանապարհ ցույց տալ, կռվի մեջ վոգևորել. Նա յերբեմն մասնակցում եր կռվին վորպես առաջնորդ:

Հաճախ գուշակությունն եր անում ինքը տան տերը, հայրը. Նա կանչում եր տնային վոգուն կամ մերձավոր տեղի վոգուն: Հավատում եյին, վոր ամեն տան մեջ վառվող խարույկի մոտ ապրում է այդ տան հովանավորող վոգին: Ուստի ոջախը սուրբ տեղ եր: Վոգու ոգնությունը չկորցնելու համար մարդ աշխատում եր պահպանել իր ոջախում անշեջ կրակ:

II

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գետային տափարակներն արեվելքում: Այն ժամանակ, յերբ յեվրոպացիները դաժան կլիմայի մեջ աղքատ եյին ապրում և դանդաղորեն բարձրանում եյին վայրենիների բարբի մակարդակին, յերկու ժողովուրդ հյուսիս-արևելյան Աֆրիկայում և արևմտյան Ասիայում՝ **յեգիպտացիներն ու բաբելացիները**, ձեռք բերին մեծ հարստություն, մեծ հմտություն աշխատելու մեջ և քաղաքակրթություն:

Այդ յերկրներում բնությունը բոլորովին այլ է, քան Յեվրոպայում: Այստեղ չկան կուսական անտառներ, վորոնց միջից այնքան դժվար եր անցնել յեվրոպացիներին: Ամբողջ տարին տաք է, ամառը տաքությունը հասնում է հրաշեկ աստիճանի, ձմեռը չի ընկնում ավելի ցածր, քան մեր ապրիլին և մայիսին. այդ ձմեռը Յեգիպտոսում են անցկացնում չվող թռչունները, վորոնք վերադառնում են մեզ մոտ գարնանը: Մարդս կարիք չունի ցրտից պաշտպանվելու համար մտածելու տաք հագուստի մասին, կարիք չունի վառելիք պատրաստելու իր տունը տաքացնելու համար: Նա ազատ է շատ հոգսերից և այդպիսով՝ շատ ծանր պատահականություններից, վոր այնքան դժվարացնում եյին հին յեվրոպացու կյանքը: Նա ավելի շուտ կարող է սնունդ ձեռք բերել: Նա առհասարակ կարող է ավելի հեշտ, ավելի անհոգ ապրել, նվիրել իր ազատ ժամանակը կյանքի գեղեցկացման, մտածել իր շրջապատի մասին:

Անձրևադուրկ անապատների մեծ գոտին, վոր ձգվում է հյուսիսային Աֆրիկայի և Միջին Ասիայի վրայից, ընդհատվում է նեղ Արաբական ծոցով. Նրա յերկու կողմը գտնվում են յերկու մեծ գետերի՝ Նեղոսի և Յեփրատի հովիտները: Սկսվելով բարձր լեռներում, ձյուների և բարձր լճերի միջից, յերկու գետերը տանում են գարնանը շատ ջուր և ընկնելով ցածր տափարակների վրա, լայնորեն դուրս են թափվում ափերից: Այդ հեղեղումները

369
38

փոխարինում են հազվադեպ անձրևները. այդպես գետերի հովիտները կընմանվեյին նրանց շրջապատող անապատներին: Բայց դրանից զատ ամեն տարի գետերից մնում են շերտեր, վորոնցից կազմվել եր հողի պարարտ, արգավանդ մի խավ: Հացահատիկները տալիս են այստեղ ահագին բերք, մեկին 200-300 ցորեն: Ուստի փոքրիկ տարածության վրա կարող եր անհամեմատ ավելի շատ ժողովուրդ կերակրվել, քան Յեվրոպայի անտառային յերկրներում:

Յեգիպտոսը: Նեղոսի հովիտն այժմ էլ ներկայացնում է մարդկային բնակության նույն պատկերը, ինչ վոր 4—5 հազար տարի սրանից առաջ: Բարձրավանդակների յերկու շղթաների միջով ձգվում է նեղ հարթ մի գոտի 700 վերստ յերկարությամբ և 10-ից մինչև 15 վերստ լայնությամբ և միայն ծովի մոտ, ուր Նեղոսը բաժանվում է բազմաթիվ ճյուղերի, տափարակն ընդարձակվում է մինչև 200—250 վերստ լայնության: Այդ է հենց ամբողջ մարդաբնակելի Յեգիպտոսը, «սև հողը», ինչպես ասում եյին յեգիպտացիք. այդ տարածությունը փոքրիկ Բելգիայից ավելի փոքր է, մինչդեռ ամբողջ մնացյալ յերկիրը, վոր Յեգիպտոսի սահմանների մեջ է մտնում, Ֆրանսիայից յերկու անգամ մեծ է, բայց այդ մնացյալ յերկիրը քար և ավազ է, «կարմիր հող», բնակչություն չունի: Հակառակ դրան՝ Նեղոսի հովտում, վոր արգավանդ ջրառատ հող ունի, ավելի բնակչություն եր խտացած, քան ժամանակակից Յեվրոպայի ամենախիտ բնակչություն ունեցող յերկրում. գետի ափով անընդհատ ձգվում են քաղաքներ և գյուղակներ:

Նեղոսի հեղեղումները: Այդ ամբողջ գոտին կենդանի յե միայն շնորհիվ Նեղոսի ամեն տարի կրկնվող հեղեղումներին: Մեր ամառվա սկզբին Յեգիպտոսում ամեն ինչ մեռնում է չոր և շիկացած օդի մեջ. տերևները ծածկված են լինում մոխրագույն փոշիով՝ անապատի քամուց բերված: Նեղոսը հոսում է ծուլորեն սև ցեխի չորացած թումբերի միջով: Հունիսից ջուրն սկսում է բարձրանալ: Նրա գույնը փոխվում է. Կապտագույն Նեղոսը դառնում է արնանման-կարմիր. այդ գույնը գետն ստանում է հողի այն ողողյալ խավից, վոր նա քշում-տանում է իր հետ: Հսկայական հեղեղն իր ճանապարհի վրա քանդում, վերացնում է արգելք արգելքի յետևից, թափվում է թումբերի վրայից, փրցնում է հողակույտեր և լայնորեն ձգվում է ամբողջ հովտի վրայով. հին յեգիպտացիք հեղեղման այդ ժամանակ գետը ծով եյին անվանում: Գետի վրա սկսվում է մի վառ և աղմկալի կյանք. Նեղոսն առատորեն ծածկվում է յեղեգներով, կանաչ խոտով և ծաղիկներով. թռչում-գալիս են բազմաթիվ ջրային թռչուններ, ջրերն առատորեն լցվում են ձկներով: Բարձրությունների վրա շինված քաղաքներն ու գյուղերը կանգնած են լինում կղզիների պես այդ ծովի մեջ. միայն տեղ-տեղ լայն պատվարները ծառայում են ճանապարհի փոխարեն. բոլոր այլ հաղորդակցությունները կատարվում են նավակների միջոցով:

Սեպտեմբերի սկզբի մոտերքը ջուրն ամենից բարձր է լինում, հետո նա սկսում է իջնել և նոյեմբերին Նեղոսը կրկին մտնում է իր սովորական ափերի մեջ. ազդարնակությունը հերկում է հողը և ցանում է արտերը չափավոր յեղանակի 3—4 հաջորդող ամիսների ընթացքում, վոր զուգադիպում են մեր ձմեռվա ամիսներին. պետք է շտապել, վորպեսզի

վրա չհասնի յերաշտը, վոր գալիս է մեր գարնան բացվելու պահին: Հենց վոր ջուրն իջնում է, բաց են թողնում արտերի վրա վոչխարներին և խոզերին, վոր հացահատիկները կոխեն հողի մեջ կոխկրտեն: Այսպիսով Յեգիպտոսում պարզորեն վորոշագծվում են տարվա յերեք ժամանակներ. նրանք կախված են այն փոփոխություններից, վոր կատարում է Նեղոսն իր հեղեղումների միջոցով յերկրի և մարդկանց կյանքում: Հին յեգիպտացիք չգիտեյին բարեբեր հեղեղումների պատճառները. դրանք նրանց աչքին հրաշք եյին թվում: Բայց նրանք հասկանում եյին, վոր Նեղոսը նրանց գոյության աղբյուրն է: Գետը նրանց համար աստված էր, վորին նրանք ուղղում եյին իրենց աղոթքները. «Փառք քեզ, Նեղոս, վոր գալիս ես աշխարհ՝ Յեգիպտոսին կյանք տալու համար... քո ալիքները հեղեղում են այգիները, վոր արեն է ստեղծել. դու հագեցնում ես այն ամենը, վոր ծարավի յէ. յերկնային հեղուկով. յերբ դու գետին ես իջնում, հողի աստվածը տալիս է հացահատիկ, և յեռում է աշխատանքը արհեստանոցների մեջ: Դու ցորենի և գարու ստեղծողն ես, քեզանով են պահպանվում տաճարները: Յերբ քո ձեռքերը հոգնում են աշխատանքից, կամ դու տառապում ես, ամեն կենդանի եյակ, աստվածներն ու մարդիկ վոչնչանում են, հոտերը տնքում են, ամբողջ յերկիրը, բոլոր մեծերն ու փոքրերը տանջվում են: Իսկ յերբ դու լսում ես մարդկանց աղոթքները և գալիս ես, յերկիրն սկսում է թնդալ ուրախությունից, ամեն ինչ խնդում է... Ամենին դու տալիս ես յերջանկություն՝ նրա ցանկության համաձայն և յերբեք չես մերժում: Դու թագավոր ես, և քո հրամանները տարածվում են համայն աշխարհի վրա»:

Վորքան էլ մեծ լինեին գետի տված բարիքները, այնուամենայնիվ պետք է, վոր մարդիկ բարդ և համառ աշխատանք կատարեին նրանցից օգտվելու համար: Յեթե ջրին կատարյալ ազատություն տրվի, նա կգոյացնե ցածր տեղերում լճակներ և ճահիճներ, կանգնած կմնա և հնարավորություն չի տա, վոր հողը ժամանակին ցանվի. ավելի բարձր տեղեր նա բնավ չի հասնի: Հնուց յեգիպտացիք գիտեյին ուղղել և հավասարաչափորեն ծախսել իրենց միակ մեծ գետի հեղեղումից գոյացած թանգագին ջուրը: Նրանք անցկացրին դեպի գետը ուղղանկյունագիծ լայն ջրանցքներ, վորոնց միանում եյին ուրիշ, գետի յերկարությամբ տարածվող ջրանցքները. այդ յեղանակով ստեղծվեցին ամբողջ հովտի յերկարությամբ գետի նոր հուներ: Յերբ Նեղոսը բարձրանում էր, նրա ջրերն արագորեն թափվում եյին լայն անցքերի մեջ, վոր կտրում եյին գետը ուղղանկյունագիծ ուղղությամբ, վորպեսզի ջուրն ափից չբարձրանա, դարձակետերում և անցքերի յերկարությամբ ափերն ամրացնում և բարձրացնում եյին պատվարներով: Այսպիսով ջուրը հասցնում եյին մինչև հովտի ամենահեռավոր սահմանները: Յեգիպտոսի ամբողջ արգավանդ հողը պատվարների միջոցով բաժանված էր մեծ ջրամբարների: Վերացնելով պատվարը, ջուրը թափում եյին այդ ամբարների մեջ, փակում եյին նրա յելքը և սպասում, մինչև վոր գետինը կծծի իր մեջ ջուրը և նրա հետ յեկած հողի շերտը:

Հարստության յեվ աշխատանքի բաժանումը հին Յեգիպտոսում: 5000 տարի Քրիստոսի ծննդից առաջ յեգիպտացիք արդեն ունեյին ջրանցքներ ու

պատվարներ: Նրանք Սիրիուս պայծառ աստղի շարժումներից կարողանում եյին ճշտորեն վորոշել հեղեղումի սկիզբը, նրանք յեվրոպացիներից առաջ սովորեցին պղինձ հանել հողից և բրոնզ պատրաստել: Նրանք մեծագույն վարպետության հասան քարաշեն կառուցվածքների աշխատանքի մեջ. գրանիտից, բազալտից և այլ տեսակի կարծր քարերից, վոր կան Յեգիպտոսում, նրանք շինում եյին մեծ շենքեր իրենց աստվածների և իրենց յերկրային իշխանների համար, ծածկում եյին այդ շենքերի պատերը ժողովրդի կյանքը պատկերացնող բազմազան վառ նկարներով և քարից տաշում եյին աստվածների և մարդկանց արձանները. նրանք կտավից պատրաստում եյին նուրբ գործվածքներ և զարդարում եյին այդ գործվածքները յերփներանգ նկարներով: Այդ ժամանակաշրջանում նրանք գիտեյին նույնպես գրել. նկարների կողքին զետեղում եյին մանրամասն պատմություններ դեպքերի մասին, յերկրների և ճանապարհորդությունների նկարագրություններ, տնտեսական հաշիվներ, դիմումներ աստվածներին, աղոթքներ ննջեցյալների մասին և այլն:

Յերբ այդպիսի բարդ և բազմապիսի աշխատանք է առաջ գալիս, մարդկանց մեջ չի կարող արդեն պահպանվել հին հավասարությունը: Առաջ բոլորն էլ հավասարապես գիտեյին վորսորդության գնալ, գետինը փորել, անպաճույճ գործիքներ պատրաստել: Այժմ ամեն մի գործի մեջ դուրս եյին գալիս առանձին վարպետներ, վորոնք իրենց ամբողջ կյանքը նվիրում եյին իրենց արհեստին և արվեստին, հրաժարվելով ուրիշ զբաղմունքներից. քարտաշը և քանդակագործն առմիշտ հեռանում եյին գյուղական դաշտային աշխատանքից և անընդհատ աշխատում եյին քաղաքներում, այսինքն խոշոր բնակատեղերում, ուր մեծ տաճարի կամ իշխանի պալատի մոտ բնակված եյին լինում բազմաթիվ մարդիկ. գրագիրը խորթանում էր ամեն տեսակ բիրտ ձեռային աշխատանքին և այլն: Այդ զբաղմունքները հորից վորդուն եյին անցնում, և տարբերությունը մարդկանց միջև հետզհետե ավելի յեր հաստատվում:

Զբաղմունքների տարբերությունից զատ գոյացավ նաև մարդկանց գույքային դրության տարբերություն: Յերբ կյանքն աղքատիկ է, պաշար



Յեգիպտական աղյուսագործներ:

քիչ կա, և ամեն մի ընտանիք հարկադրված է սնունդ ձեռք բերել վաղվա համար, մարդկանց կարողությունը գրեթե նույնաչափ է: Ուրիշ բան է, յերբ սկսում է մնացորդ գոյանալ: Ով ավելի շրջահայաց և համարձակ է, ով իր ընտանիքում ավելի ուժեղ անդամներ ունի, նա անխուսափելիորեն ձեռք կբերի և կպահպանի իր համար ավելի, քան ուրիշները. այդպիսի մարդը

կամ այդպիսի ընտանիքը կտրվեն ուրիշներին եւ աշխատել իրենց համար և, իրենք հարստանալով, կպահեն այդ ուրիշներին աղքատության և իրենցից կախման մեջ։ Հարուստ մարդկանց գերեզմանոցների ներսը նկարած պատկերներից կարելի յե գաղափար կազմել նրանց կենցաղի մասին։ Ահա գյուղացի տղամարդիկ ու կանայք՝ գնում են գլխավոր բակը՝ բեռնավորված հացով, մրգով, բանջարեղենով, գինով, քաթանով լի քթոցներով, նրանք տանում են զոհեր․ ձեռնափայտերով զինված ծառաներ քշում-բերում են գյուղական ավագներին, վորոնք պատասխանատու յեն ժամանակին տուրք չվճարող գյուղացիների համար․ գրագիրները՝ նստած սեղանների մոտ՝ ստուգում են բերված պաշարները, գրի յեն անցկացնում յեկամուտն ու ապառիկները․ մշակներն ու հովիվները՝ խմբեր կազմած՝ դրոշակներով անցնում են իրենց տիրոջ առաջից․ հարուստ կալվածատերը ձգտում եր հաստատուն կերպով ապահովել իր համար աղքատ գյուղացու և բանվորի աշխատանքը․ Նա պահանջում եր, վոր ավելի թույլերը յենթարկվեն իր խնամակալության, ճանաչեն, վոր «նրա մարդիկն» են, ճորտերն են, վոր միշտ պարտական են տալ նրան իրենց յեկամուտի և վաստակի մի մասը։ Նա դառնում եր ամբողջ շրջանի **տերը**, ձեռք եր գցում Նեղոսի հովտի մի մասը։

Բացի դրանից հարստացան և պատվի արժանացան աստվածներին ծառայող մարդիկ։ Հին գուշակողները, վորոնց դիմում եյին կյանքի ծանր պայմաններում, նույնքան աղքատ եյին, վորքան և նրանց դիմողները։ Այլ դրություն ստեղծվեց այն մարդկանց մոտ, վորոնք մեծ պաշարներ եյին անում, խոշոր շինություններ եյին կառուցում․ Նրանք կարող եյին ավելի տալ **քուրմերին**, վորոնք աղոթում եյին նրանց բարորության համար կամ իմանում եյին նրանց համար աստվածների կամքը։ Աստվածներին հատկացնում եյին մեծ կալվածներ, վորոնք իրենց մեջտեղում ունեյին պալատներ հարակից բոլոր շինություններով, դաշտերով, այգիներով, լճերով, հոտերով և բանվորներով հանդերձ․ բերում եյին նրանց համար հացահատիկ, մրգեր, հավ ու ձիվ, նուրբ գործվածքներ, գեղեցիկ կահկարասի և այլն․ Թանկագին իրերն ու զանազան ապրանքները դարսվում եյին ամբարներում և խանութներում։ Այդ կալվածները կառավարող քուրմերը կերակրվում եյին աստվածների հետ․ կարծում եյին, վոր ամենորյա մանր հոգսերը չպետք է շեղեն նրանց աստծուն ծառայելու գործից։ Գուշակություններն ապագայի մասին, ծառայությունը տաճարում—այդ բոլորը շատ բարդ գործ դարձավ․ կազմվեց մի ամբողջ քրմական գիտություն․ այն յուրացնելու համար պետք եր շատ բան սովորել։ Քուրմերը պետք է վարեյին առանձին կյանք—պաս պահեյին գուշակություն անելուց առաջ, չուտեյին առհասարակ անմաքուր բաներ, այսինքն աստծուն անհաճելի կենդանիների միս, չպետք է կատարեյին կոպիտ աշխատանք և այլն։ Առանձնապես աչքի եյին ընկնում **Մեմֆիսի** (այժմյան Կահիրեյի մոտ են ավերակները) և **Հելիոպոլիսի** (Նեղոսի աջ բազուկի վրա, Դելտայի սկզբում) գիտնական քուրմերը։ Մեմֆիսը Նեղոսի ձախ կողմն է գտնվում․ գետի աջ կողմից, քաղաքի դիմաց, լեռնաշղթա յե, վորտեղից ամուր քար եյին հանում մեծ շենքերի համար։ Մեմֆիսի քուրմերը կառավարում եյին քարահանքերը, կառուցանելու արվեստ եյին սովորեցնում (ճարտարապետություն) և ջրանցքներ ու պատվարներ շինելու վարպե-

տություն (ինժեներական գործ)։ Հելիոպոլիսի քուրմերը (Հելիոպոլիս նշանակում է «Արևի քաղաք») դիտում եյին յերկինքը և լուսատուների շարժումները․ նրանք աստղաբաշխներ եյին․ նրանք հետևում եյին Սիրիուսի ծագման, նրա յերևան գալու վայրկյանից հորիզոնի վրա, մեր հունիսի կեսին, ազդանշան եյին տալիս հեղեղման սկզբի․ այնուհետև նրանք հողագործական աշխատանքների ժամանակն եյին վորոշում և տոներ եյին սահմանում ամբողջ ժողովրդի համար։

Պատկերները, վոր նկարել են յեգիպտացիները գերեզմանների պատերի վրա, ներկայացնում են հաճախ հասարակ ժողովրդի ծանր աշխատանքը․—ինչպես դաշտում մարդիկ հերկում են յեզներով կամ քանդում են հողը բահով․ ինչպես հավաքում են խաղողը, քամում են գինին և ամանների մեջ լցնում․ ինչպես են անիվի վրա դարձնում ամանը և վառարանի մեջ այրում այն, շշեր շինում․ ինչպես են կանայք գործվածք շինում հսկողների աչքերի առջև՝ առանց հանգիստ և դադար ունենալու և ինչպես ծուլացած բանվորին տեղնուտեղը ծեծում են փայտով։

Մի գրագետ՝ իր վորդուն խրատագիր գրելիս՝ խորհուրդ է տալիս խուսափել ծանր ձեռային աշխատանքից և մռայլ գույներով է նկարագրում բանվորի վիճակը․ «Դրնձագործը ամբողջ օրն աշխատում է, իսկ յերբ գիշերը վրա յե հասնում, նա դեռևս նստած է իր աշխատանքի վրա ճրագի լույսի տակ։ Կոշկակարը բոլորովին փչանում է․ նա անկարող է ազատվել աղքատությունից․ նրան մնում է միայն կաշիներ կրծոտել։ Նայիր քարտաշին․ նա միշտ վատառողջ է, վորովհետև նա պետք է աշխատի՝ յերկար քամուն տված—ճանկռտելով բռնելով լոտոսի ծաղիկների նման կարնիզները (շրջադրվագները)․ Նրա ձեռքերը թուլանում են հոգնածությունից, նրա հագուստը պատառոտված է․ այդ խեղճ մարդը քայլում է օր օրի վրա վերելակի ձողերի վրա, իր աշխատանքով հազիվ մի կտոր հաց ձեռք բերելով, նա գնում է տուն և ծեծում իր յերեխաներին։ Այդ աշխատանքը յես շատ դիտեցի, յես ամեն տեղ տեսա միայն դաժանություն, միմիայն դաժանություն։ Ուստի զբաղվիր գրքերով, սովորիր գրել-կարդալ»։

Խրատագիրը բացատրում է այնուհետև՝ ինչպես այդ ազնիվ աշխատանքը առողջություն է պահպանում, մեծ առավելություններ է տալիս, տանում-հասցնում է պալատ։ Գրել-կարդալ սովորած մարդը, «գրագետը» կարող եր հին Յեգիպտոսում ստանալ ամեն տեսակ պաշտոն, նայած իր ընդունակություններին,—դառնալ քուրմ, զինվորական հրամանատար, ճարտարապետ, ինժեներ, շրջանապետ, կալվածքի կառավարիչ։

Մեմֆիսի թագավորները. Ուժեղ իշխանը, վորին յենթակա եյին մեծաքանակ մարդիկ, կարող եր նրանց լավ զինել և նրանց հետ նվաճել հարևան շրջաններ։ Յեթե նա կարողանում եր նվաճել մեծ յերկիր, նա դառնում եր **թագավոր**։ Նրան այդ դեպքում պատկերացնում եյին առանձին ձևի գլխարկով, գայիսոնը ձեռքին։ Յեգիպտոսում յերկու պետություն կազմվեցին՝ հյուսիսային—Նեղոսի Դելտայում և հարավային—Նեղոսի հովտի յերկարությամբ։ Առաջինի իշխանը կրում եր կարմիր գդակ մազափնջով․ Նրա պահապանն եր օձ-աստվածուհին։ Յերկրորդի կառավարիչը կրում եր բարձր սպիտակ սաղավարտ և նրա հովանավորողը համարվում եր աստվածուհի

ցինը։ Հարավային թագավորներն աշխատում էին նվաճել հյուսիսը կամ ներքին Եգիպտոսը։ Նեղոսի հոսանքը հոգուտ նրանց էր. ավելի հեշտ է գետի հոսանքով լաստեր և նավեր վարել զինվորներով բեռնված, քան թե զորքով բարձրանալ հոսանքի դեմ։ Ըստ ավանդության հյուսիսային երկիրը նվաճող աշխարհակալի անունը Մենես էր։ Նա Մեմֆիսն ընտրեց իբր իր մայրաքաղաք, որ գտնվում էր երկու երկրների սահմանակետում, Դելտայի սկզբում։ Իբրև ամբողջ Եգիպտոսի թագավոր, նա միացրեց երկու թագերը և սկսեց կրել սպիտակակարմիր բարձր գդակ։ Մեծ թագավորի տիրապետության տակ անցան բոլոր տաճարներն իրենց հարստություններով, աստվածների կալվածները, հացահատիկի, բրդի և այլ ապրանքների պահեստները. դրանց կառավարման համար նա սկսեց նշանակել իր ծառաներին, **աստինանավորներին**։ Այդ շրջանների իշխանները հպատակվեցին նրան, դարձան նրա արքունիքի մարդիկ։

Բազմաթիվ շրջանների միացումից գոյացած մեծ պետությունը խիստ տարբերվում էր հին միություններից և զինվորական յեղբայրակցություններից։ Վայրենիներից ընտրված առաջնորդը կարող է միքանի հազար մարդ ունենալ։ Ամբողջ Եգիպտոսի թագավորին յենթարկվում էին յոթից մինչև ինը միլիոն հպատակներ։



Բանվորներն իրենց ուսերի վրա տեղափոխում են մեծ արձանը (միմյանցից վերեվ նկարված բանվորների շարքերը պետք է ընդունել իրար յետևից գնացող շարքեր)։

Թագավորը միացնում էր իր ձեռքերի մեջ ահագին հարստություններ և կարող էր շատ նվերներ և վողորմություններ բաժանել։ Նա մեծաքանակ արքունիք ուներ։ Արքունիքի մարդիկ անվանվում էին «թագավորի բարեկամներ, թագավորական հրամանների, թագավորի գաղտնի խոսքերի գաղտնի խորհրդականներ» և այլն։

Թագավորը կարծես բարձրանում էր բոլորի վրա վորպես բարձրագույն եյակ։ Նրան կարելի չեր արդեն կոչել իր անունով, ինչպես հասարակ մահկանացուներին։ Ամենից հաճախ նրա մասին ասում եյին «փարավոն», վոր նշանակում է «բարձր տուն»։ Ի նշան իր վեհության թագավորը զոտևոր-

վում եր աղյուծի մորթով, վորի յետևից կախված եր լինում պոչը, հագնում եր հատուկ հագուստ (յերկար ու ծածանվող), զարդարում եր իր վիզը մանյակով, ձեռքերը զարդարում։ Մարդկանց նա ընդունում եր բարձր աթոռի վրա ամպհովանու տակ նստած և իր դեմքը դեպի արևելք ուղղած։ Նրա մոտ յեկողները պետք է յերեսնիվայր գետին փռվեյին, ծնկաչոք՝ ձեռքերը յերկինք ուղղեյին, ինչպես աստծուն. Նրանք պարտավոր եյին նրան տալ զանազան պատվավոր և բարձր անուններ—արևի ընտրյալ, հզոր վոսկե արծիվ, ճշմարտությամբ հզոր և այլն։ Յերբ պետք եր լինում նկարել թագավորին, նրան ներկայացնում եյին յերեք, չորս անգամ ավելի բարձր, քան սովորական մարդկանց, և վոչ միայն նրան, այլ և նրա կառքն ու նրա ձիերը։

Թվում եր, թե մի այնպիսի հզոր մարդ, ինչպիսին թագավորն եր, պետք է առանձնապես մոտ լիներ աստվածներին։ Քուրմերն ուսուցանում եյին, վոր թագավորն ամենաուժեղ աստծու վորդին է, իսկ մահից հետո միանում է աստվածներին։ Կարծում եյին, թե թագավորը կարող է՝ մենակ յեղած ժամանակը՝ զրուցել աստվածների հետ. թագավորը մտնում եր տաճար և, դիմելով աստծու արձանին, խորհուրդ եր հարցնում, որինակ, գնա՞լ պատերազմի թե վոչ։ Յեթե նրան թվում եր, թե արձանը գլխով է անում, դա նշանակում եր «այո». յեթե նա անշարժ եր մնում, դա նշանակում եր «վոչ»։ Աստծու, իբր նախահոր կամ հովանավորի, անունով եր, վոր թագավորը պատերազմ եր մղում. նրան եր նա նվիրում ավարը. յերբ թագավորը

Գիզեյի դաշտը յեվ Քեոփս յեվ Քեփրենի բուրգերը։ Առաջակողմը ժայռից կերտված մեծ սֆինքսը։

կատաղությամբ լցված՝ հրամայում եր սպանել գերի ընկած թշնամիներին, դա համարվում եր զոհաբերություն աստծուն։ Անցնելով փողոցներով, դուրս գալով պատշգամբ դեպի ժողովուրդը, թագավորը գցում եր ամբոխին հաց, միրգ կամ վոսկե մանյակներ ի նշան այն բանի, վոր նա, վորպես աստված, թափում է մարդկանց մեջ բոլոր վողորմությունները։

Թագավորի մահից հետո նրա նմանակը կամ վոգին պետք է ստանար հավերժական մեծ բնակարան։ Հին յեգիպտական թագավորները սովորաբար իրենք եյին իրենց համար վաղորոք պատրաստում բուրգ, վորի համար քշել-բերել եյին տալիս բանվորներ ամբողջ Յեգիպտոսից։

Յեգիպտական բուրգերն անհամեմատ խոշոր են յեվրոպական ամենահին քարե գերեզմաններից։ Դա ամբողջ սարեր են, կառուցված ահագին տաշած քարերից։ Բուրգը լուսամուտներ չունի։ Նեղ և մութ անցքը տանում է մութ դահլիճը, ուր դրված եր լինում թագավորի քարե արձանը. նրա տակ գտնվում է ստորերկրյա դամբարանը, ուր թաղված եր լինում ննջեցյալը։ Մեծ բուրգերը պահպանվել են մինչև մեր ժամանակը. նրանք գտնվում են Մեմֆիսի մոտ, Նեղոսի ձախ ափում։ Ամենամեծ բուրգը շինել է Քեոպս թագավորը 3000 տարի Ք. ծ. առաջ։—Նա 70 սաժեն բարձրություն ունի և բաղկացած է գրեթե $2^1/_2$ միլիոն խոշոր քարերից։ Նրա կողքին գտնվում է յերրորդ, Քեֆրենի գրեթե նույն մեծության բուրգը. նրանցից վոչ հեռու ժայռից կերտած ահագին սֆինքսն է (առյուծի մարմնով և մարդու գլխով)։

Հույն ճանապարհորդ Հերոդոտը, վոր բուրգերի կառուցումից ավելի քան 2000 տարի հետո յե այցելել Յեգիպտոսը, 450 թ. Ք. առաջ պատմում է, տեղացիների խոսքերի հիման վրա, հետևյալը. 100,000 մարդ եյին աշխատում Քեոպսի բուրգի շինության վրա յերկար տարիների ընթացքում տարեկան յերեք ամիս (հեղեղումների ժամանակ, յերբ բոլոր գյուղացիները ազատ եյին լինում դաշտային աշխատանքներից)։ Քարը կտրում եյին Նեղոսի աջ ափում և գետի վրայով հեղեղումի ժամանակ տեղափոխում եյին ձախ ափը. ջրից դուրս հանելով, մարդիկ քաշում եյին ծանրությունը թոկերով (այդ ժամանակ Յեգիպտոսում ընտանեցրած ձի չկար) մինչև լեռների ստորոտը արևմուտքում, ուր պետք է բարձրանար բուրգը. այդ փոխադրության համար պետք եր նախ և առաջ քարով սալահատակված մի հարթ ճանապարհ շինել։ Տաս տարի շինում եյին այդ ճանապարհը, տանում-դարսում եյին քարը և գցում եյին դամբարանի ստորերկրյա կամարները։ Բուրգը կառուցում եյին 20 տարի։

Քարեր տաշող վարպետները, վոր քանդակում եյին արձաններ և շիրիմների պատերն եյին զարդարում նկարներով, սովորած եյին լինում գեղարվեստի հովանավոր Մեմֆիսի Պտա աստծու տաճարին կից դպրոցներում։ Խոշոր աշխատանքները կատարվում եյին այդ աստծու գլխավոր քրմի ղեկավարությամբ։ Թագավորական դամբարանի շուրջը տեղավորում եյին թագավորի ազգականների և այն արքունականների շիրիմները, վորոնք, վորպես առանձին վողորմություն, իրավունք եյին ստանում փարավոնի մոտ թաղվելու։

Կառավարությունը։ Թագավորն իր հպատակներից վոչ միայն աշխատանք եր պահանջում, այլ և զանազան ապրանքներ և պաշարեղեն։

Ամեն մի շրջանի բնակիչներ հարկ եյին վճարում նրան հացով, վոսկով և այլ իրերով։ Հավաքել հարկերը, կառավարել պահեստները, ծառայության կանչել զինվորներին և հետևել կարգին՝ նա հանձնարարում եր իր տեղապահներին և գործակատարներին։ Նրանց մոտ ծառայում եյին, ինչպես

թագավորների կամ աստվածների մեծ կալվածներում, բազմաթիվ գրագիրներ, վորոնք մանրամասն հաշիվ եյին պահում և յելումուտ եյին ստուգում։ Իր պալատականներին, ծառաներին և պաշտոնյաներին թագավորը վարձատրում եր պարենով, հագուստեղենով, ամանեղենով, կահ-կարասիքով, զարդարանքով։ Զանազան իրերի ահագին քանակություններ դարսում եյին թագավորական պահեստներում և խանութներում. այդտեղից տալիս եյին, ինչ վոր պետք է, նրա ստորադրյալներին։

Թեբեյի թագավորները։ Միքանի դարի ընթացքում Մեմֆիսում թագավորող փարավոնները ընդհանուր հնազանդություն եյին հանդիպում։ Սակայն մոտավորապես 2300 թ. Ք. ծ. առաջ նրանք կորցրին յերկրի իշխանությունը։ Մարզերի պետերն ու փոխարքաները դադարեցին փարավոնի հրամանները կատարելուց և սկսեցին հարկերը հավաքել իրենց համար, փոխանակ ուղարկելու նրանց թագավորին։ Յեգիպտոսը բաժանվեց առանձին իշխանությունների։ Առանձին շրջանների իշխանների մեջ ամենից վեր բարձրացավ **Թեբեյի** իշխանը,—մի քաղաքի, վոր գտնվում եր Յեգիպտոսի վերին, հարավային մասում, ուր Նեղոսը մոտենում է Արաբական ծոցին։ Թեբեցիները քարավանի ճանապարհով անցնում եյին անապատը, վոր նրանց բաժանում եր ծովից, և հետո նավերի վրա գնում եյին դեպի հարավ **Պունտ** յերկիրը (այժմյան Հաբեշստանը և Սոմալին)։ Առևտրից հարստանալով, Թեբեյի իշխանները հավաքեցին զինվորական մեծ ուժ և իրենց յենթարկեցին մյուս իշխաններին, դարձան ամբողջ Յեգիպտոսի փարավոններ Նեղոսի ժայռերից սկսած մինչև Միջերկրական ծովը։



Յեգիպտոսի թագավորի յերթը։ Աջակողմը՝ վերի յերկու շարքը նրա թիկնապահ զունդը. ներքևում սպասավորները, վոր գավազաններով ճանապարհ են բացում, յեվ ժողովուրդը, վոր վողջունում է թագավորին։

Թեբեյի փարավոններն իրենց իշխանությունը տարածեցին Յեգիպտոսի սահմաններից շատ հեռու։ Սեզոստրիս թագավորը միքանի արշավանք գործեց դեպի հարավ, Նեղոսի ժայռերից այն կողմը, **Նուբիա**, վորտեղ սևամորթ նեգրերի ցեղն եր ապրում։ Յեգիպտացիները նրանց յերկրում գտան հարուստ վոսկեհանքեր և տեղացիներին հարկադրեցին աշխատել իրենց համար, հանել անխառն վոսկու կտորներ և լվանալով մաքրել վոսկե ավազը։ Նույն ռազմաշունչ թագավորը մղեց իր զորքերը Սուեզի պարանոցով

Ասիա։ Հնում եգիպտացիները երկար պատ էին շինել պարանոցի երկարությամբ Միջերկրական ծովի և Արաբական ծոցի միջև, ոչ հեռու այժմյան Սուեզի ջրանցքից։ Այդ պատը ծառայում էր թափառականներից (այժմ կոչվում են բեդուիններ) պաշտպանվելու համար։ Ասիական թափառականները, սակայն, կարողանում էին անցնել մեծ պատը։ Սեզոստրիսը վռնդեց մինչև ասիական տափաստանների հեռավոր խորքերը՝ անհանգիստ հարևաններին վերջնականապես ճնշելու նպատակով։ Իր արշավանքների ընթացքում նա նվաճեց Քանանացոց երկիրը, որտեղ հետագայում հաստատվեց հրեա ժողովուրդը։ Աստվածաշնչի մեծ Քանաանը նկարագրվում է որպես մի հարուստ, ծաղկած երկիր, ուր մեղր ու կաթ է հոսում։ Մովսեսի ուղարկած պատերազմական լրտեսները ցույց տալու համար բերեցին խաղողի ողկույզ, որ երկու հոգով պետք է բռնեյին՝ այնքան ծանր էր նա։ Սեզոստրիսի ժամանակի մի եգիպտացի, որ երկար ապրել է Քանաանում, ասում է այդ երկրի մասին. «Այնտեղ թուզ ու խաղող կար, և ջրից ավելի գինի։ Այդ երկիրը հարուստ մեղր ուներ և շատ յուղ, ծառերի վրա ամեն տեսակի պտուղներ... Ես յեփած միս ունեյի և տապակած սագեր, նմանապես անապատի թռչուններ, որ ինձ համար բռնում էին թակարդներով, չհաշված այն, որ որսորդական շներն էին ինձ համար քշում-բերում։ Սեզոստրիսի որդի Ամենեմքետը մեծ շինություններ կառուցեց Ֆայում օազիսում, որ գտնվում է Նեղոսից դեպի արևմուտք, ոչ հեռու գետի Դելտայի հովիտը մտնելու տեղից։ Այս ցած տեղը Նեղոսի հեղեղումի ժամանակ ջրով էր ծածկվում (գետի ճյուղից, որ այժմ կոչվում է Հովսեփի ջրանցք)։ Ամենեմքետը հրամայեց պատնեշել պատվարներով կիրճը, որ հեղեղը փորել էր ժայռերի գագաթների մեջ և որ կազմում էր օազիսի մուտքը։ Տեղի ճահիճները չորացրին, ջուրն սկսեցին հավաքել ջրամբարների մեջ և համաչափ գործադրել օազիսի դաշտերի համար։ Շնորհիվ սրա Ֆայումը դարձավ Եգիպտոսի ամենահարուստ և հացավետ շրջանը։ Օազիսի մուտքի մոտ Ամենեմքետը կառուցեց իր բուրգը, որից ոչ հեռու կանգնած էր ահագին շինություն եգիպտական բոլոր աստվածների համար, որ հույները Լաբյուրինթոս էին անվանում։ Այդ շենքի ամբողջ երկարությամբ ձգված էր մի պատ, որին հարում էին պորտիկները, այսինքն սյուներով շրջապատված քառանկյունի բակեր։ Պորտիկների թիվը այնքան էր, որքան մարզ կար Եգիպտոսում, և նրանք բոլորը կազմում էին մի անընդհատ շարք։ Ամեն մի մարզ իր հովանավոր-աստծուն էր դնում պորտիկում։ Տոներին հավաքվում էին այստեղ մարզերի ծերերը (մեծամեծները) և աղոթում ամեն մեկն իր աղոթարանում։ Բայց այս սրբավայրերին հասնելու համար անհրաժեշտ էր անցնել ծածկված սրահով, որ բազմաթիվ սյուներից էր բաղկացած, և նրանց միջի անցքերից։ Անցքերն այնքան խառնիխուռն էին, որ օտարերկրացին առանց ուղեցույցի չէր կարողանում ոչ մտնել այնտեղ, ոչ դուրս գալ այնտեղից։ «Լաբյուրինթոս» անունն սկսեցին տալ հետագայում հույները ամեն մի կախարդական պալատի, որի մեջ կարելի յե մոլորվել։

Հասկացողություններ աստվածների մասին։ Եգիպտացիների հասկացողության մեջ աստվածների մասին միանում էին հին հավատալիքների

մնացորդները և մարդկանց նոր ըմբռնումները։ Ամեն մի քաղաքում կամ շրջանում պաշտում էին մի աստծու կամ աստվածուհու, որոնք հովանավորում էին այդ քաղաքին կամ շրջանին. ամեն մի վայր ուներ իր ծեսերը և աստվածներին պատկերացնելու իր յեղանակը։ Հնության մի գիծ առանձնապես պահպանեցին եգիպտացիք,— հատկապես այն կարծիքը, թե աստված կարող է ընդունել կենդանու կերպարանք, թե նրա հոգին կարող է տեղափոխվել գազանի, թռչունի մեջ և այլն։ Դրա շնորհիվ զանազան շրջաններում հաշվում էին սրբազան անասուններ կոկորդիլոսներին, արագիլներին, կատուներին, օձերին և այլն։ Ամենամեծ հարգանքը վայելում էր Եգիպտոսում սև յեզը՝ Ապիսը, որ ճակատին սպիտակ բիծ ուներ և որ պահվում էր Մեմֆիսի մեջ առանձին սրբատեղիում։ Աստվածներին պատկերացնում էին մեծ մասամբ անասունների կամ անասունների՝ բազեի, կովի, ոչխարի, շնագայլի և այլոց գլուխ ունեցող մարդկանց կերպարանքով։

Աստվածներից ոմանք հայտնի էին ամբողջ Եգիպտոսում։ Ասում են, որ հարավի աստվածը՝ Քորը (բազեի կերպարանքով) երկար ժամանակ պատերազմի մեջ էր հյուսիսի աստծու՝ Սեթի հետ։ Մռայլ Սեթը հափշտակում է պայծառ Քորի աչքը (արևը), բայց Քորը այնուամենայնիվ հաղթում է նրան։ Ամենուրեք պաշտում էին նույնպես հզոր ջրային ոգուն, որ կոկորդիլոսի կերպարանք էր ընդունում. լուսնային աստված Տոտը, որ տարվա ժամանակներն ու իրերի կարգն է սահմանել այս աշխարհում, հնարել է լեզուն ու գիրը և աշխարհիս բոլոր գաղտնիքների տերն է, իմաստուն կերպով ցույց է տալիս բոլոր աստվածներին ու մարդկանց նրանց գործը. Օզիրիսը, ստորերկրյա աստվածը, որ բուսցնում է խոտերն ու ծառերը, որոնց միջոցով գետնից դուրս է գալիս նրա շունչը։

Զանազան վայրերում ցույց էին տալիս Օզիրիս աստծու աճյունները, որին սպանել և հոշոտել էր չար Սեթը. նրան թաղել էր Իզիդա աստվածուհին, նրա կինը, որին պատկերացնում էին կովի գլխով կամ եղջյուրազարդ թագով. Օզիրիսի որդին՝ Քորը կախարդությամբ կրկին կենդանացրեց իր հորը, բայց այժմ նա արդեն մեռյալների աշխարհի տերն էր։ Այդպես էլ մյուս աստվածները տանջվում, մեռնում են, ունեն գերեզմաններ, բայց նույնպես վերածնվում, ապրում և հավիտենապես թագավորում են։

Արևը ծնվում է ամեն օր առավոտ, կեսօրին դառնում է չափահաս, իսկ երեկոյան ծերանում, մեռնում է։ Տարվա մեջ կային աստծու ծննդյան, նրա ուժի ամենաբարձր փթթման և նրա մահվան նվիրված մեծ տոներ։ Տոներին տաճարների ծառայողները և առանձնապես սուրբ կյանք վարող մարդիկ սրբազան թափորի ժամանակ տանում էին աստվածների արձանները կամ տանում այդ արձանները գետով՝ զարդարված նավակի մեջ։ Երբեմն կատարվում էին թատրոնական ներկայացումներ. քուրմերը պատկերացնում էին աստծու զինվորությունը՝ պատրաստ հալածելու աստծուն սպանողաց թշնամիներին, կամ խումբ էին կազմում նրա տանջանքները ողբալու համար։

Քուրմերի մեջ կային գիտնականներ, որոնք ազատվել էին հին բիրտ հասկացողություններից և աշխատում էին բոլոր եգիպտացիների համար

մի ընդհանուր հավատ ստեղծել։ Նրանք ուսուցանում եյին, թե առանձին քաղաքների աստվածներից վեր բարձրանում է մի գերագույն աստվածություն, վոր մարդկանց բարիքներ է պարգևում։ Ամենից յեռանդուն կերպով այդ հավատը տարածում եյին Ռա արևային աստծու քուրմերը Արևի քաղաքում, Մեմֆիսից վոչ հեռու։ Ի պատիվ իրենց աստծու նրանք հորինեցին մի որհներգություն, վորի մեջ ասված եր. «Կենդանի արև, դու բարձրանում ես քո ամբողջ գեղեցկությամբ յերկնային հորիզոնի վրա։ Քո ճառագայթները գրկում են բոլոր քո ստեղծած յերկրները։ Դու, մեծն Ռա, գրավում ես նրանց քո սիրով։ Դու ստեղծեցիր աշխարհը, քո ցանկության համաձայն, լի մարդկանցով, հոտերով և բոլոր կենդանիներով, այն ամենով, վոր կա աշխարհում, վոր վոտքերով է ման գալիս, վոր լողում է ջրի մեջ և թռչում թևերով։ Դու ստեղծեցիր Նեղոսը իր խորությամբ և բերիր նրան այստեղ քո կամքով՝ մարդկանց կերակրելու համար։ Բոլոր հեռավոր յերկրների համար դու սնունդ ստեղծեցիր և տեղավորեցիր Նեղոսը յերկինքում, վորպեսզի նա անձրևի նման վայր իջնի նրանց մոտ։ Նա բարձրացնում է իր ալիքները լեռնային հեղեղների միջոցով, վորպես ովկիանոս, և ջրում է դաշտերը։ Վորքան գեղեցիկ են քո վորոշումները, հավիտենականության տեր»։

Նեղոսի հովտի բնակիչները կարծում եյին, թե նրանց յերկիրը գտնվում է աշխարհի մեջտեղում. յերկիրը լողում է մեծ ովկիանոսում, յերկինքը մի տափակ կտուր է, վոր իր յեզրերով հենված է բարձր լեռներին և ամրացած չորս սյուների վրա. առաստաղից ճրագների նման կախված են աստղերը։ Յերկինքը յերևակայում եյին ահագին կովի պատկերով, վոր չորս վոտով հաստատվել է յերկրի մակերևութի վրա՝ հյուսիսում, արևելքում, հարավում և արևմուտքում բարձրանում են չորս սարեր, վորոնք պահում են յերկինքը։

Անդրշիրիմյան կյանքի հավատք։ Յեգիպտացիների նկարներից և շինություններից յերևում է, վոր նրանց առանձնապես զբաղեցնում եր մահից հետո կյանքը յերկարացնելու միտքը։ Թեբեյի ամբողջ կեսը, այն ամենը, ինչ-վոր գտնվում է Նեղոսի ձախ, արևմտյան կողմում, բաղկացած է «մեռյալների քաղաքից»։ Դա մի գերեզմանատուն է, ուր գերեզմանները ընդարձակ, ամուր բնակարաններ են, ավելի հաստատուն, քան կենդանի մարդկանց տները։ Նրանք լի յեն առարկաներով, պատկերներով, տապանագրերով և աղոթագրություններով, վորոնցից մենք իմանում ենք յեգիպտացիների հավատալիքների մասին։ Այդ հավատալիքների մեջ խառնվում եր կենդանի մարդկանց յերկյուղը հանգուցյալներից, իրենց սեփական բախտի մտահոգությունը և մյուս աշխարհում ավելի լավ վիճակ ունենալու հույսը։

Յեգիպտացիները կարծում եյին, թե բարի և չար վոգիների միջև մարդուս կյանքի համար անընդհատ կռիվ է տեղի ունենում. հիվանդությունը և մահը այլ բան չեն, բայց յեթե չար վոգիների հաղթանակը։ Բայց դևերն առմիշտ չե վոր հաղթություն են տանում. գերեզմանի այն կողմը ևս շարունակվում է դեռ բարի և չար վոգիների վեճը։ Առաջինները պաշտպանում են, յերկրորդներն աշխատում են վոչնչացնել մարդկային եյության այն մասը, վոր թողել է մարմինը մահից հետո։ Այդ կռվի մեջ հանգուցյալի ազգականներն ու մերձավորները կարող են ոգնել նրան նույն-

պես, ինչպես ոգնում են կենդանի մարդուն հիվանդության ժամանակ, կախարդական խոսքերի և խորհրդավոր ուժ ունեցող աղոթքների միջոցով։ Այդ աղոթքների գրավոր որինակները մեծ թվով գտնվում են յեգիպտական գերեզմաններում։

Շատ կենդանի կերպով ներկայացնում եյին և անդրշիրիմյան աշխարհը, ուր դեգերում է ննջեցյալը։ Այդ յերկնային աշխարհը նման է յերկրայինին։ Նրա մեջտեղից անցնում է յերկնային մեծ Նեղոսը, իսկ գետի վրայից ամեն որ անցնում է արևի աստվածը, վոր նստած է նավի վերևում ծածկված աթոռի վրա. խավարի մեջ նա վերադառնում է գիշերային գետով կրկին արևելք, վորտեղից նորեն սկսվում է նրա ցերեկային ճանապարհը։ Արևի ճանապարհորդությունը թվում եր յեգիպտացուն նման մարդկային կյանքին. նրա մեջ նույնպես իրար են հաջորդում ծնունդը, կյանքը և մահը։

Փայտե դագաղներ, ուր ամփոփվում եյին մումիաները։

Արևը, վոր գիշերն անհետանում է, վոչ այլ ինչ է, բայց յեթե մեռած աստվածը, վոր իջնում է դժոխքը, ստորերկրյա թագավորությունը։ Նրա նավն անցնում է մռայլ ափերի միջից, ուր՝ դարանամուտ յեղած՝ սպասում են նրան չար վոգիները. ամենից ավելի սարսափելի յե հսկայական ոձը, վոր պատրաստում է արևի կործանումը. բայց վերջին րոպեյին արևի բարեկամները հարձակվում են թշնամու վրա և շղթայակապում նրան։

Մեռած մարդը կարող է աղոթքների և կենդանի մարդկանց կատարած ծեսերի միջոցով բաժանել արևի բախտը. նրա հոգին կարող է հաջողությամբ անցնել արևի նավի հետ գիշերային խավարի միջից և վերածնվել նոր առավոտյան. նա կարող է նույնպես թռչունի կերպարանքով թռչել-գնալ յերկնային աշխարհը։ Այդ տեղափոխությունը թեթևացնելու համար ննջեցյալներին թաղում եյին Նեղոսի արևմտյան ափում և դնում եյին նրանց այնպես, վոր նրանց յերեսը ուղղված լիներ դեպի արևմուտք. այդպես նրանք ավելի շուտ պիտի տեսնեյին այն աշխարհը։

Հեռավոր արևմուտքը, ուր հեռանում է արևը, համարվում էր ուրիշ կյանքի մեջ մտած հոգիների յերանելի աշխարհ: Շատերն աշխատում եյին իրենց համար գերեզման ապահովել սրբազան Աբիդոս քաղաքում, վորտեղ գտնվում եր Օզիրիս ստորերկրյա աստծու գլխավոր մեծ գերեզմանը: Այդ մարդիկ հավատում եյին, վոր սուրբ հողում նրանց մարմինները կլինեն աստծու հովանավորության տակ և նրա հետ միասին կվերածնվեն նոր կյանքի համար: Յեգիպտացիների թաղման ծեսերի մեջ անդրադառնում են նրանց մտքերը մարդու անդրշիրիմյան բախտի մասին: Յերբ վախճանվածի համար շինում եյին քարե մեծ գերեզման, նրանք սպասում եյին, վոր նրա վոգին կամ «նմանակը», վոր կենդանի ժամանակ ապրում եր մարմնի մեջ, նորից կվերադառնա իր առաջվա կացարանի մեջ: Ուստի և աշխատում եյին նրա համար ապահովել «հավիտենական տուն» սենյակների ամբողջ արդուզարդով, հանդերձ և կարասի, թարմ սնունդ և, մանավանդ, խմիչք: Այսպես նա սովից ու ծարավից կպաշտպանվի, կսկսի խաղալ կենդանի մարդկանց հանգիստը:

Նմանակին գրավելու համար կանգնեցնում եյին ննջեցյալի քարե արձանը. մի առանձին վարպետությամբ կերտում եյին այդ արձանի դեմքը: Միաժամանակ աշխատում եյին պահպանել մարմինը, վորի մեջ նմանակը պիտի գտներ իր նախկին բնակավայրը: Դրանից ծագը առավ դիակներից **մումիաներ** պատրաստելու սովորությունը (այսինքն՝ դուրս եյին հանում ննջեցյալի մարմնի միջից փորոտիքը, ածում եյին ասֆալտ, փաթաթում կտորներով և դնում նկարազարդված փայտե արկղի մեջ, վոր պատկերացնում եր փաթաթված մարդուն): Մումիաները բոլորովին չորանում եյին. այդ կերպ մեզ հասել են մի քանի յեգիպտական թագավորների մարմինները: Գերեզմանների պատերի վրա ցույց կերպով նկարում եյին և ներկում մթերքներ, պտուղներ, ծաղիկներ, հագուստ, ապրուստի անհրաժեշտ առարկաներ: Հարուստ իշխանավորի գերեզմանը դնում եյին փայտե կամ քարե բանվորներ՝ գործիքները ձեռքներին. նրանք պետք է տիրոջ համար հերկեյին, պարկեր կրեյին, կերակուր յեփեյին և այլն: Մեռյալի զվարճության համար ազատ և ուրախ կյանքի պատկերներ եյին նկարում, օրինակ, վորսը նեղոսի յեղեգնուտում, խրախճանքներ ու պարեր: Հասարակ մարդն, իհարկե, միջոցներ չուներ այդ բոլորը իրագործելու. նա աղ եր ցանում հանգուցյալի մարմնի վրա և թաղում եր այն ուղղակի հողի մեջ: Թվում եր, վոր այն աշխարհում ես աղքատ մեռյալը բարորության կողմից պիտի յետ մնա իրենից ավելի հարուստներից:

Սակայն քուրմերը մխիթարում եյին չունևորներին կախարդական աղոթքի խոստումներով. «Թող Օզիրիս աստծուն բերված լինի թագավորական զոհ, վորպեսզի նա նվիրե հանգուցյալին 1000 յեզ, 1000 սագ, 1000 հաց և այլն»: Ցերկար գրությունները մանրամասն բարեմաղթություններով նույնպես գրվում եյին գերեզմանների մեջ:

Հանգուցյալի բարորությունն այսպիսով կախված եր լինում նրա մերձավորների առատաձեռնությունից կամ աղոթք կարդացող քրմի արվեստից: Բայց դրա հետ միասին յեգիպտացիների մեջ ծագը առավ նաև մի ավելի վսեմ միտք՝ հանգուցյալին կհատուցվի այն աշխարհում իր գործերի

համաձայն: Արևի յետևից գնալով՝ հոգին դատի յե յենթարկվում ստորերկրյա թագավորության մեջ: Այնտեղ նստած է արդար դատավոր Օզիրիսը, այն աստվածը, վոր ինքը տանջվել է և մեռել: Նա քննում է իրեն ներկայացող հոգու ամբողջ կյանքը և դատավճիռ է արձակում: Ուստի գերեզմանի մեջ, վորպես վերջին բարեմաղթանք, դնում եյին մի հատուկ աղոթագիրք, վորի մեջ մանրամասնորեն գրված եր լինում, թե ինչ պետք է պա-



Օզիրիսի դատաստանը ստորերկրյա թագավորության մեջ: Ձախակողմը Անուբիս աստվածը (շախալի գլխով) հոգին է ներս բերում: Կշեռքի մոտ, ուր կշռվում է մեռելի սիրտը, դարձյալ Անուբիսն է. Նրա կողքին հրեշը, վոր կլանում է մեղավոր հոգիները: Կշեռքի աջ կողմը Թոտ աստվածը (արագիլի գլխով) կազմում է կյանքի տարեգիրը: Սրա կողքին Անուբիսի բերած հոգին, վորին Հորը (բազեի գլխով) ներկայացնում է Օզիրիսին:

տասխանի հոգին դատի ժամանակ. «Յես չեմ խաբել վոչ-վոքի, յես չեմ մնացել անգործ, յես չեմ խլել ստրուկին նրա տիրոջից, չեմ տանջել այրի կանանց, չեմ թալանել գերեզմանները, չեմ վորսի գնացել սրբազան կենդանիների վրա, յես մաքուր եմ, յես տվել եմ հաց և ջուր մուրացկանին, հագուստ՝ մերկին, յես բերել եմ զոհեր աստվածներին և կերակրել մեռյալներին»: Այդ պատասխաններից յերևում է, թե վոր պատվիրանները յեգիպտացիների մեջ համարվում եյին առանձնապես կարևոր:

Գիրը: Պատերի վրա յեղած նկարները մեծ մասամբ բացատրական մակագրություններ ունեն: Հետագայում Յեգիպտոս այցելող հույներն անվանում եյին այդ նկարները **հիերոգլիֆներ**, այսինքն սրբազան գրություններ, կարծելով, վոր դրանք ինչ-վոր խորհրդավոր, հանելուկների պես մարդկային միտքը քողարկող նշաններ են: Բայց իրոք դա յեգիպտացիների սովորական այբուբենն եր, միայն շատ ավելի բարդ, քան մերը: Այդ գրերով ծածկված են **պապիրուսից** պատրաստված անթիվ-անհամար թերթեր (մի թուղթ է դա, վոր պատրաստում եյին յեգիպտական յեղեգի թելերից):

Գիրն սկսվեց նրանով, վոր մարդիկ աշխատում եյին նկարել այն իրերը, վորոնց մասին խոսում եյին: Վայրենիների մոտ հաճախ մի ամբողջ նկար պետք է արտահայտեր վորևե պայմանադրություն. օրինակ, լճի նկարը՝ նրա մեջ լողացող ձկների և նրա յերկու կողմը կանգնած մարդկանց հետ՝ նշանակում եր, վոր յերկու գյուղեր պայմանադրվել են միասին նույն տեղում ձուկ վորսալ: Կարելի յե մի քանի գծերով նկարել զանազան իրերի և եյակների պատկերները, օրինակ, մարդու, թռչունի, արյուծի, թիակի, աստղի: Բայց «որ», «աղոթք», «ուժ» խոսքերը կարելի չե նկարել. այդ խոս-

քերը նկարի միջոցով պետք էր հիշեցնել միայն՝ «օրը» շրջանակով, վոր նշանակում է արև, «աղոթքը»՝ ձեռքերը դեպի աստվածները բարձրացրած մարդու պատկերով, «ուժը»՝ յեզի կերպարանքով և այլն։ **Խոսքերի** այդպիսի **այբուբենից** է վոր սկսեցին յեգիպտացիք։ Քայլերը նրանք նկարագրում էյին յերկու քայլող վոտքերի միջոցով. Քորին նվիրված բազեն առհասարակ աստված կամ Թագավոր էր նշանակում. արգավանդ հողը ներկայացվում էր մի շերտի և նրա տակը դրված կետերի ձևով (հողի կեղևը և սերմերը), անբերրի հողը՝ առանձնաձև շինված պատի (քարոտ Թումբեր) միջոցով։ Դա գրի մի շատ անկատար ձև էր։ Ստիպված էյին լինում հնարել բազմաթիվ նշաններ—այնքան, վորքան վոր խոսքեր կային։ Ընդ սմին, յերբ այդ պատկերներն ու նշանները դնում էյին կողք-կողքի՝ ամբողջ մի միտք արտահայտելու համար, կապը նրանց միջև անորոշ էր մնում. չէր կարելի գրի առնել այն, ինչ վոր մենք արտահայտում ենք հոլովների, բայերի վերջավորության, խոսքերի կապակցության միջոցով։

Նշաններով կարելի յե օգտվել այլ կերպ։ Կարելի յե վոչ միայն **տեսնել** նշանի մեջ առարկայի պատկերը կամ գաղափարի փոխաբերությունը, այլ կարելի յե նույնպես, արտասանելով նշանի միջոցով արտահայտված խոսքը, **լսել** նրա մեջ համահնչյունությունը։ Յեթե մարդ սովորի կապել վորոշ նշանի հետ վորոշ համահնչյունություն, կարելի կլինի գործածել նույն նշանը ամեն տեղ, ուր այդ համահնչյունությունը կպատահի, Թեկուզ խոսքի իմաստը այլ լինի։ Այսպես, օրինակ, **աղի** նկարը կարող է ծառայել նաև, վորպես նշան՝ ներկայացնելու համար **աղանդ** խոսքի առաջին վանկը, **ան** խոսքի նշանը և **գին** խոսքի նշանը կարող է ծառայել արտահայտելու համար **անագին** խոսքի առաջին և յերրորդ վանկերը և այլն։

Խոսքերն արտասանելու ժամանակ հեշտ է նկատել նման վանկերը. յեթե ամեն մի վանկ առանձին նշանով արտահայտվի, կարելի կլինի արտահայտել լեզվի բոլոր դարձվածքները։ Յեգիպտացիների մոտ «սագը» դրվում է «վորդի»-ի փոխարեն, վորովհետև յերկու խոսքն էլ հնչում էյին միանման «սե». «վին»-ը (նիֆրե) գործածվում էր և «բարի» խոսքը արտահայտելու համար և այլն։ Արտահայտելու այս յեղանակի վրա յե հիմնված մեր **ռեբուսը** (նկարավոր հանելուկը)։ Բայց այն, ինչ վոր այժմ խաղի համար է մնացել միայն, առաջ գրի ընդհանուր ձև էր։ **Փյունիկերի այդ այբուբենը** յեգիպտացիք սկսեցին նույնպես խոսքերի հին այբուբենից անկախ գործածել։ Նրա մեջ շատ ավելի պակաս նշաններ կային, քան առաջինի մեջ։ Ավելի ուշ նրանք բաժանեցին նաև վանկերը **հնչյունների** և սկսեցին ամեն մի հնչյուն առանձին նշանի միջոցով արտահայտել։

Բայց ցավը նրա մեջն էր, վոր նրանք բոլոր յերեք այբուբենից էլ նշաններ պահպանեցին. վերջին այբուբենի կողքին, վոր մերինին նման է, նրանք շարունակեցին գործածել նաև գրի նախկին ձևերը։ Գրի արվեստը նրանց մոտ շատ բարդ էր և այդպես էլ մնաց։

Այդ արվեստի բախտի մեջ նկատելիորեն արտահայտվեց յեգիպտական ժողովրդի մի գիծը։ Նոր գյուտերի, ճարտարապետական, նկարչական ու քանդակագործական զարմանալի արվեստի և վեհ գաղափարների հետ միասին յեգիպտացիք պահպանեցին իրենց հին հետամնաց սովորությունները

ու հայացքները. Նրանք դաջում էյին իրենց մարմինը, գործածում էյին մասամբ քարե գործիքներ, պահպանում էյին մեռյալների մարմինները և կերակրում էյին նրանց, պատկերացնում էյին աստվածներին կենդանիների կերպարանքով, կիրառում էյին մանկական այբուբեն։ Այդ բոլորը վերարտադրում էյին նրանք հարյուրավոր տարիների ընթացքում խնամքով և ճշտությամբ, Թեև շատ հին սովորությունների իմաստն անհետացել և մոռացվել էր արդեն։

Առաջավոր Ասիան: Այլ դրության մեջ, քան յեգիպտացիք, գտնվում էյին Միջագետքում, այսինքն Յեփրատ և Տիգրիս գետերի հոսանքի ուղղությամբ անցնող տափարակի վրա ապրող քաղաքակիրթ ժողովուրդները։

Միջերկրական ծովի և այդ գետերի միջև գտնված յերկիրը հարավում աննկատելիորեն մտնում է Արաբական Թերակղզին։ Այդ մեծ քառանկյունու միջին մասը, վոր կոչվում է Առաջավոր Ասիա, կազմում է մեծ արաբական տափաստանը (ստեպը)։ Նրա յեզրերին գտնվում է— հարավում **Յերջանիկ Արաբիան**, արևմուտքում **Սյուրիան** (վորի հարավային մասն է **Քանաանը**), արևելքում **Սենաարը** կամ **Բաբելաստանը**՝ ստորին Յեփրատի և Տիգրիսի շրջանը։ Այդ յերեք յերկրներում հնուց իվեր ապրում էյին հողագործներ և այգեգործներ։ Վորովհետև նրանք բաց են տափաստանի կողմից, ռազմաշունչ, Թափառական ցեղերը հաճախ Թալանում էյին հարուստ և խաղաղ հարևաններին, իսկ ժամանակ-առ-ժամանակ, հավաքվելով մեծ մասսաներով, նրանք նվաճում էյին դրանց։

Սենաարը Յեգիպտոսից աղքատ է բույսերի տեսակներով։ Խաղող և ձիթապտուղ այնտեղ չկա. շատ քիչ կան ծառերի տեսակներ։ Բայց հաց շատ էր տալիս այդ յերկիրը։ Մեծ օգուտ էյին ստանում արմավենուց. նրա պտղից շինում էյին ալյուր, գինի, շաքար, քացախ. Թելաշատ մասերից պատրաստում էյին գործվածքներ. կորիզները փոխարինում էյին ածուխը դարբնոցներում կամ՝ մանր աղած՝ ծառայում էյին վորպես կեր անասունների համար։ Մի հին յերգում ասված է, վոր արմավենուց կարելի յե օգտվել 360 յեղանակով։

Յերկու մեծ գետերի յերկարությամբ ձգվող տափարակն իրոք կալվում է ներքին մեծ ստեպի շարունակությունը. միքանի ամիսների ընթացքում այնտեղ անտանելի շոգ է լինում և ամեն ինչ չորանում է։ Գարնան վերջը նա դառնում է ջրհեղեղի յերկիր. Յեփրատի և Տիգրիսի ջրերը հեղեղվում են ընդարձակ տարածությունների վրա և տեղ-տեղ նույնիսկ միանում են իրար։ Այստեղ էլ, ինչպես և Յեգիպտոսում, պետք էր հսկայական աշխատանք կատարել, վորպեսզի հեղեղներից գոյացած ճահիճներն ու հեղեղներից հետո որացող տափաստանը դառնան ծաղկյալ այգիներ և արտեր։ Բազմաթիվ ջրանցքները, լճերը ջուրը պահելու համար, ամբարտակները և ջրամբարձ անցքերը նույնքան արվեստորեն էյին շինված, վորքան և Յեգիպտոսում։ Հողաբլուրները ջրանցքների յերկարությամբ ամրապինդ պատերով էյին ծածկում և նրանց վրա տնկում էյին արմավենիներ, վորոնք այս յերկրում այնքան Թանգագին ստվերն էյին տալիս։ Այնտեղ, ուր ջրանցքը ճահճային հողի վրայով պետք է անցներ, կամ ուր յերկու ջրանցքներն իրար էյին խաչաձևում, հունը սարքում էյին քարե խողովակներով կամ կամարներով,

որոնք հենված էին լինում մեծ սյուների վրա։ Ջրանցքները գործում էին ամբողջ տարվա ընթացքում. նրանք ծառայում էին ոռոգման նպատակների, լինելով միաժամանակ սքանչելի ճանապարհներ նավերի և նավակների համար։

Մեր ժամանակ, այս երկրում տեղի ունեցած բազմաթիվ արշավանքներից, թափառական ցեղերի տիրապետությունից հետո, երբ հետքն անգամ չի մնացել ջրային մեծ կառուցումներից, երկիրը մի մերկ, լքված ստեպի տեսք ունի, որ բաժանվում է մեծ ճահիճներով։ Չեն երևում նույնպես քաղաքների, տաճարների և դամբարանների ավերակները։ Եփրատի տափարակի վրա չկա շինությունների այն նշանավոր նյութը, որից այնքան շատ ունի Եգիպտոսը—մարմար, գրանիտ և ուրիշ ամրակուռ քարի տեսակներ։ Երկրի բնակիչներն ստիպված էին՝ տներ, տաճարներ, ամբարտակներ շինելու համար՝ անհրաժեշտ նյութերը կավից պատրաստել, նրանց շինությունները աղյուսից էին։ Այդ պատճառով է, որ նրանք չդիմացան ժամանակի ներգործության, ինչպես Եգիպտոսում, և շուտով քանդվեցին։ Հաճախ հսկայական շենքից մնացել են միայն հետքեր հողաբլրի կամ կավե մնացորդների կույտի ձևով։

Այն ժամանակ, երբ Եգիպտոսում կազմվեց մեծ պետությունը, Միջագետքի հարավային մասում՝ Սենաարում ապրում էին **սումերները**, որոնք եգիպտացիների նման տիրապետում էին գրության արվեստին և խոշոր շենքեր, ջրանցքներ, պատվարներ ու տաճարներ կառուցանելու վարպետությանը։ Սումերները նման չէին հետագայի բաբելացիներին և ասորեստանցիներին, որոնք իրենց հերթին արտաքինով հիշեցնում են հրեաներին ու արաբներին և պատկանում են նրանց հետ ընդհանուր **սեմիտական** ցեղին (սեմիտների անունը ծագում է Նոյի ավագ որդու՝ Սեմի կամ Սիմի անունից)։

Սումերները սափրում էին գլխի և դեմքի մազերը։ Նրանք ունեին երկար, սուր քթեր և շեղ աչքեր մոնղոլների նման, լիքը, կարճ մարմին։ Զինվորների հագուստը կազմում էր բրդե քուլքոտ կտորից կարած դերխան։ մարմնի վերին մասը մերկ է. ուսովը գցած ունեն պլեդը։

Սումերներն ունեին միքանի մեծ քաղաքներ, նրանց թվում Նիպպուրը, ուր գտնվում էր մեծ տաճարը, որ յոթը սանդուղներով բարձրացող լայն աշտարակաձև բուրգի էր նման։ Երբ սումերական պատեսիներից (իշխաններից) մեկը, հաղթելով հարևաններին, թագավոր էր դառնում ամբողջ ծովեզրյա երկրի, նա գնում էր Նիպպուր, Բել-Էլլիլ աստծու հավանությունն ստանալու համար։ Թագավորը ճոխ նվերներ էր բերում տաճարին և նրա քուրմերին. Թանգարժեք իրերը դնում էին տաճարի պահարանը։ Թագավորն աչքի ընկնող տեղում գրություն էր թողնում իր սխրագործությունների մասին. «Գլուխ կանգնած աստվածընտիր զորքին, որ առատ է որպես խոտ, ես նվաճեցի երկրներ արևելքից մինչև արևմուտք. Էլլիլ աստվածը բացեց իմ առաջ ուղիները և ճանապարհը հարթեց Տիգրիսի և Եփրատի **Ներքին** ծովից (այսինքն Պարսից ծոցից) մինչև **Վերին** (այսինքն Միջերկրականը)»։

Թեբեական թագավորության զորեղացման շրջանումն էր մոտավորապես, որ տափաստանների կողմից Եփրատի հովտի վրա հարձակվեցին

սեմիտական Ամուրրու ցեղին պատկանող թափառականները։ Նրանք խլեցին սումերներից մշակված հողերն ու կուտակած հարստությունները։

Այդ նվաճման ժամանակ կործանվեց շատ բան, որ քաղաքակիրթ սումերներն իրենց կյանքի բարելավման համար էին ձեռք բերել, բայց շատ բան նույնպես յուրացրին եկողները։ Նվաճումն ունեցավ մի հետևանք ևս. **կուլտուրան**, այսինքն քաղաքակիրթ ժողովուրդների գյուտերը, սովորությունները ու գաղափարները, անցնում էր ուրիշներին և տարածվում, դուրս գալով մի երկրի սահմաններից, ուրիշ երկրներում։

Համմուրաբի բաբելական թագավորը: Սեմիտներն ավերեցին սումերների հին բնակավայրերը, բայց իրենք նստակյաց դարձան և շինեցին նոր քաղաքներ ավելի վեր, Եփրատի և Տիգրիսի հոսանքով։ Նրանց մեջ ամենանշանավոր քաղաքը **Բաբելոնն** էր (որ նշանակում է «աստծու տներ»), այն տեղում, ուր Տիգրիսը մոտենում է Եփրատին։ Բաբելոնը բարձրացավ Թեբեյի հետ միաժամանակ։ 2000 թ. մոտերքը այնտեղ իշխում էր Համմուրաբին՝ սեմական զորավարների ժառանգը։

Համմուրաբին իր զորքերի հետ անցավ Եփրատով՝ նրա հոսանքն ի վեր՝ և մեծ գետի արևմտյան դարձից՝ դեպի Միջերկրական ծովը։ Նրան ենթարկվեցին բոլոր երկրները, որ գտնվում են Արաբական անապատից դեպի հյուսիս և արևելք, Միջերկրական ծովի և Պարսկական ծոցի միջև։ Միշտ պատրաստ զորք ունենալու նպատակով՝ Համմուրաբին իր զինվորներին հողաբաժիններ և գյուղական խրճիթներ բաշխեց. նրանք պարտավոր էին իրենք իրենց պահել հողի մշակման միջոցով և պատերազմի գնալ թագավորի հրամանով։ Զինվորի մահվան դեպքում նրա կնոջը թողնում էին հողաբաժնի $1/3$ մասը, որպեսզի նա կարողանար կերակրել-մեծացնել որդուն թագավորի ծառայության համար։ Համմուրաբին հրամայեց գրել, որ «ժողովուրդը քայքայող խռովություններից հետո նա կարգի բերեց գետերի և ջրանցքների հուները, հավաքեց այս ու այն կողմ փախած և աղքատացած բնակիչներին և նրանց նորից սնունդ տվեց, պաշտպանելով նրանց թշնամիներից»։ Ամենամեծ ջրանցքը, որ նրա օրով փորեցին, ստացավ «Համմուրաբի՝ ժողովրդի օրհնություն» անունը։

Բաբելոնի առևտուրը: Միջագետքի ստորին մասում հողը զարմանալի բերք էր տալիս, և բազմաթիվ մարդիկ զբաղված էին նրա մշակումով։ Բայց դրա հետ միասին նրանք ունեին մի ուրիշ խոշոր զբաղմունք ևս։ Այն ժամանակ, երբ Նեղոսի հովիտը փակ է, Եփրատի և Տիգրիսի միջև գտնված տափարակը, ընդհակառակը, ամեն կողմից բաց է։ Ամեն կողմից կարող էին գալ հարևանները ապրանքներ գնելու կամ իրենց ապրանքները բերելու։

Տափարակի բնակիչները մետաղ, քար, շինության համար պետքական փայտ չունեին. այդ նյութերը նրանք բերում էին լեռնային երկրներից հյուսիսից և արևելքից։ Թափառական ցեղերը, որոնք ոչ հաց ունեին ոչ էլ գործիքներ և բուսական թելերից գործվածքներ, գալիս էին ստեպից այդ առարկաների համար և բերում էին իրենց հետ փոխանակության համար անասուններ, բուրդ, կաշի։ Հարավային Արաբիայի երկրներից, որ անապատի մյուս կողմումն են գտնվում, նույն թափառական ցեղերը բե-

րում էին վոսկի, թանգագին քարեր, խունկ՝ տաճարներում ծխելու համար։ Վերջապես, ծովով մոտենում էին Ասիայի հարավային յերկրներից, մանավանդ Հնդկաստանից յեկող նավերը, վոր փղոսկրով, համեմներով և այլ իրերով էին բեռնավորված։ Իրենց դաշտերի և այգիների արտադրություններից զատ տափարակի բնակիչներն իրենց անհրաժեշտ նյութերի համար կարող էին վճարել իրենց արհեստների բազմաթիվ արդյունքները. Նրանք գործում էին գորգեր և նախշուն գործվածքներ, շինում էին բարակ մետաղե սրեր և մանավանդ կավե ամաններ՝ զանազանակերպ գեղարվեստական նկարներով գույնզգույն զարդարված։

Յերկրի վրայից բոլոր ուղղություններով անցնում էին հարմար ճանապարհներ։ Դեպի քաղաքները, վոր գետերի և մեծ ջրանցքների վրա նավահանգիստներ ունեյին, տանում էին մի կողմից՝ քարավանի ճանապարհներ անապատից, մյուս կողմից՝ ճանապարհներ լեռնանցքներից։ Այդ ջրային և ցամաքային ճանապարհների գլխավոր հանգուցակետը Բաբելոնն էր։

Փողը։ Բաբելոնի և Միջագետքի այլ քաղաքների բազմաթիվ առևտրականներ արտահանում էին իրենց յերկրի արդյունքները, գնում և ծախում էին ոտարերկրյա իրեր, տեղափոխում էին ապրանքներ։ Մեծ փոխանակությունն առաջ բերեց դրամի գործածությունը։

Առևտրի մեջ անհրաժեշտ է մի վորևե չափ՝ իրերի գինը վորոշելու համար։ Այդ նպատակի համար ընտրում են մի այնպիսի ապրանք, վորով հարմար լինի չափել և գնահատել մնացած բոլոր ապրանքները. այդ ապրանքը ծառայում է վորպես դրամ։ Մենք այժմ գործածում ենք միայն մետաղյա դրամ։ Հին ժամանակում կամ այն յերկրներում, ուր քիչ մետաղ կար, կամ ուր այն չգիտեյին հանել, մետաղյա դրամը փոխարինում էին թավամազ կենդանիների, որինակ, կզաքիսի, սկյուռի մորթերը։ Խաղաղ ովկիանոսի կղզիաբնակների մոտ ապրանքները փոխանակում էին խեցիներով։ Անասնապահների մոտ դրամի դեր էին կատարում յեզները, վոչխարները և այլն. ասում էին՝ սարկուհին արժե 4 յեզ, վոսկե սպառազինությունը արժե 100 յեզ, պղնձինը՝ 9 յեզ. թագավորազնը տալիս էր 100 յեզ վորպես փրկանք՝ գերությունից ազատվելու համար։

Բայց յերբ մարդիկ սկսեցին մետաղ հանել կամ ստանալ իրենց ծախած ապրանքների փոխարեն, նրանք ամենից ավելի մեծ հաճույքով դրամ էին դարձնում մետաղի կտորները։ Դա շատ պատճառներ ուներ։ Ամուր, գեղեցիկ մետաղը միշտ պետք էր ամենքին զենքի, գործիքների, զարդարանքի համար։ Ապա նա չի փչանում, նա կարծես հավերժական է։ Վերջապես մետաղը հարմար է մանր մասերի բաժանելու համար. Նրա յուրաքանչյուր կտորը գին ունի, այդ պատճառով էլ մետաղի միջոցով հարմար է գնահատել թե թանկ և թե էժան իրերը։

Իրենց ընդարձակ առևտրի մեջ բաբելացիք գործածում էին մեծ քանակությամբ մետաղե դրամներ։ Նրանք մետաղից պատրաստում էին հավասար ծանրություն ունեցող կտորներ, այսինքն, **դրամ**։ Յերբեմն այդ մետաղե կտորներին տալիս էին յեզների կամ յեզան գլուխների կերպարանք ի հիշատակ նախկին փողերի։ Առևտրի մեջ նույնպես ընդունում էին վոսկե, արծաթե, պղնձե, կապարե աղյուսիկներ, ձողիկներ, մատանիներ, կլոր իրեր։

Տուն, հող, ստրուկ, հագուստ, հացահատիկ և այլ իրեր գնելու ժամանակ վճարում էին կանխիկ փող։ Ուստի ով վոր կարող էր, աշխատում էր հավաքել վորքան կարելի յե շատ մետաղե դրամ։ Հին ժամանակում մեծ պաշարներ էին հավաքվում աստվածների տաճարներում։ Դրանք գոյանում էին նվերներից և նվիրաբերություններից, բայց, դրանից զատ, շատ մարդիկ իրենց փողերը պահ էին տալիս տաճարներին, վորովհետև աստվածների պահարանները լավ փակեր ունեյին։ Ավելի ուշ թագավորները տաճարների պահեստների նման շինել տվին իրենց համար մթերանոցներ, ամբարներ և գանձանոցներ։

Յեթե վճարումը կատարվում է փողով, գույքն արագորեն կարող է ձեռքից ձեռք անցնել։ Այդ դեպքում հաճախ կարելի յե ոգուտ ստանալ ապրանք գնելու և նորից ծախելու միջոցով։ Ամեն մի ձեռնարկի համար պետք է ունենալ ազատ փող, վորի միջոցով կարելի լինի նյութեր գնել, բանվորներ վարձել և այլն։ Այդ բոլորից կարող են ոգուտ քաղել մետաղի տերերը, յեթե սկսեն իրենց փողերն աճման տալ, այսինքն պարտքով տալ, և իրենց համար վաստակ պահանջել այդ ծառայության փոխարեն։ Բաբելոնում թագավորական արծաթի պահեստների կառավարիչները, տամկարները վաճառականներին դրամ էին տալիս պարտք։ Նրանց մոտ կարելի յեր նաև դրամ գնել և փոխել։

Բոլոր այդօրինակ հաշիվները ճշտություն էին պահանջում։ Ամեն մի առևտրական համաձայնության դեպքում գրավոր պայման էին կապում։ Յեփրատի և Տիգրիսի տափարակի վրա հողի տակից դուրս են հանում տասնյակ հազարավոր այդպիսի պայմաններ և անդորրագրեր՝ պարտք տալու և ստանալու, վարձագինը վճարելու, կալքը ծախելու մասին և այլն. դրանք բոլորն էլ գրված են կավե տախտակների վրա նշաններով։

Գրագետներն այստեղ նույնքան շատ գործ ունեն, վորքան և Յեգիպտոսում։ Վորպեսզի կեղծում և խարդախություն չլինի, յուրաքանչյուր կավե գրություն դնում էին կավե ծրարի մեջ և նրա վրա կրկնում էին նույն մակագրությունը։ Յեթե հետո վեճ էր ծագում պայման կապողների միջև, կամ յեթե կասկած էր հարուցվում գրության վավերականության մասին, ջարդում էին վերևի շերտը և ստուգում էին նրա բովանդակությունը ներքևի ծածկված տախտակի միջոցով։ Այնքան շատ էին առևտրական հարաբերությունները, վոր գրեթե ամեն մարդ ուներ կնիք, վոր ամրապինդ քարի վրա յեր փորագրված և ստորագրության փոխարեն էր ծառայում. միայն ամենաչքավոր մարդիկ կնիք չունեյին և դրա փոխարեն կավե տախտակի վրա դնում էին իրենց յեղունգների հետքը։

Բաբելոնի հարստությունը։ Յերկրի կառավարիչները, թագավորը, նրա տեղապահները և պաշտոնյաներն առևտրով պարապող ազգաբնակությունից խոշոր յեկամուտներ էին ստանում. այդ պատճառով նրանք հետևում էին, վոր առևտրի մեջ խարդախություն և նեղումներ չլինեն։ Համմուրաբի թագավորը հրամայեց կազմել **օրենքների** մի մեծ **ժողովածու**։ Այդտեղ մանրամասնորեն վորոշված է, թե ինչ է վճարում կապալավարձակալը հողի համար, ինչպիսի տուգանք պետք է ստանալ ջրամբարը քանդած և դրանով հարևանների ցանքսերը փչացրած մարդուց, վորքան պետք է վճարել զանազան

արհեստների մեջ աշխատող բանվորներին, վորքան արժե բժշկի աշխատանքը, վորքան արժե տուն շինողի և գետով ապրանքներ փոխադրողի աշխատանքը: Որենքների կազմողը յեռանդուն կերպով պահանջում է, վոր վարձողներն ու վարձվողները, պարտատերերն ու պարտապանները շիտակորեն և ճշտորեն կատարեն իրենց պայմաններն ու հանձնառությունները. այդ որենքների խախտման համար նա սպառնում է պատիժներով: Թագավորը հիշեցնում է, վոր ինքը մեծ աստվածն է «նրան հանձնարարել յերկրին որենք տալ, վորպեսզի ուժեղը չկարողանա թույլին վնասել»:

Յեգիպտոսում հարստությունները մեծ մասամբ բաղկացած եյին լինում **անշարժ կայքից.** դրանք խոշոր կալվածքներ եյին, վորոնց մեջ հավաքվում և պահվում եյին մթերքների և ապրանքների պաշարներ: Բաբելոնում հարստությունների մեծ մասը բաղկացած եր **շարժական կայքից** և դրամից, վորոնք մարդկանց թույլ եյին տալիս ձեռք բերել հազվագյուտ ու ներմուծվող ոտարերկրյա ապրանքներ: Բաբելացիների կյանքում ավելի շատ կար փարթամություն և բազմազանություն: Հարուստ մարդիկ իրենց հարմարության համար գնում և պահում եյին իրենց տանը ոտարերկրյա ստրուկներ: Ավելի ուշ ժամանակներում Հերոդոտին, վոր այցելել եր Բաբելոնը, թվում եր, թե աշխարհիս յերեսին չկան մարդիկ, վորոնք բաբելացիներից ավելի գնահատեյին հագուստի և զարդարանքի նրբությունը: Բարձր գանգրացրած կեղծամով, լայն ծալքերով իջնող նախշուն հագուստով, գործված կոշիկներով, մատանի-կնիքը՝ մատին և գեղարվեստականորեն փորագրված գավազանը՝ ձեռքին փողոց եր դուրս գալիս հարուստ բաբելացին: Ավելի հասարակ սարք ու կարգի սովորած հույներին ապշեցնում եյին նույնպես քաղաքի մեծությունն ու ամրությունները. Բաբելոնի դրսի պատերը 8 մղոն յերկարություն ունեյին. նրանց բարձրությունը մինչև 200 կանգուն եր, իսկ լայնությունը՝ մինչև 50 կանգուն, այնպես վոր պատի վերևը նման եր սալահատակած փողոցի, վորով կարող եյին կողք-կողքի անցնել միքանի զինվորական սայլեր: Պատերի մեջ շինված եյին 100-ի չափ պղնձե դարպասներ: Պատերի յետևում գտնվում եր մի լայն և խոր փոս, վոր ջրով եր լցված:

Քաղաքը շինված եր կանոնավոր պլանով. ուղիղ փողոցներն անցնում եյին Յեփրատ գետին զուգընթաց. մյուսները խաչաձևում եյին այդ փողոցները ուղիղ անկյունի տակ և դուրս եյին գալիս գետափը. այդ փողոցներն ևս փակվում եյին պղնձե ծանր դարպասներով: Ամեն դասակարգի և զանազան ազգությունների պատկանող մարդկանց խայտաբղետ ամբոխը խռնվում եր փողոցներում, լցնում եր հրապարակների վրա գտնվող շուկաները: Մարդկային բնակարանների վրա բարձրանում եյին աստվածների քարե վիթխարի տները: Նրանք կառուցվում եյին ընդարձակ քառանկյունի հողաթմբերի վրա և վեր եյին բարձրանում սանդուխի ձևով: Վորքան ավելի բարձր եր հարկը, այնքան ավելի նեղ եր այն կազմող քառանկյունին: Ամեն մի հարկ առանձին ներկով եր ներկված և փայլում եր իր վոսկեզոծված մասերով: Տաճարների և պալատների մուտքերը կարծես պահպանվում եյին մարդագլխանի թևավոր յեզների հսկայական արձաններով, վորոնք քարից եյին կերտված:

Առասպելներ աշխարհի ստեղծագործության յեվ ջրհեղեղի մասին: Յեփրատի տափարակի վրա գտնվող արձանագրություններն ու նկարները բաբելացիների գործնական կյանքը չե միայն վոր ներկայացնում են մեզ: Մենք իմանում ենք նաև նրանց գաղափարները տիեզերքի, աստվածների, անդրշիրիմյան կյանքի մասին:

Աշխարհի ստեղծագործության առասպելը պատմում է, վոր քաոսի ծովում իշխող հրեշ **Տիամատը** նախ ծնեց ավագ աստվածներին և ապա կրտսերներին, վորոնք սկսեցին նեղել ավագներին: Այն ժամանակ Տիհամատը, լսելով ավագ աստվածների գանգատը, ծնեց հսկաներ, վիշապներ, ոձեր, կատաղած շներ և նրանց գլուխն անցած՝ պատրաստվեց վոչնչացնելու կրտսեր աստվածներին: Անու աստվածը հրավիրում է իր յեղբայրներին և քույրերին մեծ խնջույքի, և նրանք նստում են խորհրդակցության: Գարնան արևի աստված Մարդուկը հրավեր է ստանում կռվի բռնվելու քաոսի հրեշի հետ: Նա խճճում է Տիհամատին հսկայական ցանցի մեջ, նետում է նրա վրա կայծակներ և կտրում է նրան յերկու մասի՝ յերկնային ծով և յերկրային ծով. մեկի և մյուսի վրա նա ամրացնում է ցամաք: Հետո նա ցանում է կյանքի սերմեր յերկրային մակերևույթի վրա, ստեղծում է բույսեր, կենդանիներ և վերջապես մարդուն հողի մի կտորից:

Այն միտքը, թե սկզբում ամեն ինչ ջրով է յեղել ծածկված, և թե ամեն ինչ ջրից ծագեց, ըստ յերևույթին ներշնչված է ամեն տարի կրկնվող գարնանային հեղեղումներից, վորոնցից հետո յեր վերածնվում կյանքը. ամեն տարվա պատկերի ձևով է վոր իրենց ներկայացնում եյին նաև աշխարհի առաջին գարունը. դրանից է, վոր արարիչ աստվածը գարնանային աստվածն է: Մի գիծ ևս ուշադրության արժանի յե բաբելացիների հասկացողության մեջ. յերկնային աշխարհը նման է յերկրային աշխարհին. նրա քարտեզը նույն է. այնտեղ մեծ ովկիանոս է, և ճիշտ նույնպես ներքևում՝ յերկիրը պահվում է հսկայական ծովի մեջ. յերկնքի վրա նույն յերկու մեծ գետերն են՝ Յեփրատն ու Տիգրիսը. այնտեղ ել կա առանձին Բաբելոն, Մարդուկի հատուկ տաճար և այլն:

Հեղեղները ներշնչեցին և մի ուրիշ ավանդություն — **մեծ ջրհեղեղի մասին:** Մի անգամ աստվածները բարկացան մարդկային ցեղի վրա և վորոշեցին վոչնչացնել այն, ուղարկելով դաժան փոթորիկ և անձրևատարափ: Բայց ծովային աստվածը՝ իմաստուն Եան գթացավ իր սիրեցյալ Ուտնապիշտիմին և խորհուրդ տվեց նրան շինել մի նավ, վերցնել նավի վրա իր մերձավորներին, կենդանիների բոլոր տեսակները և բույսերի սերմերը: Նավը յոթը որ դես ու դեն եր քշվում ջրերի վրա. Նրա բնակիչները մեկը մյուսի յետևից արձակեցին մի աղավնի, մի ծիծեռնակ և մի ագռավ՝ իմանալու համար, թե իջե՞լ է արդյոք ջուրը: Ջրհեղեղի վերջանալուց հետո կյանքը յերկրի վրա կրկին վերածնվեց:

Մահը, դժոխքը յեվ դրախտը բաբելացիների հասկացողությամբ: Մահվան և անդրշիրիմյան աշխարհի գաղափարը բաբելացիների մոտ միքիչ տարբեր եր, քան յեգիպտացիների մոտ: Մահը թվում եր նրանց մեծագույն չարիք և սարսափելի յերևույթ: Նա «չի տալիս ազատություն» և «խոտաբույսի պես» հնձում է կյանքը, «գցում է ծանր շղթաների մեջ»,

«ծակում է դանակով»: Աշխարհի ամբողջ մեծությունն և զորությունը չքանում են կյանքի հետ: Ամեն տեսակ յերջանկություն ու խնդություն յերկրին բերող Իշթար աստվածուհու մասին յեղած առասպելը պատկերացնում է, թե ինչպես ինքը թագուհին պետք է դժոխք իջներ և կրեր նրա տանջանքները. նրանից պոկեցին նրա պսակը, բոլոր զարդարանքները և նրան շղթայեցին. նրա գեղեցիկ դեմքն ու մարմինը ծածկվեց հիվանդագին պալարներով. նրա սիրտն ու գլուխը զարկված եյին հիվանդություններից: Ճիշտ նույնպես էլ զարնվում է մարդուս եյությունը:

Զզվելի վոգիները լցնում են ստորերկրյա դժոխքը: Նրանք տանջում են մեռյալների հոգիները: Բայց նրանք դուրս են գալիս նույնպես յերկրի, յերեսը. նրանք թռչում-գալիս են սարսափելի անապատից, արևմուտքից, նրանք վայրագորեն են իրենց պահում գիշերները: Դրանք հրեշներ են



Մարդագլուխ թևավոր յեզներ.

վոր արյան ծարավի յեն, վոր վոչնչացնում են ամեն ինչ և չեն խնայում նույնիսկ աստվածների պատկերները: «Նրանք, օձերի նման, ներս են սողում մարդկանց տները: Նրանք գողանում են կնոջը ամուսնուց, փախցնում են յերեխային հոր ձեռքից, հեռացնում են տանտիրոջը իր ընտանիքից: Նրանք անցնում են գյուղից գյուղ, տանում են յերեխաներին, բներից դուրս են քշում թռչուններին, զարնում են յեզներին և գառներին. այդ չար դևերը վայրենի վորսորդներ են»: Նրանք բերում են յերաշտ, ուղարկում են հիվանդություններ. մեկը՝ տենդ, մյուսը՝ ժանտախտ՝ իսկ յերրորդը մարդուն կոկորդից է բռնում:

Չար վոգիներով և ուրվականներով շրջապատված մարդս աշխատում է նրանցից պաշտպանվել: Ամենահաստատ միջոցն է պատրաստել չար վոգու պատկերը, վոր պետք է ըստ կարելույն նման լինի նրան, և կախել այդ տիկնիկը տան առջև՝ նրա տեսքով իրան վոգուն փախցնելու համար, կամ, ավելի ևս լավ է, հանդիսավորապես և անեծքներով այրել պատկերը: Բաբելացիք այդ չար վոգիներին այլանդակ գծեր եյին տալիս—բացած ատամներ, յեղջյուրներ և խոզան, պոչեր և ճիրաններ և այլն: Այս բոլոր գծերից է վոր կազմվեց սատանայի կերպարանքը, վոր հետո անցավ յեվրոպացիներին:

Բայց մեռյալ մտքերի շարքը ճեղքում եր ազատության վորոշ հույս— Ամեն տարի տոնվում է ստորերկրյա աշխարհից մեռյալ յերիտասարդ աստծու վերադարձը, վորին դրանից առաջ մեծ սգով տարել եյին գերեզման: Այսպես կարող է հավիտենական մահից փրկվել և մարդը: Գարնան և գարնանային արևի աստվածը՝ Մարդուկը «գթասիրտ» է, «սիրում է հարություն տալ մեռյալներին»: Կա կենարար (անմահական) ջուր գաղտնի տեղում, ով խմի նրանից կամ ով սրսկի իրան նրանով, կվերադառնա դեպի կյանքը և անմահություն կստանա: Արևմուտքում, հեռու, այնտեղ, ուր մայր է մտնում արևը, կան «յերանելիների կղզիներ)», ուր չկա վիշտ և մահ: Առասպելը պատմում է, ինչպես հզոր արքա Գիլգամեշը դեպի այդ կղզիները տանող ճանապարհն եր փնտրում: Նրա բարեկամ Եաբանին, վորի հետ նրանք կատարում եյին իրանց սխրագործությունները, մեռավ, իսկ Գիլգամեշի սիրտը պատեց թախիծն ու մահվան յերկյուղը. բայց Գիլգամեշը մեռնել չի ուզում. նա պատրաստվում է ազատել իր ընկերոջ մահվան յերախից և

Մարդուկ աստվածը կռվում է չար վոգու դեմ:

իմանալ անմահության գաղտնիքը: Ուղևորվելով արևմուտք՝ Գիլգամեշը հույս չունի, վոր կգտնի իր նախահոր, աստվածների սիրելիին, Ուտնապիշտիմին, վորին նրանք կենդանի եյին վերցրել յերկրային դրախտը: Նա անցնում է սարսափելի կիրճերից, պատահում է դեպի լիճը տանող մուտքի մոտ հրեշայական մարդ-կարիճներ, անցնում է լեռան միջից կատարյալ խավարի մեջ և, դուրս գալով այնտեղից, գտնում է մի հրաշագեղ պարտեզ, վորի մեջտեղում կանգնած է աստվածային ծառը իր փայլուն, ինչպես թանգագին քարեր, պտուղներով: Վերջապես Գիլգամեշը հասնում է մահվան մեծ ծովը, վորի վրայից միայն արևն է սահում, և վորի վրայից անկարելի յե անցնել: Բայց Գիլգամեշը մի նավակավար է գտնում և ծանր ջանքերից հետո մյուս ափն է հասնում: Այստեղ նա իր անմահ նախահորը պատմում է իր տանջանքների մասին: Վերջինս խորասուզում է Գիլգամեշին կախարդական քնի մեջ և հրամայում է տանել դեպի կյանքի ակնաղբյուրը. Գիլգամեշը ծովի հատակից դուրս է բերում կյանքի հրաշալի ծառը, վոր անմահություն է տալիս մարդուն: Վերադարձի ճանապարհը բռնելով՝ Գիլգամեշը վերցնում է իր հետ այդ բույսը, բայց օձը ճանապարհին հափշտակում է ծառը: Գիլգամեշին հաջողվում է դեռ այն աշխարհից կոչել իր ընկերոջ ստվերը, բայց նա պատմում է միայն մեռյալի սգավոր բախտի մասին:

Բաբելացիների արքայական գիտությունը: Մարդուս շուրջը վխտացող չար վոգիների դեմ լավագույն պաշտպանությունը բաբելացիները մտածում եյին գտնել լուսապայծառ մեծ աստվածների մեջ, վորոնք իշխում են յերկընքում և յերևում են լուսատուների մեջ՝ արևի, լուսնի և հինգ վառ, հասարակ աչքով տեսանելի մոլորակների մեջ (նրանց լատինական անուններն են—Մերկուրիոս, Վեներա, Մարս, Յուպիտեր և Սատուրն)։ Այդ յոթը բարձր ուժերին աղոթքներով և աղերսանքներով եյին դիմում. նրանց կամքը, նրանց ցուցմունքները՝ մարդկանց ուղղված՝ աշխատում եյին լուսատուների շարժման մեջ կարդալ։

Բաբելական քուրմերը մանրամասնորեն զբաղվում եյին յերկնային յերևույթների ուսումնասիրությամբ, և նրանց մոտ զարգացավ մի շատ բարդ և դժվարին գիտություն։ Նրանք կազմեցին որացույցը, վոր հետո յուրացրին յեվրոպական ժողովուրդները։ Բաբելական որացույցի մեջ միացած ե ժամանակի հաշիվը՝ ըստ արևի տեսանելի շարժման և ըստ լուսնի շարժման։ Տարի անվանեցին այն ժամանակաշրջանը, վորի ընթացքում արեն անցնում ե յերկնքի մեծ գոտիով (կենդանակամարով)։ Տարին բաժանեցին 12 մասի, յուրաքանչյուրը 30 որից բաղկացած, համաձայն լուսնի շրջանառության ժամանակին (մինչև այժմ յեվրոպացիք լուսինը և այն ժամանակը, վորի ընթացքում նա անում ե իր շրջանը, անվանում են միևնույն խոսքով—**ամիս**)։ Արևի միամյա յերկնային շրջանի մեջ այդ 12 մասերը նշանակեցին մեծ համաստեղությանց անունով՝ Ցուլ, Յերկվորյակ, Խեցգետին, Առյուծ և այլն։ Այնուհետև յոթը մեծ աստվածներից յուրաքանչյուրին նվիրվեց մի հատուկ որ, և այդ կերպ ստացվեց նաև ամսի բաժանումը չորս շաբաթի։ Բաբելոնյան յոթնորյա շաբաթը անցավ հետո բոլոր յեվրոպական ժողովուրդներին, և միքանիսը նույնիսկ պահպանել են իրենց հին, լուսատուներից ստացած անունները (անգլերեն կիրակի—sunday յե, այսինքն արևի որ, ֆրանսերեն lundi, mardi, mercredi, նշանակում են լուսնի որ, Մարսի որ, Մերկուրիոսի որ)։

Յերկնային բոլոր յերևույթներից առանձնապես ապշեցուցիչ են մարդուս համար խավարումները։ Յերբ մաքուր յերկնքի վրա աստված-լուսատուի պայծառ դեմքը սև քողով եր ծածկվում, մարդիկ համոզված եյին լինում, վոր ինչ-վոր սարսափելի կամ կարևոր բան ե պատահելու։ Բաբելացիք աշխատում եյին նկատել այն ժամանակամիջոցները, յերբ կրկնվում եյին արևի և լուսնի խավարումները, և այդպիսով սովորեցին նախագուշակել նրանց։

Նրանք ճշտորեն չափեցին աչքով տեսանելի յերկինքը և հաշվեցին, վոր որահավասարի ժամանակ արևը յերկնային կիսաշրջանի վրա՝ արևածագից մինչև արևամուտ՝ տեղավորվում ե իր շրջանի տրամագծով 180 անգամ (3×60)։ Նրանք սկսեցին բաժանել առհասարակ ամեն մի կիսաշրջան 180, իսկ ամեն մի շրջան՝ 360 մասերի (2×180 կամ 6×60)։ 60 թիվը դառավ կախարդական սրբազան թվերից մեկը. նա ընդունված եր բաբելացիների մոտ, վորպես հաշվի հիմք՝ ինչպես մեզանում 100-ը։ Ժամը բաժանում եյին 60 րոպեյի, րոպեն՝ 60 վայրկյանի. Շրջանի և ժամի այդ բաժանումները ևս անցան մեզ։

Չնայելով բաբելական քուրմերի արած հաշիվների ամբողջ ճշտության, այնուամենայնիվ աշխարհաշենքի մասին նրանց ունեցած հասկացողությունները ուղիղ չեյին. նրանք կարծում եյին, թե արեն իրոք ամեն որ սահում ե ամբողջ յերկնքի վրայով և գիշերն անցնում ե գետնի տակից, թե բոլոր լուսատուները պտտվում են յերկրի շուրջը, վոր անշարժ կանգնած ե աշխարհի մեջտեղը։ Թվերը և չափերը չեյին ծառայում նրանց, վորպես սոսկ նշաններ. տիեզերական կարգի և յերկրային կյանքի մեջ պետք ե կրկնվեյին կախարդական թվերը՝ յերեքը, յոթը, տասներկուն, վաթսունը։ Տիեզերքը բաղկացած ե յերկու մեծ մասից՝ յերկնային թագավորությունից և նրա ճիշտ պատկեր յերկրային թագավորությունից։ Դրանցից ամեն մեկը կազմում ե յերեք շերտ, մեկը մյուսի վրա—ջուր, ցամաք և ոդ։ Յերկնքի ցամաքային գոտիով կամ յերկնային պատնեշի վրայով են շարժվում արեն ու մյուս լուսատուները։

Ապա բաբելացիք հավատում եյին, թե յերկինքը մի մեծ բաց գիրք ե, վորի մեջ գիտնականը կարող ե կարդալ այն ամենը, ինչ վոր կա և պիտի լինի յերկրիս վրա։ Յեթե յերկնային աշխարհը ճիշտ նույնպես ե ստեղծված և բաժանված, ինչպես յերկրայինը, այն ժամանակ նրա մեջ կատարված դեպքերը ևս պետք ե վոր բառացի ճշտությամբ կրկնվեն յերկրի վրա։ Պետք ե միայն ուշադրությամբ նկատել, դիտել այն ամենը, ինչ վոր կատարվում ե յերկնքում, և գտնել բոլոր բնական յերևույթների իսկական իմաստը։ Մի վորևե մոլորակի յերևումը յերկնակամարի վրա կարող ե նշանակել առատ բերք, մյուսինը՝ թշնամու հարձակում։ Կան բախտավոր և կան չարագուշակ լուսատուներ, լինում ե նրանց բարենպաստ և սպառնական դասավորումը։ Մարսը (կարմիր աստղը) մեծ մասամբ դժբախտություն ե բերում. Յուպիտերը (սպիտակ աստղը) ազդարարում ե յերջանկություն։ Թագավորական արշավանքի բախտը կախված ե այն բանից, թե ինչ կասեն աստղերը։ Յուրաքանչյուր մարդու բախտ նախորոշված ե յերկնքում. որինակ, թագավորի վորդու ծննդյան ժամանակ նկատում եյին լուսատուների դիրքը և գուշակում եյին նրա կյանքը։ Բաբելական գուշակողներն ամեն որ բարձրանում եյին աստվածների բարձր աշտարակների վրա, դիտում եյին, գրի եյին անցկացնում իրենց դիտողությունները և գուշակում։

Բաբելացիք կիրառում եյին մի գիտություն, վոր իրենք չեյին հնարել։ Գիտելիքների և դիտողությունների մեծ մասը նրանց եր անցել մի ավելի հին ժողովրդից՝ **սումերներից**, վոր ապրում եյին Յեփրատի վրա։

Այդ ժողովուրդն ե, վոր հնարեց այբուբենը. նրա լեզվով ե վոր առաջին անգամ գրի առնվեցին գուշակությունները, յերկնային յերևույթների կարգը և որացույցը. այս տեղեկությունների իմանալու համար՝ բաբելացիք ստիպված եյին սովորել ոտար հին լեզուն, կազմել նրա համար բացատրություններ, քերականություն և բառարաններ։ Ինքը դեպի գիտություն տանող ճանապարհը այդպիսով շատ բարդ և դժվար եր։

Գրի բաբելական ձևը նման չեր յեգիպտականին. սովորական գրի համար վերցնում եյին վոչ թե թուղթ, այլ բարակ տախտակներ և տակավին խոնավ կավի վրա փորագրում եյին սուր գործիքով. ստացվում եյին մեխերի կամ սեպերի նման ակոսիկներ, ինչու և գրի այդ ձևն անվանում են

սեպագիր: Հավանաբար նույնպես, ինչպես և յեգիպտացիների մոտ, բաբելացիների գիրն էլ սկսվեց նկարներից. վորոշ նշանների մեջ կարելի յե նըկատել աստղ, մեղու և այլն: Բայց շնորհիվ կակուղ կավի վրա նրանց արագ գրելու յեղանակին, նկարների ուրվագծերը պարզ չեյին դուրս գալիս. շուտով նախնական ձևերը մոռացվեցին և մնացին սոսկ պայմանական նշաններ բառերի, վանկերի և հնչյունների համար:

Փորագրված տախտակները չորանալուց հետո կարելի յեր շատ յերկար պահպանել: Ամբողջ գիրքը իրար վրա դարսված աղյուսների կույտի տեսք ուներ: Պեղելով բլուրները և հողակույտերը Միջագետքի հին քաղաքների տեղում, յեվրոպացիք մի ամբողջ աղյուսային գրադարան գտան: Նա պատկանում եր Բաբելոնի հարևան յերկրի՝ Ասորեստանի թագավորին: Ասորեստանցիք յուրացրել եյին Բաբելոնի գիտությունը և արվեստները. ասորական թագավոր Ասսուրբանիպալը, վոր ապրում եր Համմուրաբիից գրեթե 1500 տարի հետո, մեծ ջանք թափեց հավաքելու հին և նոր գրքեր, վորոնց մեջ գրի եյին առնված դյուցազնական պատմություններ, աղոթքներ, յերկնային յերևույթների դիտողություններ, գուշակություններ:

Յեգիպտացիների ասիական պետությունը 1500—1200 թթ.: Մոտավորապես 200 տարի Համմուրաբիից հետո ամբողջ արաբական անապատի յերկարությամբ ապրող՝ ստեպի բնակիչներն սկսեցին ուժգնորեն շարժվել իրենց տեղերից: Մեծ հորդաներ, **հիքսոսների** (հովիվների) գլխավորությամբ, ուղևորվեցին Սուեզի պարանոցի վրայով դեպի Նեղոսի հարուստ, արգավանդ հովիտը: Հիքսոսները նվաճեցին հողագործական յերկիրը, բայց չանցան նստակյաց կյանքի. նրանց սուլթանը գլխավոր զորավարների հետ միասին մնաց մեծ բանակատեղիում, Ավարիսում, ուր նրանք պահում եյին թալանած հարստությունները. տուրք հավաքելու համար հիքսոսներն ուղարկում եյին հարկահաններ, վորոնք իրենց մոտ ունեյին թագավորական կնիք: Միայն Թեբեացիք Յեգիպտոսի հարավում անկախություն պահպանեցին:

Մոտ 150 տարի տևեց հիքսոսների տիրապետությունը Նեղոսի հովտում: 1580 թ. Ք. ծ. առաջ Թեբեական փարավոնը, հավաքելով իր զորքը, գրոհով վերցրեց հիքսոսների բանակատեղին Ավարիսում և ավերեց նրանց պետությունը: Ստեպի բնակիչների մի մասը փարավոնը իր մոտ ծառայության վերցրեց. յեգիպտացիք վաչկատուններից յուրացրին ձիերով կռվելու և կռվի ժամանակ մի զույգ ձիով լծված կառքեր գործածելու սովորությունը. զորքի մեջ սկսեցին վարձով ընդունել նաև լիբիացիներ (արևմուտքից) և սևամորթ նուբիացիներ: Սկսվեց **Նոր թեբեական թագավորությունը**: Մեծ զինված բանակի տեր դառնալով, փարավոնները շարժվեցին դեպի Ասիա, յերկրորդ անգամ իրենց յենթարկեցին Քանաանը և նվաճեցին բովանդակ Սյուրիան:

Ռազմիկ Տուտմես III-ը (մոտ 1500 թ.) իր արշավանքների ժամանակ հասավ մինչև Տավրոսի լեռները Փոքր Ասիայում և Յեփրատ գետը: Թեբեյում, նրա տուն վերադառնալու ժամանակ, շինել եյին մի հաղթական դարպաս. փարավոնը իր զինվորական կառքի մեջ նստած՝ անցավ բարձր կամարի տակից իր հաղթական զորքի ուղեկցությամբ: Տուտմեսի սխրագործությանց մասին պատմում են ձակագրությունները 4 հսկայական կոթողների՝ **ոբե-**

լիսկների վրա (սրածայր, քառակող սյուներ), վոր նա հրամայեց կառուցանել. նրանցից յերկուսը դրված եյին հարավում՝ Թեբեյում և մյուս յերկուսը՝ Յեգիպտոսի հյուսիսում՝ Հելիոպոլիսում: Նոր ժամանակում ամենքն էլ ուզում եյին ձեռք բերել յեգիպտական նվաճողի հոյակապ հուշարձանները: Տուտմեսի կոթողներից մեկը վերցրին թուրքերը Պոլսի համար, յերկրորդը ձեռք բերեց պապը Հռոմի համար, յերրորդը Լոնդոն տարան անգլիացիք և չորրորդը Նյու-Յորկ տարան ամերիկացիք:

Ռազմիկ փարավոններից յուրաքանչյուրն աշխատում եր իր հիշատակը հավերժացնել մի մեծ շինությամբ Թեբե մայրաքաղաքում. յուրաքանչյուրը շինել եր տալիս իր հատուկ սրբատեղին Թեբեական գլխավոր աստըծու՝ Ամմոնի տաճարին կից. Ամմոնը այժմ համարվում եր ամբողջ աշխարհի նվաճողը: Մեր ժամանակում արաբական **Լյուքսոր** գյուղը Թեբեյի մեծ տաճարի կալվածքի միայն մի անկյունն է գրավում: Յերկար, գրեթե յերկու վերստ յերկարություն ունեցող ծառուղին տանում եր դեպի մի ուրիշ տաճար, ուր այժմ գտնվում է մի ուրիշ գյուղ՝ **Կարնակ** անունով. այդ ծառուղու յերկու կողմում տեղավորված եյին մեծ **սֆինքսներ**, վորոնք կարծես ճանապարհը պահպանող քարե պահակներ լինեին: Լյուքսորում մինչև այժմ կանգնած են մուտքի մեծ դարպասներ, **պիլոններ**, յերկու աշտարակների ձևով, վոր նման են չափազանց թեք կտրված բուրգերի. մնացել են նույնպես 50 սաժեն յերկարություն ունեցող սյունավոր մեծ դահլիճի ավերակները. նրա կտուրը պահող սյուները (գրեթե 150) ծածկված եյին խայտաբղետ և վառ նկարներով, վոր պատկերացնում եյին վերևում ծաղկե բաժակներով բացվող ցողուններ:

Կրետական սափոր, բրուտի անիվի վրա պատրաստած:

Առեվտուրն ու յեգիպտացիների դեսպանությունները: Նոր թագավորության որով յեգիպտացիք հեռու տարածեցին իրենց ճանապարհորդությունները ու հաղորդակցությունները: Ծովով ուղևորվում եյին նրանք դեպի հյուսիս, դեպի Կիպրոս կղզին, վոր հարուստ եր պղնձով: Ապա նրանք գնում եյին դեպի Կրետե կղզին, վոր արդեն Յեվրոպային եր պատկանում: Կրետեյի թագավորները մեծ նավատորմ ունեյին. կղզու հյուսիսային ափի վրա, Կնոսսում նրանք շինեցին մի հսկայական ամրացրած պալատ և պահում եյին փայլուն արքունիք: Կրետացիք մեծ հմտությամբ պատրաստում եյին կավե մեծ վազաներ, վոր հարթում եյին կավագործական անիվի վրա և նախշում եյին վառ ներկերով: Բազմաթիվ գեղեցիկ ամաններ ուղարկում եյին նրանք

Յեգիպտոս, իրենց հերթին այնտեղից ստանալով պերճանքի առարկաներ:

Յեգիպտական ապրանքները փոխադրվում էին նույնպես ցամաքային քարավանների միջոցով, որոնք գնում էին Միջերկրական ծովի ափով, Սիրիայի հովիտներով դեպի Յեփրատ և ապա գետի հոսանքն ի վայր դեպի Բաբելոն: Փարավոններն սկսեցին ազգակցական կապերով կապվել բաբելական թագավորների հետ: Թեև Յեգիպտոսը Բաբելոնից անհամեմատ ավելի ուժեղ էր, սակայն յեգիպտացիք հարկադրված էին լինում խոսել ասիացիների հետ **բաբելական լեզվով**: Նույնիսկ փարավոնին յենթակա Պաղեստինի և Սիրիայի իշխանները բաբելական լեզվով էին գրում նրան: Այդ լեզուն 2000—1000 թ. թ. Ք. ծ. առաջ Առաջավոր Ասիայում նույն դերն էր կատարում, ինչ որ ֆրանսիականը սրանից 200 տարի առաջ Յեվրոպայում, և ինչ որ է ներկայումս անգլիական լեզուն յերկրագնդիս մեծագույն մասում:

Ամառնա կոչված տեղում Նեղոսի վրա, Մեմֆիսի և Թեբեյի միջև, գտնվել են բազմաթիվ տախտակներ, որոնք Նեղոսի կավից էին չորացրած և բաբելական սեպագրով էին փորագրված: Հայտնվեց, որ դրանք փարավոն Ամենոֆիսի և նրա հոր (մեծ աշխարհակալ Տուտմեսի ժառանգ) ժամանակից մնացած նամակներ են: Փարավոնը պահանջում է, որ բաբելական թագավորը իր աղջիկը նրան տա կնության. թագավորները հավատացնում են իրար իրենց փոխադարձ հավատարմության և նվիրվածության մասին, ուղարկում են իրար ողջույններ և ցանկանում են իրար ամեն տեսակ բարիքներ «տանը, կանանց, զավակներին, յերևելիներին, ձիերին, կառքերին, զորքերին և ամբողջ յերկրին». նրանք հիշեցնում են, որ ապրանքներ ուղարկեն իրար. յեգիպտացին պահանջում է թանկագին քար (փիրուզա). բաբելացին՝ ոսկի: Ամառնայում գտնված և փարավոնին ուղղած մի նամակ Քանաանի իշխան Ուռուսալիմից (այսինքն Յերուսաղեմից): Յոթն անգամ նա ընկնում է թագավորի ոտքերը և յոթն անգամ, կրկին. նա աղաչում է չհավատալ նրա դավաճանության մասին տարածված լուրերին. «Ոչ թե իմ հորից և մորից ստացա յես յերկիրը, այլ թագավորի հզոր ձեռքից»: Նրան նեղում են **խաբիրները**, որոնք ավերում են բոլոր թագավորական կալվածքները. թող թագավորն օգնության ուղարկե իր զորքերը: Քանաանի իշխանի հիշատակած խաբիրների մեջ էին հրեաները, որոնք առաջ են շարժվում անապատի կողմից դեպի ծովեզրյա վայրեր:

Յեգիպտական պետության անկումն ու Իսրայելի սկիզբը: Յեգիպտացիների հաջողությունները, որ աշխարհի յերեք մասերում գտնվող յերկրներից հարստություններ էին հավաքում, ուրիշ ժողովուրդների ագահությունը գրգռեցին: Յերեք կողմից սկսեցին նեղել յեգիպտական պետությունը—արևելքից՝ սաեպի բնակիչները, հյուսիսից՝ լեռնականները **հեթիթ** ցեղից և ծովից՝ Յեվրոպայից յեկողները:

Հեթիթները, որ բնակություն էին հաստատել Փոքր Ասիայի բարձրավանդակի վրա, յեկել էին Թուրքեստանից և իրենց սովորություններով, հագուստով և արտաքինով հիշեցնում էին Միջին Ասիայի մեզ ժամանակակից ցեղերը: Նրանք ածելում էին իրենց գլուխը, թողնելով յերկար մազերի փունջ, որ հյուսում էին, կրում էին բարձր սրածայր գլխարկներ

յան յերկար խալաթ և կոշիկներ կեռ ու սուր ծայրերով: Նրանց յերկիրը պղնձով հարուստ էր, և միշտ նրանք կարող էին իրենց համար լավ զենք ու զրահ պատրաստել:

Միանալով և մի մեծ ուժ կազմելով, հեթիթներն իջան Տավրոսի լեռներից, Յեփրատից յետ մղեցին յեգիպտացիներին, գրավեցին հյուսիսային Սիրիան և շարժվեցին հարավ՝ Քանաանը նվաճելու համար: Ռամզես II փարավոնը նրանց դեմ հանեց իր բոլոր զորքերը: Լիբանանի լեռնաշղթայի ճյուղավորությանց մեջ հեթիթները շրջապատեցին թշնամու առաջապահ զորախումբը, որի մեջ գտնվում էր ինքը թագավորը. քիչ մնաց, որ նրան գերի վերցնեյին: Նրան փրկեց միայն մեծ բանակը, որ օգնության հասավ: Փարավոնը հեթիթներին զիջեց իր տիրույթների մեծ մասը, պահելով իր ձեռքում Յերուսաղեմը Քանաանի հարավում և Միջերկրական ծովի ափը, որ հետո սկսեց **Փյունիկե** կոչվել: Ռամզես II-ը շատ փառասեր էր: Չնայած իր անհաջողության, Բեյրութ քաղաքի մոտ ծովափնյա մի ժայռի վրա նա հրամայեց փորագրել մի մակագրություն, որի մեջ ասված է, թե նա **ամբողջ Ասիայի տերն է** (Ռամզես II-ն իշխում էր 1300—1250 թ. թ.):

Շուտով հեթիթների արշավանքներից հետո արևմուտքից մի ուրիշ թշնամի յերևաց: Յեվրոպական ցեղերը, որ ապրում էին Ապենինյան և Բալկանյան թերակղզիներում, սարդինացիք, տիրրենացիք և աքեացիք, սկսեցին զորախմբեր կազմել և ծովային ավազակությամբ պարապել: Սկզբում ծովային այդ ավազակները հարձակվեցին Կրետեյի վրա, թալանեցին Կնոսսի պալատը և այրեցին այն: Ապա նրանք գնացին կրետացիների բարեկամ Յեգիպտոսի վրա և մեծ ուժերով դուրս յեկան Քանաանի ծովափը ու Նեղոսի Դելտայի մոտ: Ռամզես III փարավոնը յետ մղեց «ծովային ժողովուրդների» (այդպես կոչեցին յեգիպտացիք իրենց նոր թշնամուն) հարձակումը, բայց այնուամենայնիվ հարկ յեղավ թողնել սեփական տիրույթները: Յեվրոպական օտար ցեղերից մեկը բնակություն հաստատեց Քանաանի ծովափին. Հին կտակարանում այդ յեկվորները **փղշտացի**յեն կոչվում (հրեական պելիշտիմ, որ նշանակում է ափի մոտ ապրողներ. նրանցից էր որ յերկիրն էլ սկսեց հունական արտասանությամբ Պաղեստին կոչվել).

Փղշտացիների հետ Քանաանի համար կռվի բռնվեցին **Իսրայելի որդիք**, կամ հրեաները, որ յեկել էին արևելքից, արաբական սաեպից: Սկզբում հրեաները թափառական ռազմիկ ժողովուրդ էին, որ իրենց հոտերով բնակություն հաստատեցին հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվող քանանացիների մեջ: Հետզհետե նրանք մտերմացան բնիկների հետ, սկսեցին կապվել նրանց հետ ամուսնական կապերով, ապրել քաղաքներում և սկսեցին իրենց բարքերով մեղմանալ:

Հնում հրեաները ժողովրդից ընտրված առաջնորդներ ունեյին, որ **դատավորներ** էին կոչվում: Բայց փղշտացիների դեմ պատերազմ մղելու համար ժողովուրդը թագավոր հռչակեց Սավուղին, տալով նրան անսահման իշխանություն: Սավուղի հաջորդը՝ Դավիթը մոտ 1000 թ. Ք. ծ. առաջ իր իշխանության տակ միացրեց ամբողջ Քանաանը: Նրա թագավորությունը հա-

րավում հասնում եր մինչև Արաբական ծոցը։ Դավթի վորդին՝ Սողոմոնը, վոր յեգիպտական թագավորի աղջկա հետ եր ամուսնացած, Յերուսաղեմում շինեց մի մեծ տաճար՝ նվիրված Իսրայելի աստծուն, մի տաճար, վոր իր մեծությամբ ու շքեղությամբ հավասար եր Թեբեյի և Բաբելոնի սրբատեղիներին։ Տաճարի շինության համար Սողոմոնը փյունիկյան ծովափնյա Տիր քաղաքի թագավորից խնդրել եր ուղարկել իրեն Լիբանանի լեռներից մայրափայտ և մշտադալար նոճի, ինչպես նաև բանվորներ. դրա փոխարեն Սողոմոնը փյունիկեցիներին հանձնեց 20000 չափ ցորեն և 20000 չափ ձիթապտղի յուղ։ Նա թույլ տվեց փյունիկեցիներին իրենց ապրանքները Քանանի վրայով տանել բեռնավորելու համար այն նավերը, վոր Արաբական ծոցով գնում եյին Պունտ յերկիր և Հնդկաստան։

Դավթի հիմնած թագավորությունը շուտով քայքայվեց։ Ժողովուրդը դժգոհ եր ծանր տուրքերից, վոր հավաքում եր Յերուսաղեմի թագավորը իր աշխատանքների և շինարարությունների համար։ Հրեական ցեղի 12 տոհմից 10-ը բաժանվեցին, կազմելով հյուսիսում Իսրայելի թագավորությունը Սամարիա մայրաքաղաքով. Սողոմոնի վորդին պահպանեց միայն փոքրիկ **հրեական** թագավորությունը հարավում հին մայրաքաղաք Յերուսաղեմով։

Յերկաթե դարի սկիզբը յեվ Ասորեստանի բարձրացումը։ Այն ժամանակ, յերբ ծովային ժողովուրդները թալանում-ավերում եյին Սյուրիան, Քանանը ու Յեգիպտոսը, Տիգրիս գետի վրա գլուխ բարձրացրեց **ասորեստանցիների** պետությունը, վորոնք արևելքից շարժվեցին նույն յերկրների վրա։ Ասորեստանը իր **Ասսուր** մայրաքաղաքով մի փոքրիկ յերկիր եր Տիգրիս գետի ձախ լեռնային կողմում։ Նրա բնակիչները, վոր սեմիտական ծագում ունեյին, յերկար ժամանակ գտնվում եյին հեռու բաբելացիների յեռանդուն առևտրից։ Առանձնապես նրանք ուժեղացան, յերբ սկսեցին յերկաթե նոր զենք գործածել։

Յերկար ժամանակ մարդիկ ուշ չեյին դարձնում յերկաթի վրա, վորովհետև անմշակ վիճակի մեջ յերկաթն ավելի աննշան տեսք ունի, քան պղինձը։ Բայց այնտեղ, ուր պղնձի պակաս եր զգացվում, մարդիկ ակամայից ստիպվեցին դիմել յերկաթի ոգնության։ Նոր նյութից շինված զենքն ավելի ամուր և սարսափելի դուրս յեկավ, քան բրոնզը։ Ժողովուրդներից վոմանք մեծ հմտություն հրապարակ հանեցին յերկաթը կռելու գործում. լավագույն պողպատն սկսեցին պատրաստել լեռնականները, վոր ապրում եյին այժմյան Հայաստանում դառն-աղի Վանա լճի մոտերքը և Արարատ լեռնաշղթայի փեշերին. նրանց հին անունը Ուրարտու յեր, վոր նույն խոսքն ե, ինչ վոր և Արարատը։

Ասորեստանցիք մերթ փոխանակության միջոցով եյին ստանում յերկաթն ու պողպատը Ուրարտույի ժողովրդից, մերթ արշավանքներ եյին կատարում դեպի այդ յերկիրը մետաղի համար։ Ամենուրեք նրանք, վորպես ավար, վերցնում եյին մետաղե իրերը, լցնում եյին իրենց պահեստները զենքով և յերկաթի կտորներով։ Նրանց առաջին նվաճումն եր արգավանդ **Միջագետքը**, յերկիրը Տիգրիսի և այն մեծ պտույտի միջև, վոր անում ե Յեփրատ գետը դեպի արևմուտք, մոտենալով Միջերկրական ծովին։ Այստեղ

ասորեստանցիք ջարդեցին յերբեմն սարսափելի հեթիթներին, քշեցին նրանց Փոքր Ասիայի լեռները, իսկ քաղաքներից, վորոնց տիրում եյին հեթիթները, նրանք մեծ փրկանք վերցրին — վոսկե բաժակներ, վոսկե շղթաներ, վոսկե կուռքեր, 100 մեծ չափ պղինձ, պղնձե կուռքեր, պղնձե ամաններ, 250 մեծ չափ յերկաթ, կահ-կարասի՝ թանգագին փայտից և փղոսկրից շինված, 200 ստրկուհիներ, զանազանագույն կերպասներ, սև և կապույտ բյուրեղներ, թանգագին քարեր։

Իրենց մայրաքաղաքում ասորեստանցիք իրենց նվաճած ժողովուրդներից ստացված տուրքից սարքեցին **յերկաթե իրերի** և զենքերի մի մեծ **մթերանոց**։ Այստեղ կային մուրճեր, բահեր, գութաններ, խարիսխներ շղթաներով, ինչպես նաև յերկաթի բազմաթիվ կտորներ, վորոնք իրենց մի ծայրում ծակ ունեյին թոկ կախելու համար. այդ սայրերը պահում եյին պաշտպանման դեպքի համար, վորպեսզի զենք կռելու համար յերկաթի մեծ պաշար լինի։

Նվաճելով Միջագետքը, ասորեստանցիք ձեռք բերին առևտրական ճանապարհը, վոր Բաբելոնից մեծ գետերով տանում եր դեպի Կովկասի լեռնային յերկրներն ու դեպի Միջերկրական ծովը։ Այն ամենը, ինչ վոր արտադրել եյին բաբելացիների աշխատանքն ու հնարագիտությունը, անցավ ասորեստանցիների ձեռքը։ Ինքը Բաբելոնիան, վոր ապրում եր հողագործությամբ և առևտրով, առաջին տեղը զիջեց իր ռազմիկ հարևան յերկրին։ Ասորական թագավորները քանիցս անգամներ նվաճեցին Բաբելոնը։

Ասորեստանցիների նվաճումները 900—650 **թ. թ. Ք. ծ. առաջ.** Դառնալով ամենաուժեղ պետությունը Առաջավոր Ասիայում, Ասորեստանը Համմուրաբիի ժամանակվա Բաբելոնի նման մղվեց դեպի Միջերկրական ծովը։ Նվաճողներին այստեղ գրավում եյին արգավանդ ոազիսները և Սյուրիայի ու Քանանի հովիտները, ինչպես նաև հարուստ առևտրական քաղաքները, վոր գտնվում եյին Փյունիկեյի ափում։

Սարսափելի մրրկի նման ասորեստանցիք հարձակվում եյին թշնամու վրա։ Արագորեն առաջ եյին շարժվում զինվորները. գետերը նրանք անցնում եյին մեծ ուռցրած տիկերի վրա կամ պատնեշելով հոսանքը ծառերի բների միջոցով։ Ասորեստանցիների նկարած բազմաթիվ պատկերների վրա կարելի յե տեսնել մկանոտ, մռայլ, մորուքավոր զինվորների միատեսակ շարքերը. նրանց գլուխը ծածկված ե սրածայր պղնձե սաղավարտով. մարմնի վրա շապիկների վրայից զրահ, այսինքն կաշվե հագուստ, վոր դուրս ցցված թիթեղով ե ծածկված, մի ձեռքում՝ յերկար նիզակ յերկաթե ծայրապանակով, մյուսում՝ մեծ վահան՝ ծածկված բրոնզով. վոտքերը նույնպես պաշտպանված են մետաղե շերտերով։ Այդպիսի զինվորը գրեթե անխոցելի յեր։

Հարձակման ժամանակ սարսափելի եյին նույնպես ռազմական կառքերը, վորոնք ծածկված եյին պղնձով և լծված մի զույգ ձիով։ Նրանց վրա սովորաբար կանգնած եյին լինում յերեք մարդ՝ կառապանը, աղեղնաձիգը կամ նիզակավորը և զինակիրը, վոր զինվորին եր պաշտպանում վահանով։ Շարքի կանգնելով՝ այդ ծանր հեծելազորքն աշխատում եր ուժեղ գրոհով ջախջախել թշնամուն։ Յերբ նա ցրվում և փախչում եր, կառքերի զինվոր-

ները կատաղելապես վոչնչացնում և անիվներով կոխկրտում եյին յետ մնացողներին, գերի եյին գցում փախչողներին։ Բանակի յետևից գալիս եր գետնափորների և մեքենագործների խումբը, վոր լեռնային տեղերում ճանապարհներն եր հարթում, պատեր քանդելու համար գործիքներ եր պատրաստում և այլն։ Ասորեստանցի զինվորներն անխորտակելի ուժ ունեցող մարդիկ եյին թվում։ Հրեական մարգարե Յեսային, վոր մոտից տեսել եր նրանց, ասում ե. «Տես, ահա նրանք շտապ ու արագ քայլերով մոտենում են, և չկա նրանց մեջ վոչ մի հոգնած կամ թուլացած մարդ, վոչ-վոք չի ննջի, վոչ-վոք չի քնի։ Նրանցից վոչ մեկի գոտին չի քակվի կողքից և չի կտրվի կոշիկի կաշին. նրանց նետերը սրված են, բոլոր լարերը պրկված են։ Նրանց ձիերի սմբակները կարծես քարից լինեն, իսկ կառքերի անիվները՝ կարծես կատաղի մրրիկ։ Նրանց մռնչյունը նման ե առյուծների մռնչյունին. նրանք մռնչում են, ինչպես յերիտասարդ առյուծները, մռնչալով հարձակվում են իրենց վորսի վրա և փախցնում նրան. վոչ-վոք ի վիճակի չի թագնվել նրանցից»։

Դաժան եյին ասորեստանցիների զորավարները։ Պալատների պատերի, քարե տախտակների և սյուների վրա նրանք թողել են պատմություններ և հաշվետվություններ իրենց արշավանքների մասին. այդտեղ մի առանձին հպարտությամբ խոսում են նրանք իրենց կատարած կործանումների, քաղաքների և գյուղերի վոչնչացումների մասին։ Նրանցից մեկը գրում ե. «Յես անցա՝ վորպես վոչնչացնող մրրիկ։ Արյունով ներկված գետնի վրա զենքերը խեղդվում եյին թշնամիների արյան մեջ, ինչպես գետի մեջ։ Յես կուտակեցի զինվորների դիակները հաղթական թումբերի ձևով և կտրեցի նրանց ծայրերը։ Գերիների ձեռքերը յես կտրեցի, յես ճզմեցի նրանց, ինչպես մի ծղոտ»։ Հաճախ ասորեստանցիք կոտորում եյին նվաճված յերկրի ամբողջ տղամարդ ազգաբնակությունը, գերի եյին վերցնում կանանց և յերեխաներին և նրանց ստրկության եյին ծախում։ Յերբեմն, սակայն, պարտվածների մի մասը խնայում եյին, բայց միայն նրա համար, վոր նրանց բռնությամբ տեղափոխեն մի ուրիշ նվաճված և ավերված յերկիր. այնտեղ նոր գաղթականները չեյին կարող վտանգավոր լինել, բայց պետք ե հողը մշակեյին և տուրք վճարեյին։

Նկարների վրա կարելի յե տեսնել, թե ինչպես թագավորներն ու նրանց մերձավորները կանգնած են պատկառելի վայելչությամբ և հպարտորեն ուղղված կամ թե ինչպես նրանք առյուծների վրա գնացած վտանգավոր վորսորդության ժամանակ առաջ են սլանում կատաղորեն թռչող ձիերով։

Կամ մի ուրիշ պատկեր. թագավորը հանգստանում ե իր զբոսապարտեզի մեջ, վերևից ծածկված մի տեղում. նա թիկնած պառկած ե բարձր բազմոցի վրա. ավելի ներքև բազկաթոռի վրա նստած ե նրա կանանցից մեկը. յերկուսի ձեռքին ել մի-մի գավաթ կա. նրանց շուրջ պալատականները—հովհարներով զովացնում են թագավորական զույգը. մոտակա ծառի վրայից կախված ե պարտված հարևան թագավորի գլուխը, վոր ճոճվում ե քամուց։

Ասորեստանի թագավոր Սալմանասարը 855 թվ. Ք. ծն. ա. խուժեց Սյուրիա և Պաղեստին, Իսրայելի թագավոր Իեույին հարկադրեց կատարյալ

հնազանդություն ցույց տալ, անցավ Փյունիկեյի ափը և նրա քաղաքները թալանելով, հրամայեց մակագրություն դնել իր հաղթանակների մասին Ռամզես II փարավոնի քարի կողքին։ Յեգիպտացու նման՝ Ասորեստանի թագավորը հռչակեց իրեն **ամբողջ Ասիայի իշխանավոր**։

Հարյուր յերեսուն տարի անց Սարգոն թագավորը նվաճեց Սամարիան, իսրայելական պետության մայրաքաղաքը, ավերեց յերկիրը և գաղթեցրեց (722 թ.) ժողովրդի մեծ մասը Տիգրիսի այն կողմը գտնվող լեռնային շրջանները։ Նրա վորդին՝ Սեննաքերիբն իր զորքով շարժվեց դեպի Յերուսաղեմ։ Յերուսաղեմի հրեական թագավորը՝ Յեզեկիան փրկվեց միայն նրանով, վոր կատարյալ հպատակություն հայտնեց նվաճողին. նա Նինվե ուղարկեց (ասորեստանցիների նոր մայրաքաղաքը) 300 տաղանդ (այսինքն մեծ չափեր) արծաթ, 30 տաղանդ վոսկի, թանգագին քարեր, իր աղջիկներին և պալատական նաժիշտներ։ Հրեական մարգարեները Նինվեն անվանում են «առյուծների վորջ, արյունոտ քաղաք, ավարի կույտ»։ Սարգոնի թոռը՝ Ասսարհադոնը խուժեց Յեգիպտոս և վերցրեց Մեմֆիսն ու Թեբեն։ Նեղոսի հովիտը դարձավ Ասորեստանին հպատակ մի շրջան։ Ասուրբանիպալ թագավորի ժամանակ պետությունը տարածվում եր Հայաստանի և Իրանի լեռներից մինչև Սահարա։

Ասորեստանի յեվ Յերուսաղեմի անկումը։ Սարգոնի ժառանգների մեծ պետությունը յերկար չպահպանվեց։ Յեգիպտոսում Պսամմետիխը, հարևան Լիբիայի իշխաններից մեկը, ծովով յեկած **հունական** զինվորներ վարձեց և դուրս քշեց ասորեստանցիներին Նեղոսի հովտից։ Բաբելոնին տիրացան ստեպի բնակիչ **խալդերը**, իսկ Իրանի լեռների կողմից Ասորեստանի վրա յեկան **մյուդիացիները**, վոր պատկանում եյին **արիական ժողովուրդների** մեծ ճյուղին։ Մյուդիացիները պաշարեցին Նինվեն և հիմնահատակ արին քաղաքը (607 թ. Ք. ծ. առաջ)։ Հրեական մարգարե Սոփոնեն ասում ե. «Աստված Ասորեստանը բնաջնջ կանե և գեղեցիկ քաղաք Նինվեն կդարձնե մի անապատ, մի վայրենի յերկիր, ուր ճանապարհ անգամ չկա»։

Խալդեական թագավոր Նաբուգոդոնոսորը իր մայրաքաղաք Բաբելո-



Ասորի զինվորները տանում են աստվածների պատկերները։

նից կրկնեց ասորեստանցիների կատարած աշխատանքները դեպի Միջեր-

կրական ծով։ Նա հրեաներից հպատակություն պահանջեց և Յերուսաղեմին մոտեցավ։ Հրեական թագավորը, հույս ունենալով ոգնություն ստանալ յեգիպտական փարավոնից, անձնատուր չեր լինում։ Իզուր Յերեմիա մարգարեն նախազգուշացնում եր չխաբվել և փրկություն չսպասել. «Յեթե դուք նույնիսկ ջախջախեք խալդեի ամբողջ զորքը և թողնեք միայն միքանի վիրավորներ, այնուամենայնիվ սրանք վեր կբարձրանան ամեն մեկն իր վրանից և կայրեն քաղաքը»։ Մարգարեյին չլսեցին և բանտ գցեցին։ Բայց Նաբուգոդոնոսորը վերցրեց Յերուսաղեմը, վորի հետ նա վարվեց այնպես, ինչպես առաջ Սարգոնը վարվել եր իսրայելական թագավորության հետ. ավերեց քաղաքն ու տաճարը, գերի վերցրեց թագավորին և Բաբելոն գաղթեցրեց հրեական ժողովրդի մի մասը (588թ. Ք. ա.)։ Դա սկիզբն եր **բաբելական մեծ գերության։**

Փյունիկեցիք։ Նեղոսի և Յեփրատի հովիտների բնակիչները՝ յեգիպտացիք և սումերները, հնուց իվեր ստեղծել եյին իրենց սեփական կուլտուրան (այսինքն հարստություններ, գյուտեր, գիտություն)։ Ավելի ուշ սեմիտական ցեղին պատկանող ժողովուրդները՝ բաբելացիք, ասորեստանցիք, հրեաները, փյունիկեցիք հին բնիկներից յուրացրին նրանց արվեստն ու գիտությունը։ Բոլոր սեմիտներից ամենադյուրաշարժ ժողովուրդը դուրս յեկան փյունիկեցիք. իրենց առևտրական ճանապարհորդության մեջ նրանք տարածում եյին աշխարհիս չորս կողմը Յեգիպտոսի և Բաբելոնի կուլտուրան։

Փյունիկեն կազմում ե Սյուրիայի ծովափնյա մի շերտ, վոր բաժանված ե մնացյալ յերկրից Լիբանանի ժայռոտ լեռնաշղթայով։ Այն օրից իվեր, յերբ յեգիպտացիք նվաճեցին Սյուրիան, ծովափի բնակիչներն իրենց վրա վերցրին Ասիայից Յեգիպտոս ապրանքներ բերելու և յեգիպտական արդյունքները արտասահման արտահանելու գործը։ Վոմանք քարավաններով սկսեցին շարժվել Սյուրիայի յերկարությամբ դեպի Յեփրատ և Արաբական ծոցի ափով դեպի հարավ, դեպի այսպես կոչված Յերջանիկ Արաբիան։ Վոմանք էլ շարժվեցին ծովային ճանապարհով, վորոնցով առաջ իրենք յեգիպտացիք եյին գնում—դեպի Կիպրոս կղզին, վոր ուղիղ Փյունիկեյի դիմացն ե գտնվում, Փոքր Ասիա և ավելի հեռու, դեպի արևմուտք։

Շուտով ապրանքներ ուղարկելու և ընդունելու տեղերը դառան ժխորալից ծովափնյա քաղաքներ։ Նրանցից առանձնապես աչքի եյին ընկնում **Տիր** և **Սիդոն** (հիրացի փյունիկեցիների ձեռնարկու վոգու և նրանց բարեկամության մասին Սողոմոնի հետ խոսել յենք վերը)։ Փյունիկեցիք իրենց քաղաքները շրջապատեցին ամուր պատերով, նրանց պաշտպանության տակ եյին մտնում փախստականները, յերբ Սյուրիան սկսեցին ավերել սարսափելի աշխարհակալ ասորեստանցիք։ Նոր գաղթականների հորձանքից Փյունիկեյում նեղվածք յեղավ. շատերն սկսեցին նավեր պատրաստել նոր հայրենիք փընտռելու համար։ Նրանց առջև ծովային լայն ճանապարհ եր բացվում դեպի արևմտյան յերկրները։

Միջերկրական ծովն ու փյունիկեցիների գաղութները։ Հնում ծովագնացությունը նման չեր այժմյան ծովագնացության։ Նավավարները ծով եյին դուրս գալիս միայն ամառը. նրանք չեյին համարձակվում ափից հեռու գնալ, այդ պատճառով յերբեմն անագին պտույտներ եյին անում՝ փոխանակ

ուղիղ ճանապարհով բաց ծովը կտրելու-անցնելու, կամ մի կղզուց մյուսն եյին անցնում, աշխատելով դուրս գալու ժամանակ արդեն նկատել առջևում գտնվող մերձակա նավակայանը։ Միջերկրական ծովն այնպես ե ձևավորված, վոր նրա մեջ կարելի յե կատարել կարճատև ճանապարհորդություններ։ Հեռու հյուսիսից դուրս են ցցված չորս յերկար տարածություններ՝ Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան և Փոքր-Ասիական թերակղզիները։ Առաջին յերկուսին ընդառաջ են ցցվում հյուսիս-արևմտյան Աֆրիկայի ծայրամասերը՝ Մարոկկոն և Տունիսը։ Վորպես հրվանդանների շարունակություն, վորոնցից կարող են ծով դուրս գալ նավավարները, բարձրանում են կղզիները՝ Կիպրոսը, Ռոդոսը, Կրետեն, Սիցիլիան, Սարդինիան, Կորսիկան և Բալեարյան կղզիները։ Դրանք միջանկյալ նավահանգիստներ են, վորոնցից հաճախ յերևում ե հեռվում գտնվող մերձակա կայանը։

Առաջին անդրծովյան գաղութները փյունիկեցիք հիմնեցին Կիպրոս կղզու վրա։ Նրանք ստիպված յեղան անցնել Կրետե կղզու և Բալկանյան թերակղզու ափերի մոտից, վորովհետև այստեղ ապրում եյին ցեղեր, վոր իրենց հերթին հմուտ եյին ծովագնացության գործում։ Ապա դեպի արևմուտք շարժվելով, փյունիկեցիք բնակություն հաստատեցին Սիցիլիա կղզու և Սիցիլիայի հանդեպ ցցված հյուսիս-արևմտյան Աֆրիկայի թերակղզու՝ այժմյան Տունիսի վրա, ուր նրանք մոտ 700թ. Ք. ծ. առաջ հիմնեցին **Կարթագենը** (վոր նշանակում ե «Նոր քաղաք»)։ Ուղևորվելով արդեն Կարթագենից, փյունիկեցիք գրավեցին Սպանիայի հարավային ծովափը, վոր հարուստ եր արծաթով։ Յեսայի մարգարեն սպանիական վոսկով և արծաթով բեռնավորված փյունիկյան նավերը համեմատում ե արագորեն սլացող ամպերի կամ դեպի իրենց տները թռչող աղավնիների հետ։

Յերկրագնդի յերեք մասերում ցրված փյունիկեցիների քաղաքները չեյին կազմում մի պետություն։ Բայց **մետրոպոլիայի** (այսինքն հայրենիքի) քաղաքների և **կոլոնիաների** (այսինքն նոր գաղութների) միջև պահպանվեցին բարեկամական հարաբերություններ. ամենուրեք պաշտում եյին արևային աստված Մելկարտին, վոր ճանապարհորդում ե նավաստիների հետ, ուղի յե ցույց տալիս նրանց. նրա արձանը դնում եյին նավահանգստում. մեկնումից առաջ և ճանապարհորդության վերջանալուց հետո նրան զոհ եյին մատուցանում։

Հասնելով Գիբրալտարի ժայռին, վորի դիմաց բարձրանում ե Աֆրիկայի բարձր ափը, փյունիկեցիք սկզբում կարծեցին, թե Մելկարտն այստեղ մարդկանց առջև սահմանային սյուներ ե դրել. նրանց յերևում ե վոր աստված գնում ե հանգստանալու։ Բայց հետո նրանք համարձակություն առան անցնելու և սյուների այն կողմը։ Սպանիայի ափին Ատլանտյան ովկիանոսի մոտ նրանք շինեցին դուրս ցցված ժայռի վրա **Գադիրը** (այժմյան Կադիքսը)։ Առանձնապես հեռու եյին գնում փյունիկեցի նավավարները դեպի հարավ, Աֆրիկայի ափերով. նրանք ծանոթ եյին Կանարյան կղզիներին և Գվինեային։

Մի անգամ յեգիպտական թագավորի ծառայության մեջ գտնվող փյունիկեցիք կատարեցին մի մեծ ճանապարհորդություն ամբողջ Աֆրիկայի շուրջը, ուղևորվելով Արաբական ծոցով դեպի հարավ և վերա-

դառնալով Գիբրալտարի նեղուցով ու Միջերկրական ծովով նեղոսի բերանը։

Ոչ մի ժողովուրդ հնում չի շրջել այնքան յերկրներ, վորքան փյունիկեցիք։ Նրանց լավ ծանոթ եյին Միջերկրական ծովի ափերի վոլորտները, նրա նեղուցները, կղզիների կայանները, հարմար նավահանգիստները և վտանգավոր ժայռերը կամ ծանծաղուտները։ Այն յերկու անուններից, վոր նրանք տվին իրենց հայրենիքին և նոր բացված յերկրներին՝ **ասու** (արևածագ) և **երեբ** (արևամուտ), առաջ յեկան յերկու մեծ ցամաքների անունները՝ Ասիա և Յեվրոպա։

Փյունիկեցիք Արևմուտք եյին տանում մեծ մասամբ բաբելական և յեգիպտական արվեստի արդյունքները՝ գործվածքներ, զենք, ամաններ, պերճանքի առարկաներ, նրանց թվում ապակյա իրեր. ընդհակառակը, Արևմուտքից Ասիա նրանք տանում եյին հում նյութեր՝ մետաղ, կարմիր ներկ, վոր վորդան կարմրից եյին ստանում։ Բալտիական ծովի ափերից նրանք ըստանում եյին սաթ, վոր զարդարանքի յեր ծառայում, այժմյան Անգլիայից անագ, վոր անհրաժեշտ եր բրոնզ պատրաստելու համար։ Թե այս և թե այն առարկան Միջին Յեվրոպայի վրայից անց եյին կացնում գետային հովիտներով մինչև Միջերկրական ծովը։

Փյունիկեցիք ոգտվեցին վոչ միայն Բաբելոնի և Յեգիպտոսի ապրանքներից, այլ և գյուտերից։ Նրանք վերցրին այնտեղից չափը և կշիռը, ինչպես նաև այբուբենը։ Առևտրական գործի մեջ նրանց պետք եյին հասարակ նշաններ, վորոնց միջոցով կարելի լիներ արագ գրել։ Ուստի նրանք յուրացրին միայն **հնչյունային** տառերը. նրանց այբուբենում կար միայն 22 նշան։ Այդ փյունիկական այբուբենին նման են բոլոր հետագա յեվրոպական այբուբենները (հունականը, լատինականը, գերմանականը, սլավականը)։

Սարգոնի ժամանակ, մոտ 700 թ. Ք. ծ. առաջ փյունիկեցիք հանձինս հույների ծովի վրա հանդիպեցին զորեղ մրցակիցների։

III

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ

Հունաստան յեվ Եգեյան ծովը։ Յերկիրը, վորի վրա մոտ 3000 տարի արդեն ապրում են հույները, կազմում է Բալկանյան թերակղզու հարավային մասը։ Այդ յերկիրը շատ լեռնոտ է. բոլոր ուղղություններով լեռնային շղթաներ և ճյուղեր են անցնում։ Թերակղզու լայն մասից շատ դժվար է հարավ անցնել. մի պատնեշը բարձրանում է մյուսի յետևից։ Բարձր ձյունապատ լեռնաշղթա **Ոլիմպոսը** ծածկում է դեպի հունական ամենամեծ շրջանը՝ **Թեսսալիան** տանող մուտքը։ Այդ շրջանի և Հունաստանի **միջին** մասի միջև կրկին լեռնաշղթաներ, վորոնց միջից ճանապարհ չկա, այլ կան միայն անցքեր լեռների վրայից։ Միջին Հունաստանի արևելյան մասը սուր անկյունով ծովն է դուրս գալիս. դա **Ատտիկան** է (վոր նշանակում է «նախալեռ» կամ «հրվանդան»)։ Նեղ պարանոց **Իսթմոսը** մի-

ացնում է միջին Հունաստանը ծայր հարավի՝ **Պելոպոնեսի** հետ, այսինքն Պելոպսի «կղզու» հետ (հին թագավորներից մեկի անունը). իրոք այդ մասը ամենից ավելի կղզու յե նման, վորովհետև ամեն կողմից շրջապատված է ծովով։ Պելոպոնեսի արևելյան, Ատտիկայի նման դուրս ցցված մասը կոչվում է **Արգոլիդա**։ Հարավում Պելոպոնեսը վերջանում է յերեք հրվանդաններով. նրանց միջև գտնվում են յերկու արգավանդ հովիտներ՝ **Լակոնիա յեվ Մեսսենիա**։

Ամբողջ Հունաստանը լեռներով փոքրիկ շրջանների յե բաժանված։ Այդ շրջաններից ամեն մեկում կարող եր բնակություն հաստատել մի փոքրիկ անկախ ժողովուրդ։

Հունաստանի քարոտ հողի վրա հացը վատ է բսնում. ավելի հեշտությամբ կարելի յեր ձիթապտուղ և խաղող բուսցնել, կարելի յեր նույնպես մանր անասուններ, այծեր և վոչխարներ պահել, վորոնք արածում են լեռնալանջերում։ Յերկրում ջուր քիչ կա։ Լեռներից վազում են գետակներ և վտակներ, վոր կարճատև հոսելուց հետո թափվում են ծովը։ Ուստի ջրերի պատճառով հարևանները միշտ վիճում և կռվում եյին։

Ապրելով այդպիսի աղքատ յերկրում, մարդիկ հեշտությամբ եյին տրամադրվում իրենց հայրենիքից դուրս գնալ, ոտարի գույքը թալանել, փնտռել նոր բնակատեղիներ։ Ճանապարհորդության համար ամեն ուղղությամբ բացվում եր հարմարագույն ճանապարհը՝ ծովը։ Առանձնապես հարմար ձև ունի արևելյան՝ **Եգեյան** ծովը։ Նա ավելի լճի յե նման։ Յերկու կողմից —հյուսիսային և արևմտյան՝ նա փակված է Բալկանյան թերակղզով, յերրորդ՝ արևելյան կողմից Փոքր-Ասիական թերակղզով, հարավից նա պատնեշված է յերկար **Կրետե կղզով**, վոր կարծես փականք լինի։ Շատ տեղերում ծովը խորը խորշերով է ցամաքի մեջ մտնում, ուր փոթորիկ չի լինում, և նավերը կարող են հանգիստ կանգնել։ Ամեն տեղ, ափից վոչ-հեռու յերևում է մի վորևէ կղզյակ կամ նույնիսկ միքանի կղզյակներ, վոր կազմում են կարծես ծովի մեջ ցցված հրվանդանների շարունակությունը։ Մանր **Ցիկլադներից** (այսինքն շրջանի մեջ գտնվող) այն կողմը, դեպի արևելք, գտնվում են ավելի խոշոր կղզիներ՝ **Քիոսը**, **Սամոսը**, **Ռոդոսը**, վորոնք մոտենում են Փոքր Ասիայի ափին։

Եգեյան ծովը միայն կարճատև ձմեռային ժամանակ է անհանգիստ։ Մնացած ամիսներին նավավարները կանոնավոր քամիներից և հոսանքներից եյին ոգտվում։ Ցերեկը բարձրանում է ուժեղ հյուսիսային քամին, վոր դադարում է յերեկոյան դեմ։ Ծովի մեջտեղով անցնում է հյուսիսից յեկող հոսանքը. յերկու կողմը ափերի յերկարությամբ՝ հակառակ հոսանքներ։ Շրջանների մեծ մասը ուղիղ յելք ունի դեպի ծովը։ Հունաստանում չի գտնվի մի տեղ, վորից ծովն ավելի քան 60 վերստ հեռավորության վրա լիներ. ամեն մի բարձրությունից նա յերևում է։

Կրետեն, Միկենքը, Տրովադան 2000—1000 թթ. Ք. ծ. առաջ։ Հույները, կամ ինչպես նրանք եյին իրենց անվանում, **հելլենները** Եգեյան ծովափի սկզբնական բնակիչները չեյին։ Նրանք յեկել եյին հյուսիսից, Բալկանյան լեռների յետևից և Եգեյան ծովի ափերի ու կղզիների վրա գրավել եյին ավելի հին բնիկներին։

Հունաստանի այդ նախկին ազգաբնակությունը իր կենցաղով, շորերով և բարքերով նման չէր հետագա հույներին։ Բնիկները լավ նավավարներ էին. նրանց առաջնորդները պալատներ էին շինել իրենց համար ծով դուրս գալու տեղերից ոչ-հեռու։ Այդ պալատներից ամենախոշորը կանգնած էր **Կնոսսում**՝ Կրետե կղզու հյուսիսային ափի վրա։ Հույները հետո նրա մասին հրաշքներ էին պատմում, Լաբյուրինթոս էին անվանում այն, որովհետև նա նման էր յեգիպտական Լաբյուրինթոսին իր սենյակների բազմությամբ և յելք ու մուտքերի խառնաշփոթությամբ. ըստ նրանց ավանդության՝ Կնոսսում հին ժամանակ թագավորում էր իմաստուն և հզոր Մինոսը, գլխավոր աստծու՝ Զևսի որդին։

Բոլորովին նորերս պեղեցին մի բլուր, որ Կնոսսի Լաբյուրինթոսի ավերակներն էր ծածկում։ Դա մի լայն, քառակուսի, յերեք հարկանի շենք է, որ իր մեծությամբ մի ամբողջ բերդի է հավասար։ Դուրս են նայում միայն խուլ պատերը. սենյակները ներս մտնել կարելի յե միայն գավթի կողմից, որ գտնվում է ներքին մասում։ Շենքի ծայրերում յերկար միջանցքների յերկարությամբ գտնվում են մթերանոցները, ուր պահվում էին մթերքներ, հագուստեղեն, ամանեղեն, զենք. գավթին մոտ՝ ընդարձակ դահլիճներ, ուր տեղի յեր ունենում մեծ ընդունելությունը թագավորի մոտ, կամ ուր կատարվում էր կրոնական ծիսակատարությունը։

Դահլիճներից մեկում, որ սյուներով էր բաժանված, Կնոսսի թագավորը գահի բարձրությունից կարող էր դիտել իր բազմամարդ արքունիքը, որ կանգնած էր լինում իր հերթին սպասող յերկար շարքերով։ Հանդիսավոր արարողության ժամանակ բաց դարատափերով (տերրաս) և սալահատակված ուղիներով տանում էին սրբազան իրեր և աստվածների պատկերներ, և կրկին այդ բոլորին ամբողջ արքունիքն էր մասնակցում։ Աստվածներին նվիրված տոնակատարությունը խմբապարով, յերգով և կենդանի պատկերներով էր վերջանում. այդպիսի ներկայացումների համար գոյություն ուներ մի բաց բեմ թագավորական օթյակով, ուր կարելի յեր մտնել պալատի ներքին դռնով։ Շատ սիրում էին նույնպես արքունիքում դիտել ցուլամարտը և լարախաղացների՝ ցուլերի մեջքերի վրայից կատարած կատաղոբեն-հանդուգն ցատկումները։ Պալատական տիկնայք ներկում էին իրենց յերեսը, դնում էին բարձր գլխարկներ և հագնում էին շքեղ հագուստներ, որ պինդ քաշում էին կրինոլինի վրա. թագավորական մանկլավիկները խուճուճում էին իրենց մազերը, կորսետով սեղմում էին իրենց նեղ իրանը։ Վառ կենդանագրերով ծածկված պատերի մոտ դրված էին գեղարվեստորեն նախշված վազաներ. կրետացիք առանձնապես սիրում էին նկարել ծովային խորքը, ջրիմուռներ, ութվոտնանիններ և այլն։

Կրետեյից զատ հզոր առաջնորդներ ունեյին **Միկենքը** (Արգոլիդա շրջանում), **Աթենքը** (Ատտիկայում) և **Տրովադան** (Փոքր-Ասիական թերակղզու հյուսիս-արևմտյան անկյունում, Հելլեսպոնտոս նեղուցի մոտ, որ Եգեյան ծովից տանում է դեպի Սև ծովը)։ Այդ առաջնորդների պալատները Կնոսսի Լաբյուրինթոսից փոքր էին. այն տունը, որի մեջ ապրում էր թագավորական ընտանիքը, չէր յերևում դրսից, որովհետև գտնվում էր ամրոցի ներսում, որ շինված էր լինում չափազանց թեք լանջեր ունեցող բլուրի

վրա։ Միկենքում արտաքին պատերը վաղուց արդեն քանդված են, բայց մինչև մեր օրերը պահպանվել է մուտքի դարպասը, որ **առյուծի** դարպաս է կոչվում. դարպասի շրջանակներն ու նրա վերին մասերն ամբողջական քարերից են շինված, իսկ այդ քարերի վրա գտնվում են առաջի թաթերի վրա բարձրացած յերկու եգ առյուծներ։

Միկենքում, ինչպես և Կրետեյում, սիրում էին ոսկե և արծաթե թասեր՝ ցցուն պատկերներով զարդարված, հայելիներ, մեդալյոններ, խանչալներ՝ քանդակված, արդուզարդեր՝ փղոսկրից շինված։ Մետաղապատ դռներն ու շեմքերը փայլում էին։ Հատակը շինված էր լինում գույնզգույն փոքրիկ քարերից. կարնիզները ծածկված էին լինում վառ կապույտ ապակեներով։ Անդրշիրիմյան կյանքը նրանք պատկերացնում էին իրենց,



Առյուծի դռները Միկենքում։

ինչպես հին յեգիպտացիք։ Մահվանից շատ առաջ իշխանը պատրաստում էր իր համար շիրիմ, որ նման էր լինում յեգիպտական բուրգի։ Նա շինվում էր քարե մեծ կամարի ձևով ժայռի ներսում. կամարը զարդարված էր զարդանախշերով, կարծես ներկայացնելիս լիներ յերկինքը՝ ծածկված աստղերով. մեռյալների յերեսին դրված էին լինում ոսկե դիմակներ։ Դեպի շիրիմը տանում էր մի յերկար նեղ միջանցք. մի շիրիմի մուտքի վրա դրված է $7^1/_2$ հազար փթանոց մի քար։

Այն ժամանակ, յերբ հեթիթներն ընդհարվեցին յեգիպտացիների հետ, այսինքն մոտ 1400 թ., Եգեյան ծովի ափերին սկսեցին յերևալ ռազմիկ հույներ։ Նրանց գրավում էին Կրետեյի, Միկենքի և Աթենքի առաջնորդների կուտակած հարստությունները։ Հույների մի մեծ հորդա հարձակվեց Կնոսսի Լաբյուրինթոսի վրա, կոտորեց նրա ամբողջ բնակչությունը և հըր-

դեհեց հոյակապ պալատը։ Ցեկվորները կոպիտ, անճաշակ մարդիկ եյին. նրանք անխնայորեն վոչնչացրին արվեստի բոլոր արտադրությունները։ Միկենքի ամրոցը, վոր ավելի փոքր եր, անվնաս մնաց. հունական առաջնորդները բնակության համար հարմար գտան այն։ Յեվրոպական մյուս ցեղերի հետ միասին հույները մի մեծ հարձակում կատարեցին Յեգիպտոսի և Սյուրիայի վրա. այդ հարձակման մասին մենք գիտենք յեգիպտական պատմությունից. յեգիպտացիք հարձակվողներին անվանեցին «ծովային ժողովուրդներ»։

Հերոսական դարը Հունաստանում *1000—700* **թ. թ. Ք. ծ. առաջ։** Հույների արշավանքից հետո Եգեյան ծովափի ամբողջ կենցաղը ավելի հասարակ և աղքատ դարձավ. չքացան մեծ դամբարանները, վոր նման եյին յեգիպտական դամբարաններին, չքացան գեղարվեստական անոթները. մոռացության տրվեց մեծ, ներսից նկարազարդված շենքեր կառուցելու վարպետությունը։ Հետագա սերունդները զարմանքով եյին նայում հնադարյան շենքերի մնացորդներին, համարելով այդ շենքերը անդրջրհեղեղյան **ցիկլոպների** (հսկաների) աշխատանքի արդյունք։

Ծովափնյա բնակիչների հարստության տիրանալով՝ հույները չհանգստացան։ Ժամանակ առ-ժամանակ նրանց յեռանդուն առաջնորդները հավաքում եյին ամենաուժեղ մարդկանցից ընտրված ընկերների և ծառաների զորախմբերը և գնում եյին ծովով ալան-թալանի։

Յերբեմն այդպիսի ավազակությամբ ապրում եյին ամբողջ ժողովուրդներ։ Ավարը մասամբ ծախում եյին կամ փոխանակում ուրիշ ապրանքների։ Ավարի բաժանման ժամանակ ժողովուրդն իր առաջնորդին պատվում եր առանձին պարգևով, նրան եր զիջում իր լավագույն գերիներին, վոր ստրուկներ եյին դառնում, նրան եր տալիս իր ամբողջ յերկրի լավագույն հողաբաժինը։ Յերբ ամբողջ ցեղն ընդհանուր խնջույքի յեր հավաքվում ի պատիվ իր հովանավորող աստծու, առաջնորդին նստեցնում եյին ամենաբարձր տեղում և նրան հրամցնում եյին մատաղի լավագույն կտորները։

Հունական առաջնորդներն իրենց համարում եյին բարձր տեսակի եյակներ, իրենց անվանում եյին **հերոսներ**, աստվածների ժառանգներ, ընդունում եյին թագավորական տիտղոս։ Բայց նրանց համեմատել անգամ չի կարելի Յեգիպտոսի, Բաբելոնի և Ասորեստանի արևելյան թագավորների հետ։ Նրանց տիրույթները հաճախ ռուսական փոքրիկ գավառից և նույնիսկ գյուղախմբերից ել փոքր եյին. նրանց հրամանատարության տակ լինում եյին միքանի հարյուր մարդիկ։ Յերբեմն նրանցից դուրս եր գալիս մի հզոր առաջնորդ, վոր իրեն եր յենթարկում իրենից ավելի փոքրերին, նրանցից ոգնություն եր պահանջում իր ռազմական ձեռնարկների համար։ Մի հին ավանդություն հետևյալն ե պատմում յեվրոպական հույների մեծ պատերազմի մասին Փոքր Ասիայում գտնվող Տրովադայի հետ.

Տրովադայի Պրիամոս թագավորի վորդի Պարիսն առևանգեց Հեղինեյին՝ Լակոնիայի՝ Սպարտայի թագավոր Մենելաոսի կնոջը։ Վիրավորվածի յեղբայրը, Ագամեմնոնը, Միկենքի զորեղ թագավորը, կանչեց իր ստորադրյալներին և դաշնակիցներին Արգոլիդայից, Լակոնիայից, Թեսսալիայից, Ատտիկայից, Կրետեյից և ուրիշ կղզիներից։ Հունական դյուցազուններն իրենց

խմբերի հետ ծովով մեկնեցին դեպի Տրովադա, ափ դուրս բերին իրենց նավերը և շինեցին հողապատնեշով և փոսով ամրացրած մի բանակատեղի։ Ամեն որ նրանք կռվի եյին դուրս գալիս տրովադացիների հետ, վորոնք թողնում եյին իրենց ամուր պատերը, թողնելով նրանց մեջ միայն ծերերին, կանանց և յերեխաներին։ Ամրություններ վերցնել այն ժամանակ չգիտեյին։ Պաշարվածների և պաշարողների հոտերն արածում եյին քաղաքի և բանակատեղի մոտ. յերբեմն զինվորներն զբաղված եյին լինում նրանով, վոր փախցնում եյին թշնամու անասունները։

Ճակատամարտները։ Առաջնորդներն ու նրանց ընկերները դուրս եյին գալիս առաջ իրենց յերկանիվյան կառքերով, վորոնց մի-մի զույգ ձի եյին լծված լինում. նրանք հագած եյին լինում բրոնզե զրահներ և սաղավարտներ. ձախ ձեռքում բռնած ունեյին մի-մի ծանր պղնձե վահան, վոր պինդ պատած եր լինում կաշվով. յերբեմն վահանը շքեղ եր լինում, պատկերազարդ և վոսկեջրած. աջ ձեռքում բռնած ունեյին յերկար, հացիից շինված նիզակ՝ բրոնզե ծայրապանակով։ Կառքի մեջ նստած եյին լինում յերկու, սովորաբար մտերիմ ընկերներ. մեկը կանգնած եր լինում՝ պատրաստ գցելու նիզակը, մյուսը կառավարում եր ձիերը։ Հասարակ զինվորները՝ քաթանե շապիկներ հագած և կաշվե գլխարկները դրած՝ խումբ-խումբ գնում եյին հետևից, շրջապատելով իրենց զորավարներին. Նրանք կռվում եյին ցիր ու ցան կերպով։ Հանդիպելով հետիոտն թշնամիների մի այդպիսի խմբի, առաջնորդը ճեղքում եր նրանց շարքը կամ յետ եր մղում նրանցից մեկ յերկու տասնյակ։

Յերկու զորքերի առաջնորդներն ու դյուցազուններն իրար եյին փնտռում իրենց ուժը միմյանց հետ չափելու համար։ Մենամարտից առաջ նրանք հարցնում եյին միմյանց անունները, սնապարծությամբ գովում եյին իրար կամ համաձայնության եյին գալիս պայմանների վերաբերմամբ. որինակ, վոր հաղթողը, վերցնելով սպանվածի սպառազինությունը, մարմինը հանձնե ազգականներին, վոր թաղեն, և վոչ թե գցե շների առջև, վոր հոշոտեն։ Յերբեմն, յեթե հակառակորդների ուժերը հավասար եյին լինում, նրանք բաժանվում եյին միմյանցից խաղաղությամբ, նույնիսկ փոխանակում եյին իրենց զենքերը։ Ժամանակ առ ժամանակ յերկու զորքերն ել պայմանավորվում եյին դուրս բերել իրենց լավագույն կռվողներին. Նրանք պայման եյին կապում, վոր այն կողմը, վորի դյուցազունը հաղթող դուրս կգա, նահանջի կամ փրկանք վճարե։ Այդ դեպքում բոլոր զինվորները կողք-կողքի եյին նստում և նայում եյին մենամարտին։ Մենամարտի ժամանակ սկզբում գցում եյին նիզակներ, վորոնցից հակառակորդը վահանով եր պաշտպանվում. յերբեմն իրար վրա եյին գցում նրանք իրենց ձեռի տակ յեղած ծանր քարերը. վերջապես, մոտենալով իրար ընդհուպ, նրանք սկսում եյին սրերով կռվել։

Առաջնորդների խորհուրդն ու զինվորների ընդհանուր ժողովը։ Ագամեմնոնը յերբեմն ինքնագլուխ եր կարգադրում, իսկ յերբեմն, յեթե նա կարիք եր զգում ուրիշ առաջնորդների ոգնության, նրանց բոլորին **խորհրդի** յեր հրավիրում։ Առաջնորդների խորհրդի ժամանակ նրանցից յուրաքանչյուրը հերթով վերցնում եր արքայական գավազանը և իր կարծիքը հայտնում։ Վոմանք շատ գեղեցիկ եյին խոսում, և նրանց հաճույքով եյին

ականջ դնում։ Յերբեմն առաջնորդները վեճի բռնվելով, խիստ տաքանում էին և սկսում էին հայհոյել նույնիսկ գլխավոր թագավորին։ Նրանք իրենց թույլ էին տալիս իրենց ընկերների և ծառաների հետ հեռանալու ընդհանուր ճակատամարտից։ Լավագույն հունական դյուցազն Աքիլլեսը, ավարի պատճառով Ագամեմնոնի հետ կռվելով, առանց գործի նստած մնաց իր վրանի մեջ։ Յերկու ուրիշ դյուցազուններ՝ քաջարի Դիոմեդեսն ու խորամանկ Ոդիսևսը, առանց Ագամեմնոնից թույլտվություն ստանալու, խիզախ հարձակում են գործում քնած հեծյալ զորախմբի վրա, վոր նոր էր յեկել Տրովադային ոգնության, և գողանում են ձիերը, վորպեսզի ավարը միայն իրենց մնա։

Յերբ պետք է լինում մի կարևոր վորոշում կայացնել, գլխավոր թագավորը բոլոր զինվորներին հրավիրում էր ընդհանուր ժողովի։ Թագավորական մունետիկները պտտում էին բանակատեղիում և բարձրաձայն կանչում զինվորներին։ Ժողովուրդը հավաքվելով, նստում էր շարքերով. հատուկ բարձր տեղում նստած էին լինում առաջնորդները։ Աքիլլեսի հետ ունեցած վեճից հետո Ագամեմնոնը ժողով հրավիրեց և սկսեց հարց ու փորձ անել, կամենում են արդյոք նրանք շարունակել պաշարումը թե տրամադիր են տուն վերադառնալ։ Աղմուկ բարձրացավ և հույների մեծ մասը վազեց դեպի նավերը։ Դժվարությամբ նրանց կանգնեցրին առաջնորդները։ Այդ ժամանակ դուրս յեկավ մի հասարակ զինվոր՝ Թերսիտեսը և սկսեց հարձակվել թագավորների և առանձնապես Ագամեմնոնի վրա. «Միշտ ձեր խելքն ու միտքը ձեր սեփական շահն է, իսկ զինվորները ձեզ համար պիտի տուժեն, վերք ու հարված ստանան»։ Թերսիտեսին ձայնակցեցին ուրիշ զինվորներ, բայց Ոդիսևսը վերցրեց գավազանը և դաժանորեն ծեծեց հռետորին։ Այդ դեպքից յերևում է, վոր թագավորին առարկելը վտանգավոր էր, բայց բնավ հանցանք չէր համարվում։ Բոլորովին այլ կերպ պիտի նայեյին մի այդպիսի դեպքի արևելյան արքունիքում. այնտեղ հանդուգնը կյանքից պիտի զրկվեր։

Առաջնորդների կենցաղը: Առաջնորդի և հասարակ մարդկանց միջև, սակայն, մեծ տարբերություն կար։ Իզուր չէ, վոր առաջնորդները հին հունական յերգերի մեջ կոչվում են «ազնվացեղ», «գեր», «յերջանիկ» մարդիկ։ Թագավորն ապրում էր իր ընդարձակ պալատի մեջ իր ազգականների հետ և իր սեղանից կերակրում էր իր ընկերներին և ստորադրյալ առաջնորդներին։ Պրիամոսի տանը, ըստ յերգերի, ապրում էին նրա ամուսնացած 50 վորդիք և 12 աղջիկներն իրենց ամուսինների հետ։ Դա մի ամբողջ տոհմ էր։ Քնում էին փոքրիկ քարե սենյակներում, իսկ ճաշի կամ զրույցի համար հավաքվում էին ընդարձակ փայտե դահլիճի, տան ներսը։ Դահլիճի մեջտեղում վառվում էր ոջախը։ Կյանքում շատ կոպտություն և կեղտ կար. ոջախի շուրջը դահլիճում թափված էր լինում մոխիր և աղբ. պատի վրա կախված զենքը ծածկված էր լինում ծխի մրով։ Սենյակների և դահլիճի անկյուններում գցում էին ինչ-վոր պատահում էր—վոսկրներ, կճեպներ, կրճոտանքներ. դարպասի մուտքի առջև կուտակված էր լինում մի ամբողջ աղբակույտ, վորի վրա պառկած էր լինում պառավ շունը. տան շուրջը թափառում էին բազմաթիվ ավելորդ ծառաներ։

Ամրոցի տերն իր կալվածքում ուներ այն ամենը, ինչ վոր իրեն պետք էր ապրելու համար։ Նրա այգիներում և դաշտերում աշխատում էին ճորտերը և վարձված մարդիկ։ Կանանոցում նստած էին լինում բազմաթիվ ստրկուհիներ. նրանք մանում և գործում էին շորեր ամբողջ տան համար։ Իթակե կղզու թագավոր Ոդիսևսի պալատում կային 50 ստրկուհիներ, և նույնքան ստրուկներ պահում էին հոտերի համար. ընդամենը նա ուներ 72 հոտ, վորոնցից խոզի 24 հոտեր՝ 1200 գլխից բաղկացած։ Տերերն իրենք էլ շատ բան գիտեյին անել. պատերազմի ժամանակ նրանք իրենք էին խորովում միսը վրանում. Ոդիսևս թագավորն իր համար մահճակալ և մի փոքրիկ նավ պատրաստեց։ Թագուհին նստած՝ կարուձևով էր զբաղված իր սպասուհիների հետ. թագավորի աղջիկը գնում էր ստրկուհիների հետ դեպի գետը ճերմակեղեն ողողելու համար։

Դյուցազունները գիտեյին լավ առևտուր անել գրաված հարստություններով։ Ագամեմնոնը Տրովադայի մոտ գտնվող Լեմնոս կղզին ուղարկում էր պղինձ, յերկաթ, յեզ, մորթ, գերված ստրուկներ և այդ ապրանքների փոխարեն Լեմնոսի թագավորից ստանում էր գինի, արծաթե և վոսկե գավաթներ։

Մեծ շքեղությամբ կատարում էր առաջնորդն իր ազգականի կամ մերձավորի թաղումը։ Տրովադայի տակ դյուցազն Աքիլլեսը ճակատամարտում կորցրեց իր ընկերոջ և «աղբերացու» Պատրոկլեսին։ Գիշերը նրան յերևում է մեռյալի հոգին, վոր աղաչում է շուտով թաղել իր մարմինը, այլապես նա անկարող կլինի մտնել անդրշիրիմյան աշխարհը դժոխքի դռնի վրայով և դատապարտված կլինի հավերժորեն դեգերել. Աքիլլեսը կամենում է գրկել հոգին, այնքան նա նման է մեռյալ ընկերոջը, բայց նա, վորպես ծուխ, գետին է իջնում մեղմ սոսափյունով։

Հետևյալ որը զինվորները կտրում են անտառի կաղնիները և փայտերից խարույկ են վառում։ Աքիլլեսը և մյուսները կտրում են իրենց մազերը և գցում խարույկի մեջ։ Նրա մեջտեղը դնում են մեռյալի մարմինը, վոր ծածկում են զոհաբերված վոչխարների և յեզների յուղով, իսկ նրանց մսերը ցիրուցան գցում են մեռյալի շուրջը. մեռյալի մարմնի մոտ դնում են նաև կժեր՝ լցված յուղով և մեղրով։ Խարույկի մեջ գցում են սպանված ձիեր և շներ, վերջապես Աքիլլեսը գցում է նաև 12 մորթված յերիտասարդ գերիներ և վառում է կրակը։ Ամբողջ գիշերը գավաթից նա գետին է թափում գինին, կանչելով, վոր քամին ոգնության գա կրակին։ Առավոտյան մարող խարույկի վրա լցնում են մուգ գինի, վերցնում են այրված դիակի վոսկորները և դնում են վոսկե անոթի մեջ։ Այդ նշխարների վրա ածում են հող, մինչև վոր գոյանում է մի բարձր թումբ։

Յերգիչները: Առաջնորդները սիրում էին լսել իրենց քաջագործությունների մասին հորինած յերգեր։ Նրանց արքունիքներում միշտ, վորպես հյուրեր, գտնվում էին աշուղներ, վորոնք հյուսում էին նոր դյուցազներգություններ կամ կրկնում էին հները, առանձնապես սիրելիները։ Աշուղը վորոշ չափականությամբ ու յերկարացումներով պատմում էր դյուցազներգությունը, զարնելով իր քնարի լարերին։ Յերբեմն նա յերգում էր խմբապարի ժամանակ. Նրա շուրջը նրա յերգի տակտով պտույտ էին գալիս

ծաղրածուները: Վարպետ բանաստեղծները հետագա ժամանակում միացրին լավագույն յերգերը յերկու մեծ վոտանավոր պատմությունների՝ Իլիականի և Ոդիսականի մեջ: Հույները վերագրում եյին այդ յերկերը մի հեղինակի՝ Հոմերոսին:

Իլիականի մեջ պատմվում ե Տրովադայի (այլապես անվանվող Իլիոնի) տակ յեղած կռիվների և մանավանդ Աքիլլեսի՝ լավագույն հունական դյուցազնի, ծովային Թագուհու վորդու քաջագործությունների մասին: Աքիլլեսը կռվի բռնվեց ավարի պատճառով գլխավոր Թագավորի՝ Ագամեմնոնի հետ և հրաժարվեց տրովադացիների դեմ կռվելուց. բայց յերբ տրովադական դյուցազն Պրիամոս Թագավորի վորդի Հեկտորը սպանեց նրա ընկերոջ՝ Պատրոկլեսին և հանեց նրա վրայից Աքիլլեսի սպառազինությունները, վոր ինքը կրակի աստվածն եր կռել: Կատաղած Աքիլլեսը դուրս յեկավ վրեժ լուծելու. նա ջարդեց շատ տրովադացիներ և մենամարտի մեջ սպանեց Հեկտորին: Ծերունի Պրիամոսը, տեսնելով քաղաքի պատերի վրայից, թե ինչպես նրա վորդու մարմինը անարգանքի յե յենթարկվում, սարսափելի Աքիլլեսին նվերներ ե բերում և աղաչելով ստանում ե Հեկտորի դիակը թաղման համար:

Ոդիսականի մեջ պատմվում ե այն բանի մասին, թե ինչպես, յերբ Տրովադան կործանվեց հույների կողմից, Ոդիսևս Թագավորը տուն ուղևորվեց, բայց ճանապարհին հեռուները մղվեց, ունեցավ բազմաթիվ զարմանալի արկածներ, կորցրեց իր բոլոր նավերն և ընկերներին ու վորպես մուրացկան վերադարձավ իր մայրենի կղզի Իթակեն: Ոդիսևսն իր տունը թալանված գտավ. այնտեղ քեֆ եյին անում յերիտասարդ իշխաններ, վորոնք ցանկանում եյին նրա կնոջ հետ ամուսնանալ և նրա Թագավորական պալատին տիրանալ. Ոդիսևսը Աթենե աստվածուհու ոգնությամբ կոտորեց նրանց և նորից հաստատեց այնտեղ իր իշխանությունը:

Խաղերը: Յերբ Թագավորը մի նշանավոր հյուր եր ընդունում կամ հիշատակում մեռյալին, նա սիրում եր ցույց տալ նաև իր հարստությունը և իր դյուցազների ճկունությունը: Թաղելով Պատրոկլեսին, Աքիլլեսը ի հիշատակ հանգուցյալի զինվորական խաղերի հրավիրեց բոլոր հունական իշխաններին: Ամենից առաջ վեց ամենալավ կառապանները սլացան իրենց կառքերով, կատարելով մի մեծ շրջան դաշտի վրա: Վորպես առաջին պարգև հաղթողներին Աքիլլեսը խոստացավ մի հմուտ աշխատավոր-ստրկուհի և մի անհագին պղնձե աման կերակուր յեփելու համար. վորպես յերկրորդ պարգև նա խոստացավ մի ձի. հետևյալ պարգևն եր կշռված վոսկի և մի բաժակ: Մինչ մրցողները սլանում եյին դաշտի վրա, հանդիսատեսներից շատերը գրազ եյին գալիս:

Ապա սկսեցին մրցել վազելու արվեստի մեջ, և այդ բանում առաջին պարգևն ստացավ Ոդիսևսը՝ առաջին վազողը Աքիլլեսից հետո, վոր խաղերին չեր մասնակցում, այլ միայն պարգևներ եր բաշխում:

Յերբ սկսեցին մրցել յերկաթե բոլորակ գցելով, Աքիլլեսը հայտնեց, թե ով վոր ամենից հեռու կգցե այն, վորպես պարգև կստանա հենց այդ բոլորակը: Նրա ասելով, դա մի առանձնապես Թանկագին պարգև ե, վորովհետև նրա յերկաթը հինգ տարի բավական կլինի ամեն տեսակ փոքրիկ նո-

րոգումների համար: Ապա դուրս յեկան լիակատար սպառազինությամբ Դիոմեդեսն ու Այաքսը, Աքիլլեսից հետո այդ ամենազորեղ հերոսները, և իրար վրա հարձակվեցին նիզակներով. պարգևը պիտի ստանար նա, ով առաջինը վերք կհասցներ հակառակորդին. բայց կռվողներն այնպես տաքացան, վոր հանդիսատեսները շտապեցին նրանց իրարից բաժանել: Վերջին մրցակցությունը կայանում եր այն բանի մեջ, վոր աղեղից նշան եյին բռնում կայմին կապված կենդանի տատրակին:

Հասարակ մարդիկ յեվ ստրուկները: Շատ ծանր եր հասարակ մարդու կյանքը, վոր քիչ հող և քիչ ազգականներ ուներ: Բոլոր վեճերը ուժով եյին լուծվում: Արշավանքների ժամանակ անխնայորեն ավերում եյին դաշտերը, այրում եյին տները և քշում-տանում անասուններին գյուղացիներից: «Հասարակ մարդը խոշոր տիրոջ ձեռքում անպաշտպան ե, ինչպես սոխակը բազեյի ճիրաններում, ասում ե այն ժամանակվա գյուղացի-բանաստեղծ Հեսիոդը: Ով բոլորովին սեփական հող չուներ, պետք ե ակամայորեն հարուստի մոտ ծանր աշխատանք կատարեր. և չկար մի ավելի վատթար վիճակ, քան մշակի վիճակն եր: Հաճախ մշակը ցմահ ստրուկ եր դառնում տիրոջ մոտ: Ստրուկ եր դառնում և գերին, վոր չեր կարող փրկանք վճարել:

Ստրկի նկատմամբ տերը լիակատար իրավունք ուներ: Ստրուկների բախտը կարող եր տարբեր լինել: Վոմանք մեծանում եյին մեծ տան մեջ տերերի յերեխաների հետ և վայելում եյին տերերի վստահությունը. այդպես եր, որինակ, Ոդիսևսի ստրուկ՝ խոզարած Եվմեոսը, վոր իր սեփական խրճիթը, իր փոքրիկ հոտը և նույնիսկ իր ստրուկն ուներ. նա առաջինն եր, վորին հայտնվեց Ոդիսևսը տուն վերադառնալուց հետո, ավելի շուտ, քան կնոջը և վորդուն: Սակայն նույն Ոդիսևսը, կոտորելով իր կնոջ փեսացուներին, անխնայորեն վարվեց նրանց ծառայող ստրուկների հետ. նա խեղդեց նրանց իր գավթում, և վոչ-վոք չհամարձակվեց միջամտել:

Դատարանը: Ոդիսևսի կոտորած փեսացուները հարուստ մարդիկ եյին և ազգականներ ունեյին: Հետևյալ որը կոտորած ազգականները շտապեցին դեպի պալատ և պաշարեցին այն, պատրաստվելով արյան տեղ արյունով հատուցանել: Ոդիսևսն ստիպված յեղավ զիջել և սպանվածների համար մեծ փրկանք վճարել:

Մեր ժամանակում, յերբ սպանություն, թալան, գողություն կամ վորևե բռնություն ե կատարված լինում, իշխանությունները ձերբակալում են հանցավորին, և միջամտում ե դատարանը. դատարանը կանչում ե վկաներին, քննում ե գործը և պատժում ե հանցավորին: Այդպես չեր այն ժամանակ: Վիրավորանքին մարդիկ պատասխանում եյին սեփական դատաստանով: Սպանության համար սպանությունով եյին վրեժ լուծում. յեթե չեյին կարող իրան՝ հանցավորին բռնել, աշխատում եյին սպանել նրա մերձավորներից վորևե մեկին. թալանի, անասուններ փախցնելու դեմ պատասխանում եյին թալանով: Վորպեսզի մարդուն ստիպեյին յետ տալու վորևե գողացած կամ թալանած իր, իրենց հերթին խլում եյին նրանից վորևե բան և չեյին տալիս, մինչև վոր նա վերադարձներ մոտը յեղածը:

Միայն այն դեպքում, յեթե յերկու կողմի ուժերը հավասար եյին, յե-

թե մարդիկ չեյին կամենում կռվել, նրանք միջնորդ եյին փնտրում։ Միջնորդ կարող եր լինել թագավորը կամ նրա ընկերը կամ շրջանում հարգված ծերունիները։ Այն ժամանակ դատ եյին սարքում։ Դատավորները նըստում եյին հարթ քարի վրա, կազմելով կիսաշրջան, և կանչում եյին յերկու կռված կողմերը. Նրանց շուրջը խռնվում եր ժողովուրդը և աղմկալից կերպով իր դիտողությունններն եր անում։

Բայց և այդ դատը մերինին նման չեր։ Դանդատավորները չեյին պատմում մանրամասնորեն իրենց գործը. Նրանցից յուրաքանչյուրը յերդվում եր միայն նրանում, վոր ճշմարտություն է ասում։ Ի հաստատություն իրենց յերդման նրանք վկա եյին բերում իրենց ազգականներին և ընկերներին։ Դատավորները դատավճռի համար դատվողներից վարձ եյին ստանում։ Իսկ վորպեսզի խաբեբայություն չլիներ և դատավորը չվախենար, թե իր գործը հրի չե կատարում, առաջուց բոլորի աչքերի առաջ ցուցադըրում եյին նրան վճարելիք վոսկին։

Աստվածների մասին յեղած հասկացողությունները։ Հոմերոսն ու Հեսիոդը աստվածների մասին միատեսակ չեն պատմում։

Ըստ Հոմերոսի, աստվածները նման են ռազմիկների։ Նրանք անհոգ են, մերթ դաժանության, մերթ մեծահոգության բուռն արտահայտություններով։ Աստվածները շարունակ կռվում են իրար հետ. Տրովադայի տակ յեղած կռվում աստվածներից վոմանք հույների կողմն եյին, վոմանք՝ տրովադացիների։ Աշխարհիս կարգը կախված է աստվածների վերաբերմունքից կամ այն բանից, վոր ավելի ուժեղ, ավելի խորամանկ աստվածը հաղթում է իր հակառակորդին և տնօրինում է գործերը իր ուզած ձևով։ Բայց աստվածները չեն իմանում ապագան։ Աքիլլեսի և Հեկտորի վճռական կռվից առաջ գլխավոր աստվածը՝ Զևսը գուշակում է, թե ում է վիճակվելու հաղթությունը և ում՝ մահը. Նա վերցնում է կշեռքը և դնում է յերկու վիճակ. Հեկտորի վիճակը իջնում է վայր, դեպի մեռյալների ստորերկրյա թագավորությունը, և նրա բախտը վորոշված է արդեն։ Մի բան են պահանջում աստվածները մարդկանցից—հյուրասիրություն։ Յերբ օտարը մտնում է մեկի տունը և նստում է մոխրի վրա ընտանեկան օջախի մոտ, նա մտնում է աստծու հովանավորության տակ։ Նրան պետք է հյուրասիրել, նրան պետք է պաշտպանել և հրաժեշտի պահին պետք է նվերներ տալ։ Այդ պետք է անել և այն պատճառով, վոր նա կտարածի տանտիրոջ բարի համբավը։

Աստվածների մեջ կա մի գլխավոր աստված, մի թագավոր մյուսների վրա՝ ամպրոպաձիգ Զևսը։ Նա անհամեմատ ավելի ուժեղ է, քան մյուսները. մի անգամ նա առաջարկեց բոլոր աստվածներին բռնել մի թոկ և քաշել գետնից վար, իսկ նա մենակ կպահի թոկը վերևից։ Բայց նրան յերբեմն չեն լսում։ Նա արգելում է, օրինակ, մյուս աստվածներին խառնվել մարդկանց կռիվներին. այդ դեպքում նրանք գաղտնի յեն մասնակցում։ Աքիլլեսի բարկության դոհացում տալու համար Զևսը վորոշեց գերակշռություն տալ տրովադացիներին։ Այն ժամանակ նրա կինը՝ Հերան, վոր հույների կողմն եր, խաբում է նրան, նա համաձայնության է գալիս նրա հետ և քնեցնում է ամուսնուն. այդ ժամանակից օգտվելով, հույները ջարդ են տալիս տրովադացիներին։ Զարթնելով՝ Զևսը կատաղում է բար-

կությունից. Նա սպառնում է Հերային վայր գցել գետին, ինչպես մի անգամ արեց։

Լեռների գագաթներին, ամպերի տակ, մանավանդ ձյունածածկ, մարդուն անմատչելի Ոլիմպոսի վրա աստվածները պալատներ ունեն, ինչպես մարդիկ. այդ պալատները շինել է արվեստագետ-աստվածը, կաղ դարբին Հեփեստոսը։ Դահլիճում Զևսի մոտ աստվածները քեֆ են անում. Նրանք ունեն իրենց աստվածային յերգիչը՝ Ապոլլոնին։

Աստվածները մոտ են մարդկանց. Նրանք ամուսնանում են մարդկանց հետ, և ինչպես պատմում է յերգիչը, Տրովադայի տակ կռվում եյին բազմաթիվ աստվածային զավակներ։ Աստվածները միշտ վայր են իջնում գետին, զինվորներին դեպի կռիվ են առաջնորդում, իրենց սիրելիներին և վորդիներին փրկում են մահացու հարվածներից. յերբեմն կռվի ամենաթեժ վայրկյանին նրանք իրենք էլ են վերք ստանում մահկանացուներից։ Աստվածների ուժը մեծ է, բայց նա այնուամենայնիվ չափվում է մարդկային ուժով. ռազմիկ-աստվածուհին կռվի ժամանակ բղավում է այնպես, ինչպես կբղավեն միքանի տասնյակ մարդիկ. ծովային աստված Պոսեյդոնը, չորս քայլ անելով, անցնում է ծովի կեսը։

Այլ հասկացողություն ունի Հեսիոդը, վոր ռազմիկ հերոսներ չի սիրում և ամբողջ հոգով խաղաղ, աշխատավոր գյուղացիության կողմն է։ Հեսիոդը հավատում է, վոր գերագույն աստված Զևսը աշխարհիս միակ կառավարիչն է. անմահ վոգիների անհամար բազմության է նա հանձնարարում մարդկանց պաշտպանությունը։ Աստված մարդկային կրքերից հեռու յե։ Զևսի աղջիկը՝ Ճշմարտությունը հայտնագործում է նրա առջև աշխարհումս կատարվող բոլոր հանցանքները, անօրենների բոլոր դավերը։ Հեսիոդը թագավորներին ու դատավորներին դիմում է մարգարեյական խոսքերով. «Խղճով դատեցեք. մի կայացնեք անարդար վճիռներ։ Զևսի աչքը տեսնում է ամեն ինչ. Նա կարող է ամբողջ ժողովուրդը պատժել թագավորների խենթ գոռոզության համար»։

Առասպելները։ Հույներն անվերջ պատմում եյին աստվածների և աստվածային հզոր զավակների արկածների մասին։ Այդ պատմություններում, հատկապես **մյութոսների** (առասպելների) մեջ կարելի յե գտնել գծեր, վոր հիշեցնում են բաբելական և յեգիպտական դյուցազներգությունները։ Ահա նրանցից միքանիսը։

Հեռավոր Փյունիկեյում ապրում եյին յեղբայր և քույր՝ Կադմոսը և Յեվրոպան։ Զևսն ընդունում է սպիտակ ցուլի կերպարանք. Նա տանում է Յեվրոպային իր մեջքի վրա և անցնում է նրա հետ ծովը և ափ է իջնում Կրետե կղզում։ Այստեղ նրանցից ծնվում է Մինոսը, Կրետեյի ապագա թագավորը։ Նրա վորդի Մինոտավրոսը հրեշ է, կիսացուլ, կիսամարդ։ Փնտրելով իր քրոջը՝ Կադմոսը ճանապարհ է ընկնում դեպի արևմուտք, հասնում է Հունաստան և հիմնում է Թեբե քաղաքը։ Նա սովորեցնում է մարդկանց հող մշակել և հաղորդում է նրանց այբուբենը։

Արևելքից գաղթած մի ուրիշ հերոս՝ Դանայոսը Յեգիպտոսից Պելոպոնես է գալիս։ Նրա ժառանգների շարքումն եր արքայադուստր Դանայան։ Նա փակված է մութ զամբարանի մեջ, բայց Զևսը մտնում է գետնի տակ

վորպես վոսկե անձրև. նրանցից ծնվում ե վոսկեփայլ վորդի Պերսևոսը: Մորը յերեխայի հետ միանգամ ես փակում են նեղ արկղի մեջ և գցում են ծովը. բայց ալիքները նրան ափ են դուրս բերում: Պերսևոսը մեծանալով՝ սպանում ե սարսափելի Մեդուզային և կտրում ե նրա գլուխը, վոր փաթաթված եր մազերի փոխարեն օձերով. մահվան այդ դիմքը նա ուղղում ե ծովային հրեշի վրա, վոր սպառնում ե կլանել Անդրոմեդա կույսին (Պերսևոսին և Անդրոմեդային ցույց եյին տալիս համաստեղությունների մեջ):

Պերսևոսը կատարում ե իր քաջագործությունները իր հրաշալի նժույգի՝ Պեգասի վրա նստած, վոր սլանում ե յերկինքի տակ վոսկե թևերի վրա: Նույն նժույգը ծառայում ե հերոս Բելլերոֆոնին, վոր հաղթում ե յերեք գլխանի՝ առյուծագլուխ, օձագլուխ և այծագլուխ հրեշ Խիմերային: Յերկինքի տակ թռչել փորձում եր նաև մեծ վարպետ գյուտարար Դեդալը: Կնոսսում Մինոս թագավորի համար նա կառուցեց մի շքեղ պալատ—Լաբյուրինթոս: Շնորհակալության փոխարեն թագավորը կառուցանողին բարձր աշտարակի մեջ փակեց: Դեդալը իր և իր վորդու՝ Իկարի համար հնարում-շինում ե մոմե թևեր, և նրանք դուրս են թռչում: Բայց Իկարն անզգուշորեն արևին ե մոտենում, նրա թևերը հալչում են, և նա ընկնում ե ծովը:

Պերսևոսի ժառանգ և նույնպես Զևսի վորդի Հերակլեսը հունական հերոսներից մեծագույնն ե: Նա ծառայում ե Արգոս քաղաքի վախկոտ թագավորին և կատարում ե 12 ծանր սխրագործություններ. իմիջի այլոց նա կռվում ե առյուծի հետ, վորի մորթիով հետո ծածկում ե իրան Հերակլեսը. կռվում ե Հիդրայի, այսինքն բազմագլխանի վիշապի հետ. սանձահարում ե կատաղած ցուլին, ճանապարհորդում ե դեպի հեռու Արևմուտք դրախտի ծառի վոսկե խնձորների համար, վոր բսնում են կախարդական պարտեզի մեջ. այդ ճանապարհորդության ժամանակ Հերակլեսը հանդիպում ե հսկա Ատլանտին, վոր իր ուսերի վրա յերկնակամարն ե պահում. վերջապես նա իջնում ե ստորերկրյա աշխարհը, վորտեղից Հերակլեսը բերում ե սարսափելի յերեք գլխանի շուն Ցերբերին, վոր պահպանում ե դժոխքի դուռը: Այդ արկածները հիշեցնում են բաբելական աստվածների (Մարդուկի և Գիլգամեշի) դեգերումներն ու տանջանքները, նրանց ժամանակավոր մահը, նրանց անհետանալը դժոխքում և հաղթանակը, իսկ հանձին առյուծի, վիշապի, ցուլի, և այլն կարելի յե տեսնել 12 համաստեղություններ, վորոնց գոտով անցնում ե արևը:

Մի ուրիշ մեծ հերոս ե Թեսևոսը՝ ծովային աստծու՝ Եգեոսի վորդին: Նրա առաջին արկածն այն եր, վոր նա ավազակներից և մարդասպաններից մաքրեց Պելոպոնեսից պարանոցի վրայով Աթենք տանող սարսափելի ճանապարհը (ճիշտ նույնպես ռուսական դյուցազն Իլյա Մուրոմեցը մաքրեց ճանապարհը, ուր նստած եր Սոխակ ավազակը): Հետո, յերբ աթենացիք Կրետե կղզի, Մինոս թագավորին կենդանի տուրք՝ 7 յերիտասարդ և 7 աղջիկ ուղարկեցին, վոր ուտի Մինոտավրոսը, Թեսևոսը գնաց նրանց հետ: Մինոտավրոսն ապրում եր Լաբյուրինթոսի հսկայական խճճված շենքի մեջ: Բայց Թեսևոսին ոգնում ե Մինոսի աղջիկը՝ Արիադնան. նա տալիս ե հերոսին մի կծիկ վոսկե թել, վորով Թեսևոսը ճանապարհը պետք ե գտնի. Նրա վոսկե պսակը (համաստեղությունը) լուսավորում ե Թեսևոսի ճանապարհը խավարի

մեջ, և նա սպանում ե Մինոտավրոսին: Համաձայն մի առասպելի, Դիոնիսիոս աստվածը հրամայում ե Արիադնային նետերով սպանել, և հետո նրա ստվերը թափառում ե գետնի տակ. համաձայն մի ուրիշ առասպելի, Դիոնիսիոսը նրան հափշտակում ե Թեսևոսից և դարձնում ե իր անմահ կինը: Թեսևոսը կռվում ե նաև ամազոնների, ռազմիկ կանանց բանակի հետ և մասնակցում ե ցենտավրների (արարածների, վորոնք մինչև գոտի մարդիկ եյին, ունեյին ձիու իրան և չորս վոտքեր) կռվին:

Արգոնավորդների, այսինքն Արգո կախարդական նավի ծովագնացների մասին յեղած առասպելը հունական հերոսների մեծ մասը մի տեղ ե միացնում: Նրանց առաջնորդին՝ Յասոնին հանձնարարված ե ձեռք բերել փայլուն վոսկեգեղմը, վոր պահված ե արևելքում: Հերոսները բարեհաջող կերպով անցնում են իրար դիպչող ժայռերի միջից, կռվում թևավոր ճիվաղների, այսինքն մահվան զրահապատ ուրուրների հետ: Հեռու յերկրում, ուր նրանք վոտք են կոխում, վոսկեգեղմը մի վիշապի ձեռքում ե լինում: Թագավորը, վոսկեգեղմի տերը, ստիպում ե Յասոնին հողը հրաշունչ ցուլերով հերկել, օձի ատամներ ցանել և նրանցից դուրս յեկած հսկաների զորքը հաղթել: Այդ բանում Յասոնին ոգնում ե թագավորի աղջիկը՝ կախարդուհի Մեդեան. նա յե վոր քնեցնում ե վիշապին, և արգոնավորդները, գողանալով վոսկեգեղմը, տուն են վերադառնում: (Համեմատիր յեգիպտական առասպելը գիշերային արևի և յերկրի տակ գերված արևի փրկության մասին):

Առասպելների մի մասը մտցրած ե Իլիականի և Ոդիսականի մեջ: Հեռավոր կղզիների վրա Ոդիսևսը պատահում ե վիթխարի միաչքանի ցիկլոպների, վորոնք այրաբնակ վայրենիների կյանք են վարում: Նրա նավը մոտենում ե մի կախարդ կնոջ՝ Կիրկի կղզուն, վոր նրա ընկերներին խոզեր ե դարձնում: Բայց Ոդիսևսին ոգնում են աստվածները, և նա ստիպում ե Կիրկին վերադարձնել ծովագնացներին մարդկային կերպարանքը: Ապա նրանք գնում են ժայռերի մոտով, ուր անուշ յերգում են հուշկապարիկները, կանանց դեմք ունեցող վայրի թռչունները, վորոնք պատառոտում են բոլորին, ով կմոտենա ափին, լսելով նրանց ձայնը: Վերջապես, Ոդիսևսի նավը հաջողությամբ անցնում ե նեղուցը, ուր մի կողմից քաշում ե այն ջրապտույտի մեջ հրեշ Խարիբդան, իսկ մյուս կողմից՝ Սցիլլան, վոր ներքև ցատկելով ժայռից, դուրս ե քաշում հանդուգներին և զարնում ե նրանց քարերին ու ջարդուփշուր անում: Ոդիսևսը դուրս ե կանչում (ինչպես Գիլգամեշը) մեռյալների ստվերները: Մյուսների թվում յերևում ե Աքիլլեսը, վոր սպանվել եր Տրովադայի տակ թշնամու նետով. նա գանգատվում ե գետնի տակ յեղած տխուր գոյության մասին. ավելի լավ ե յերկրի վրա վերջին մշակը լինել, քան մեռյալների աշխարհում թագավորել:

Ստորերկրյա աշխարհը մռայլ և սարսափելի յե: Նրանից վերադարձ չկա: Միայն մի անգամ յերգիչ Որփեոսին հաջողվեց անուշահնչյուն յերաժշտությամբ տրամադրել դաժան Դժոխքին, ստորերկրյա աշխարհի աստծուն, վոր իրեն վերադարձնե իր մեռյալ կնոջը՝ Եվրիդիկեյին: Բայց նրան պայման եր դրված՝ յետ չնայել, մինչև վոր դուրս կգան յերկրի յերեսը: Որփեոսը չհամբերեց և նայեց Եվրիդիկեյին. իսկույն նրան կրկին յետ տարավ Հերմես աստվածը՝ յերկիրը թողնող հոգիների ուղեկիցը:

Ինչպես Գիլգամեշի առասպելի մեջ, հունական առասպելներում ևս հիշվում է մակուկավարը, վոր փոխադրում է մեռյալներին մոռացության գետի վրայով։ Ինքը Դժոխքն իր մռայլ մենակության չդիմացավ և առևանգեց յերկրի յերեսից ծաղիկներ հավաքող Պերսեֆոնային՝ Դեմետրա աստվածուհու աղջկանը։ Մայրը կորած է համարում իր զավակին, սգի շորեր հագնում և անիծում է յերկիրը, զրկելով այն խոտից, կանաչից և պտուղներից։ Յերկար վորոնումներից հետո աստվածներն իմանում են, թե վորտեղ է գտնվում Պերսեֆոնան, և յետ են պահանջում նրան, բայց Դժոխքը համաձայնվում է իր կնոջը միայն կես տարով բաց թողնել մոր մոտ։ Յերբ Պերսեֆոնան դուրս է գալիս մոր մոտ, Դեմետրան զգում է նրա մոտենալը, վորովհետև ամենուրեք զարթնում է կյանքը, սկսում են բուսնել խոտերը և փթթել տերևները։ Կես տարուց հետո Պերսեֆոնային կրկին սպասում է գերությունը խավարի մեջ, իսկ յերկրի վրա կրկին պիտի տիրեն տխրությունն ու աղքատությունը։

Առասպելները տարբեր տեղերում միատեսակ չեյին պատմվում, և նրանք հաճախ մեկը մյուսին հակասում եյին։ Հեսիոդը փորձեց միացնել նրանց մի ընդհանուր դյուցազներգության՝ «Աստվածների ծագումի» մեջ։ Նա ասում է, վոր աստվածներն ու տիեզերքը ծագեցին քաոսից։ Հնագույն աստվածներն են Ուրանոսը՝ յերկինքը և Գեան՝ յերկիրը. նրանցից ծագեցին մյուսները. Զևսը, նրա յեղբայրներն ու նրանց կանայք յերրորդ սերունդն են կազմում։ Այդ նոր աստվածները վաղուց չէ վոր կառավարում են աշխարհը, այն որից ի վեր միայն, յերբ հաղթեցին իրենց հայրերին։ Բայց Գեան ծնում է նաև Զևսին թշնամի տիտաններ (հսկաներ), վորոնք վրեժ պիտի լուծեն հին աստվածների պարտության համար։ Տիտանները հյուսիսային Հունաստանում մի լեռը մյուսի վրա յեն կուտակում՝ բարձրանալու համար բարձր Ոլիմպոսի վրա, ուր հավաքված են աստվածները։ Զևսը վայր է գցում նրանց իր կայծակով և մխում է շղթաներով գետնի տակ, վորտեղից նրանք, անզոր լինելով, կրակ են դուրս ժայթքում հրաբուխների միջոցով։ (Համեմատիր բաբելական առասպելի հետ Տիհամատի և նրա զորքի կռվի մասին Մարդուկի դեմ)։

Աշխարհագրական անունների բացատրության համար հույները սիրով դիմում եյին առասպելների ոգնության։ Եգեյան ծովից Սև ծովը տանող Հելլեսպոնտոս նեղուցի անունը բացատրում եյին նրանով, վոր ծովի ջրի (Պոնտոս) մեջ ընկել եր Հելլան, Թուխպի աղջիկը, վոր թռչում եր իր յեղբոր հետ վոսկեգեղմ վոչխարի վրա նստած (վոսկեգեղմը յերևան է գալիս հետո արգոնավորդների առասպելի մեջ)։ Եգեյան ծովի անվան առիթով պատմում եյին. յերբ Թեսևոս ուղևորվում եր դեպի Կրետե Մինոտավրոսի հետ կռվելու, նա խոստացավ իր հորը՝ Եգեոսին, վոր հաջողության դեպքում սովորական սև սգավոր առագաստները սպիտակներով կփոխարինե, բայց մոռացավ այդ անել իր վերադարձի ժամանակ. Եգեոսը, տեսնելով հեռվից նավը, հուսահատությունից ինքն իրեն գցեց ծովը, վոր և կրում է նրա անունը։

Հերոսական դարի վերջը։ Տրովադայի տակ կռվող հունական զինվորները ախեացիների ցեղին եյին պատկանում։ Նրանք սարսափելի արևելյան

նվաճողների՝ ասորեստանցիների ժամանակակիցներն եյին, թե սրանք և թե նրանք առաջին անգամ յերկաթ կիրառեցին (իզուր չեր, վոր Աքիլլեսն այնքան բարձր եր գնահատում յերկաթե բոլորակը)։ Ախեացիք մեծ քաջագործություններ արին, բայց իրենց ուժերն արշավանքների մեջ թուլացրին։ Ավանդությունն ասում է, թե տրովադական պատերազմից վերադարձող հերոսներն անբարյացակամ ընդունելություն գտան տանը. Ոդիսևսը հազիվ հազ կարողացավ հաղթել իր հակառակորդներին Իթակե կղզու վրա, Ագամեմնոնին սպանեցին նրա սեփական պալատի մեջ Միկենքում, իսկ Դիոմեդեսը հարկադրված յեղավ հեռանալ իր հայրենի Արգոսից և աքսորական դառնալ։

Մինչ այդ հյուսիսից վրա հասան հունական մի այլ ցեղի՝ **դորացիների** ռազմիկ խմբերը։ Թեսսալիայի և Միջին Հունաստանի վրայով նրանք ներս խուժեցին Պելոպոնես. նրանք մասամբ նվաճեցին նախկին հունական ազգաբնակությունը, մասամբ ստիպեցին նրան փախչել։ Փախստականների մեծ մասն իրենց համար նոր հայրենիք գտան Քիոս ու Սամոս կղզիների և փոքրասիական ծովափի այն մասի վրա, վոր ուղղակի Ատտիկայի դիմացն է գտնվում։ Այդ յերկիրը **Յոնիա** անունն ստացավ։ Յոնիացիք 12 քաղաք հիմնեցին. յուրաքանչյուրն անկախորեն եր կառավարվում, բայց բոլորն եյ ճանաչում եյին մի ընդհանուր յոնիական սրբատեղի, ծովային աստծու՝ Պոսեյդոնի տաճարը, ուր և հավաքվում եյին հանդիսավոր զոհաբերության համար։

Այսպիսով ցեղերի կռվի շնորհիվ հունական աշխարհը ծավալվեց Եգեյան ծովի յերկու կողմն եյ։ Սակայն հույներն այդ նոր տեղերում չհանգստացան։ Շուտով նրանք սկսեցին գաղթել Միջերկրական ծովի բոլոր ծայրերը։

IV.

ՀՈՒՅՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 700-480 Թ. Թ. Ք. Ծ. ԱՌԱՋ

Սպարտան։ Հյուսիսից յեկած դորացիք գրավեցին ամենալավ հողերը Պելոպոնեսում։ Դորական խմբերից մեկը բնակություն հաստատեց Լակոնիայում, Եվրոտա գետի արգավանդ հովտում։ Նվաճողները բնիկներին ճորտեր (**հելոտներ**) դարձրին և ստիպեցին նրանց դաշտերում աշխատել, իսկ իրենք, մշտական մեծ բանակ կազմելով, հաստատվեցին յերկրի մեջտեղում։ Նրանց բնակավայրը կոչվում եր **Սպարտա**. դա պատով շրջապատված քաղաք չեր, այլ ավելի շուտ մի մեծ ծավալուն գյուղ. նրա պաշտպանության համար զորքը հույսը դնում եր իր պահակի աչալրջության վրա։

Ռազմիկները տնտեսությամբ չեյին զբաղվում. ճորտերը (հելոտները) նրանց կալվածներից մատակարարում եյին նրանց հաց, գինի, ձիթապտուղ, իսկ իրենք իրենց ժամանակն անց եյին կացնում վորսորդությամբ, մարմնամարզական խաղերով և վարժություններով, զինվորական քայլումներով և շարժումներով։ Ասորեստանցիների նման՝ սպարտացիք իրենց մոտ զենքի

մեծ պաշար եյին պահում. Սպարտայից վոչ-հեռու յերկաթի հանքեր կային, և բացի այդ բոլոր նրանք, վոր յենթարկվում եյին սպարտացիների իշխանության, պարտավոր եյին բերել նրանց համար յերկաթե ձողեր ու շերտեր: Այդ պատճառով Հունաստանում ասում եյին. «Սպարտան ճանաչում է միմիայն յերկաթե փողեր»:

Մեսսենական պատերազմները: Վոչ բոլոր ռազմիկները հող ստացան Լակոնիայում: Այդ հանգամանքն սպարտական թագավոր Թեոպոմպոսին մեջ ներշնչեց պատերազմի գնալ հարևան Մեսսենիայի վրա՝ նրա արգավանդ դաշտերից հողաբաժիններ կարելու նպատակով անհող ռազմիկների համար: Յեվ սկսվեցին համառ կռիվներ մեսսենացիների հետ:

Յերկու կողմերն էլ դիմեցին պատգամախոսին (գուշակողներին) խորհուրդ հարցնելու համար: Պատգամախոսը պատասխանեց. «Կհաղթե այն կողմը, վորի մոտ կգտնվի մի աղջիկ թագավորական ցեղից»: Մեսսենական թագավոր Արիստոդեմոսը զոհաբերեց իր հարազատ աղջկան. նա հաղթեց սպարտացիներին, բայց հետո դարդից ինքնասպանություն գործեց: Պատերազմի վերջին սպարտացիք հաղթեցին և ստիպեցին մեսսենացիներին նահանջել դեպի լեռները:

Միքանի ժամանակից հետո մեսսենացիք ապստամբեցին, առաջնորդ ընտրելով քաջ Արիստոմենեսին: Իրա կոչվող իրենց լեռնային ամրությունից նրանք հաջող հարձակումներ արին. կազմելով մի թռուցիկ խումբ, Արիստոմենեսն ավերեց Եվրոտի հովիտը և սպառնում եր Սպարտային իսկ: Սպարտացիների քաջությունն սկսեց նվազել. նրանց կռվի յեր վոգևորում բանաստեղծ և յերաժիշտ Տիրտեոսը, վոր հորինեց հայրենասիրական յերգեր, հնարեց հնչյուն խմբերգեր և քայլերգեր: Բախտը նորից սկսեց դավաճանել մեսսենացիներին: Իրենց դժբախտությունը նրանք հետո բացատրում եյին նրանով, վոր լավ չհասկացան գուշակողների խոսքերը: Պատգամախոսն ասել եր. «Կկործանվի այն կողմը, վոր թույլ կտա այծին (տրագոս) ջուր խմել սահմանագծի գետակից»: Մեսսենացիք դադարեցին դեպի գետակը այծեր քշել: Սակայն հունարեն «տրագոս» խոսքը նշանակում է և՛ «այծ» և՛ «թզենի»: Գետակի ափին բուսնում եր մի թզենի, վորի ճյուղերը խոնարհվեցին նրա ջրի մեջ, «ջուր խմեցին»: Սպարտացիներին հաջողվեց վերջապես վերցնել Իրա ամրությունը: Արիստոմենեսը չուզեց անձնատուր լինել և մի փոքրիկ խմբի հետ գնաց աքսոր. մնացած մեսսենացիներին ճորտեր դարձրին:

Այդ հաջողությունից հետո Պելոպոնեսում ամենքն սկսեցին ձգտել դաշնակցելու սպարտացիների հետ: **Ելիդայի**՝ այն շրջանի, ուր տեղի եյին ունենում **ոլիմպիական** խաղերը (նրանց մասին հետո)—բնակիչները թույլ տվին, վոր սպարտացիք մասնակցեն իրենց տոնախմբությանց, և պարտավորվեցին նրանց օգնություն ուղարկել բոլոր արշավանքների ժամանակ. **Արկադիայի** ամրակազմ և առողջ լեռնականներն սկսեցին ծառայության մտնել սպարտական զորքի մեջ: Սպարտան Հունաստանի առաջին ռազմական ուժը դարձավ:

Սպարտացիների զինվորական կրթությունը: Իրենց սեփական յերկրում սպարտացիք փոքրամասնություն եյին կազմում: Բազմաթիվ ճորտերի վրա

իրենց իշխանությունը պահպանելու համար՝ նրանք հարկադրված եյին ռազմական կյանք վարել, լինելով մշտական վտանգի տակ:

Յուրաքանչյուր սպարտացի ցուցակագրված եր զինվորական վարչության մոտ. վոչ-վոք չեր կարող առանց հրամանատարների թույլտվության հեռանալ վորևե տեղ, մանավանդ Լակոնիայի սահմաններից դուրս: Յեկվորներին թույլ չեյին տալիս յերկարորեն ապրելու Սպարտայում, իսկ յերբեմն կառավարությունը յերկրից արտաքսում եր բոլոր օտարականներին. սպարտացիք չպետք է հետաքրքրվեյին օտար կարգերով: Բոլոր զինվորները, վորպես ընկերներ, հավասար եյին: Սպարտայում, սակայն, գիտեյին ծերության հարգը. ծերունիներից եր կազմվում **գերագույն գաղտնի խորհուրդը**, վոր նիստեր եր ունենում թագավորների հետ միասին (Սպարտայում յերկու թագավոր կար՝ յերկու ամենահին ընտանիքներից): Ընկերական վոգին զինվորների մեջ վառ պահելու համար՝ նրանց ստիպում եյին միասին ճաշել վրաններում. թագավորները մյուսների հետ միասին եյին սեղան նստում: Ընդունված չեր ընավ, վոր սպարտացին տանը նստի և իր ընտանիքով զբաղվի, այլապես ընկերները նրան կծաղրեյին:

Տղաներին 7 տարեկան հասակից վերցնում եյին տնից և զինվորական դպրոցն եյին տալիս: Այստեղ յերեխաները վաշտերի եյին բաժանված հին զինվորների հրամանատարության տակ, վորոնք ամենախիստ զինվորական կրթություն եյին տալիս նրանց: 16 տարեկան հասակում յերիտասարդը դուրս եր գալիս դպրոցից և մտնում զինվորական ծառայության մեջ ցծերություն: Աղջիկներին նույնպես մարմնամարզություն եյին սովորեցնում և մանկությունից զրկանքների եյին վարժեցնում՝ մարդկանց ուժեղ ցեղը պահպանելու համար:

Ծանր սպառազինված հույն զինվոր զրահով, սաղավարտով, զանգապաններով յեվ վահանով:

Իրենց արշավանքների ժամանակ սպարտացիք մշակեցին կռվի նոր յեղանակ: Բոլոր զինվորները, վորպես հավասար մարդիկ, զինված եյին միատեսակ կերպով—սաղավարտով ու զրահով, վոր հագնում եյին կարմիր շապկի վրայից: Նրանց մեջ այժմ չկային արդեն դյուցազուններ, վոր առաջ եյին դուրս գալիս՝ ռազմական կառքերի վրա նստած: Զրահակիրները (հունարեն՝ **հոպլիտները**) կռվի դաշտում շարժվում եյին առանց շտապելու, սրնգի նվագածությամբ. նրանք կռիվ եյին սկսում, յերկու կամ յերեք շարքից կազմելով մի սեղմ պատ (ֆալանգա), իրար մոտեցնելով

լայն վահանները և դուրս ցցելով յերկար, սաժենանոց նիզակները. զինվորի ամբողջ սպառազինությունը 2 փթից ավելի ծանրություն ուներ, և նրա մի մասը ճանապարհին սայլով եյին տանում։ Ռազմաշարքերում կանգնած եյին լինում ընկերներն ու հարևանները, վոր իրար յերդվում եյին տալիս միասին կռվելու և միասին մեռնելու։ Սպարտացիներին ներշնչում եյին պահպանել իրենց զինվորական պատիվը, կռվել մինչև իրենց վերջին շունչը այնտեղ, ուր կթելադրեր պարտականությունը, և ուր կհրամայեն առաջնորդները։

Սպարտացիք հաստատ պահպանում եյին իրենց սովորությունները. նրանք համոզված եյին, թե կյանքի կրթությունն ու որենքը հին ժամանակում հաստատել է իմաստուն Լիկուրգոսը, վորի հրահանգներին հավանություն եր տվել Դելֆերի մեծ պատգամախոսը։

Հույների առևտրական քաղաքներն ու գաղութները։ Շարժուն և ձեռնարկու յոնիացիների կյանքը բնավ նման չեր դորացիների կարգերին։ **Միլետ** և **Եփես** քաղաքները, **Քիոս** և **Սամոս** կղզիները առևտուր սկսեցին արևելյան յերկրների հետ։

Նրանց ամենամոտիկ հարևանն եր **Լյուդիան** իր **Սարդեր** մայրաքաղաքով, մի յերկիր, վոր հարուստ եր մետաղներով. ըստ հունական առասպելների, այս յերկրից եր ծագում հեքյաթային Միդասը, վոր աստվածներից, վորպես շնորհ, ստացել եր ամեն ինչ իր հպումով վոսկի դարձնելու զորությունը։ Թանգագին մետաղների սիրահար հույները հաճությամբ եյին ծառայում լյուդիական թագավորներին. առանձնապես նրանց հիշողության մեջ դրոշմվել եր առատաձեռն Կրեսոս թագավորը, վոր շատ անգամներ դիմեց Դելֆերի պատգամախոսին՝ խորհուրդ հարցնելու համար, Հունաստան ուղարկելով հարուստ նվերներ։ Լյուդիացիներից հույները սովորեցին դրամ կտրել. գործ եյին ածում Լյուդիայում ձեռք բերվող սպիտակ վոսկի (ելեկտրոն)։

Հեռավոր Բաբելոնից յոնիացիները բերում եյին պերճանքի առարկաներ, ծիրանագույն և նախշուն կերպասներ, խունկ և սնդուլ։ Յոնիացիք իրենք ևս յուրացրին արևելյան մոդաները, սկսեցին կրել լայն հագուստներ, հյուսել գլխի յերկար մազերը և ամրացնել նրանց վարսակալ վոսկե ասեղներով։ Նրանք ծանոթացան նաև բաբելական գիտության. միլետցի գիտնական Թալեսը գիտեր գուշակել խավարումները։

Յոնիայեն սկսում բերել **ստրուկներ**. բայց այդ ստրուկները բոլորովին այլ եյին, քան հոմերական հերոսների ժամանակներում։ Հնում ստրուկները հույներն եյին, կամ պատերազմում վերցված գերիները, և կամ պարտքերի պատճառով ազատությունից զրկված մարդիկ։ Այժմ գնում են ստրուկ վայրենիներ հեռավոր յերկրներից՝ Կովկասից, Սև ծովի ափերից, Դանուբից, Աֆրիկայից։ Բացի աշխատանքից դաշտերում և խաղողի այգիներում, ստրուկներին գործածում եյին արհեստների մեջ, սովորեցնելով նրանց մանելու, վոստայնանկելու, կոշիկ կարելու, թամբ շինելու, զենք շինելու արհեստը։ Ստրուկների տերերը բավականանում եյին մեծ արհեստանոցներ կամ գործարաններ շինելով և չեյին մտնում աշխատանքի մանրամասնության մեջ. բանվոր ստրուկների համար նրանք հում նյութ եյին գնում

և նրանցից պատրաստի իրերն եյին վերցնում, կամ թողնում եյին, վոր ստրուկներն իրենց սեփական միջոցներով վարեն գործը, և վերցնում եյին նրանցից վաստակի միայն մի վորոշ մասը։ Նոր հարստությունները Հունաստանի բոլոր ծայրերից դեպի Յոնիա գրավեցին ձեռնարկու մարդկանց։ Քաղաքներում նեղվածք եր, և սկսվեց նույն յերևույթը, ինչ վոր տեղի ունեցավ Փյունիկիայում. Միլետը և Սամոսն սկսեցին նավատորմեր պատրաստել ուրիշ յերկրներ գաղթականներ տանելու համար։

Սկզբում յոնիական գաղթականները հաստատվեցին հյուսիսից Եգեյան ծովը փակող **Թրակիայի** ափերի վրա։ Այդ յերկիրն իր հանքերով գրավում եր վոսկի փնտրողներին. բացի դրանից հույները Թրակիայում գտան հրաշալի կայմացու անտառ նավեր շինելու համար, մինչդեռ Հունաստանը փայտի կողմից շատ աղքատ ե։ Ապա նրանք շարժվեցին դեպի Սև ծով (Պոնտոս)։ Այժմյան հարավային Ռուսաստանում հույները հիմնեցին **Ոլվիան** (Դնեպրի բերանի մոտ) և **Խերսոնեսը** (Ղրիմում, Սևաստոպոլի մոտ)։ Այդ գաղութներն առևտուր սկսեցին **սկյութացիների** հետ, վորոնք ապրում եյին Դնեպրի և Դոնի միջև տարածվող ընդարձակ տափարակի վրա։ Հույներն սկյութացիներից գնում եյին հաց, մուշտակեղեն և կաշվեղեն,—բոլորն ել այնպիսի առարկաներ, վորոնց մեծ պակաս եր զգացվում Հունաստանում, իսկ ծախում եյին նրանց կավե և մետաղե ամաններ, զենք և զարդեր։

Յոնիացիք դիմեցին նույնպես և մի ուրիշ կողմ, Աֆրիկայի ափը և սկսեցին գաղթականներ ուղարկել Յեգիպտոս և **Կիրենե** (այժմյան Բարկա)։ Վորովհետև յեգիպտացիք հաճույքով գնում եյին հունական արտադրություններ, **Նավկրատիսում**, Նեղոսի թևերից մեկի վրա բնակություն հաստատեցին բազմաթիվ հույն արհեստավորներ, մանավանդ նախշուն ամաններ պատրաստող վարպետներ։

Ասիական, սև-ծովյան և յեգիպտական բազմաքանակ ապրանքներ սկսեցին բերել Յեվրոպական Հունաստանի ափերը։ Այդ ներմուծությունից մեծ շահ ստացան **Մեգարայի** և **Կորնթոսի** նավորդները (այդ քաղաքները գտնվում եյին Իսթմոսի վրա, այսինքն Միջին Հունաստանը Պելոպոնեսի հետ միացնող պարանոցի վրա)։ Արևելքից Եգեյան ծովի կողմից Իսթմոսին մոտենում ե Սարոնիկական ծոցը. արևմուտքից՝ ցամաքի մեջ խորը ներս մտնող Կորնթական ծոցը։ Մեգարացիք և կորնթացիք ապրանքները փոխադրում եյին յերկու ծոցերի միջև անցնող կարճ ցամաքային ճանապարհով և նորից նավերի վրա բառնալով, ուղարկում եյին այդ ապրանքները դեպի արևմտյան ջրերը։

Կորնթոսում առաջ յեկան սեփական հմտալից արհեստներ. սկսեցին արևելյան յեղանակով կերպասներ պատրաստել, սովորեցին ձուլել և զոդել մետաղե իրեր։ Առանձին հռչակություն ձեռք բերին կավե ամաններ պատրաստող կորնթացի արհեստավորները. այս գործում մի նոր միտք հղացան— նախշել կարմիր ներկով գեղեցիկ մեծ վազաները և փայլուն սև լաքով պատել հերոսների կռիվները ներկայացնող պատկերները, աստվածների թռիչքները և այլ առասպելները։ Շուտով հունական արհեստի արտադրությանց վաճառքի համար մի ընդարձակ շուկա բացվեց Միջերկրական ծովի արևմտյան մասում։ Այդ իսկ կողմն սկսեցին ուղևորվել նաև գաղթական-

ները, վորոնք իրենց համար նոր հայրենիք եյին փնտռում։ Դուրս գալով Կորնթական ծոցից, նրանք բնակություն հաստատեցին **Կորկիրայում**՝ Իտալիայի ճանապարհի վրա գտնվող մի կղզում. Իտալիայում հիմնեցին **Սիբարիսը**, Սիցիլիայում՝ **Սիրակուզան**։

Հույն ժողովուրդը ծավալվեց Միջերկրական ծովի բոլորդակ տարածությամբ։ Հեռավորագույն գաղթավայրն արևելքում **Տանաիսն** եր (Դոնի բերանի մոտ), արևմուտքում՝ **Մասսիլիան** (այժմյան Մարսելը հարավային Ֆրանսիայում)։ Միայն Սպանիայի և հյուսիս-արևմտյան Աֆրիկայի ափերում հույները չեյին կարող հաստատվել. նրանց չեյին թողնում փյունիկեցիք, վոր ամրացել եյին Կարթագենում։ Վոչ մի տեղ հույները չմտան ցամաքի խորքը. գաղթում եյին մեծ մասամբ վոչ թե հողագործները, այլ առևտրականներն ու արհեստավորները, վորոնք առևտուր եյին անում բնիկների հետ։ Գաղթականները չեյին մոռանում իրենց մայր-հայրենիքը. նրանք նվերներ եյին ուղարկում հայրենի յերկրի հովանավոր աստծուն. յերբ նոր գաղթականների վիճակը ծանրանում եր օտար յերկրում, հայրենակիցները նրանց օգնություն եյին ուղարկում։

Թե Հունաստանում և թե գաղութներում ամեն մի համայնք անկախություն եր պահպանում։ Ամենուրեք փոքրիկ ժողովուրդը, հաճախ միքանի հազար մարդուց բաղկացած, շինում եր իր համար ամրացած մի քաղաք, ամենուրեք նա ընտրում եր իր առանձին դատավորները և զինվորական հրամանատարները, կառավարում եր իր գործերը, ինչպես վոր կարող եր, և չեր մտածում մի զորեղ թագավորի յենթարկվելու մասին։

Ազնվապետությունն (**արիստոկրատիա**) **յեվ բռնապետությունը** (**տիրանիա**) **Կորնթոսում**։ Կորնթական առևտուրը ղեկավարում եր բաքխիադների հին տոհմը, վորոնք հոմերական դյուցազունների նման քաջ ռազմիկներ և ճարպիկ վաճառականներ եյին։ Կորնթոսի յերկու՝ արևելյան և արևմտյան նավահանգիստների միջև Իսթմոսի վրայով նրանք մի հարթ ճանապարհ անցկացրին. նավերն անիվների վրա եյին դնում և մի ծովից դեպի մյուսն եյին սահեցնում, այնպես վոր պետք չեր լինում բեռները նավերից դուրս հանել։

Բաքխիադները գոռոզ եյին իրենց պահում և թույլ չեյին տալիս, վոր իրենց ընտանիքների մեջ օտարներ մտնեն։ Նրանք վերացրին թագավորական իշխանությունը և սկսեցին իրենց միջից հերթով ընտրել մի տարով մի գլխավոր հրամանատար։ Նրանք համարում եյին իրենց, հերոսների նման, մարդկային բարձր ցեղից. այստեղիցել ծագել և այդ իրավակարգի անունը՝ **արիստոկրատիա**, այսինքն ազնիվների իշխանություն (ազնվապետություն)։

Բաքխիադների ստացած մեծ օգուտները գրգռեցին նշանավոր տոհմին չպատկանող բոլոր այլ վաճառականների նախանձը։ Գրգռված եյին նաև արհեստավորները Կորնթոսում. արտասահմանից բերված ստրուկների արհեստանոցները նրանց զրկում եյին աշխատանքից։ Հասարակ ժողովրդի դժգոհությունից օգտվեց Ցիպսելոսը, վոր մոր կողմից Բաքխիադների ընտանիքից եր, բայց մերժված եր ազնիվների շրջանից, վորովհետև նրա հայրն ազնվական տոհմից չեր։ Նա գինեց ժողովուրդը, Բաքխիադներից վոմանց

գլխատել տվեց, մյուսներին աքսոր ուղարկեց և իր կողմնակիցներին բաժանեց քաղաքի նախկին տերերի կուտակած վոսկին։



Հունական մեծ նավ յերեք շարք թիերով։

Ցիպսելոսն իշխում եր միահեծանորեն, ինչպես մի թագավոր, սակայն չընդունեց թագավորական տիտղոս, վորի իմաստն այն է, թե իշխանությունն աստվածներից է սրբագործված. նա իրան անվանեց բռնապետ, **տիրաննոս**, վոր պարզապես «զորեղ իշխանավոր» է նշանակում։ Ժողովրդից սիրված՝ նա իր իշխանությունն իր վորդի Պերիանդրոսին հանձնեց և հանգիստ մեռավ։ Պերիանդրոսը հույների մոտ հետո համարվում եր մարդկանց կառավարելու մեծ վարպետ։ Այդ արվեստը նրան սովորեցրեց, ինչպես պատմում եյին, մի ուրիշ բռնապետ՝ միլետցի Թրասիբուլոսը, վորի մոտ Պերիանդրոսը մի անգամ հյուր եր։ Յերբ նրանց միջև խոսակցություն սկսվեց կառավարելու յեղանակների մասին, Թրասիբուլոսն իր յերկտասարդ բարեկամին դաշտը զբոսանքի տարավ և հասունացած արտի վրա ձեռնափայտով սկսեց վայր զարնել այն հասկերը, վորոնք մյուսներից բարձր եյին բուսել։ Դա նշանակում եր, վոր կառավարիչը պետք է ականավոր մարդկանց հպարտությունը վոտնակոխ անի և բոլորին հավասարեցնի իր իշխանության տակ։

Բռնապետներն ավելի ևս ընդարձակեցին Կորնթոսի առևտուրը։ Նրանք սկսեցին շինել յերեք շարք թիեր ունեցող նավեր, վորոնք շարժվում եյին արագ և չեյին վախենում բաց ծովով մեծ տարածություններ անցնել։ Մոտ 600 թ. Պերիանդրոսի ժամանակ Կորնթոսը Հունաստանի առաջին առևտրական քաղաքը դարձավ։

Աթենքի նոր իրավակարգը։ Իսթմոսին հարևան Ատտիկայում ազնվականությունը նույնպես, ինչպես Կորնթոսում, վերացրեց թագավորական

իշխանությունը և իր միջից ամեն տարի ընտրում էր **արխոնտներ**, այսինքն զինվորական հրամանատարներ և դատավորներ։ Յերկրի գլխավոր աստվածություն համարվում էր կույս-Աթենասը, վորի տաճարը կանգնած էր ակրոպոլիսի (բարձր բլրի) վրա հին ամրոցի պատի յետևում։ Ատտիկայի ամբողջ ազգաբնակությունն ըստ գլխավոր քաղաքի աթենացի անունն էր կրում։

Աթենքի մյուս բլրի՝ **Արեոպագոսի** վրա, վոր նվիրված էր պատերազմի աստծուն, կիրճի կողքին, ուր ապրում էյին վրեժխնդրության արնածարավ վոգիները, դատավորներն էյին հավաքվում սպանության գործերը քննելու համար։ Այդ բանում նրանք հետևում էյին հին կարգերին։ Դատավորների առջև յերկու քարի վրա, իրար դեմ-առ-դեմ, կանգնում էյին սպանության մեջ մեղադրվողը և մեղադրողը՝ սպանվածի մերձավորագույն ազգականը, վոր պարտավոր էր վրեժ լուծել նրա տեղ. Նրանց միջև դնում էյին յերկու մասի բաժանված զոհը ի նշան այն բանի, վոր նրանք իրար անհաշտ պատերազմ էյին հայտարարել։ Յերկուսն էլ յերդվում էյին, թե ասում են ճշմարտությունը և աստվածների բարությունն էյին հրավիրում միմյանց վրա։ Յեթե դատավորներն ընդունեյին, վոր սպանությունը չար դիտավորությամբ է կատարված, դատապարտյալը գլխով հանձնվում էր սպանվածի ազգականներին նրանից վրեժ լուծելու համար։

Խռովությունները Աթենքում յեվ Սոլոնի օրենքները։ Նույնպես, ինչպես և Կորնթոսում, աթենական ժողովուրդն սկսեց տրտնջալ ազնվականության իշխանության դեմ։ Իրենք ազնվական տոհմերը բաժանվեցին. վոմանք աշխատում էյին իրենց կողմը գրավել գյուղական ազգաբնակությունը, խաղողի այգետերերին և ձիթապտուղ մշակողներին, մյուսները— ծովափնյա բնակիչներին, ձկնորսներին և նավատերերին։ Ազնվականներից մեկը՝ Ցիլոնը, մի հարուստ ձիարույծ, վոր ամբողջ Հունաստանում հայտնի յեր ոլիմպիական խաղերի ժամանակ տարած իր հաղթանակով, ձգտեց Աթենքի բռնապետը դառնալ և գրավեց ակրոպոլիսը (միջնաբերդը)։ Բայց դուրս յեկավ, վոր նրա թշնամիներն ավելի բազմաթիվ էյին, քան բարեկամները. Ցիլոնի խումբը պաշարվեց միջնաբերդում և հարկադրված յեղավ անձնատուր լինել։ Հաղթվածներն ապաստան փնտռեցին աստվածների սեղանների մոտ, բայց Ցիլոնին թշնամի Ալկմեոնիդների ազնվական տոհմը հարձակվեց նրանց վրա և կոտորեց բոլորին։ Այդ սրբապղծության համար Ալկմեոնիդներն իրենք անեծքի յենթարկվեցին և հարկադրվեցին աքսոր գնալ։

Խռովություններին վերջ տալու համար ժողովուրդը միջնորդ ընտրեց Սոլոնին, վոր հին թագավորների ժառանգ էր և բոլորից ճանաչված էր, վորպես խելացի և արդար մարդ (594 թ. Ք. ծ. առաջ)։

Սոլոնը օրենքներ կազմեց, այսինքն գրի առավ կյանքի կանոնները աթենական ժողովրդի համար։ Ազնվական տոհմից նա պահանջեց, վոր հրաժարվեն խելահեղ փարթամություններից. նա արգելեց շքեղ թաղումները, վորոնց ժամանակ դագաղի յետևից վարձկան յեղերամայրերի խմբեր էյին գնում. արգելեց հարուստ տիկնանց իրենց մոտ սպասավորուհիների մեծ շքախմբեր ունենալ։ Նրա օրենքները կազմված են աշխատավոր մարդկանց

հասկացողության համաձայն, արհեստավորները, գյուղացիք նավավարները չեն կարող իրենց հույսը դնել հարուստ ժառանգության վրա. նրանց պարտականությունն է օգտակար գործի սովորեցնել իրենց զավակներին. այն ժամանակ նրանք ծերության հասակում իրավունք ունեյին իրենց զավակներից նպաստ պահանջելու։ Սոլոնը միաժամանակ միջոցներ ձեռք առավ, վոր վնաս չհասցնեն Ատտիկայի գյուղացիներին, վորոնք ձիթապտուղ, խաղող էյին մշակում և մեղվաբուծությամբ պարապում։ Վորովհետև յերկրում ջուր քիչ կար, նա թույլ տվեց ջրհորներ փորել այնպիսի տարածության վրա իրարից, վոր հարևանի ջրհորի ջուրը չպակասի կամ չցամաքի. աղքատներն իրավունք ստացան ավելի ունևորների ջրից օգտվելու։

Սոլոնի օրենքները գրված էյին քառակողմ փայտե սյուների վրա, վորոնք պտտում էյին առանցքների վրա. այդ սյուները ցուցադրվում էյին գլխավոր հրապարակի վրա, վորպեսզի ամեն մարդ իվիճակի լիներ բովանդակության ծանոթանալու և իր համար արդար դատաստան պահանջելու։

Բռնապետները ու Աթենքի ծովային զորության սկիզբը։ Սոլոնի օրենքները բավարարություն չեյին տալիս Ատտիկայի ծովափնյա ազգաբնակության, վոր ձգտում էր Կորնթոսի նման հեռավոր ծովային ճանապարհորդություններ կատարել։ Ռազմիկ նավավարների առաջնորդ կարողացավ դառնալ Սոլոնի ազգական Պիզիստրատոսը։ Շրջապատելով ինքն իրան պահակազորքով, նա գրավեց միջնաբերդը և Աթենքի բռնապետը դարձավ։

Պիզիստրատոսը վոսկե հանքեր ձեռք բերեց Թրակիայում և գրավեց Հելլեսպոնտոսի մուտքի մոտ և Տրովադայի դիմացը գտնվող Սիգեոս բերդը՝ սեփական կայան ունենալու համար Պոնտոս տանող ճանապարհի վրա։ Նա դաշն կապեց Սամոս կղզու բռնապետ Պոլիկրատեսի հետ, վոր իր հերթին բարեկամական կապեր ուներ յեգիպտական փարավոն Ամազիսի հետ։ Հեռավոր տեղեր գնացող աթենական նավերն սկսեցին մտնել Սև ծով և Յեգիպտոս. ծովի վրա ունեցած իրենց հաջողություններով Աթենքը գերազանցեց Կորնթոսը։

Բռնապետը գիտեր նույնպես վոգևորել ժողովուրդը հետաքրքրաշարժ հանդեսներով և յերաժշտական նվագածություններով։ Մեծ հանդեսներին Յոնիայից հրավիրվում էյին աշուղներ, վորոնք աթենացիների առջև յերգում էյին Հոմերոսի յերգերը։ Գինեգործության հովանավոր Դիոնիսիոսի տոնին ներկայացնում էյին այդ աստծու արևելքից գալը. փայլուն հագուստով նա քաղաք էր մտնում՝ սայլի վրա նստած, վոր սարքված-զարդարված էր լինում նավի ձևով և շրջապատված խելացնորեն պարող նրա դիմակավոր ուղեկիցներով (այս տոնի հետքերը Յեվրոպայում պահպանվել են դրեթե մինչև նորագույն ժամանակները. օրինակ՝ այսպես կոչված **Կարնավալը**, վոր համապատասխանում է մեր բարեկենդանին. կարնավալ նշանակում է անիվավոր նավ)։

Բռնապետության անկումը յեվ ռամկավարության (դեմոկրատիայի) սկիզբը Աթենքում։ Իր ձեռնարկների մեջ Պիզիստրատոսը միշտ բախտավոր էր, բայց նրա մահից հետո բռնապետությունը Աթենքում խախտվեց։ Պիզիստրատոսի դաշնակիցները՝ Սամոսի Պոլիկրատեսը և Յեգիպտոսի փա-

բաժինը ընկան նոր սարսափելի թշնամու դեմ մղած կռվի մեջ. այդ նոր թշնամին պարսիկներն եյին, վոր գալիս եյին արևելքից: Աթենական բռնապետների թշնամիները գլուխ բարձրացրին Հունաստանի մեջ, իսկ Ալկմեոնիդները, վորոնք կամենում եյին ոտարությունից հայրենիք վերադառնալ, տասը նվերներ տվին Դելֆիական տաճարին և հրդեհից հետո ոգնեցին նրա վերակառուցմանը: Դրա համար յերախտապետ Դելֆիական պատգամախոսը խորհուրդ տվեց Սպարտային արտաքսել Աթենքից բռնապետներին: Աթենքում իսկ դավադրություն կազմվեց՝ Պիզիստրատոսի վորդիներին՝ Հիպպիասին և Հիպպարխոսին սպանելու նպատակով: Մեծ տոնախմբության ժամանակ, յերբ աթենացիք հանդիսավոր կերպով անցնում եյին փողոցով, յերկու մտերիմ ընկերներ՝ Հարմոդիոսն ու Արիստոգիտոնը, դաշույններով զարկեցին կրտսեր յեղբորը՝ Հիպպարխոսին: Ավագ յեղբայր Հիպպիասը, սակայն, չկորցրեց իրեն և հրամայեց զինաթափ անել ժողովուրդը. դավադիրները բռնվեցին և յենթարկվեցին մահապատժի:

Սրանից հետո սպարտացիք անցան Իսթմոսի վրայով և ստիպեցին Պիզիստրատոսի վորդուն՝ Հիպպիասին փախչել պարսիկների մոտ (510 թ. Ք. ծ. ա.) Աթենք վերադարձան բռնապետներից աքսորված ազնվական տոհմերը: Նրանց միջև կրկին բռնկվեց թշնամություն: Իսագորասը ձգտում եր վերականգնել ազնվապետությունը. իսկ Կլիսթենեսը, վոր Ալկմեոնիդների տոհմից եր, վճռականորեն անցավ ժողովրդի կողմը:

Կլիսթենեսն առաջարկեց բռնապետի ազգականներին ժողովրդի թշնամի հայտարարել և յերկրի սահմաններից դուրս աքսորել նրանց: Վորպեսզի հասարակ մարդիկ չվախենային տալ նրանց անունները, վորոշվեց այդ անունները գրել կավե տախտակների (ոստրակների, այստեղից և գաղտնի ձայնատվությունը, **ոստրակիզմը**) վրա: Ապա Կլիսթենեսն Ատտիկայի ամբողջ ազգաբնակչությանն առաջարկեց ներկայացուցիչներ ընտրել **Հինգ հարյուրի մեծ խորհուրդը** կազմելու համար: Արխոնտոսները՝ հրամանատարները, դատավորներն ու գանձապետները պարտավոր եյին իրենց գործունեյության մասին հաշիվ տալ այդ խորհրդին: Կարևոր դեպքերում հրավիրվում եր բոլոր քաղաքացիների ժողովը (եկկլեսիա), ուր ամեն մի մարդ հավասար իրավունք ուներ իր խոսքն ասելու:

Աթենքի այդպիսի վերակազմությունը ամենևին դյուր չեկավ սպարտացիներին: Նրանք մի անգամ ևս զորք ուղարկեցին Ատտիկա, աքսորեցին Կլիսթենեսին և իշխանությունը հանձնեցին Իսագորասին: Սակայն ժողովուրդն Իսագորասին ու սպարտացիներին պաշարեց միջնաբերդում և պահանջեց, վոր նրանք հեռանան: Կլիսթենեսը կրկին վերադարձավ հանդիսավոր կերպով (506 թ.):

Մեծ փոփոխություն տեղի ունեցավ Աթենքում Ցիլոնոսի ժամանակից ի վեր, յերբ ծայր տվավ ազնվականության և ժողովրդի կռիվը: Սոլոնը առաջինն եր, վոր սկսեց ոգնել ժողովրդական մասսային. սակայն նրա ժամանակ ազնվական տոհմերը տակավին պահպանում եյին իշխանությունն իրենց ձեռքում: Պիզիստրատոսը գործից հեռացրեց ազնվականությունը, զարկ տվեց ժողովրդի նախաձեռնության, բայց թույլ չտվեց, վոր հասարակ մարդիկ մասնակցություն ունենան կառավարության մեջ: Կլիսթենե-

սը իր յերկու նախորդների գործին ավելացրեց մի շատ կարևոր փոփոխություն. նա փորձեց ժողովրդի ձեռքը տալ իշխանությունը կառավարելու: Այդպիսի ձևը Հունաստանում **դեմոկրատիա** անունն ստացավ, վոր նշանակում և ժողովրդավարություն, ռամկավարություն (դեմոս՝ ժողովուրդ, կրատիա՝ իշխանություն):

Հունաստանի բաժանվածությունը: Վոչ մի տեղ հույները չստեղծեցին խոշոր պետություն. յուրաքանչյուր, թեկուզ ամենափոքր, շրջանում կամ քաղաքում հույն ժողովուրդը պահպանում եր իր անկախությունը, կազմում եր իր առանձին **համայնքը**:

Հունական համայնքներից շատերի մեջ, Կորնթոսի և Աթենքի նման, կռիվ եր տեղի ունենում ազնվականության և ժողովրդի միջև: Տեղ-տեղ ժողովուրդն արտաքսում եր ազնվականությունը, գլխատում եր ծագումով նշանավոր մարդկանց, գրավում եր նրանց գույքը: Տեղ-տեղ հաղթող եյին հանդիսանում ազնվականները. նրանք կապում եյին իրենց այսպիսի փոխադարձ յերդումով. «Խոստանում եմ լինել ժողովրդի թշնամին և վնասել նրան, վորքան վոր թույլ կտան իմ ուժերը»: Աքսորականները գնում եյին թշնամի համայնքը և գրգռում եյին այն հարձակվելու իրենց հայրենի քաղաքի վրա:

Բացի դրանից՝ հարևան քաղաքների միջև գրեթե անդադար տեղի եյին ունենում ընդհարումներ, կռվում եյին հողի մի փոքրիկ վիճելի կտորի, արոտատեղիի համար, կամ սահմանագծի վրա անցնող գետակի ջուրը այս կամ այն կողմը դարձնելու համար: Կատաղությունը յերբեմն գերագույն աստիճանի յեր հասնում: Արգոսի քաղաքացիները հարձակվեցին հարևան Միկենքի վրա, քանդեցին քաղաքի հինավուրց պատերը (մնաց միայն առյուծների դուռը), կոտորեցին ամբողջ տղամարդ ազգաբնակությունը, ստրկացրին կանանց և յերեխաներին:

Հույների ընդհանուր հիմնարկությունները: Ինչքան ել թշնամություն ունեյին իրար դեմ հունական փոքրիկ համայնքները, քաղաքներն ու գյուղերը, սակայն հույները միշտ զգում եյին, վոր մի ժողովուրդ են կազմում: Նրանք բոլորն ել կարող եյին իրար հասկանալ, վորովհետև մի լեզվով եյին խոսում: Ամեն մի քաղաք պաշտում եր իր առանձին հովանավոր-աստծուն, բայց հույները հավատում եյին նույնպես, վոր ամբողջ Հունաստանն ունի և իր ընդհանուր, «ոլիմպիական» կոչված աստվածները: Այդ աստվածներին նվիրված տոները բոլոր կողմերից գրավում եյին հույներին և ստիպում նրանց առժամապես մոռանալ իրենց ներքին թշնամությունը:

«Աստվածների և մարդկանց հոր»՝ ոլիմպիական Զևսին նվիրված եր հարավային Հունաստանում ընդարձակ մի տեղ՝ **Ոլիմպիա** անունով, ուր 4 տարին մի անգամ ամառ ժամանակ տեղի յեր ունենում մեծ տոնախմբություն: Հատուկ մունետիկներ գնում եյին մինչև հունական գաղութների ծայրագույն սահմանները Սև ծովի ափին, Յեգիպտոսում և Գալլիայում: Նրանք սրբազան խաղաղություն եյին ազդարարում և աստծու անեծքով եյին սպառնում նրանց, վորոնք տոնախմբության ժամանակ պատերազմ կսկսեն կամ ճանապարհին կվիրավորեն ուխտավորին:

Տասնյակ հազարավոր բարեպաշտ ուխտավորներ և հանդիսատեսներ

հավաքվում եյին Օլիմպիայում: Հարուստ մարդիկ գալիս եյին և վրաններ եյին խփում սրբազան պուրակի մոտ: Աղքատները գալիս եյին վոտով, հաճախ հեռվից, և գիշերում եյին բաց յերկնքի տակ: Առևտրականները տոնավաճառ եյին բաց անում: Յուրաքանչյուր քաղաք ուղարկում եր հատուկ պատվավոր դեսպաններ: Մեծ սեղանի վրա յուրաքանչյուր ուխտավոր անում եր Զևսին նվիրաբերությունը, ըստ իր կարողության, սկսած 1000 ցուլից բաղկացած թանգագին զոհաբերությունից և մինչև ամենափոքրիկը—մի այծ, մի բուռ հացահատիկ, մի բաժակ գինի և այլն: Մասնակիցները մտնում եյին՝ վոսկի բոլորտիքով և կարմիր ժապավեններով զարդարված սպիտակ շորեր հագած:

Տոնախմբության գլխավոր մասը կազմում եյին զինվորական և մարմնամարզական խաղերը, վոր, ըստ ավանդության, Զևսի վորդի Հերակլես դյուցազունն եր սահմանել: Այդ խաղերին հատկացված եր մի ընդարձակ ձվաձև տեղ, վորի շուրջը սանդխաձև շինված նստարանների վրա կարող եյին տեղավորվել մինչև 40.000 մարդ: Մրցախաղերը նույնն եյին, ինչ վոր Աքիլլեսի ժամանակ,—քառաձի կառքերի արշավ, մերկ սպառազեն մարդկանց վազք, ձեռնամարտ, նիզակ նետել և այլն: Խաղերի ժամանակ հաղթողի հայրենի քաղաքը շատ պարծենում եր նրա փառքով, դիմավորում եր նրան առանձին պատվով, պատվիրում եր նրա արձանը՝ Օլիմպիայի սրբազան պուրակում դնելու համար այն:

Հասարակության առջև Օլիմպիայում դուրս եյին գալիս նույնպես մարդիկ, վորոնք կամենում եյին անուն հանել Հունաստանում, կարդում եյին բանաստեղծություններ, արտասանում եյին հայրենասիրական ճառեր, շարադրում եյին իրենց գիտական գյուտերը:

Վազք զինախաղի ժամանակ:

Մի հիմնարկություն ևս միացնում եր բոլոր հույներին—Դելփիական տաճարը և Ապոլլոն աստծու պատգամախոսը:

Ապոլլոնը համարվում եր հիվանդություններ բուժող, մարդկանց տառապանքներն ամոքող աստվածը: Նա կատարում ե մեծ գործ—սպանում ե սարսափելի օձին, վորի մեջ կուտակված ե յերկրային ամբողջ չարիքը: Ապոլլոնը ազնիվ մտքեր ե ներշնչում մարդկանց: Այն ամենը, վոր մարդու մեջ վսեմ զգացումներ ե առաջ բերում, Ապոլլոնին ե պատկանում, մանավանդ յերաժշտությունն ու պոեզիան: Ավյունը, տաղանդը, ինչպես նաև ապագան գուշակելու կարողությունը, նրա շնորհն են: Յերկրագնդի վրա կան տեղեր, ուր Ապոլլոնն առանձնապես մոտ ե մարդկանց, կան հրաշագործ աղբյուրներ, վորոնք խորհրդավոր զորություն են հաղորդում: Այդպիսի տեղեր եյին համարվում լեռնային վայրի կրճերը Պառնաս լեռան ստորոտին, Միջին Հունաստանում, ուր և գտնվում եյին Դելփերը:

Դեպի Դելփեր եյին ուղևորվում շարունակ բազմաթիվ ուխտավորներ՝ իրենց մեղքերը քավելու համար Ապոլլոնին վերառաքված աղոթքներով,

իրենց հիվանդություններն ամոքելու կամ աստծուց խորհուրդ և ապագայի համար հրահանգ ստանալու նպատակով: Իրենց շնորհակալությունն աստծուն հայտնելու համար նրանք նվիրաբերում եյին թանգագին պարգևներ վոսկուց և արծաթից շինած գեղարվեստական իրեր, և այդպիսով Դելփերում հսկայական հարստություն կուտակվեց: Հարցնում եյին ամեն բանի մասին, կլինի՞ արդյոք վաստակ նոր գործից, գնա՞լ արդյոք ճանապարհ, հաշտվե՞լ արդյոք թշնամու հետ, ի՞նչպես կրթել յերեխային, վերջապես, քաղաքային խորհրդի կամ ժողովրդական ժողովի անունից հարցնում եյին ամբողջ քաղաքին կամ յերկրին վերաբերող գործերի մասին:

Այդ հարցերին աստծու անունից պատասխանում եյին հատուկ քուրմ-գուշակողներ: Ավելի կարևոր դեպքերում նրանք դիմում եյին հին սովորության՝ գուշակել խելագարության մոտիկ վիճակի հասցրած մարդու խոսքերի համաձայն: Դուրս եյին կանչում աստծուն նվիրված գուշակող աղջկանը, վոր **պիթիա** յեր կոչվում. նա նստում եր լեռնային ճեղքվածքի մոտ, վորտեղից հեղձուցիչ գազ եր դուրս գալիս, և շուտով ընկնում եր ծանր մոռացության մեջ, վորի ընթացքում հառաչանքով արտասանում եր միքանի անկապ խոսքեր. նրա կողքին կանգնած մեկնիչը կապում եր այդ խոսքերը վոտանավորի ձևով և հայտնում հարցում տվողներին:

Չնայած այդ կոպիտ սովորույթին՝ քուրմերը խելացի և գիտող մարդիկ եյին: Նրանք ուսումնասիրում եյին իրերի դրությունը այն քաղաքում կամ այն ընտանիքում, վորի կողմից ուղղվում եր հարցումը: Յերբեմն նրանք շատ բանավոր և ոգտակար խորհուրդ եյին տալիս, յերբեմն, պատասխանից խուսափելով, տալիս եյին յերկմիտ պատասխաններ (այդպիսի պատասխանների որինակ կգտնենք Մեսսենական պատերազմների պատմության մեջ):

Պարսկական պետության ծագումը: Իրենց մեծ առևտրական ճանապարհորդությանց ու գաղթումների ժամանակ հույներն ազատորեն մտնում եյին Արևելք. նրանք ծառայում եյին ասորեստանցիների զորքի մեջ, նրանք վարձվում եյին յեգիպտական փարավոնների մոտ, նրանք առևտուր եյին անում Լյուդիայի թագավորների հետ: Սկսած 550 թ. իրերի դրությունն Առաջավոր Ասիայում փոխվեց ի վնաս հույների: Հրապարակ յեկավ մի նոր ռազմիկ ժողովուրդ՝ **պարսիկները**, վոր իր ուժով ճնշեց բոլոր նախկին նվաճողներին:

Պարսիկները **արիական** ժողովուրդների մեծ ընտանիքին եյին պատկանում: Արիացիք (վոր նրանց հին լեզվով «ազնիվ» ե նշանակում) սկզբում թափառում եյին Միջին Ասիայի բարձր սարահարթերի վրա: Նրանք հետո բաժանվեցին ժողովուրդների յերկու խմբի: Նրանց մի մասն իջավ հարավ՝ Հինդի հովիտը. նրանցից են ծագում այժմյան **հնդիկները**: Մյուս մասը, նրանց մեջ նաև մեդացիք ու պարսիկները, շարժվեց արևմուտք և գրավեց Իրանի հովիտներն ու լեռնային ստորոտները. այժմյան պարսիկները հիմա յել ապրում են այն տեղերում, ուր բնակություն եյին հաստատել նրանց նախնիքները: Արիացիք իրենց լեզվով ամենևին նման չեն Ասիայում իրենց հարևան սեմիտներին, բայց շատ ընդհանուր գծեր ունեն յեվրոպական ժողովուրդների՝ հույների, հռոմայեցիների, սլավոնների, գեր-

մանացիների հետ. ահա թե ինչու բոլոր այդ ժողովուրդները, արևելքում Հնդկաստանից սկսած և արևմուտքում մինչև Ատլանտյան օվկիանոսը, կոչվում են **հնդ-յեվրոպական**։

Իրանում բնակություն հաստատած արիացիներից ամենաուժեղն սկզբում միդացիք էին. 607 թ. նրանք կործանեցին Նինվեն և գրավեցին ասորեստանցիների հարստությունները։ 50 տարի հետո գերակշռությունը միդացիներից պարսիկներին անցավ։ Նրանց առաջնորդ Կուրուշը, հունարեն Կյուրոսը, ամբողջ Իրանն իր իշխանության յենթարկեց և պարսիկների ու միդացիների միացյալ ուժերով հարձակում գործեց Միջագետքի հին մայրաքաղաքի՝ Բաբելոնի վրա։ Աստվածաշունչը պատմում է մեզ, թե ինչպես հրեական Դանիել մարգարեն խալդերի վերջին թագավոր Բաղդասարին գուշակեց նրա թագավորության կործանումը, և թե ինչպես պալատի մեջ քեֆ անողները պատի վրա տեսան հրավառ խոսքերը. «Հաշված, կշռված, բաժանված է»։ Կյուրոսը կործանեց խալդերի տիրապետությունը, միացրեց Նաբուգոդոնոսորի նվաճած Սյուրիան, Փյունիկեն ու Պաղեստինը և իր մայրաքաղաքը դարձրեց Բաբելոնը (539 թ.)։ Նա սկսեց իր տիտղոսը գրել ըստ հին բաբելական սովորության. «Յես Կյուրոսն եմ, ժողովուրդների թագավորը, մեծ թագավորը, հզոր թագավորը, Բաբելոնի թագավորը, աշխարհի չորս կողմի թագավորը»։

Պարսիկներն ապա պատերազմի գնացին մետաղներով հարուստ լյուդիական թագավորության վրա Փոքր Ասիայում։ Կյուրոսը գրավեց Սարդերը, գերի վերցրեց Կրեսոս թագավորին, որ հույների բարեկամն էր, և նվաճեց Եգեյան ծովափի հունական քաղաքները։ Միլետում և հունական այլ համայնքներում պարսիկները վոչնչացրին ազնվականության տիրապետությունը և ամեն տեղ նշանակեցին բռնապետներ, վորոնք պատասխանատու էին ազգաբնակության հնազանդության համար։

Կյուրոսի վորդի Կամբիզն արշավանք կատարեց Յեգիպտոսի վրա։ Յեգիպտացիք վաղուց ի վեր իրենց սեփական զորքը չունեյին. նրանք ստիպված էին պաշտպանվել վարձկան հունական խմբերի ուժով։ Հույն հրամանատարներից մեկը՝ Փանեսը դավաճանեց փարավոնին, ցույց տվեց պարսիկներին Ասիայից Յեգիպտոս տանող անջուր անապատի ճանապարհը և խորհուրդ տվեց դաշն կապել ստեպի արաբների հետ, վորոնք պարսից զորքին ջուր հասցրին։ Կամբիզը ջարդեց փարավոնի բանակը և մտավ Մեմֆիս. պարսիկների ձեռքն անցավ Նեղոսի ամբողջ արգավանդ հովիտը մինչև սահանքաքարերը։

Պարսկական պետության իրավակարգը։ Պարսից յերրորդ թագավոր Դարեհը, Կլիսթենեսի ժամանակակիցը, իր տրամադրության տակ ստացավ մի պետություն, վոր տարածվում էր Սահարայից մինչև Հնդկաստան և Սև ու Կասպից ծովերից մինչև Արաբական ու Պարսկական ծոցերը։ Թագավորը համարում էր, վոր Ահուրամազդան, գերագույն աստվածը, նրան տեր դարձրեց բովանդակ մեծ աշխարհի, բազմաթիվ յերկրների ու լեզուների, լեռների ու տափարակների անապատի այս ու այն կողմը։

Այդպիսի մեծ պետություն դեռ չէր յեղել մինչև այժմ։ Նա հավասար էր Յեվրոպայի գրեթե կեսին և բազմաթիվ անգամ գերազանցում էր Հունաստանից։ Մեծ էին նաև նրա հարստությունները։ Պարսիկները Յեգիպտոսի, Բաբելոնի, Սյուրիայի և այլ յերկրների բազմաքանակ ազգաբնակությունից տուրք էին հավաքում ապրանքով ու դրամով։ Աֆրիկայից թագավորի արքունիքն էին ուղարկում սև ծառի բներ և փղոսկր, արաբներից ամեն տարի ստացվում էր 1000 տաղանդ խունկ, Փոքր Ասիայից ուղարկվում էին սպիտակ ձիեր, Կոլխիդայից (այժմյան Վրաստանից) յերիտասարդ ընտրուկներ ու սարկուհիներ։

Պարսից թագավորը և նրա սպասավորները ամպհովանիով և հովհարով։ Վերևը՝ լույսով պատված թևավորված Ահուրամազդան։

Պարսիկների կրոնն իր առանձնահատկություններով զարմացնում էր հույներին։ Հույն ճանապարհորդ Հերոդոտեսը, վոր յեղել էր պարսից յերկրում, ասում է. «Հույների պես նրանք աստվածներին չեն համարում մարդկանց նման. նրանք լեռների գագաթների վրա յեն աղոթում բարձրագույն աստծուն և՝ աղոթելով իրենց հայացքով նրանք ամբողջ յերկնակամարն են ընդգրկում. նա յե հենց իրանց աստվածը. յերբ նրանք զոհաբերություն են անում, չի լինում վոչ կրակ, վոչ գինեխում, վոչ յերաժշտություն, վոչ ծաղկե շղթա. նրանք չեն թափում սրբազան հացահատիկ»։ Աստծու մասին ունեցած իրենց խստաբարո և վեհ հասկացողությամբ պարսիկները հիշեցնում էին հրեաներին։ Այդ պատճառով Կյուրոսը հայրենիք արձակեց Նաբուգոդոնոսորից գերված հրեաներին և վերադարձրեց նրանց տաճարից խալդերի հափշտակած սրբազան անոթները։ Ընդհակառակը, յեգիպտացիների հավատը դյուր չեկավ պարսիկներին. Կամբիզը հրամայեց այրել Ամազիս փարավոնի մումիան, վոր վախճանվել էր պարսիկների գալուց միքիչ առաջ, և իր ձեռքով Մեմֆիսում մորթեց Ապիս կոչվող սրբազան յեզը։ Դրանից էր, վոր Յեգիպտոսում ատում էին պարսիկներին, և նրանց դեմ գրեթե անընդհատ ապստամբություններ էին բռնկվում։

Կառավարելու գործում պարսիկները հետևում էին այն սովորություն-

ներին, վոր կիրառում են վաչկատուն ցեղերը, յերբ նվաճում են հողագործների ընդարձակ յերկրները։ Ամբողջ պետությունը Դարեհը բաժանեց 20 մեծ շրջանների. յուրաքանչյուրի վրա թագավորը դնում եր մի ամենազոր տեղակալ, սատրապ, վորը հպատակների կյանքի և մահու միահեծան տերն եր. Նրա տրամադրության տակ կար զորք և ստորադրյալ պաշտոնյաներ. քաղաքների ու գյուղերի բարեկարգությունը ավագների և քահանաների գործն եր։ Թագավորական հրամանները սատրապներին հասցնելու և սատրապների հաշվետվությունները թագավորին ուղարկելու համար կազմակերպված եր մի հատուկ փոստային հաղորդակցություն, վոր կատարվում եր պետության ծայրագավառները կենտրոնի հետ միացնող մեծ ճանապարհներով։ Գլխավոր «թագավորական ճանապարհն» անցնում եր Սուզայից (լեռներում, Բաբելոնից արևելք) և Տիգրիսի ու Յեփրատի վրայով գնում եր Սարդեր՝ Լյուդիայի մայրաքաղաքը, վոր գտնվում եր Միլետից վոչ-հեռու։ Մասնավոր մարդկանց արգելվում եր անցնել այդ ճանապարհով. Նրա վրայով սլանում եյին միայն թագավորական սուրհանդակները, փոփոխելով ձիերը կայարաններում կամ ձեռքե ձեռք հանձնելով պաշտոնական թղթերը։ Վորովհետև թագավորը սատրապներին չեր հավատում և միշտ նրանց դավաճանությունից եր վախենում, փոստը ծառայում եր նաև սատրապների վրա նշանակված գաղտնի հսկողության։ Յերբեմն հանկարծ հանցավորներին հալածելու համար շրջանն եր գալիս մի կարևոր բարձրաստիճան պաշտոնյա՝ «թագավորի աչքը»։ Հաճախ տեղակալին, գաղտնի ամբաստանության հիման վրա, հանկարծ արքունիք եյին կանչում, բանտ եյին նստեցնում կամ գլխատում եյին։

Պարսից թագավորները յուրացրին բաբելական և յեգիպտական արքունիքի սովորությունները, մտցրին իրենց մոտ շքեղ ցերեմոնիաներ, սկսեցին պահել բազմաթիվ բարձր պաշտոնյաներ, փառապանծ տիտղոսներով և մի մեծ շքախումբ։ Բայց միևնույն ժամանակ նրանք շարունակում եյին հին որերի թափառական կյանքը, իրենց ամբողջ արքունիքի հետ անցնում եյին Սուզայից Բաբելոն (ձմեռը) և Բաբելոնից բարձր գտնվող Եկբատանա (ամառը)։ Չնայելով իր բոլոր հսկայական ծախսերին, թագավորը չեր մսխում իր վիթխարի պետությունից ստացած ամբողջ յեկամուտը։ Զանազան կողմերից դրամի, ամանի և զարդի ձևով յեկող վոսկին նա հրամայում եր ձուլել միասին և լցնել կավե մեծ անոթների մեջ. կավը հետո ջարդում եյին և գըմբեթաձև վոսկու կտորները դարսում եյին թագավորական պահեստներում։ Յերբ պետք եր լինում մի նոր ծախս անել, թագավորը կարգադրում եր, վոր պահեստից վերցնեն այնքան վոսկի, վորքան պետք եր լինում։

«Մեծ թագավորը», ինչպես նրան անվանում եյին հույները, զինվորական մեծ ուժեր ուներ։ Հեծելազորք և աղեղնաձիգներ տալիս եյին պարսիկները, միդացիք և Իրանի մյուս ռազմիկ բնակիչները։ Լավ նավատորմ տալիս եյին փյունիկեցիք՝ հույների մրցակիցները առևտրի մեջ Միջերկրական ծովում։ Բայց և փոքր-ասիական քաղաքների հույները պարտավոր եյին ծառայել թագավորին։ Յերբ Դարեհն արշավանք սկսեց սկյութացիների դեմ և Փոքր Ասիայից Բոսֆորի, Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելյան անկյունի և Ստորին Դանուբի վրայով ուղևորվեց սև-ծովյան տափաստանները,

նա վերցրեց իր հետ Հիստիեոսին՝ Միլետ քաղաքի բռնակալին, և աթենացի Միլտիադեսին, վոր իշխում եր Պիզիստրատոսի նվաճած տիրույթներում Հելլեսպոնտոսի մոտ։ Հույներին հանձնարարված եր պաշտպանել Դանուբի վրա անցկացրած կամուրջը, իսկ Դարեհը շարժվեց դեպի խաշնարած սկյութացիների յայլաները։ Միլտիադեսն առաջարկեց քանդել կամուրջը և կտրել պարսիկների նահանջի ճանապարհը, Հիստիեոսն ընդդիմացավ և դրանով փրկեց Դարեհին ու նրա զորքը։ Միլտիադեսը դրանից հետո գնաց Աթենք։

Հույն-պարսկական պատերազմների սկիզբը՝ 500 թ. սկսած։ Հույներն առհասարակ տհաճությամբ եյին յենթարկվում պարսից թագավորին։ Յոնիական քաղաքները, Դարեհի՝ սկյութացիների դեմ կատարած արշավանքից քիչ հետո, ապստամբեցին և ոգնություն խնդրեցին Հունաստանում ապրող իրենց ցեղակիցներից։ Մինչ սպարտացիք այդ խնդիրքն անուշադիր թողին, աթենացիք մի փոքրիկ ոգնություն ուղարկեցին։ Բայց Դարեհն առաջ շարժեց փյունիկեցիների նավատորմը և ցրիվ տվեց ապստամբների ուժերը. պարսիկները վերցրին Միլետը և այրեցին այն։ Պատմում եյին, թե թագավորը շատ եր կատաղել աթենացիների վրա. նա մի նետ աձակեց դեպի յերկինք և բացականչեց. «Աստված, թույլ տուր ինձ վրեժ նրանցից լուծելու»։

Դրանից հետո պարսիկներն անցան Հելլեսպոնտոսը, նվաճեցին Թրակիան ու Մակեդոնիան, այսինքն Եգեյան ծովի ամբողջ հյուսիսային ափը մինչև Ոլիմպոս լեռը, գրավեցին ծովի մեջտեղ գտնվող կղզիները և նույնիսկ վերցրին **Եվբեա** կղզու մի անկյունը, վոր բոլորովին մոտ ե Աթենքին։ Այդ նոր գրաված հողամասերից Դարեհը կազմեց քսանմեկերորդ սատրապիան և սկսեց պատերազմի պատրաստվել յեվրոպական այն հույների դեմ, վորոնք դեռ պահպանել եյին իրենց անկախությունը։

Սկզբում Հելլեսպոնտոսից նա առաջ շարժեց իր մեծ նավատորմը ծովի հյուսիսային ափով։ Աթոն լեռան հրվանդանի մոտ նավերը փոթորկից խորտակում կրեցին, և ամբողջ արշավանքը դրանով վերջացավ։ Այն ժամանակ պարսիկները Յոնիայի ափերից մի ուրիշ նավատորմ ուղարկեցին, վոր, ծովն ըստ լայնության կտրելով, Ատտիկայում զորք դուրս բերեց ափը. Նրանց հետ եր բռնապետ Հիպպիասը, վորին Դարեհը կամենում եր նշանակել Աթենքում փոխարքա։ Աթենացիք այդ ժամանակ կատարյալ վստահությամբ հանձնվեցին Միլտիադեսին, վոր լավ եր ճանաչում պարսիկներին։ Միլտիադեսն իր զորքով ընդառաջ գնաց թշնամուն. **Մարաթոնի** մոտ ծովափնյա տափարակի մուտքի առջև աթենական նիզակավորների սեղմ ֆալանգան ջարդեց պարսից աղեղնաձիգներին և յետ մղեց նրանց դեպի իրենց նավերը (490 թ.)։ Միլտիադեսի հաջողությամբ վոգևորված, աթենացիք հանձնարարեցին նրան հարձակվել Պարոս հարուստ կղզու վրա, վոր անձնատուր եր յեղել պարսիկներին, և նրանից վոսկի հավաքել։ Բայց այս անգամ Միլտիադեսը պարտություն կրեց և՝ վերք ստացած՝ տուն վերադարձավ։ Աթենական ժողովուրդը խստորեն փոխեց իր վերաբերմունքը դեպի նա և պահանջեց գլխատել իր փառապանծ հերոսին. մեռնող Միլտիադեսին դատարան բերին և ծանր տուգանքի դատապարտեցին։

Թեև Դարեհը շուտով դրանից հետո մեռավ, սակայն պարզ եր, վոր

պարսիկները Հունաստանը նվաճելու իրենց դիտավորությունից ձեռք չէին քաշելու։ Աթենքում շատերն իրենց հույսը դրել էյին ֆալանգայի վրա, վոր իր ուժը ցույց էր տվել Մարաթոնի մոտ, բայց ավելի հեռատես Թեմիստոկլեսն առաջարկեց մի մեծ ռազմական նավատորմ շինել, վորովհետև, նրա կարծիքով, գլխավոր պաշտպանությունը պետք է ծովի վրա լինի․ ծայրահեղ դեպքում, յեթե պարսիկները նվաճեն ցամաքային Հունաստանը, Աթենացիք կարող են ամբողջ ժողովրդով նավ նստել և գաղթել վորևէ հեռավոր գաղութ։

Պարսիկների արշավանքը 480 թ.։ Մինչ այդ Դարեհի վորդի Քսերքսեսը ինքն անցավ Փոքր Ասիայում հավաքված մեծ զորքի գլուխը։ Նա փոխադրեց զինվորներին Հելլեսպոնտոսի վրայով նավերից ժամանակավոր կերպով կազմված կամուրջով և արշավեց Հունաստանի վրա հյուսիսից։ Զորքի յետևից գնում էր բեռնավորված մի մեծ սայլաշարք․ պարսիկներն արշավանքի ժամանակ չէյին սիրում իրենց զրկել հարմարությունից, իսկ թագավորն իր յետևից տանում էր իր արքունիքը։ Թագավորական կառքի առաջից գնում էր ութը ձիով լծված մի մեծ կառք, վորի վրա տանում էյին գերագույն աստվածության պատկերը։ Ափերին մոտ զորքին զուգընթաց շարժվում էր մեծ նավատորմը, վոր ցամաք պիտի հասցներ պաշարեղեն։ Աթոնի վտանգավոր հրվանդանի շուրջը պտույտ անելուց խուսափելու համար պարսիկները, առաջուց ջրանցք անցկացնելով, կտրեցին այն պարանոցը, վոր լեռնաշղթան ցամաքի հետ է միացնում։

Դելֆիական պատգամախոսը խորհուրդ էր տալիս յենթարկվել սարսափելի ուժին։

Թեսսալիան և Թեբե քաղաքը Բեոտիայում (վոր հարևան էր Ատտիկային), ուր իշխում էյին ազնվական տոհմերը, սպասում էյին պարսիկներին՝ նրանց միանալու համար։ Միայն Աթենքը, Կորնթոսը և Սպարտան պելոպոնեսցիների հետ միասին վորոշել էյին դիմադրել։

Պարսիկներն անհաղթելի էյին ասիական տափարակներում։ Բայց Հունաստանում նրանք հանդիպեցին լեռնային բնության անհարմարություններին. նրանք ստիպված էյին դանդաղորեն անցնել լեռնային կիրճերով ու արահետներով և առանձին-առանձին վերցնել ամեն մի փոքրիկ շրջան, վոր պաշտպանված էր լեռներով կամ բերդապատերով։ Մանավանդ վոր աղքատիկ Հունաստանում ավարն էլ մեծ չէր, և դժվար էր մեծ զորք կերակրելը։ Այնուամենայնիվ շատ վտանգավոր էր այն հույների դրությունը, վորոնք վորոշել էյին պաշտպանվել։ Սպարտացիների մի փոքրիկ զորամաս Լեոնիդաս թագավորի հրամանատարությամբ միքանի որվա ընթացքում պաշտպանում էր պարսիկների դեմ **Թերմոպիլներ** անցքը Հունաստանի հյուսիսային և միջին մասերի միջև, բայց պարսիկները նրա թիկունքը մտան, և նա կոտորվեց։ Հետո Սպարտան Թերմոպիլներում իր քաջ զինվորներին հուշարձան կանգնեցրեց, վոր քարե առյուծի ձև ուներ, և վորի վրա հետևյալ մակագրությունն էր փորագրված. «Այստեղ ընկանք մենք՝ բոլոր յերեքհարյուր սպարտացիներս հավատարիմ մեր հայրենիքի որենքներին»։

Պարսիկները հասան մինչև Հունաստանի մեջտեղը, ամենուրեք ավերելով յերկիրը։ Ատտիկայի և Աթենքի բնակիչներն ստիպված յեղան փախ-

չել։ Նավերի վրա փոխադրեցին քաղաքացիների ընտանիքները և այն գույքը, վոր կարելի յեր վերցնել, հարևան Սալամին կղզին և մերձակա քաղաքները հարավում. իսկ բոլոր զինակիր և աշխատանքի ընդունակ աթենացիք նավեր նստեցին և միացան մյուս հունական նավատորմիղներին։

Բայց հույները հավաքվել էյին զանազան անկախ քաղաքներից. նրանք չունէյին վոչ գործողության ընդհանուր ծրագիր, վոչ էլ համաձայնություն։ Ստիպված յեղան գլխավոր հրամանատարությունը (**հեգեմոնիան**) հանձնել սպարտական զորավարներին, վորովհետև սպարտացիք համարվում էյին ամենաուժեղ հունական համայնքը։ Մինչդեռ հենց սպարտացիք ծանոթ չէյին ծովային գործին և գրեթե ամենևին նավեր չունէյին։ Աթենացիք Թեմիստոկլեսի հրամանատարությամբ կամենում էյին կռվել ծովի վրա իրենց հայրենիքի մոտ. սպարտացիք կամենում էյին նահանջել դեպի հարավ, իրենց ափերի մոտ և ամրացնել թերակղզու պարանոցը Կորնթոս քաղաքի մոտ, թույլ չտալու համար, վոր պարսիկները ցամաքի ճանապարհով ավելի առաջ շարժվեն։

Մինչդեռ պարսիկների նավատորմը պտույտ արավ Ատտիկայի շուրջը և փակեց հունական նավերը նեղուցի մեջ **Սալամին** կղզու մոտ, հույները, հակառակ իրենց կամքին, հարկադրված էյին ընդունել ճակատամարտը։ Այստեղ անծանոթ ժայռերի միջև ծանրաշարժ ասիական նավերը պարտություն կրեցին արագաշարժ հունական նավերից. իսկ բոլորից ավելի հաղթության նպաստեցին աթենացիք, վորոնք այդ ճակատամարտում ռիսկի էյին դրել իրենց վերջին ուժերը։ Սալամինի մոտ ջարդված փյունիկեցի նավավարները, վախենալով մեծ թագավորի բարկությունից, ճակատամարտի հետևյալ գիշերն շտապով իրենց տները մեկնեցին։ Քսերքսեսը հրամանարձակեց նավերին գնալ դեպի Հելլեսպոնտոս՝ անցնելու տեղը պաշտպանելու համար, իսկ ինքը, վոր դժգոհ էր պատերազմի ձգձգումից, տուն վերադարձավ։ Մանավանդ վոր նրան անհանգստություն էր պատճառում խալդերի վտանգավոր ապստամբությունը, վոր բռնկվել էր Բաբելոնում՝ պարսկական պետության սրտում։

Հունաստանում մնաց պարսիկների ցամաքային զորքը Մարդոնիոսի հրամանատարությամբ։ Պարսից հրամանատարն աթենացիներին բարեկամություն և դաշնակցություն առաջարկեց. այն ժամանակ սպարտացիք, վախենալով, վոր Աթենքը կբաժանվի նրանցից, առաջ շարժվեցին Իսթմոսի վրայով, ունենալով իրենց հետ պելոպոնեսցիների մեծ զորք. նրանց միացան աթենացիք, և Սպարտայի թագավոր Պավսանիասը Բեոտիայում **Պլատեա** քաղաքի մոտ վճռական ճակատամարտ տվեց Մարդոնիոսին։ Յերկու կողմն էլ կռվում էյին յերկար և հուսահատորեն, և կրկին, ինչպես Մարաթոնի մոտ, հաղթող դուրս յեկավ հունական ֆալանգան։ Մարդոնիոսն ընկավ այդ ճակատամարտում, իսկ պարսից զորքի մնացորդները փախան դեպի հյուսիս։ Այժմ հունական նավերը շարժվեցին արդեն դեպի Յոնիայի և Հելլեսպոնտոսի ափերը. նրանց սկսեցին միանալ փոքր-ասիական հույները։

Պարսիկների արշավանքը կատարյալ անհաջողություն կրեց։ Դրա պատճառն էր վոչ թե ասիական զինվորների քաջության պակասությունը, այլ այդ ձեռնարկի դժվարությունը լեռնային յերկրում անկախ համառ

համայնքների դեմ մղած կռվում։ Պարսիկների վրա տարած հաղթանակը հույներին գրեթե հրաշք էր թվում։ Անհավատ մարդկանց ասելով՝ հին Հունաստանի աստվածներն ու հերոսները հանդես էյին գալիս կռվողների շարքերում։ Քսերքսեսի արշավանքից միքանի տարի անց աթենացի Էսքիլեսը «Պարսիկներ» ողբերգության մեջ նկարագրեց Սալամինի ճակատամարտն ու ասիական զորքի մեծ պարտությունը։ Հանգուցյալ Դարեհի ոգին յերևում է պարսիկներին և ասում նրանց. «Յերբեք այլևս չմտածեք արշավել Հելլադայի վրա, թեկուզ ձեր զորքն ավելի հսկայաքանակ լինի. նրանց հետ միասին կռվում է նրանց հայրենի յերկիրը. նա սովամահ է անում բոլորին, ով ձեռք կբարձրացնի նրա վրա անսահման անբարտավանությամբ»։ Հույներն իրենց հաջողությունը բացատրում էյին նաև նրանով, վոր իրենք ազատ մարդիկ են, իրենք իրենց գլխի տերն են, մինչդեռ պարսիկները, վոր մի բարբարոս ժողովուրդ են, սովորել են ստրկորեն յենթարկվել, «իրենց տիրոջ առաջ ծունր դնել»։ Նկատելով թագավորի մտադրությունը՝ բռնապետ կարգել Աթենքում՝ աթենացիք մտաբերեցին Հարմոդիոսի և Արիստոգիտոնի դավադրությունը և արձան կանգնեցրին բռնապետասպաններին, իբրև «ժողովրդի ազատարարների»։

V.

ԱԹԵՆՔԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ Ք. Ծ. ԱՌԱՋ.

Աթենքի ուժեղացումը ծովի վրա։ Վորովհետև ասիական պետության մեջ ապստամբությունները գրեթե չէյին դադարում, պարսիկներն արդեն ի վիճակի չէյին նոր խոշոր արշավանք սկսել դեպի Յեվրոպա։ Ավելին. փոքրաքանակ հույներն այլևս չէյին վախենում մեծ թագավորից և չէյին կամենում հարկ վճարել նրան։ Սակայն նրանք չէյին կամենում յենթարկվել նաև սպարտացիներին, մանավանդ յերբ Հելլեսպոնտոս յեկավ Պլատեայի ճակատամարտի հաղթողը՝ Պավսանիաս թագավորը։ Պետք է ասել, վոր Սպարտայի թագավորը հանկարծ փոխվեց, սկսեց պահել իրան գոռոզաբար, ինչպես մի պարսկական սատրապ, և ինչ վոր խորհրդավոր բանակցությունների մեջ մտավ պարսիկների հետ։ Ընդհակառակը, աթենական նավավարները հունական և կղզիաբնակ հույներին գրավում էյին իրենց կողմը իրենց քաջությամբ և գործելու վստահությամբ։ Այդ պատճառով պարսկական տիրապետությունից ազատագրված բոլոր համայնքները համաձայնություն տվին աթենացիների հրամանատարության տակ մտնել և սերտ դաշն կապեցին նրանց հետ։

Աթենացիք և դաշնակիցներն իրենց ընդհանուր գործերի քննության համար վորոշեցին հավաքվել **Դելոս** կղզում (Ցիկլադյան կղզիներից մեկը Եգեյան ծովի մեջտեղում), ուր գտնվում էր բոլոր յոնիացիների կողմից պաշտված Ապոլլոնի տաճարը։ Դաշնակիցները պարտավորվեցին դրամ տալ ընդհանուր գանձարանին և նավեր հասցնել, իսկ աթենացիք իրենց վրա վերցրին նավատորմի հրամանատարությունը և պարսիկների դեմ մղվող պատերազմը շարունակելու պարտականությունը։ Պատերազմ հայտա-

րարելով հանուն Հունաստանի ազատագրման, աթենացիք իրենց սեփական օգուտը չմոռացան. նրանք իրենց ձեռքը վերցրին վոսկու հանքերը Թրակիայում և հաստատվեցին Հելլեսպոնտոսի և Բոսֆորի նեղուցներում, վորպեսզի իրենց ձեռքում պահեն Սև-ծովյան շրջանից յեկող հացի փոխադրությունը։

Աթենքը, վոր 480 թ. կորստյան անդունդի վրա յեր կանգնած, միանգամից Հունաստանի գլխավոր ծովային ուժը դարձավ։ Դեպի աթենական **Պիրեոս** նավահանգիստն ուղղվեցին այժմ այն ապրանքները, վոր առաջ Կորնթոս էյին մտնում արևելքից և արևմուտքից։ Վաճառականները, արհեստավորները, բանվորներն ուրիշ համայնքներից սկսեցին աթենք տեղափոխվել, վորպեսզի կարողանան մասնակցել աթենացիների ընդարձակ ձեռնարկություններին, ծառայել նրանց նավատորմի մեջ կամ աշխատել Պիրեոսի մեծ նավահանգստի նավամատույցների, ծովափնյա փողոցների և պահեստարանների կառուցման վրա։

Աթենքի ծովային ուժի գլխավոր ստեղծողը՝ Թեմիստոկլեսը միշտ նորանոր ծրագրների իրագործումով էր զբաղված։ Նա առաջարկեց ժողովրդին, վոր նա բարձրամուր պատերով շրջապատի գլխավոր քաղաքն ու նավահանգիստը, իսկ հետո նաև յերկար պատեր անցկացնի Աթենքի և Պիրեոսի միջև յեղած ամբողջ ճանապարհի յերկարությամբ։ Յեթե նոր հարձակում լինի ցամաքի կողմից, ասում էր նա, այլևս կարիք չի լինի թողնելու Աթենքը. քաղաքում կարելի յե պահել մի փոքրիկ զորախումբ, իսկ ծովագնաց ժողովուրդ դարձած քաղաքացիների գլխավոր ուժը դուրս կգա նավահանգստի մոտ նավերի վրա կռվելու համար։ Քանի աթենացիք ի վիճակի յեն ծովով պաշարեղեն և ռազմամթերք բերել, նրանք անհաղթելի յեն։

Աթենքի հզորացումից անհանգստացած սպարտացիք պահանջեցին, վոր աթենացիք քանդեն սկսած ամրությունները։ Այն ժամանակ Թեմիստոկլեսն առաջարկեց անձամբ գնալ Սպարտա բանակցություններ վարելու համար. այստեղ նա դիտմամբ ձգձգում էր խորհրդակցությունները, հավատացնում էր, վոր Աթենքում վոչ մի աշխատանք չի կատարվում. մինչդեռ նա խորհուրդ տվեց սպարտացիներին, վոր մի հատուկ պատվիրակություն ուղարկեն աթենացիներին հետևելու համար։ Միաժամանակ նա գաղտնի կերպով իմաց տվեց աթենացիներին, վոր բռնեն սպարտացիներին և պահեն, վորպես պատանդների։ Յերբ Աթենքում կառուցվող պատերը բավականաչափ բարձրության հասան, Թեմիստոկլեսը հանկարծ հայտարարեց սպարտացիներին, վոր գործը կատարված է արդեն, և վոր աթենացիք այլևս կողմնակի խորհուրդների կարիք չունեն։

Թեմիստոկլեսը բացահայտորեն մտադրվել էր խախտել պարսիկների արշավանքների ժամանակ կնքված բարեկամությունը Սպարտայի հետ և ամբողջ Հունաստանը յենթարկել աթենական ծովագնաց համայնքին. Աթենքում, սակայն, քիչ չէյին Սպարտայի կողմնակիցները, և նրանց մեջ առանձնապես աչքի յեր ընկնում Կիմոնը՝ Միլտիադեսի վորդին, մի նույնքան տաղանդավոր զորավար, վորքան և նրա հայրը։ Կիմոնին և Թեմիստոկլեսի մյուս թշնամիներին հաջողվեց նրան աքսորել տալ և բացի դրանից մեղադրել նրան դավաճանության ու պարսիկների հետ գաղտնի հարաբերություն ունենալու մեջ։ Հունաստանում արդեն Թեմիստոկլեսի համար տեղ

չէր մնացել, և նա փախավ մեծ թագավորի մոտ։ Իմանալով, որ պարսիկներին պարտություն հասցնողը նրանց մոտ այժմ ապաստան է խնդրում, Արտաքսերքսես թագավորը մեծապես ուրախացավ և հարուստ պարգևներ տվեց Թեմիստոկլեսին, հույս ունենալով, որ նրա տաղանդից կօգտվի ընդդեմ Հունաստանի։ Բայց Թեմիստոկլեսը մեռավ՝ դեռ ոչինչ չձեռնարկած իր հայրենակիցների դեմ։

Կիմոնոսը, թեև Թեմիստոկլեսի ամենավոխերիմ թշնամին էր, անցավ, սակայն, ճիշտ նույն ծովային ուժը գլուխը, որ ստեղծել էր Թեմիստոկլեսը։ Նա ջարդեց պարսիկների բոլոր ուժերը, որոնք միայն դուրս էին գալիս Եգեյան ծովում, և քշեց թշնամուն հեռու, դեպի Կիպրոս կղզին։ Ոչ մի աթենացի իր համայնքին այնքան ավար չբերեց, որքան Կիմոնոսը։ Նրան սաստիկ սիրում էին ժողովրդին արած առատ նվերների համար. պատերազմի ժամանակ ձեռք բերած իր հսկայական հարստությունից նա մեծ նվիրաբերություններ արեց տաճարներ շինելու և յերկար պատերը կառուցելու համար, որ, ըստ Թեմիստոկլեսի ծրագրի, Աթենքը պիտի միացնեյին Պիրեոսի հետ և այդպիսով պիտի ստեղծեյին մի ամբողջական ամրոց։

Դեմոկրատիայի կատարյալ հաղթանակը Աթենքում։ Նավաստիները, որոնք պատերազմի ժամանակ նվիրված էին Կիմոնոսին, քաղաքում ավելի հաճույքով լսում էին ժողովրդական նոր առաջնորդներին (հունարեն՝ **դեմագոգներ**), որոնց մեջ առանձնապես աչքի էին ընկնում Եփիալտեսը և Պերիկլեսը։ Նավաստիները համայնական ժողովում իրենց այլ կերպ էին պահում, քան գյուղացիները. հասկանալով, թե որքան մեծ նշանակություն ունեն իրանք համայնքում, նրանք այլևս չէին կամենում որևէ բարձր ուժի յենթարկվել։ Մանավանդ նրանց գրգռում էր այն հանգամանքը, որ ժողովրդի որոշումներն արգելքի յեն հանդիպում **Արեոպագոսի** խորհրդի մեջ, որ Աթենքի ամենահին հիմնարկությունն էր։ Դեմագոգները որոշեցին փոչնչացնել Արեոպագոսի իշխանությունը, բայց դրա համար պետք էր տապալել Կիմոնոսին, որ հին հայացքների գլխավոր պաշտպանն էր։ Առիթը շուտով ներկայացավ։

Սպարտայում տեղի ունեցավ յերկրաշարժ, որ քանդեց բազմաթիվ տներ. տների իրարանցումից օգտվեցին ճորտերը, որոնք զինվեցին և քիչ մնաց որ գերի վերցնեին բոլոր սպարտացիներին։ Արխիդամոս թագավորը չըկորցրեց ինքն իրեն, հավաքեց սպարտացիներին, ռազմական կարգի բերեց նրանց և ջարդեց ճորտերին։ Սակայն ճորտերը փախան Մեսսենիա և Իթոմոս լեռան վրա, ուր մի ժամանակ մեսսենացիք կռիվ էին մղել իրենց անկախության համար, խրամատներ փորելով, պաշտպանողականի անցան։ Սպարտացիք ամրություններ վերցնել չգիտեյին և օգնություն խնդրեցին աթենացիներից։ Դեմագոգները խորհուրդ էին տալիս մերժել սպարտացիներին և նույնիսկ օգնության գնալ ճորտերին։ Սպարտայի պաշտպան դուրս յեկավ Կիմոնոսը։ Նրա ասելով՝ Հունաստանը քաշում են յերկու ձի՝ Աթենքը և Սպարտան, և մեծ դժբախտություն կլինի, յեթե բոլոր հույների ընդհանուր հայրենիքը կաղալ սկսի. նա առաջարկեց, որ սպարտացիներին օգնական զորք ուղարկվի, և ինքն էլ այդ զորքի հրամանատարը նշանակվի։

Սակայն սպարտացիք, չհավատալով աթենացիներին, յետ ուղարկեցին

նրանց զորքը։ Եփիալտեսը և Պերիկլեսն ուրախությամբ պատճառ բռնեցին Կիմոնոսի անհաջողությունը և համոզեցին աթենացիներին, որ նրան աքսոր ուղարկեն ժողովրդի հանդեպ ցույց տված թշնամության և Սպարտայի նկատմամբ ունեցած համակրության համար։

Միաժամանակ Եփիալտեսն առաջարկեց զրկել Արեոպագոսը համայնական ժողովի վրա հսկելու իրավունքից, ինչպես նաև խլել նրա ձեռքից դատաստանական գրեթե բոլոր գործերը, բացի սպանության ծանր գործերից (462 թ.)։ Վեճերի և ամեն տեսակ մեղադրանքների քննությունն անցավ բոլոր քաղաքացիներին, որոնցից կազմվում էին յերդվյալների հանձնաժողովներ՝ 100-ական կամ 200-ական մարդուց բաղկացած։ Դեմագոգներն ասում էին, որ բոլոր քաղաքացիների միջից միշտ նոր ընտրվող դատավորների վողջմտությունն ու ազատ խիղճն ավելի ուղիղ վճիռներ կթելադրեն, քան շարունակ միևնույն գործով զբաղված փոքրաթիվ մարդկանց խիստ դատավարությունը։

Ժողովրդական նոր դատարանն Աթենքում բնավ նման չէր նախկինին։ Քաղաքացիներն այստեղ կատարելապես անկախ էին. որպես մեղադրող դուրս էր գալիս ոչ թե կառավարության պաշտոնյան (ինչպես այժմ դատախազը), այլ քաղաքացիներից որևէ մեկը իր սեփական կամքով. մեղադրյալը պետք է ինքն իրեն պաշտպաներ։ Այնպես, ինչպես ժողովուրդը ժողովում, դատավորներն էլ յերկար ու հանգամանորեն լսում էին յերկու կողմերին։ Աղքատներին իր կողմը գրավելու համար՝ Պերիկլեսն առաջարկեց, որ դատավորներին օրական ապրուստի փող վճարվի պետական գանձարանից։ Փոքր կարողության տեր մարդիկ այժմ այլևս վախենալու հիմք չունեյին, որ իրենց դատարանում անցկացրած օրվա յեկամուտից կզրկվեն. ընդհակառակը, նրանք մեծ բազմությամբ ձգտում ցույց տվին մասնակցելու յերդվյալների հանձնաժողովներին։

Դատավարության հանձնումը ժողովրդին ծանր հարված էր հնության պաշտպանների համար։ Կատաղությունից դրդված՝ նրանք սպանել տվին Եփիալտեսին։ Սակայն մի առաջնորդի մահով գործը կանգ չառավ. նրա շարունակողը յեղավ Պերիկլեսը։ Մոր կողմից Պերիկլեսը Ալկմեոնիդների տոհմից էր և Կլիսթենեսի թոռը. ինչպես և իր պապը, նա վճռականապես անցավ ժողովրդի կողմը։

Եկլեսիան այժմ դառնում է համայնքի գերագույն իշխանություն։ Կարևոր գործերը քննության են յենթարկում Հինգհարյուրի Խորհրդում և զեկուցում են ժողովրդին։ Համայնքի ընդհանուր ժողովում յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ուներ ազատորեն իր կարծիքը հայտնելու։ Համայնական ժողովն ընտրում էր **ստրատեգներին** (նավատորմի և զորքի գլխավոր հրամանատարներին, որոնց տրամադրության տակ էր նաև պետական գանձարանը)։ Ամեն տարի տեղի էին ունենում նոր ընտրություններ, և ծառայությունը վերջացնելուց հետո բոլոր պաշտոնյաները պարտավոր էին հաշիվ ներկայացնել ժողովրդին։

Աթենական հանրապետության մեծ ժամանակաշրջանը։ 462 թ. հաղթանակ տարած դեմագոգները (ժողովրդավարներն) աշխատում էին իրագործել Թեմիստոկլեսի լայն ծրագրերը։ Աթենացիք Յեգիպտոս ուղարկեցին մի մեծ

նավատորմ՝ մեծ թագավորի դեմ բռնկած ապստամբության ուժ տալու համար։ Միաժամանակ նրանք գրավեցին իշխանությունը Թեբեյում (Բեոտիայում) և նպատակ ունենալով իրենց յենթարկելու Պելոպոնեսը, աշխատում եյին փակել ճանապարհը, վոր կարելի չլինի Կորնթոս և Սպարտա մթերքներ տանել։

Միևնույն ժամանակ աթենացիք՝ հոյակապ շենքեր կառուցանելով՝ զարդարեցին իրենց մայրաքաղաքն ու նրա նավահանգիստը։ Աթենական միջնաբերդում նրանք մի մեծ տաճար շինեցին ի պատիվ քաղաքի հովանավոր աստվածուհուն՝ **Պարթենոնին** (պարթենոս խոսքից, վոր նշանակում և կույս)։ Այն ժամանակվա լավագույն արվեստագետը՝ Ֆիդիասը զարդարեց Պարթենոնը քանդակագործություններով, վորոնք ներկայացնում եյին աթենական ժողովրդի հանդիսավոր տոնային թափորը։ Տաճարի մեջ դրված եր Աթենաս աստվածուհու հսկայական արձանը, վոր նույնպես Ֆիդիասի գործն եր։ Արձանը ներկայացնում եր մի փայտե կմախք, վոր ծածկված եր վոսկե և փղոսկրե շերտով. աչքերը հակնթից եյին։

Աթենաս աստվածուհին Ֆիդիասի կերտումով։

Այդ թանգարժեք շինության կառուցման համար անհրաժեշտ միջոցներն աթենացիք սկսեցին վերցնել պետական գանձարանից, վորին վճարումներ եյին անում նաև դաշնակցության մյուս անդամները։ Պերիկլեսը համոզեց ժողովուրդը, վոր աթենացիք իրավունք ունեն այդ գումարներից ոգտվելու և իրենց պետքերի վրա ծախսելու, առանց դաշնակիցներին հարցնելու, քանի վոր իրենք են պաշտպանում հունական ծովը։ Այդպիսով դաշնակիցներն ընկերներից, վորպիսին եյին նրանք սկզբում, աթենացիների հպատակները դարձան։ Հույների գրեթե կեսն ընդգրկող և Աթենքի ղեկավարության տակ գտնվող մեծ **միությունը** դարձավ այժմ աթենացիների **պետությունը**։

Թվում եր, թե մի քիչ ևս, և Աթենքն իրեն կենթարկե բովանդակ Հունաստանը։ Բայց իրոք աթենացիք չափազանց շատ խոշոր գործեր սկսեցին միանգամից և չկարողացան ամեն տեղ հաջողություն ունենալ։ Մեծ պարտությամբ վերջացավ յեգիպտական արշավանքը. աթենացիք գրավեցին նույնիսկ Մեմֆիսը, բայց պարսիկներին հաջողվեց փակել Նեղոսի թևերի մեջ և վոչնչացնել ամբողջ աթենական նավատորմն ու զորքը։ Այս սպարտացիք, ճնշելով ապստամբ ճորտերին, իրենց զորքն առաջ շարժեցին Իսթմոսի վրայով. գրանով նրանք ոգնեցին թեբացիներին ազատագրվելու Աթենքի լծից։ Վերջապես Եվբեա մեծ կղզին, վոր Ատտիկայի հարևանն եր, անջատվեց աթենական պետությունից։

Պերիկլեսը մի յելք գտավ այդ դժվարություններից։ Նա առաջարկեց ժողովրդին վերջ դնել նվաճումներին ու արշավանքներին և հաշտություն

կնքել պարսիկների ու Սպարտայի հետ։ Հաշտությունն Սպարտայի հետ կնքվեց 30 տարով այն պայմանով, վոր Հունաստանի յերկու գլխավոր համայնքները պահպանում են իրենց իշխող դիրքը,— Աթենքը՝ ծովի վրա, Սպարտան՝ Պելոպոնեսում. արգելվում եր իրենց կողմը գրավել միմյանց դաշնակիցներին։



Դորական (հին) վոճի տաճար: Այսպիսի տեսք և ունեցել Պարթենոնը:

Աթենքի մեջ Պերիկլեսի դեմ դուրս յեկավ մի վտանգավոր հակառակորդ՝ Թուկիդիդեսը, հին տոհմից ծագող մի մարդ, վոր պաշտպան կանգնեց դաշնակիցներին։ Թուկիդիդեսն ասում եր, վոր Աթենքը վատ համբավ և ձեռք բերում. ամբողջ Հունաստանի աչքերի առաջ ծախսվում են դաշնակցական փողերը, վոր ընդհանուր պաշտպանության համար են հատկացված. մինչդեռ Աթենքը, ունայնամիտ կոկետուհու նման, վոր իր կուրծքը վոսկով ու թանգագին քարերով և պատում, զարդարում և ինքն իրան միլիոններ արժեցող արձաններով ու տաճարներով։ Իսկ այդ անարդարության և բռնության գլխավոր հեղինակը Պերիկլեսն և։

Աթենական ժողովուրդը հարկադրված եր վորոշել, թե յերկու առաջնորդներից վորին կհետևի նա և վորին աքսոր կուղարկի։ Գաղտնի քվեարկությամբ մեծամասնությունը ձայն տվեց ընդդեմ Թուկիդիդեսի, և վերջինս ստիպված յեղավ աքսոր գնալ (442 թ.)։

Թուկիդիդեսի աքսորից հետո Պերիկլեսը մի այնպիսի դիրք ձեռք բերեց, վոր այլևս վոչ-վոք չեր հանդգնում նրա հանդեպ ընդդիմություն ցույց տալ։ Տարվե տարի ժողովուրդը նրան ստրատեգ եր ընտրում և վստահանում եր նրան պետական գանձարանը, իսկ վտանգավոր պարագաներում նշանակում եր նրան ամբողջ նավատորմի և բանակի միահեծան հրամա-

նատար: Պերիկլեսին համեմատում էին Պիզիստրատես բռնապետի հետ, և շատերին թվում էր, թե Աթենքում յերևութապես միայն գոյություն ունի ժողովրդավարություն, մինչդեռ իրոք գոյություն ունի առաջին քաղաքացու միապետությունը: Շատերը չէին սիրում և վախենում էին այդ ինքնամփոփ, հպարտ, միշտ լուրջ և իր գործերի մեջ խորասուզված մարդուց:

Բարեպաշտ մարդկանց մեջ տարածված էր այն մեղադրանքը, թե Պերիկլեսը ժխտում է ժողովրդական աստվածների ուժը. մատնանշում էին, վոր նա մոտ է գիտնական Անաքսագորասին, վոր հանդգնեց պնդել, թե արևը կենդանի աստված չէ, այլ մի վոռկյա շիկացած քար, և թե բանականությունն է աշխարհը կառավարում:

Աթենական ժողովուրդն ու նրա տոները: Աթենական քաղաքացիների թիվը մեծ չէր համեմատած հպատակների հետ. քաղաքացիները 20 կամ 30 անգամ ավելի քիչ էին, քան հպատակները: Ատտիկայում իսկական քաղաքացիներ համարվում էին միայն քաղաքացի ծնողների վորդիք. բոլոր մյուսները, վորքան էլ նրանք յերկար ապրած լինեին Աթենքում, մնում էին վորպես սոսկ «բնակիչներ». նրանց կարծիքը չէին հարցնում ամբողջ քաղաքի կամ ամբողջ պետության վերաբերող գործերի մասին. նրանք չէին ստանում վոչ մի վարձատրություն պետական գանձարանից:

Ուստի ավելի ևս նկատելի էին այն առավելությունները, վոր աշխատում էին բաշխել քաղաքացիներին: Իրենց մասնակցության համար դատարանում, իրենց ժամանակի կորստի համար վորևե ծառայության մեջ նրանք վարձատրություն էին ստանում: Յերբեմն նրանց մեջ բաժանում էին հասարակության հաշվով գնած և բերված հացը: Վոչ հարուստ քաղաքացիները, բացի դրանից, միշտ ստանում էին ձրի տոմսակներ թատրոնական ներկայացումների համար. այդ տոմսակների գինը թատրոնի կազմակերպողներին վճարվում էր պետական գանձարանից:

Ժողովրդի առջև ճառող հռետոր (տղամարդու տարազ):

Այդ բաշխումներն ու առհասարակ հասարակության համար քաղաքացիներին տրվող որավարձը, ճիշտ է, մեծ չէին: Բայց քաղաքացիների մեծ մասի պահանջները ևս շատ սահմանափակ էին: Տաք կլիման հույնին թույլ էր տալիս կրել ամենահասարակ հագուստը, վոր բաղկացած էր

շապիկից, քառանկյունաձև պատմուճանից և վոտքի տակից կապվող ներբաններից: Հաճախ նա տնից դուրս էր գալիս վոտաբոբիկ և առանց գլխարկի: Որվա մեծ մասը նա անց էր կացնում դուրսը: Հասարակ մարդու տունը նեղ էր, մի կերպ շինված, գրեթե առանց կահավորության. ուտելու և խմելու մեջ ժողովուրդը չափազանց չափավոր էր: Սակայն դրա փոխարեն ժողովուրդն Աթենքում կառուցեց իր համար հսկայական և հոյակապ հանրային շենքեր՝ տաճարներ, թատրոններ, բաղնիքներ, մարմնամարզական դահլիճներ, կամարակապ սրահներ առևտրի, հանգստանալու և զբոսնելու համար:

Քաղաքացիներից հարկ չէին հավաքում: Բայց ժողովուրդը հարուստ մարդկանց ստիպում էր փող ծախսել նավեր շինելու, տոնախմբությունները կազմակերպելու համար. այդպիսի ծախսերը կոչվում էին **լիտուրգիաներ**: Շատերը դրա մեջ իրենց փառասիրական գոհացումն էին գտնում, մանավանդ յերբ տոնախմբությունների ժամանակ բարձրաձայն հայտնում էին առատաձեռն նվիրատուների անունները: Բայց ուրիշները տրտունջ էին հայտնում, վոր հասարակ ժողովուրդը չափազանց մեծ ուժ է ստացել քաղաքում. վոչ մի տեղ, ասում էին նրանք, «ծովային ամբոխն» այդպիսի գերիշխող դեր չի կատարում. դրանից է, վոր այդքան ինքնակամ են դարձել քաղաքում ստրուկները. ստրուկը հագնում է նույնպես, ինչպես և ազատը, չի տեղի տալիս՝ ճանապարհին հանդիպելիս մի ուրիշին, և նրան չի կարելի ձեռք տալ, վորովհետև նա կարող է հարվածին հարվածով պատասխանել:

Թեև Աթենքը մի ծովային համայնք դարձավ, սակայն ժողովրդի տոներն ամենից ավելի նվիրված էին գյուղական աստվածներին, հողագործության և գինեգործության հովանավորներին: Ամառը կատարվում էր **Պանաթենեներ** կոչված տոնը, ի պատիվ Աթենաս-կույսի և նրա հոգևոր վորդու՝ Երիխթոնիոսի (հասկի), վոր մեծացել էր նրա սպասուհիների (ցողերի) ձեռքով: Գարնանը կատարվում էր Մեծ Դիոնիսիոսները՝ արևելքից յեկող լուսապայծառ աստծու խելահեղ խնդության և դիմավորության տոնը. աշնանը լինում էր Փոքր Դիոնիսիոսները՝ խաղողի հավաքման տոնը:

Դիոնիսի՝ ցրտից մեռնող և նորից վերածնվող ծաղկափթիթ բնության աստծու տոնը տոնն էր նաև յերկու այլ աստվածների՝ Դեմետրայի և նրա աղջիկ Կորայի կամ Պերսեֆոնայի. այդ յերեք աստվածների մեծ տոնն Ատտիկայում կատարվում էր աշնան սկիզբը, այն ժամանակ, յերբ գետնի տակ են իջնում յերկրային լիառատ կյանքի բարերար և հովանավոր աստվածները: Այդ աստվածները դառնում են այնտեղ ստորերկրյա աշխարհի հզոր տերերը: Մարդիկ, վորոնք գերեզմանի այն կողմում իրենց հոգուն սպառնացող ծանր բախտից էին վախենում, նրանց ոգնության էին դիմում և իրենք իրենց նվիրում էին այդ աստվածներին: Այդ նվիրվածները, թվով մի քանի տասնյակ հազար, հավաքվում էին Աթենքում, թողության լվացում էին կատարում ծովի մեջ և յերկար թափորով ուղևորվում էին **Էլևսին** կոչված սրբավայրը, ուր կատարվում էր հանդեսը: Գլխավոր արարողությունը, **միստերիան**, կատարվում էր գիշերը. ժողովուրդը ջերմեռանդության մեջ հավաքվում էր թատրոնի տեսք ունեցող մի մեծ բաց շենքում. նրա աչքերի առջև վերարտադրում էին ստորերկրյա աշխարհն իջնող

և այնտեղից վերադարձող աստվածների բախտը: Գիշերային խորհրդավոր շրջապատը, յերաժշտությունը, սրբազան ներկայացումների փայլը հզորապես ազդում եյին հանդիսականների վրա: Նրանք հեռանում եյին այն հավատով, վոր գերեզմանի այն կողմն ստորերկրյա աստվածները կպաշտպանեն նրանց տանջանքներից, վոր ծաղիկներով ծածկված լուսապայծառ լեռան վրա նրանց սպասում ե ճաշկերույթը աստվածների հետ, այն ժամանակ, յերբ ուրիշները, վոչ նվիրվածները, պիտի խեղդվեն գարշահոտ ճահճի մեջ:

Աթենական թատրոնը: Բոլոր աթենական տոներն ուղեկցվում եյին յերաժշտությամբ, յերգեցողությամբ, խմբապարերով, պարերով և սրբազան գործողություններով (հունարեն՝ **դրամայով**): Տոնակատարության վերջին մասն առանձնապես կարևոր տեղ եր բռնում Մեծ Դիոնիսիոսների տոնին:

Հնուց ի վեր հույները ներկայացնում եյին Դիոնիսիոսի մուտքը՝ շըրջապատված սիլենների ուրախ, այծոտն և պոչավոր շքախմբով: Աղմկալից թափորը կանգ եր առնում մի փոքրիկ բարձրադիր կլոր հրապարակի վրա, ուր պարում և յերգում եյին խմբերգուները՝ շուռ տված մորթեր հագած և դիմակներ դրած: Այդ փոքրիկ հրապարակի մեջտեղում (վոր **օրխեստրա** յեր կոչվում, այսինքն խմբապարի տեղ) մի բարձր տեղից մի սիրող-դերասան վոր ներկայացնում եր Դիոնիսիոսին, արտասանում եր մի տաղաչափական ճառ, վորով նա իր բախտի, տառապանքների ու հաղթանակի մասին եր պատմում. շքախումբը հայտնում եր նրան իր համակրանքը, կրկին սկսում եր իր խմբապարը, իսկ այդ ժամանակ Դիոնիսիոսը չքանում եր հրապարակի յետևում դրված վրանի մեջ: Շորերը փոխելուց հետո դերասանը դուրս եր գալիս նոր կերպարանքով, ներկայացնելով մի նոր դեմք, վոր, ըստ ավանդության, կապված եր Դիոնիսիոսի հետ. յեթե նա ներկայացնում եր Դիոնիսիոսի չար հակառակորդին, այդ դեպքում խումբն իր բարկությունն ու ցավն եր արտահայտում:

Քանի վոր ժողովուրդը շատ եր սիրում այդ ներկայացումները, տոնակատարության կազմակերպողներն սկսեցին ընդարձակել և զանազանակերպել նրանց ծրագիրը: Բացի Դիոնիսիոսի առասպելից սկսեցին ներկայացնել նաև ուրիշ առասպելներ: Բանաստեղծները գրում եյին տաղաչափական ճառ գլխավոր դերասանի համար, խմբապարի յերգեր և գլխավոր անձի ու նրա շքախմբի միջև տեղի ունեցած խոսակցություններ: Հարուստ մարդիկ, վոր կամենում եյին ժողովրդի համակրանքը ձեռք բերել, ծախսեր եյին անում թատրոնական սարքուկարգի համար, գնում եյին շքեղ հագուստներ դրամայի մասնակիցների համար, վարձում եյին հմուտ յերգիչներ ու պարողներ կամ տոնի համար պատրաստում եյին մի ամբողջ խումբ:

Հույն-պարսկական պատերազմների պահին սովորություն եր դարձել Դիոնիսիոսի տոնին 4 պիես ներկայացնել. նրանցից յերեքը հուզիչ և վսեմ բովանդակությամբ (նրանք կոչվում եյին **տրագեդիա**, վոր բառացի նշանակում եր «այծերի յերգ», այսինքն Դիոնիսիոսի խումբը), իսկ մեկը, վոր դրվում եր վերջում և **սատիրների** (սատիրը նույնն ե, ինչ վոր սիլենը) **դրամա** յեր կոչվում, ծաղրական և ուրախ բովանդակությամբ: Շատ նորություններ մտցրեց թատրոնի մեջ՝ նրան ավելի կենդանություն տալու համար՝ Եսքիլեսը՝ «Պարսիկներ» վողբերգության հեղինակը: Հին գործողության

միակ դերասանի վրա ավելացրեց մի ուրիշը: Քանի դեռ բեմ եր դուրս գալիս մի անձ, նա կարող եր խոսքերով միայն պատմել այն, ինչ վոր պատահել եր հանդիսականներին ներկայացող աստծուն կամ հերոսին: Յերկու դերասանները, մանավանդ յեթե նրանք հակառակորդների դեր եյին կատա-

Վողբերգության դերասանները յեվ խորը. դերասանները բարձրացած են աթոռների վրա յեվ ունեն բարձր զարդարանքներ. աջ կողմը դրված են ընծայական պսակներ յեվ դափնիներ:

րում, կարող եյին յեղելությունն իսկ վերարտադրել: Վորպեսզի դերասաններն ավելի ազատ շարժվել կարողանային և այսու հանդերձ խմբից ավելի բարձր գտնվեյին, Եսքիլեսն սկսեց նրանց բեմ դուրս բերել փայտի բարձր կրունկներով կամ, ավելի ճիշտը, վոտքերի տակ կապված փոքրիկ պատվանդաններով (**կոտուրններով**): Եսքիլեսը սարքեց և առաջին դեկորացիան. բեմի առջևի պատն սկսեցին զարդարել նկարներով, տալով նրան՝ նայած պիեսին՝ աստծու սեղանի, ժայռի, տան մեջտեղից դուռ ունեցող առաջակողմի և այլ տեսք: Յեթե պիեսի մեջ պետք եր ներկայացնել և՛ աստվածներ և՛ մարդիկ, այդ դեպքում աստվածները՝ մարդկանցից ավելի բարձր յերևալու համար՝ վրանի (բեմի) հարթ կտուրն եյին դուրս գալիս:

Հին տոնական գործողությունից մնացին օրխեստրան, բեմը, խումբը և խոսող անձերը. ավելացավ հսկայական **ամֆիթատրոնը**, այսինքն հանդիսատեսների համար շինված նստարանների կիսաշրջանը, վոր իջնում եր սանդղաձև:

Եսքիլեսի վողբերգությանց մեջ նյութը, բովանդակությունը լինում եր մռայլ կամ տխուր: Հանդիսականները սրտատրոփ հետևում եյին, թե ինչպես արյունաթաթավ ուրվականների աստվածուհիները հալածում են դժբախտ Որեստոսին, վորն իր մորն եր սպանել այն բանի համար, վոր վերջինս դավաճանորեն մորթել եր իր ամուսին Ագամեմնոնին՝ Որեստոսի հորը, յերբ սա տուն եր վերադարձել Տրովադան վերցնելուց հետո: Նրանք խորապես հուզվում եյին, նայելով ժայռին շղթայված հերոս Պրոմեթեոսին, մարդկանց այդ ազնիվ բարեկամին, վորին Զևսը պատժել եր այն բանի համար, վոր նա յերկնքից կրակ եր հափշտակել մարդկանց համար, նրանց աշխատանք եր սովորեցրել և կենդանիների կյանքից նրանց վեր եր բարձրացրել:

Պերիկլեսի ժամանակ Աթենքի ամենասիրելի վողբերգուն եր Սոֆոկլեսը (496—408): Վորովհետև հանդիսականները յուրաքանչյուր տոնին միշտ նորանոր պիեսներ եյին պահանջում, Սոֆոկլեսն իր յերկար կյանքի ըն-

թացքում մինչև 120 ողբերգություն գրեց։ Նրանցից մեզ են հասել միայն յոթը, ի միջի այլոց յերեք պիես, վորոնց նյութն է Եդիպոս թագավորի և նրա տոհմի դժբախտության առասպելը։

Արքայորդի Եդիպոսը, վոր իր ծնողների կարծիքով մեռած պիտի լիներ, պատահական հանդիպման ժամանակ սպանում է իր հորը, վորին նա ամենևին չեր ճանաչում։ Նա թագավորում է յերկար ու յերջանիկ, մինչև վոր ժողովրդի մեջ սկսվում է մի ծանր համաճարակ։ Այն ժամանակ գուշակողից իմանում են, վոր դա արքայի մեծ մեղքի պատիժն է։ Եդիպոսը սարսափած իր իմացած նորությունից, հրաժարվում է գահից և հանում է իր աչքերը. բայց դժբախտությունը հալածում է նրա տունը. նրա յերկու վորդիք իրար են սպանում իշխանության համար ունեցած վեճի ժամանակ. նրա աղջիկը կորչում է այն պատճառով, վոր կամեցել եր թաղել իր սպանված աքսորական յեղբորը։ Այդ բոլոր մարդիկ մեղք չունեն. կորչում են նրանք այն պատճառով, վոր արդեն առաջուց վորոշված և գուշակված է նրանց դատապարտումը։ Այս դրամայի միտքն այն է, վոր մարդս, ինչպես էլ նա տնորինե իր կյանքը, ինչքան էլ բարձր ձգումներ ունենա, այնուամենայնիվ անզոր է բախտի դեմ։

Խաղողը քամելու աշնան տոնին (հունարեն՝ Լենեներ) ներկայացումները բացառապես ուրախ և զվարճալի բնույթ ունեյին։ Ժողովուրդը հավաքվում եր տախտակամածի մոտ, վորի վրա հրապարակ եյին գալիս Դիոնիսիոսի ուղեկիցները մեծ փորերով ու պոչերով. նրանց շուրջը պտույտ եյին գալիս խեղկատակները, վորոնց յերգը կոչվում եր **կոմեդիա**։ Կոմեդիայի եյությունը կայանում է ամեն տեսակ բաների տնազ անելու մեջ։ Բոլոր առասպելները թարս եյին ներկայացվում. հերոսներն ու նույնիսկ աստվածները ծիծաղաշարժ եյին դուրս գալիս։ Որինակ, մեծ դյուցազն Հերակլեսը, վոր, առասպելի ասելով, մարդկանց հրեշներից եր ազատել և իր գազանակը ձեռքին ամբողջ աշխարհն եր ման յեկել, վորպես մի ահագին քնկոտ վորկրամոլ և պոռոտախոս եր ներկայացվում։ Կոմեդիա գրողները ծաղրում եյին նույնպես ժամանակակից գործիչներին, ժողովրդական առաջնորդներին, զորավարներին և հռետորներին. նրանք չվախեցան նույնիսկ ծաղրելու նաև Պերիկլեսին, յերբ վերջինս իր զորության գագաթնակետին եր գտնվում։

Աթենական կյանքը Պերիկլեսի ժամանակ։ Իր ընդարձակորեն տարածված առևտրով Աթենքը գերազանցեց Կորնթոսից ու Միլետից։ Աթենական նավերը գնում եյին արևմուտք՝ դեպի Իտալիայի ափերը և արևելք՝ դեպի Սև ծովի ափերը։ Դեպի Պոնտոս գնացող աթենական արշավանքի գլուխն անցած՝ Պերիկլեսն ասաց. «Մենք ուժ կտանք այնտեղի հույներին, իսկ բարբարոս թագավորներին ու իշխաններին ցույց կտանք, վոր աթենացիք գնում են համարձակ ամեն կողմ, ուր նրանց հաճելի յե, և իշխում են բովանդակ ծովին»։

Պերիկլեսը կամենում եր Աթենքը Հունաստանի առաջին համայնքը դարձնել վոչ միայն հարստության, այլ և մտավորական նշանակության կողմից, կամ, ինչպես ինքն եր ասում, Աթենքը «ամբողջ Հունաստանի դպրոցը» դարձնել։ Ծովային պետության մայրաքաղաքը գրավում է ոտար

այցելուներ իր հետաքրքրական և զանազանակերպ կյանքով, իր շենքերի գեղեցկությամբ, իր թատրոնական զվարճությանց հարստությամբ։ Աթենք յեկող դրսեցի հույներից շատերը հիանում եյին աթենական կենցաղով, ուր բոլոր քաղաքացիները վայելում եյին հավասար իրավունքներ և մտքի ու խոսքի ազատություն։ Հերոդոտը (ծն. 484 թ., մեռ. 425 թ. Ք. ծ. առաջ), վոր ծնվել եր փոքր-ասիական Հալիկարնաս քաղաքում և գրել հույն-պարսկական պատերազմների պատմությունը, յերկարորեն ապրեց Աթենքում. վոգևորվելով ժողովրդավարությամբ՝ նա հավատացնում եր, թե «դեմոկրատիա» (ժողովրդավարություն) խոսքն իսկ հաճելի յե հունական ականջին։

Հաճույքով Աթենքն այցելում եյին **սոփեստները**, այսինքն թափառող գիտնականներն ու հռետորական արվեստի դասատուները։ Մեզ հասել է պատմությունը, թե ինչպիսի ուժեղ տպավորություն թողեց Պրոտագորաս սոփեստի Աթենք գալը։ Նա իջևանեց աթենացի հարուստ Կալլիասի տանը։ Վաղ առավոտ լուրը տարածվեց ամբողջ քաղաքում։ Ամբողջ որը Կալլիասի տան դուռը բաղխում եյին ամեն հասակի մարդիկ, վոր ձգտում եյին լսել հռչակավոր դասատուին։ Ներքին գավիթը տանող զով գալերեյում Պրոտագորասը ման եր գալիս իր ունկնդիրների ուղեկցությամբ և ավանդում եր իր առարկան. հետո նա նստում եր և պատասխանում իրեն ուղղված հարցերին։

Հույների քաղաքացիական մեծ պատերազմի սկիզբը։ Յերկար չտևեց Աթենքի խաղաղ կյանքը։ Թուկիդիդես պատմաբանը (ծն. 469 թ., մեռ. 400 թ. Ք. ծ. առաջ, վոչ մի առնչություն չունի Պերիկլեսի հակառակորդի հետ) ասում է իր հայրենակիցների մասին. «Նրանք այնպես են ստեղծված, վոր վոչ իրենց են հանգիստ տալիս, վոչ էլ ուրիշներին»։

Կամենալով ապահովել առևտրի ուղիները դեպի արևմուտք՝ Իտալիա և Սիցիլիա, աթենացիք իրենց դաշնակցության մեջ ընդունեցին Կորկիրա կղզին, վոր Հունաստանի արևմտյան ափերի մոտ է գտնվում։ Կորկիրացիք այդ ժամանակ թշնամական հարաբերության մեջ եյին իրենց մայր-հայրենիք Կորնթոսի հետ, և աթենացիք սկսեցին նրանց ոգնել Կորնթոսի դեմ։ Բացի դրանից, աթենացիք կարևոր դիրքեր գրավեցին Կորնթական ծոցի մուտքի մոտ և սկսեցին նեղել Մեգարա քաղաքը, վոր Կորնթոսի հարևանն եր։ Կորնթական առևտրին կատարյալ կործանում եր սպառնում։ Կորնթոսն իր կողմից փորձ արավ վնասել Աթենքին. դրդեց աթենական պետությունից անջատվել Պոտիդեա քաղաքը, վոր իր գաղութն եր և վոր գտնվում եր Խալկիդիկա թերակղզու վրա, Մակեդոնիայի մոտ։ Բայց այստեղ էլ անհաջողության հանդիպեց. աթենացիք փակեցին կորնթական զորամասը, վոր արդեն մտել եր Պոտիդեայի պատերից ներս։ Այն ժամանակ Կորնթոսը գանգատ արավ Սպարտային, վոր ամբողջ Պելոպոնեսի գլուխն ու պահապանն եր համարվում. կորնթացիք մեղադրում եյին աթենացիներին այն բանում, վոր սրանք հունական համայնքների ազատության են սպառնում, և դատաստան եյին պահանջում Աթենքի համար։

Դժվար եր պատերազմի մղել սպարտացիներին։ Սկզբում նրանք առաջարկեցին Աթենքին, վոր թողնի Մեգարան, իսկ հետո, յերբ, Պերիկլեսի խորհրդով, աթենացիք մերժեցին այդ առաջարկը, նրանք պահանջեցին, վոր

Աթենքից աքսորվեն իրենց կատարած սրբապղծության համար արատավորված Ալկմեոնիդները, այսինքն, ուրիշ խոսքով, վոր տապալվի Պերիկլեսը: Գրեթե յերկու տարի ձգձգվեցին Հունաստանի յերկու գլխավոր համայնքների միջև տեղի ունեցող բանակցությունները: Յերբ պարզվեց, վոր վոչ մի բանում աթենացիք չեն զիջելու և վոր նրանք իրենց հերթին պատրաստվում են իրենց յենթարկելու Պելոպոնեսը, սպարտացիք զորք հավաքեցին՝ Իսթմոսի վրայով ներս խուժելու համար Ատտիկայի սահմանները:

Պերիկլեսն իր կողմից պատերազմի պատրաստություններ տեսավ: Նա համոզեց Ատտիկայի գյուղական բնակիչներին թողնել իրենց տները, դաշտերը, պարտեզներն ու խաղողի այգիները և մտնել Աթենքի ամրության՝ Պիրեոսի ու Յերկար պատերի պաշտպանության տակ: Նա ասում եր, թե, քանի վոր սպարտացիք ցամաքի վրա անհաղթելի յեն, պետք չե նրանց հետ այստեղ կռիվ մղել: Մինչդեռ չկա մի ուժ, վոր կարողանար հաղթել աթենական նավատորմը: Անհրաժեշտ ե Պելոպոնեսը ծովից պաշարել. սովամահ լինելու վտանգից հարկադրված՝ սպարտացիք հաշտություն կխնդրեն:

Սկսվեց մի յերկար պատերազմ, վոր աթենացիք **Պելոպոնեսյան պատերազմ** անվանեցին. նա տևեց ընդհատումներով 27 տարի, 431 թ. մինչև 404 թ.: Պատերազմը չունեցավ այն ընթացքը, վոր սպասում եյին աթենացիք, և վերջացավ աթենական պետության կործանումով:

Սպարտացիք յուրաքանչյուր տարի գալիս եյին Ատտիկա և ավերում եյին այն: Աթենացիների համար առանձնապես ծանր եր, վոր նրանք կտրում-փչացնում եյին ձիթենիները. ձիթենին դանդաղ ե մեծանում և տընկելուց հետո միայն 16-րդ տարում ե նա տալիս առատ բերք: Սպարտական արշավանքների շնորհիվ միանգամայն աղքատացավ Ատտիկայի գինեգործների և այգեպանների մեծ մասը: Մինչդեռ ծովի կողմից կատարած իրենց հարձակումներով աթենացիք չեյին կարող առանձնապես ծանր վնաս հասցնել Պելոպոնեսին: Պատերազմի յերկրորդ տարին Աթենքի գլխին մեծ դժբախտություն յեկավ. քաղաքում բազմաթիվ մարդկանց կուտակումից արագորեն տարածվեց նավերի բերած ժանտախտը: Սարսափելի հիվանդության ավերումները քաղաքացիների մեջ հուսահատություն առաջ բերին: Պերիկլեսի հակառակորդները, վոր լռության եյին դատապարտված, նորից ձայն բարձրացրին, ասելով, թե նրա վրա յե ընկնում անհաջողության մեղքը: Հավատի նախանձախնդիր մարդիկ ոգտվելով հասարակ ժողովրդի հուսահատությունից, վորին դժբախտությունները աստծու պատիժ եյին թըվում, հիշեցնում եյին, թե Պերիկլեսն իր անհավատությամբ աստվածների բարկությունն ե գրգռել: Այդ բոլոր մեղադրանքներն ազդեցին աթենական ժողովրդի վրա: Յեվ այդպիսով տապալվեց առաջին մարդը, վորին գրեթե յերեսուն տարի անընդհատ կերպով լսում եր աթենական ժողովուրդը. նրան զրկեցին պաշտոնից և դատարանի միջոցով մեղադրեցին պետական փողերը վատնելու մեջ: Մի տարի հետո ժողովուրդը կրկին վերադարձրեց Պերիկլեսին նրա նախկին դիրքը, բայց մահացու հիվանդությունն արդեն վերջ տվեց նրա կյանքին (429 թ.):

Աթենքում առհասարակ գլուխ բարձրացրին ժողովրդավարության հակառակորդները: Նրանք ծաղրում եյին այն, վոր խանութպաններն ու

արհեստավորները դատողություններ են անում կարևոր խնդիրների մասին. նրանց կարծիքով, դա «փոքրաթիվ», «լավագույն», այսինքն ունևոր, ազատ ժամանակ ունեցող և կրթված մարդկանց գործն ե: Պերիկլեսի դեմագոգ-հաջորդները զուրկ եյին ժողովուրդը հանգստացնելու նրա արվեստից: Հարուստ կաշեգործ Կլեոնոսը, վոր փոխարինել եր Պերիկլեսին, կամենում եր գործերը վարել վճռական կերպով, վոչ միայն պաշտպանվել, այլ և հարձակվել թշնամիների վրա: Կլեոնոսը հասարակ ժողովրդի մեծ համակրանքն եր վայելում Աթենքում. ռազմական ծախսերը ծածկելու համար նա առաջարկեց ավելացնել դաշնակիցներից ստացվող դրամական տուրքը, չնայելով, վոր դա սպառնում եր նրանց մեջ նոր գրգռում և ապստամբություն առաջ բերել: Կլեոնոսը մի հաջողություն ունեցավ, վոր մեծ ինքնավստահություն ներշնչեց նրան. աթենացիք գրավեցին Պիլոս նավահանգիստը Մեսսենիայում, սպառնալով ճորտերի ապստամբություն առաջ բերել Սպարտայի դեմ: Պիլոսը յետ վերցնելու համար՝ սպարտացիք ուղարկեցին իրենց առաջին ընտանիքներից կազմված լավագույն զինվորների մի խումբ: Այն ժամանակ Կլեոնոսն իրան հրամանատար ընտրել տվեց և գերի վերցըրեց սպարտական զորախումբը: Սպարտան չեր կարող տանել այդքան քաղաքացիների կորուստը, մանավանդ վոր սպարտական հին ընտանիքների թիվն առհասարակ մեծ չեր: Կամենալով յետ ստանալ գերիներին, Սպարտան անմիջապես հաշտություն խնդրեց, Կլեոնոսը, սակայն, համոզեց, վոր աթենական ժողովուրդը յետ մղի հաշտության առաջարկները:

Մինչ այդ աթենացիների համար սկսվեցին անհաջողությունները: Յեռանդուն սպարտական հրամանատար Բրազիդեսն իր փոքրիկ զորքով Թեսսալիայի վրայով անցավ հյուսիս և Խալկիդիկայի քաղաքներն Աթենքից անջատել տվեց: Կլեոնոսը նորից դուրս յեկավ պատերազմ մղելու Բրազիդեսի դեմ: Բայց աթենացիք այս անգամ ջարդվեցին: Պատերազմի յերկու կողմնակիցներն ել՝ թե Կլեոնոսը և թե Բրազիդեսը՝ ընկան Ամֆիպոլիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Այժմ աթենական խաղաղասեր զորավար Նիկիասին հաջողվեց Աթենքի կողմից կնքել հաշտություն Սպարտայի հետ (421 թ.):

Խաղաղությունը յերկար չտևեց սակայն: Աթենացիք կարող եյին պահպանել իրենց իշխանությունը ծովի վրա, յեթե չկամենային իրենց հին տիրույթների սահմաններից հեռու գնալ: Բայց ժողովուրդը վոգևորվում եր ծովային նոր ծրագրներով:

Աթենական պետության անկումը: Ալկիվիադեսը՝ Պերիկլեսի ազգականը, վորը մեծացել եր մեծ դեմագոգի խնամակալության տակ, բայց վորը նրան բնավ նման չեր, ժողովրդին ներկայացրեց մի գրավիչ ծրագիր—նվաճել հարուստ Սիցիլիան, վոչնչացնել Կարթագենի առևտրական ուժը Արևմուտքում և տիրապետող դիրք գրավել ամբողջ Միջերկրական ծովում: Աթենացիք Սիցիլիայի դեմ նավատորմ և լավագույն զորք ուղարկեցին Ալկիվիադեսի իսկ հրամանատարության տակ (415թ.): Ալկիվիադեսը գրեթե վոչինչ չեր արել, յերբ նրա թշնամիները, նրա բացակայությունից ոգտվելով, առիթ գտան նրան ամբաստանելու: Նավատորմը մեկնելուց միքիչ առաջ Աթենքում գիշեր ժամանակ ջարդուփշուր եյին արել աստվածների հին

արձանները, վոր դրված էին փողոցների անկյուններում։ Ալկիվիադեսը հայտնի էր վորպես անհավատ մարդ. դրանից ոգտվելով, մեղադրողներն աշխատում էին ապացուցել, վոր աստվածներին հասցրած վիրավորանքը հենց նրա գործն է։ Ալկիվիադեսը չեկավ Աթենք դատարանին ներկայանալու և իր բացակայության ժամանակ մահվան դատապարտվեց։

Նավատորմի և զորքի հրամանատարությունն անցավ Նիկիասին, վոր մի պակաս շնորհալի մարդ էր, քան Ալկիվիադեսը։ Աթենացիք ծովից և ցամաքից պաշարեցին սիցիլիական մայրաքաղաքը՝ Սիրակուզան։ Մինչ այդ Ալկիվիադեսը գնաց Սպարտա և սպարտացիներին տվեց մի շարք Աթենքի համար վտանգավոր խորհուրդներ։ Առաջին՝ ոգտվել աթենական նավատորմի բացակայությունից, վերսկսել պատերազմը Աթենքի դեմ և գրավել Դեկելեա բերդն Ատտիկայում։ Ապա՝ ոգնություն ուղարկել Սիրակուզային։

Պաշարված քաղաքի մեջ, վոր արդեն կամենում էր անձնատուր լինել աթենացիներին, մտավ սպարտացի Հիլիպպոսն իր փոքրիկ զորախմբով։ Նա կարողացավ վոգևորել սիրակուզացիներին, փակեց աթենական նավատորմը Սիրակուզայի նավահանգստում և մի դաժան ճակատամարտում վոչնչացրեց այն. աթենացիք փորձեցին փրկություն գտնել կղզու ներսում, բայց Հիլիպպոսն ու սիրակուզացիք փակեցին ճանապարհները լեռներում և ստիպեցին ամբողջ աթենական զորքը անձնատուր լինել։ Նիկիասին և մյուս հրամանատարներին գլխատեցին, գերի զինվորներին դատապարտեցին տաժանակիր աշխատանքների քարահանքներում։

Ալկիվիադեսն ավելի ևս ընդարձակ ծրագրների յետևից ընկավ։ Նա գնաց Փոքր Ասիա, բարեկամություն հաստատեց պարսից սատրապի հետ և հաջողեցրեց **դաշնակցության կապումը պարսիկների յեվ Սպարտայի** միջև։ Ալկիվիադեսը գիտեր մտերմանալ զանազան յերկրների մարդկանց հետ. Աթենքում նա զրույց էր անում սոփեստների հետ, Սպարտայում պարզ, զինվորական կյանք էր վարում, պարսիկների մոտ ահագին ծախսեր էր անում շքեղ սարքուկարգի համար։ Պարսիկները փող տվին, վորով սպարտացիք մի ուժեղ նավատորմ պատրաստեցին։ Աթենքի դժգոհ դաշնակիցների մեծ մասը նրանց կողմն անցավ։ Ժողովրդավարության հակառակորդներն Աթենքում գրավեցին իշխանությունը, վերականգնեցին հին իրավակարգը, վոր գոյություն ուներ մինչև Սոլոնի ժամանակ, կազմեցին մի խորհուրդ հարուստ մարդկանցից և դադարեցին համայնական ժողով գումարելուց։ Նրանք վորոշեցին հաշտվել Սպարտայի հետ՝ մի անգամ ընդմիշտ տապալելու համար իրենց այնքան ատելի ժողովրդավարությունը (411 թ.)։

Սակայն զորքն ու նավաստիները, վորոնք իրենց նավատորմով կանգնած էին Սամոս կղզու մոտ, հայտարարեցին, վոր իրենք դեմ են «քչերի» **(ոլիգարխիա)** իշխանության և հրավիրեցին Ալկիվիադեսին, վոր արդեն կռվել էր սպարտացիների հետ։ Ամենամեծ վտանգն աթենացիներին սպառնում էր այն բանից, վոր սպարտական նավատորմը գրավել էր Սև ծով տանող նեղուցները։ Այդ կողմը հենց շարժվեց Ալկիվիադեսը. նա յետ նվաճեց Աթենքի նախկին տիրույթները նեղուցների մոտ և մաքրեց առևտրական ճանապարհը, վորով հաց էին բերում Աթենք։ Այդ հաղթանակներից հետո

ժողովրդավարներն Աթենքում տապալեցին «քչերի» իշխանությունը և վերականգնեցին ժողովրդի տիրապետությունը։

Յոթը տարի ևս Աթենքը դիմացավ բազմաթիվ թշնամիների դեմ մղվող պատերազմին. քաջարի ժողովուրդը նավ նավի յետևից էր պատրաստում։ Բայց միջոցներն սպառվում էին, տաճարներից վերցված էին վոսկու վերջին պաշարները, յեռանդը պակասում էր։ Ժողովուրդն անհաջողություններից գրգռվում էր, դավաճանության մեջ էր մեղադրում իր առաջնորդներին։ Յերբ Ալկիվիադեսը պարտություն կրեց, նրան յերկրորդ անգամ մահվան դատապարտեցին, և նա փախավ Հելլեսպոնտոսի մոտ գտնվող իր ամրոցը։ Մի անգամ ևս Փոքր Ասիայի ափերի և Լեսբոս կղզու միջև, Արգինուզյան կղզիների մոտ տեղի ունեցած ծովային մեծ ճակատամարտում աթենացիք ջարդեցին սպարտացիներին։ Բայց ճակատամարտից անմիջապես հետո սկսվեց մի դաժան փոթորիկ, վոր բաց ծով տարավ միքանի նավեր և անպաշտպան աթենացիներին դուրս ձգեց ալիքների մեջ. Նավատորմի հրամանատարները չկարողացան փրկել խեղդվողներին և թաղել ճակատամարտի մեջ սպանվածներին։ Աթենքից իսկույն հրաման յեկավ՝ արձակել նրանց և դատի կանչել. նրանց մեղադրեցին քաղաքացիների կորստյան և մեռածների հիշատակը վիրավորելու մեջ։ Սաստկապես գրգռված ժողովուրդը չէր ուզում լսել նրանց արդարացումները և մահվան դատապարտեց նրանց։ Սակայն շուտով, նրանց գլխատումից հետո, աթենացիք զղջացին իրենց արածի համար և իրենց բարկությունն ուղղեցին նրանց դեմ, վորոնք խաբել էին ժողովուրդը։

Բայց վախճանն արդեն մոտ էր։ Սպարտական ծովակալ Լիզանդրեսն առանց կռվի գրավեց աթենացիների վերջին նավատորմը, վոր կանգնած էր Հելլեսպոնտոսում, այն ժամանակ, յերբ նավաստիներն ու զինվորներն ափ էին դուրս յեկել։ Աթենքն այժմ կտրված էր դրսի աշխարհից այնպես, վոր վոչ մի մթերք չէր կարող ստանալ։ Սպարտացիք պաշարեցին քաղաքը ծովից և ցամաքից և, հինգ ամսվա պաշարումից հետո, ստիպեցին աթենացիներին անձնատուր լինել։ Լիզանդրեսը քանդել տվեց Յերկար պատերը։ Աթենացիք հարկադրվեցին հանձնել իրենց բոլոր ռազմանավերը և այրել իրենց նավարանները. նրանցից խլեցին ծովի այն կողմը գտնվող նրանց բոլոր տիրույթները։ Այսպիսի վախճանով վերջացավ աթենական մեծ պետությունը, վոր գոյություն ունեցավ 73 տարի (477—404 թ.)։

Լիզանդրեսը պահանջեց նույնպես, վոր աթենացիք վերացնեն ժողովրդավարությունը և վերահաստատեն փոքրաթիվ հարուստների իշխանությունը (ոլիգարխիան)։ Իշխանությունը գրավեց Յերեսունի Խորհուրդը, վորոնց **յերեսուն բռնակալներ** անվանեցին. նրանց գլուխն անցավ Կրիտիասը, շատ շնորհալի, բայց անխիղճ մի մարդ, վոր սկզբում հասարակ ժողովրդին գրգռում էր հարուստների դեմ, իսկ հետո դեմոկրատիայի վոխերիմ թշնամին դարձավ։ Յերեսուն բռնապետներն ամենևին չէին հավաքում համայնական ժողովը, գլխատում էին բոլոր նրանց, ով կասկածելի էր թվում նրանց, և գրավում էին սպանվածների գույքը։ Մինչ այդ դեմոկրատիայի պաշտպանները, վոր Թեբե էին փախել, վերադարձան Ալկիվիադեսի գործակիցներից մեկի՝ Թրասիբուլոսի հրամանատարության տակ

և գրավեցին Պիրեոսը: Կրիտիասն սպանվեց դեմոկրատների հետ ունեցած կռվում. դրանից հետո հաջողվեց տապալել հարուստների իշխանությունը և վերահաստատել ժողովրդավարությունը: Բայց դեմոկրատիան թույլ եր և արդեն չէր կարող վերականգնել Աթենքի ծովային տիրապետությունը:

Հունաստանի գործերը ղեկավարել սկսեց Սպարտան: Վոչ մի բանում նա չէր կարող փոխարինել Աթենքը՝ վոչ առևտրի, վոչ կրթության, վոչ արվեստի մեջ: Սպարտան չկարողացավ նույնպես պաշտպանել Հունաստանն արևելյան բռնավորի լծին յենթարկվելուց: Աթենքից ազատվելու համար Սպարտային միացած փոքր-ասիական հույները հաղթողի կողմից բախտի բերմունքին թողնվեցին. պարսիկները նրանց կրկին իրենց իշխանության յենթարկեցին:

Աթենական դեմոկրատիայի դարի մտավորական կյանքը: Աթենքի հզորության ժամանակը նշանավոր է գիտության արած մեծ առաջադիմությամբ:

Հույները, վոր իրենց ճանապարհորդներ եյին, շատ վաղ բացահայտեցին գիտության ծարավ և մտքի հարցասիրություն: Նրանք անհագորեն յուրացնում եյին քաղաքակրթությամբ ավելի հին ժողովուրդների՝ յեգիպտացիների, բաբելացիների, հնդիկների իմաստությունը. Նրանք յուրացնում եյին օտար ծեսերը և նոր աստվածների հավատը: Նրանց սեփական ծեսերի ու հավատալիքների համեմատությունն օտար ծեսերի ու հավատալիքների հետ հարկադրում եր նրանց՝ շարունակ վերաքննության յենթարկել սեփական առասպելների և աստվածների մասին ունեցած գաղափարների իմաստը:

Հեկատեոս պատմաբանը, սկսելով իր հայրենակից յոնիացիների կռվի պատմությունը պարսիկների հետ, ասում է. «Յես՝ միլեթցի Հեկատեոս՝ գրում եմ միայն այն, ինչ վոր ճշմարտություն եմ համարում: Հույների մեջ տարածված պատմություններից շատերն ինձ ծիծաղելի յեն թվում»: Նա քննության է առնում առասպելը դժոխքի Ցերբերոս շան մասին, վորի համար Հերակլեսն այրի միջից դժոխք եր իջել, և զարմանք է հայտնում, վոր այնքան դյուրահավատ և անմիտ է ժողովուրդը՝—այրը խոր չէ և նեղ է, վոչ մի տեղ չի կարելի իջնել նրա միջից. ստորերկրյա աշխարհի սարսափները դատարկ ուրվականներ են: Հեկատեոսի կարծիքով, առասպելը պետք է հասկանալ, վորպես 'ամենաբնական մի յեղելություն. Հերակլեսն այրի մեջ բռնեց մի թունավոր մեծ օձ, վորին՝ նրա խայթոցների պատճառով՝ դժոխքի շուն եյին անվանել. այս է ամբողջ պատմությունը:

Հեկատեոսի ժամանակակից Կսենոֆանեսը պախարակում եր Հոմերոսի պատմություններն աստվածների մասին, վորովհետև բանաստեղծը նրանց վերագրում է մարդկային կրքեր: Նրա կարծիքով, «Մի աստված վեր է բոլոր աստվածներից և մարդկանցից. նա նման չէ մահկանացուներին վոչ իր արտաքին տեսքով, վոչ իր վոգով»:

Այսպես եյին դատում հույն-պարսկական պատերազմների ժամանակի կրթված հույները: Պերիկլեսի ժամանակակիցներն ավելի ևս չեյին կարող ընդունել հին աշխարհայացքը. օրինակ՝ նրանք չեյին հավատում այն առասպելին, վորով մարդկային ցեղն ստեղծված է այն քարերից, վոր տիեզերական ջրհեղեղից փրկված հնագույն զույգը՝ Դևկալիոնն ու Պիրրան

են գցել: Շատերն ընդունում եյին Դեմոկրիտի վարդապետությունը, վորի համաձայն աշխարհը լցնող եյակները կազմվում են ատոմների, այսինքն փոշու հատիկի չափ փոքրիկ մասնիկների անթիվ բազմությունից. ատոմները միանում են փոխադարձ ձգողականության շնորհիվ և կազմում մարմիններ ու իրեր:

Հերոդոտի շարադրության մեջ խառնվում են նոր և հին աշխարհայեցողությունները: Նա կամենում է ցույց տալ, վոր հույների պատերազմը պարսիկների հետ մի կատարելապես բնական յերևույթ է. արևմտյան ժողովուրդները, Ասիան ու Յեվրոպան իրար հետ հավերժական հաշիվներ ունեն: Բայց միաժամանակ մարդկային բախտի մեջ նա շատ հրաշալի բաներ է տեսնում. անսպասելի կերպով կարող են իրար հաջորդել յերջանկությունն ու կործանումը. աստվածների միջամտությունից է, վոր տեղի յեն ունենում այդ փոփոխությունները: Ահա թե ինչ է պատմում Հերոդոտը Սամոս կղզու թագավոր Պոլիկրատեսի մասին. այդ բռնապետը, վոր միշտ բախտավոր եր, վախենալով աստվածների նախանձից, ծովը գցեց իր լավագույն թանգագին իրը՝ զմրուխտով զարդարված իր վոսկե մատանին. բայց ձկնորսը բերեց նրան մատանի կուլ տված ձուկը: Պարզ եր արդեն, վոր աստվածները զոհաբերությունը չեն ընդունում. Պոլիկրատեսի բարեկամ Ամազիս փարավոնը, իմանալով այդ նախազուշակ վատ նշանի մասին, շտապեց բաժանվել նրանից, իսկ ինքը բռնապետը շուտով մեռավ վատթար մահով, գերության մեջ պարսիկների մոտ:

Հունական դպրոց: Ձախ կողմն ավանդվում է յերաժշտություն, աջ կողմը՝ բանաստեղծություն. ուսուցիչը բացել է գիրքը, վորը կարդում է աշակերտը. պատերին կախված են ուսուցման առարկաներ. աշակերտի յետեվ նստած է մանկավարժը (այսինքն՝ ստրուկը, վոր ուղեկցում է աշակերտին):

Թուկիդիդեսը (ծն. 465 թ., վախճ. 400 թ. Ք. ծ. ա.), վոր Հերոդոտից ընդամենը 15 տարով եր փոքր, այլ կերպ է նայում մարդկային կյանքի ընթացքին: Նա ամենևին չի հիշատակում աստվածների միջամտությունը. նա չի հավատում նաև հրաշքի, իսկ յուրաքանչյուր յերևույթի բացատրության համար նա աշխատում է գտնել մի բնական պատճառ, վոր մարդկանց

հատկությունների և գործի հանգամանքների մեջ պետք է պտրել: Թուկիդիդեսի կարծիքով, աթենական պետությունը կործանվեց ոչ թե այն պատճառով, որ աստվածները նախանձում էին աթենացիներին կամ կամենում էին պատժել նրանց, այլ որովհետև ժողովուրդն անհամբեր էր, նախորոք հաշվի չէր առնում իր ուժերը, ցրեց իր ուժերն իր ձեռնարկների մեջ, անողոք էր ուրիշների հանդեպ:

Հունական դպրոց, ուր սովորեցնում են նվագ յեվ ճարտասանություն:

Թուկիդիդեսը սոփեստների մոտ էր սովորել: Դրանցից ոմանք կասկած էին հայտնում հին հավատի նկատմամբ. աստվածների մասին կարելի չէ որևէ որոշ բան ասել. հայտնի չէ նույնիսկ, գոյություն ունեն արդյոք նրանք թե ոչ. հարցը մութ է, իսկ մարդկային կյանքը՝ չափազանց կարճ, որպեսզի կարելի լինի իմանալ ճշմարտությունը: Ուրիշները խոսում էին ավելի վճռական կերպով. աշխարհումս իշխում է չարն ու բռնությունը, հետևաբար չկա մի բարձրագույն ուժ, որ ճշմարտություն-արդարությունը վերականգնելու մասին հոգ տաներ:

Եվրիպիդեսը (ծն. 480 թ., մեռ. 409 թ.) «Բելլերոֆոնտոս» ողբերգության մեջ ներկայացրել է աստվածների գոյությունը ժխտողին: Ըստ հին առասպելի՝ հերոս Բելլերոֆոնտոսը կռվում է՝ Պեգասի վրա նստած և սլանում է դեպի յերկինք: Եվրիպիդեսը դարձնում է նրան դժբախտ մարդկային ցեղի պաշտպան բարձրագույն ուժերի հանդեպ: Բելլերոֆոնտոսը դառնապես կշտամբում է աստվածներին, որոնք յերջանկություն ու հաջողություն են տալիս դաժան ու հավատադրուժ բռնապետներին և միևնույն ժամանակ թույլ են տալիս, որ չարագործների ձեռքով կործանվեն բարեպաշտ համայնքները: Հերոսն ասում է վերջում. «Մի՞թե կան աստվածներ յերկնքում: Նրանք չկան այնտեղ, չկան, յեթե միայն մարդիկ չեն կամենում խենթորեն հավատալ հին հեքյաթներին»:

Սոկրատեսը: Ոչ բոլոր սոփեստները բավականանում էին հին հավատի ժխտումով. ոմանք աշխատում էին ձեռք բերել նոր, ավելի բարձր հասկացողություններ աստվածության մասին: Այդպիսիներից էր փոքր-ասիացի Անաքսագորասը, որ ուսուցանում էր, թե բանականությունն է կառավա-

րում աշխարհը. այդպիսիներից էր նաև աթենացի Սոկրատեսը (ծն. 469 թ.):

Իր արհեստով քանդակագործ՝ Սոկրատեսը նվիրվեց գիտության ուսումնասիրության և զրույցների տիեզերքի վերաբերյալ հարցերի մասին: Ամեն տեսակ գիտական նյութեր պարզ և կենդանի կերպով ավանդելու մեծ շնորհքը դեպի նա գրավեց ջանասեր ունկնդիրների մի ամբողջ խմբակ: Նրա յերկրպագուներից մեկն Աթենք էր գալիս Մեգարա քաղաքից, ամեն անգամ ամբողջ օրվա ճանապարհ կտրելով, իսկ յերբ Աթենքը Մեգարային պատերազմ հայտարարեց, նա սկսեց կնոջ շոր հագնել և այդպես գալիս էր Աթենք Սոկրատեսի մոտ: Ոչ-ոք չէր կարող համեմատվել Սոկրատեսի հետ **դիալեկտիկայի**, այսինքն վիճելու վարպետությամբ. ոչ-ոք չէր կարող այնքան հմտորեն շփոթեցնել հակառակորդին, մոլորեցնել նրան հակասություններով և ստիպել նրան խոստովանել իր սխալը: Հույները շատ էին տարվում դիալեկտիկական արվեստով. Սոկրատեսի աշակերտ Պլատոնը պատմում է, թե ինչպես նրա ուսուցիչը բանավոր մրցակցության մեջ հաղթեց հռչակավոր սոփեստ Պրոտագորասին, յերբ վերջինս Աթենք էր յեկել:

Սոկրատեսը մեծացել էր Աթենքի դեմոկրատական կարգերի մեջ, բայց չէր սիրում ժողովրդավարությունը: Նա ասում էր, թե ժողովրդավարության ժամանակ հաճախ հրամանատար և կառավարիչ են ընտրում անձեռնհաս մարդկանց. պետք է, որ ժողովրդի գլուխը կանգնած լինեն կառավարական գործի վարպետներ, որոնք իրենց գործը սովորել են այնպես, ինչպես իրենց արհեստը սովորում են արհեստավորները, արվեստագետները, նավավարներն ու գիտնականները: Սոկրատեսն իր ունկնդիրներին խորհուրդ էր տալիս նույնպես **ընկերական միություններ** կազմել, իրենց ընկերական շրջանում ամուր պաշտպանել իրար. իսկ յուրաքանչյուրին առանձին նա խորհուրդ էր տալիս ամենից ավելի հոգ տանել իր բնավորության կրթության մասին. Նա առաջարկում էր՝ որպես նշանաբան՝ ընդունել Դելփիական տաճարի մուտքի վրա գրված խոսքերը. «Ճանաչի՛ր ինքդ քեզ»: Սոկրատեսը պատմում էր իր մասին, որ իր կյանքի կարևոր դեպքերում նա ականջ էր դնում իր ներքին ձայնին և ամեն անգամ վարվում էր նրա թելադրության համաձայն: Ասես մի աստված է նստած մեր մեջ, ասում էր Սոկրատեսը. նա անսխալականորեն սովորեցնում է, թե ինչն է լավ, ինչն է վատ. նա սովորեցնում է, թե ինչպես պետք է ապրել:

Սոկրատեսի ճառերը գրավում էին զանազան ուղղության տեր մարդկանց: Նրա հարձակումները դեմոկրատիայի վրա հաճույքով լսում էին Ալկիվիադեսի և Կրիտիասի պես փառասերները, որոնք պատրաստվում էին իրենց իշխանությանը յենթարկելու ժողովուրդը: Բոլոր նրանք, որ հոգնել էին **քաղաքականությունից**, այսինքն համայնական ժողովում տեղի ունեցող վեճերից, տարվում էին ընկերական միություններ կազմակերպելու մտքով: Սոկրատեսի կրոնական զրույցներն զբաղեցնում էին այն մարդկանց, որոնք նոր հավատի յետևից էին ընկած: Պելոպոնեսյան պատերազմի վերջանալուց հետո, յերբ Աթենքը կորցրեց իր ամբողջ զորությունը, իսկ ժողովուրդը հուսահատությունից փնտրում էր քաղաքի գլխին յեկած դժբախտության մեղավորներին, մի քանի դեմագոգներ մատնանիշ արին 70 տարեկան Սոկրատեսին և դատի կանչեցին նրան: Բոլորը հիշում էին, որ

Նրա աշակերտների շարքում էին Ալկիվիադեսն ու Կրիտիասը, վորոնք այնքան մեծ վնաս հասցրին Աթենքին։ Բայց դատարանում Սոկրատեսին մեղադրեցին այն բանում, վոր նա նոր աստվածներ է մտցնում և յերիտասարդությանն է անբարոյականացնում։ Մեղադրողներն ընդամենը մատնանշում էին Սոկրատեսի վարդապետությունը աստծու մասին, վորի համաձայն աստված խոսում է մարդուս ներքին ձայնի միջոցով։

Աթենացի հասարակ քաղաքացիներն ի վիճակի էին լավ քննելու զանազան վեճեր. նրանք սովոր էին նույնպես լրջմտորեն դատել քաղաքային գործերի և դաշնակիցների մասին։ Բայց նրանց ուժերից վեր եր դատել գիտության և նոր հավատի մասին։ Նրանց համար սարսափելի էին խոսքերը. «Նա դիպել է հին հավատին», «Նա արհամարհում է աստվածներին, վորոնց պաշտում է ամբողջ քաղաքը»։ Մանավանդ վոր Սոկրատեսը դատարանում արդարանալ էլ չեր աշխատում։ Նա, ըստ իր սովորության, կտրուկ և համառ կերպով հայտնում եր այն կարծիքը, թե նրան պետք է վոչ թե դատել, այլ վարձատրել բոլոր քաղաքացիների հանդեպ, վորովհետև նա շատ մարդկանց ազնվացրել է։ Այդ խոսքերից գրգռված՝ դատավորները ձայների մեծամասնությամբ Սոկրատեսին մահվան դատապարտեցին։ Սոկրատեսը հանգիստ կերպով խմեց նրանց առաջարկած թունավոր խմիչքը (399 թ.)։

VI.

ՀՈՒՅՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. 400—100 Ք. Ծ. ԱՌԱՋ։

Վարձկան զինվորները։ Քաղաքների միջև տեղի ունեցող մշտական պատերազմների շնորհիվ Հունաստանն ավերվեց։ Բազմաթիվ ուժեղ և առողջ մարդկանց համար դժվար եր տանը գործ գտնել, և նրանք աշխատանքի ու բնակության համար հեռանում էին արևելք՝ Յեգիպտոս, Սյուրիա, Յեփրատի շրջանը։ Հայրենիքը լքողները հաճախ ծառայության էին մտնում պարսկական սատրապների, Փոքր Ասիայի իշխանների և մեծ թագավորի մոտ։ Հունաստանում այժմ հեշտ եր վարձել զինվորներ, վորոնք պատրաստ էին ծառայել ամեն մի մարդու, վոր միայն լավ կվճարեր. վարձվում էին նույնպես սպաներն ու հրամանատարները։ Կային հռչակված զորավարներ, վորոնց հրամանի տակ առանձին հաճույքով հավաքվում էին զինվորները Հունաստանի զանազան ծայրերից։

Վարձկան զորավարները զինվորական գործը մի առանձին արվեստ դարձրին։ Աթենացի Իֆիկրատեսը կարողանում եր արագ շարժվել և արագ մի տեղից մյուս տեղն եր փոխադրում իր զորամասերը ճակատամարտի ժամանակ. Նա մտցրեց նոր սպառազինություն. զինվորների վրայի ծանր զրահն ու վռտապատյանները փոխարինեց հարմար վոտնամաններով. Նրանց ձեռքը տվեց փոքր վահաններ և յերկար նիզակներ։ Վարձկանները դարան էին մտնում, դասավորում էին զորքը սեպաձև՝ թշնամու մեջտեղը խրվելու համար։ Նրանք սկսեցին խոշոր արձակող գործիքներ կիրառել, պաշարման աշտարակներ մոտեցնել բերդերին և այլն։

Տասը հազար հույները արեվելքում մոտավորապես 400 թ.։ Հույն վարձկանները բացին ճանապարհը դեպի պարսկական պետության խորքը։ Շուտով, Աթենքի անկումից հետո, պարսից արքայորդի Կյուրոսը, վոր Փոքր Ասիայի փոխարքան եր, վորոշեց տապալել իր մեծ յեղբորը՝ Արտաքսերքսեսին։ Նա վարձեց հույների մի զորամաս սպարտական սպաների հրամանատարության տակ և միացրեց այն իր ասիական ուժերին։ Բաբելոնի տակ թագավորական գնդերի հետ ունեցած վճռական ճակատամարտում Կյուրոսն ընկավ, բայց նրա վարձած հույները յետ մղեցին բազմաթիվ թշնամու բոլոր հարձակումները։ Թագավորական զորավարները բանակցությունների մեջ մտան նրանց հետ. հույների գլխավոր հրամանատարները վստահեցին պարսիկներին և դավաճանորեն սպանվեցին։ Հույն զինվորները, սակայն, իրենց չկորցրին. Նրանք բոլորն էլ ժողովի հավաքվեցին ճիշտ այնպես, ինչպես նրանք սովոր էին անել իրենց հայրենիքում, լսեցին զանազան կարծիքներ և ընտրեցին իրենց համար նոր հրամանատարներ։ Ընտրվածներից մեկն եր աթենացի Կսենոֆոնտեսը՝ Սոկրատեսի աշակերտը. Նա և պահպանել է այդ արշավանքի մանրամասն նկարագրությունը։ Հույները վերադարձի ճանապարհը բռնեցին. Նրանք 8 ամիս ճանապարհ էին գնում, անցնելով մոտավորապես 1200 վերստ՝ առանց յերկրի քարտեզն ունենալու. Նրանք անցնում էին անապատային տեղերով, թշնամի ազգաբնակության միջով, հալածվելով պարսկական զորքերից։ Սակայն փոքրիկ կորուստներով միայն նրանք հասան Սև ծովը, Տրապիզոնը, ուր և նավ նստեցին։



Հունական քարածիգ մեքենա։

Զինվորական միապետությունը Սիցիլիայում։ Այնտեղ, ուր հարկադրված էին լինում պաշտպանության ամբողջ գործը հանձնել վարձկան մեծ զորամասերին, վերջիններիս հրամանատարը կարող եր գրավել գերագույն իշխանությունն ամբողջ յերկրի վրա։ Պելոպոնեսյան պատերազմի վերջին կարթագենացիք նվաճեցին Սիցիլիա կղզու մեծ մասը. նրանք սպառնում էին հույների վերջին պատվարին՝ Սիրակուզային։ Քսանհինգ տարեկան հրամանատար Դիոնիսիոսը պահանջեց Սիրակուզայի համայնական ժողովից իրեն անսահման իշխանություն տալ պատերազմը վարելու համար։ Նա քշեց կարթագենացիներին կղզու արևմտյան անկյունը, ամրացրեց Սիրակուզան անխորտակելի հսկայական պատով և այդ քաղաքը դարձրեց մայրաքաղաք մի մեծ պետության, վորը բացի Սիցիլիայից նվաճել եր նաև հարավային Իտալիան։ Բայց միևնույն ժամանակ նա վերացրեց ժողովրդավարությունը, փակեց ժողովները և արգելեց խոսքի ազատությունը։ Նոր բռնակալը շինել տվեց իր համար մի ամրացած պալատ Սիրակուզայի ծովածոցի մեջ գտնվող կղզու վրա, նստեց այնտեղ իր անձնապահ զորքով (գվարդիայով), հետևելով ժողովրդի տրամադրության բազմաթիվ լրտեսնե-

րի ոգնությամբ. այն մարդկանց, վոր վտանգավոր եյին թվում, նա գըլխատել եր տալիս կամ քարահանքներն եր ուղարկում ցմահ տաժանակիր աշխատանքների: Դիոնիսիոսն իշխեց (405 թ. սկսած) մոտ 40 տարի, հենվելով իր վարձկան զինվորների վրա, վորոնք վերցված եյին մասամբ Իտալիայի կիսավայրենի բնակիչներից. ի վարձատրություն նրանց ծառայության՝ նա բաժանում եր իր իշխանության չենթարկվող տերերից խըլված հողերը:

Հունաստանը քաղաքացիական մեծ պատերազմից հետո 400-360 թ.թ.: Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ սպարտացիք հավատացնում եյին, վոր հույներին աթենական ստրկությունից ազատելու համար են կռվում: Բայց պատերազմից հետո պարզվեց, վոր նրանք շատ քիչ եյին մտածում մյուս հույների ազատագրության մասին: Աթենացիներից խլված քաղաքներում նրանք դրին իրենց փոխարքաներին, վորոնք ամենուրեք փոխարինում եյին ժողովրդավարությունը միքանի տասնյակ հարուստ մարդկանց իշխանությամբ: Քաղաքացիական պատերազմից սպարտացիք հաղթող դուրս յեկան պարսկական վոսկու ոգնությամբ: Այդ ժամանակից իվեր առանց պարսիկների և նրանց փողի մասնակցության չեր անցնում վոչ մի հունական ներքին վեճ և պատերազմ:

Յերբ Աթենքում հաջողվեց տապալել 30 բռնակալների իշխանությունը և վերահաստատել ժողովրդավարությունը, աթենացիք իրենք ես սկսեցին դիմել պարսիկների ոգնության: Աթենական ծովակալ Կոնոնոսը, վորին հաջողվել եր իր նավատորմը Լիզանդրոսի հարվածից փրկել, ծառայության մտավ պարսկական թագավորի մոտ, պարսկական նավատորմի գլուխն անցած՝ ջարդեց սպարտացիներին և վերադարձավ իր մայրենի քաղաքը: Պարսկական փողով աթենացիք նորից սկսեցին շինել Պիրեոսի Յերկար պատերն ու ամրությունները: Բայց իր նախկին ուժն Աթենքը չկարողացավ հեռավոր չափով անգամ վերականգնել: Պարսիկները նորից նվաճեցին հունական քաղաքները և առհասարակ Փոքր Ասիայի ամբողջ ափը, ինչպես Դարեհ թագավորի ժամանակ:

Հույներն այն աստիճան թուլացրին իրար, վոր մեծ թագավոր Արտաքսերքսեսն ուղղակի միջամտեց Հունաստանի գործերին. նա 387 թ. հրահանգեց հույներին հաշտություն կնքել, վոր նրանք անվանեցին «թագավորական», պայման դնելով, վոր հունական քաղաքների միջև վոչ մի միություն չկազմվի և, հետևաբար, նրանցից վոչ մեկը չկարողանա նորից ուժեղանալ. սպարտացիք հանձն առան հետևելու, վոր վոչ մի տեղ գլուխ չբարձրացնե նորից այնպիսի շարժում և ներգործոն ժողովրդավարություն, ինչպես Աթենքում:

Սակայն ութ տարի անց ժողովրդավարության կողմնակիցները Թեբեյում ապստամբության փորձ արին: Նրանք դուրս քշեցին իրենց քաղաքից սպարտական պահակազորքը: Թեբական զորավար Եպամինոնդասը ջարդեց մինչ այդ անհաղթելի սպարտական զինվորներին և անցավ Պելոպոնես, կոչ անելով բոլոր հունական քաղաքներին՝ ազատվել Սպարտայի լծից: Թեբական դեմոկրատիան, սակայն, կռիվ ունեցավ աթենականի հետ, վորովհետև թեբացիք կամենում եյին ճնշել աթենացիների ծովային ուժը: Աթենացիք

նույնիսկ դաշն կնքեցին իրենց վոխերիմ թշնամի Սպարտայի հետ: Պարսից թագավորը դարձյալ միջամտեց Հունաստանի գործերին. այս անգամ նա իր մոտ կանչեց—Սուզա քաղաքը—հունական դեսպաններին և ստիպեց, վոր նրանք իրենց ցանկությունները հայտնեն փայլուն արքունիքի առաջ: Ինքը թագավորը նստած եր վոսկե պլատանի տակ, արևելյան շքեղությամբ ապշեցնելով հույներին: Թագավորին խիստ դյուր եր գալիս միջնորդի դերը հույների միջև: Ամենից շատ թեբացիք կարողացան շոյել նրան, ուստի և ստացան դրա համար պարսկական գանձարանից դրամական ոգնություն մյուս հույների դեմ:

Այդ յերկպառակությունների հետևանքով եր, վոր Հունաստանը մնաց բաժան-բաժան յեղած վիճակի մեջ:

Կինիկոսներն ու պլատոնականները: Քաղաքացիական անդադար կռիվներից հունական համայնքները քայքայվեցին ու աղքատացան: Շատ մարդիկ հուսահատության մեջ ընկան. թվում եր, թե չարժե աշխատել և հարստություն դիզել, չարժե վոչ ժողովրդին, վոչ ել փոքրաթիվ իշխանություններին ծառայել. քաղաքացիական ներքին վեճերի ու կռիվների ընթացքում անխնայորեն վոչնչացվում ե այն ամենը, ինչ վոր ձեռք ե բերել մարդս իր աշխատանքով ու արվեստով. կոպիտ ուժով կխլեն ամեն ինչ: Ուստի միշտ ավելի յեր տարածվում Սոկրատեսի այն միտքը, թե ավելի լավ ե անձնատուր լինել մասնավոր գործերի, կազմել ընկերական միություններ և հեռու մնալ քաղաքականությունից:

Սոկրատեսի հետևողները նրա մահից հետո յերկու ուղղության բաժանվեցին:

Մի մասը գնաց Անտիսթենեսի յետևից (մեռավ 399 թ., գրեթե Սոկրատեսի հետ միաժամանակ): Նրա ուսմունքը կայանում եր այն բանի մեջ, վոր մարդս ամենևին չպետք ե ձգտե հարստանալու, այլ, ընդհակառակը, պետք ե սահմանափակե իր ցանկությունները, զարգացնե իր մեջ ինքնաբավություն. վորքան ավելի նվազ են մարդու պահանջները, այնքան ավելի դյուրին ե ձեռք բերել հոգու անդորրություն, այնքան ավելի մաքուր ե մարդու հոգին: Այդ նպատակին ձգտող մարդիկ չեն ունենա անձնական սեփականություն, ամեն ինչ կդառնա համայնական սեփականություն (այդպիսի ուսմունքը մենք այժմ **կոմմունիզմ** ենք կոչում): Անտիսթենեսը ժխտում եր աստվածների արտաքին պաշտումը, խունկ ծխելը, զոհաբերությունները, արձանները և այլն. միասնական աստվածն արտաքին պատկերներով չե վոր ճանաչվում ե:

Անտիսթենեսի հետևողներին անվանում եյին կինիկոսներ, այն պատճառով արդյոք, վոր նա ուսուցանում եր Կինոսարգոսի մարմնամարզական դպրոցում, թե այն պատճառով, վոր թշնամիներն այդ խոսքով (կինիկոս նշանակում ե «շնային») կամենում եյին ծաղրել նրանց ապրելակերպը: Կինիկոսներն աչքի եյին ընկնում իրենց արտաքին տեսքով. կոպիտ պատմուճաններ հագած, առանց ներքնի շորի, գավազանը և մուրացկանի կապոցը ձեռքերին, յերկար մազերով, յերկար մորուքով՝ նրանք վարում եյին աղքատություն և անձնուրացություն քարոզող շրջիկների թափառական կյանքը: Ամենանշանավոր կինիկոսն եր սինոպցի Դիոգենեսը, վոր ապրում

եր Աթենքում և Կորնթոսում, մի սրամիտ վիճող և խենթ մարդ, վորին Պլատոնը «խենթ Սոկրատես» անվանեց։ Դիոգենեսը հաճախ պատսպարան չուներ. ասում եյին, վոր նա գիշերում է տակառի մեջ. ամանեղենից նա գործածում եր միայն մի փայտե գավաթ, բայց այդ էլ կոտրեց, յերբ տեսավ, թե ինչպես մի տղա բռով է ջուր խմում։

Սոկրատեսի մի ուրիշ աշակերտը՝ Պլատոնը հարուստ մարդկանց սկըսեց իր շուրջը հավաքել։ Պլատոնը (ծն. 426 թ., մեռ. 347 թ.) խստորեն դատափետում եր դեմոկրատիան և նրա առաջնորդներին։ Ժողովուրդը, նրա կարծիքով, տգետ, քմայքոտ և հանդեսների սիրահար մի ամբոխ է. ճառերը դատարանում և ժողովրդական ժողովում վոգևորում են նրան, ինչպես ներկայացումները մեծ թատրոնում։ Ուստի «Պետության մասին» վերնագիրը կրող իր շարադրության մեջ Պլատոնն առաջարկում է մի ուրիշ իրավակարգ։ Իրավահավասարությունը պիտանի չէ։ Պետք է յուրաքանչյուր մարդու իր իսկական տեղը ցույց տալ պետության մեջ։ Մարդիկ իրենց բնությամբ իսկ բաժանվում են յերկու տեսակի՝ բանվորների և զինվորների. առաջիններն ընդունակ են աշխատել, բայց չունեն վոչ բանականություն, վոչ կամք, միայն յերկրորդները քաղաքացիներին անհրաժեշտ հատկություններն ունեն՝ քաջություն և ընդհանուր բարիքի գիտակցություն։ Առաջինների աշխատանքով պետք է պահվեն զինվորները, վորոնք են լինելու իսկական քաղաքացիներ։ Նրանք պետք է միասին ապրեն, պետք է հրաժարվեն իրենց ընտանիքի նեղ շահերից և ամենևին չունենան սեփականություն. Նրանց յերեխաները, հեռացվելով ծնողներից, պիտի կրթվեն հասարակական մեծ հիմնարկությունների մեջ։ Զինվորները ծառայում են միայն ընդհանուր գործին։ Նրանց մեջ պետք է առանձնացնել նաև փիլիսոփաներին՝ հատուկ տաղանդ և խորը գիտություն ունեցող մարդկանց. նրանք են, վոր պիտի կառավարեն նոր համայնքը։

Պլատոնի կարծիքով, հունական քաղաքների քայքայման մեջ մեղավոր են նույնպես սոփեստներից նրանք, վոր ժխտում եյին ժողովրդական հասկացողություններն աստվածների մասին և դրա փոխարեն չեյին տալիս նոր նեցուկ հավատի համար։ Պլատոնը նրանցից առանձնացնում է Սոկրատեսին, վոր հավատում եր աստծուն. նա գրեց Սոկրատեսի մի ջերմ պաշտպանողականը, վորի մեջ նրան սուրբ մարդ դուրս բերեց։ Պլատոնն ինքն ուսուցանում եր, վոր մարդուս շրջապատող յերկրային աշխարհը միայն թույլ և վատ նկարն է գեղեցիկ և մեծ յերկնային աշխարհի։ Յերկրի վրա կան, սակայն, մասնիկներ, վոր բերված են պայծառ վերաստղային մթնոլորտից. դրանք մարդկանց հոգիներն են։ Մարդուս մարմնային կեղևը մի բանտ է, վորի մեջ փակված է հոգին։ Մարդիկ նման են բանտարկյալներին, վորոնք շղթայված և փակված են մի այրի մեջ, ուր հազիվ է թափանցում լույսը. նրանք չգիտեն, վորտեղ է նրանց իսկական հայրենիքը. միայն հոգու թույլ կռահումը հիշեցնում է նրանց դրա մասին։ Մարդկանց մեծ մասի հոգիները խաթարվում են աննշան շահերից և ստոր հասկացողություններից. նրանք կորած են հավիտենական կյանքի համար. այն փոքրաթիվ մարդկանց, վորոնք իմաստություն են պտրում, միտքն ու գիտությունը բաց են անում ճանապարհ դեպի ճշմարիտ աշխարհը, վոր հեռու յե յերկրից։

Պլատոնը հույս ուներ, վոր իր հայացքները մի հզոր միապետի համակրության կարժանանան. յերկու անգամ նա իր աշակերտների հետ գնաց սիցիլիական բռնակալների՝ Դիոնիսիոսի և նրա վորդու արքունիքը։ Մի ուրիշ աթենացի, պերճախոսության ուսուցիչ Իսոկրատեսը մակեդոնական միապետությունից եր սպասում Հունաստանի փրկությունը։

Մակեդոնիան 360 թ. սկսած։ Այդ յերկիրն ընկած եր բուն Հունաստանից դեպի հյուսիս, Բալկանյան լեռների և Եգեյան ծովի հյուսիս-արևմտյան անկյունի միջև։ Մակեդոնացիք ցեղակից եյին հույներին, բայց նրանց միշտ անհանգստացնում եյին վայրենի լեռնցիները, և նրանք մյուս հույներից յետ եյին մնացել առևտրի, արհեստի և ուսման մեջ։ Նրանք խստաբարո վորսորդներ և զինվորներ եյին. սովորությունը պահանջում եր, վոր դեռևս վարազ չսպանած յերիտասարդը չհանդգնի նստել սեղանի առաջ խնջույքի ժամանակ. ով վոր չեր սպանել վոչ մի թշնամու, իր մարմնի վրա թոկ եր կրում, վորպես նշան անարգանքի։ Նրանց կարգերը հին եյին. գյուղացիների գլուխը կանգնած եյին ազնիվ իշխաններ։ Թագավորներին շրջապատում եյին զորախմբերը, վորոնց հետ նրանք բաժանում եյին զինվորական ավարը։

Մակեդոնական թագավոր Ֆիլիպպոսը հույն վարձկաններից յուրացրեց բոլոր նոր զինվորական ձևերը, բայց մշտական զորք կազմեց իր հպատակներից. ճակատամարտի ժամանակ բանակի մեջտեղում կանգնում եր անմատչելի ֆալանգան, վոր յերկար նիզակներով զինված զինվորների խիտ շարքերից եր կազմվում. կողքերից հարձակվում եր բազմաթիվ հեծելազորքը։ Ոգտվելով հույների թուլությունից և վեճերից, Ֆիլիպպոսը նվաճեց հարուստ, արգավանդ Թեսսալիան, ապա՝ աթենացիների հին տիրույթները Եգեյան ծովի հյուսիսային ափում, վորոնք հարուստ եյին վոսկե հանքերով, և նեղուցների մոտ յեղած քաղաքները, վորոնք կարևոր եյին Սև ծովի շրջանի հետ առևտուր անելու և Ասիա անցնելու համար։ Դեմոկրատիայի հին պատվար Աթենքում հանդես յեկան մակեդոնական թագավորի հակառակորդները. նրանցից ամենաանհաշտը՝ Դեմոսթենեսն իր հմտալից ճառով աշխատում եր ապստամբեցնել ժողովուրդը Ֆիլիպպոսի դեմ,

Մակեդոնացի ձիավոր (Ալեքսանդր Մակեդոնացու տեսքով)։

դրդելով աթենացիներին, վոր կազմակերպեն զորք և նավատորմ և նրա դեմ կռվելու համար հունական քաղաքներից մի միություն կազմեն։ Դեմոսթենեսն ապացուցում եր, վոր թագավորներն ու բռնակալներն ազատության թշնամիներ են. Աթենքը պետք է դուրս գա ճշմարտությունն ու

որենքը կամայականության դեմ պաշտպանելու համար։ Բայց Աթենքը չուներ վոչ նախկին միջոցները, վոչ էլ հարուստ գանձարան, բազմաթիվ քաղաքացիներ կային, վորոնք ամենեին չեյին կամենում պատերազմել և առհասարակ անտարբեր եյին դեպի քաղաքականությունը։

Բայց յերբ մակեդոնական թագավորը գրավեց Թերմոպիլի կարևոր լեռնանցքը և իր զորքով մտավ Հունաստանի միջին շրջանը, Աթենքում ամբողջ քաղաքը մեծ իրարանցման մեջ ընկավ։ Լուրը հասնելուն պես գիշերն ազդանշաններ վառեցին ամբողջ յերկրում. հետևյալ որը բազմաթիվ քաղաքացիներ հավաքվեցին ժողովի։ Չնայելով մունետիկի հրավերին, վոչ վոք չեր համարձակվում խոսել։ Այն ժամանակ վեր կացավ Դեմոսթենեսը և առաջարկեց անմիջապես մոռանալ բոլոր ներքին հաշիվներն ու միանալ հարևան համայնքներին։

Խերոնեայի մոտ Բեոտիայում Աթենքի և Թեբեյի զորքերը ջարդ կրեցին Փիլիպոսի լավ վարժված բանակից (338 թ.)։ Բոլոր հունական քաղաքներն ընդունեցին Փիլիպոսի գերիշխանությունը և պարտավորվեցին նրան ոգնության գալ պարսիկների դեմ մղվելիք պատերազմի ժամանակ. հրաժարվեցին միայն սպարտացիք, ասելով, թե հնուց ի վեր նրանք վոչվոքի չեն հպատակվել։

Ալեքսանդրի արշավանքը 334 թ. սկսած։ Փիլիպոսի մահից հետո նրա վորդին՝ Ալեքսանդրը հունական և մակեդոնական զորախմբերի գլուխն անցած արշավեց Ասիա։ Շատ բան նպաստավոր եր արշավանքի համար դեպի Ասիա։ Ալեքսանդրին ծառայում եյին նրա հոր ընտիր գեներալները։ Պարսկական պետության ներսը տանող ճանապարհները հայտնի եյին այժմ։ Միքանի շրջաններում տիրում եյին պարսկական թագավորից գրեթե անկախ իշխաններ. մյուսների մեջ, ինչպես, որինակ, Յեգիպտոսում, անընդհատ տեղի եյին ունենում ապստամբություններ պարսիկների դեմ։ Պարսից թագավորին, սակայն, նույնպես ծառայում եյին հմուտ հունական զորավարներ. նրա տրամադրության տակ կային վարձկան հույն զինվորներ։ Կարելի յե ասել, վոր այս պատերազմի սկզբում հույները կռվում եյին հույների դեմ։

Այն ժամանակ, յերբ Ալեքսանդրն անցնում եր Փոքր Ասիա, հույն զորավարներից մեկը՝ Մեմնոնը, առաջարկում եր պարսից թագավոր Դարեհ III-ին մի նավատորմ ուղարկել Եգեյան ծովը և կտրել Ալեքսանդրի յետևից ճանապարհը, վորով նա կարող եր մթերքներ, ոգնություն ստանալ և նույնիսկ Հունաստան վերադառնալ։ Մեմնոնը շատ հաջող կերպով սկսեց իր գործողությունները ծովի վրա, բայց շուտով մեռավ։ Պարսից թագավորի խորհրդի մեջ տարաձայնություն կար. պարսից յերևելիներն ատում եյին հույներին։ Յերբ աթենացի Խարիդեմեսն առաջարկելով յերկրի պաշտպանության իր ծրագիրը, թագավորական խորհրդում համարձակություն ունեցավ խիստ խոսքեր ասելու պարսից զորքերի անպետքության մասին, դա համարեցին ետիկետի (արքունիքում ընդունված վայելչության) և թագավորի հանդեպ ունենալիք հարգանքի խախտում. Դարեհը ձեռք ավեց հույնի գոտուն, և ծառաներն իսկույն դուրս տարան նրան ու խեղդեցին։

Ալեքսանդրն անցավ Փոքր Ասիա և զենքի ուժով բացեց դեպի Սյուրիա տանող ճանապարհը, վոր նրա առջև փակել եր ինքը Դարեհը Իսսայի մոտ.

այստեղ Ալեքսանդրի ձեռքն ընկավ թագավորի ամբողջ ընտանիքը և մեծ հարստություն։ Դարեհն առաջարկեց Ալեքսանդրին հաշտություն կնքել և իրար մեջ բաժանել պարսից պետությունը. նա զիջում եր բոլոր ծովափնյա հողերը Յեգիպտոսի հետ միասին, իսկ իրեն կամենում եր թողնել Յեփրատի այն կողմը գտնված յերկրամասերը. բայց Ալեքսանդրը չհամաձայնվեց։ Առաջ շարժվելով ափով, Ալեքսանդրը վոչնչացրեց փյունիկեցիների քաղաքները և մանավանդ հարուստ Տիր քաղաքը։ Հույների հին առևտրական մրցակիցներն այժմ վոչնչացված եյին։ Յեգիպտոսում Ալեքսանդրին դիմավորում եյին, վորպես ազատարարի պարսիկների լծից։ Ամմոն աստծու տաճարում, վոր գտնվում եր հեռավոր ոազիսի վրա անապատի մեջ, ուր վռաք եր գրել Ալեքսանդրը, քուրմերը նրան աստծու վորդի հայտարարեցին. Ալեքսանդրը հրամայեց դրամների վրա իրան ներկայացնել աստծու նշաններով։

Յեգիպտոսից նա շարժվեց դեպի Յեփրատ և պարսից պետության ներսը։ Դարեհը մի անգամ ես ընդառաջ գնաց նրան մեծ ուժերով Տիգրիս գետի այն կողմը, Նինվեյի ավերակների մոտ։ Նորից ջարդեց նրանց Ալեքսանդրը և շարժվեց դարձյալ առաջ, դեպի այժմյան Պարսկաստանը, Աֆղանիստանը և Թուրքեստանը, հետապնդելով փախչող պարսից թագավորին։ Փախուստի ժամանակ Դարեհն սպանվեց պարսից սատրապների մեկի ձեռքով։ Ալեքսանդրը հայտարարեց իրեն պարսից թագավորի որինավոր ժառանգը. նա իրեն կնություն վերցրեց հին պարսկական դինաստիայի (արքայական տան) ժառանգ յերկու արքայադուստրներին։ Այդ նույն ժամանակ Սպարտայի թագավոր Ագիսը Պելոպոնեսում հավաքեց վարձկան հույն զինվորներին, վորոնք առաջ պարսիկներին եյին ծառայել, և արշավեց Հունաստանի մակեդոնական փոխարքա Անտիպատրի վրա։ Արկադիայում տեղի ունեցավ մի համառ ճակատամարտ, վորի մեջ ընկան սպարտական հպարտ զորքի վերջին մնացորդները։ Ագիսը, վոր վիրավորված եր վոտքից, և վորին տանում եյին նահանջող զինվորներն իրենց ձեռքերի վրա, հրամայեց նրանց շուռ գալ դեպի թշնամին և, ծնկի վրա ընկնելով՝ վահանն ու նիզակը ձեռքին՝ նա դիմագրավեց մահը, ինչպես այդ վայել եր սպարտացուն։

Ավելի ու ավելի յեր Ալեքսանդրն անձնատուր լինում արևելյան արքունիքի սովորություններին. նա իր համար մայրաքաղաք ընտրեց Բաբելոնը, վոր հեռու յեր Հունաստանից, հանդիսավոր ընդունելությունների ժամանակ նա սկսեց դուրս գալ փառահեղ արևելյան հագուստով և պահանջում եր, վոր նրան դիմավորեն ծնրադրությունն անելով. հունական թիկնապահ զորքի կողքին նա պահում եր պարսկական թիկնապահ զորք։ Ալեքսանդրը Հունաստան հրաման ուղարկեց, վոր իրան ոլիմպիական աստվածների շարքը դասեն։ Հույներից շատերին դուր չեյին գալիս այս շեղումները այն պարզ կյանքից, վորին նրանք սովոր եյին. Փիլիպոսի ծերունի գեներալներն առարկություններ եյին անում Ալեքսանդրի ձեռնարկությանց դեմ. նրանցից միքանիսին նա գլխատեց ճիշտ նույնպես, ինչպես առաջ այդ անում եր պարսից թագավորը իր ծառաների նկատմամբ։ Ալեքսանդրի նվաճած պետությունը պահպանվում եր նույնքան վատ, վորքան պարսկականը. բռնկվում եյին ապստամբություններ, դուրս եյին գալիս ինքնակոչ թագավորներ։

Բայց Ալեքսանդրը նոր ծրագրներ եր կազմում. նա ուզում եր նվաճել հեքյաթային Հնդկաստանը, վորին հույները ծանոթ եյին միայն լուրերի հիման վրա. այժմ հույս կար հասնել և մինչև մեծ ծովը, վորը, ինչպես թըվում եր հունական աշխարհագրագետներին, շրջապատում եր ամբողջ յերկրագունդը: Այդ ձեռնարկությունը չհաջողվեց. հնդիկները համառորեն յետ եյին մղում հարձակումները, իսկ Ալեքսանդրի զինվորները չեյին ուզում շատ հեռու գնալ և իվերջո ստիպեցին նրան վերադառնալ: Բայց Ալեքսանդրի նավերն, այնուամենայնիվ, Հինդի բերանից Պարսկական ծոցով հասան Յեփրատի բերանը և բացին մի կարևոր առևտրական ճանապարհ, վոր տանում եր դեպի հույների նոր գաղութները Սյուրիայում և Բաբելոնում: Ալեքսանդրի հասած ծայրագույն տեղերն եյին Թուրքեստանը և հնդկական Հնդագետքը: Ալեքսանդրը հիմք դրեց միքանի քաղաքների, վորոնք նրա անունն ստացան. դրանցից **ծայրագույն Ալեքսանդրիան** գտնվում եր այժմյան Խոջենտի տեղում:

Հույները Յեվրոպայում յեվ Արեվելքում: Շուտով հնդկական արշավանքից հետո Ալեքսանդրը մեռավ, դեռ յերիտասարդ հասակի մեջ (323 թ.): Հսկայական պետությունը, վոր կազմվել եր այնքան արագ կերպով, անմիջապես քայքայվել սկսեց: Հունաստանում բռնկվեց ապստամբություն: Աթենացիք յետ կանչեցին աքսորված Դիմոսթենեսին, և ամբողջ ժողովուրդը հանդիսավոր ընդունելություն ցույց տվեց մեծ հայրենասերին: Ապստամբները փորձ արին փակել Անտիպատրի առջև Միջին Հունաստան տանող ճանապարհը, սակայն, ըստ հույների սովորության, յերկար պատերազմի չդիմացան և սկսեցին ցրվել իրենց տները: Անտիպատրը ներս խուժեց Թերմոպիլի անցքով և հարձակվեց Աթենքի վրա թե ցամաքից, թե ծովից: Յերբ քաղաքն անձնատուր յեղավ, մակեդոնական փոխարքան պահանջեց, վոր քաղաքից հեռանան աղքատները, և վերջնականապես վերանա ժողովրդավարությունը, ինչպես վոր եր յերեսուն բռնապետների ժամանակ: Դեմոսթենեսը, վոր մահվան դատապարտվեց, փախավ. յերբ նրա յետևից հասան մակեդոնական լրտեսներն Արգոլիդայում, նա թույն ընդունեց:

Ասիայում Ալեքսանդրի թաղման պահին արդեն տեղի ունեցան արյունահեղ ընդհարումներ մակեդոնական զորավարների միջև: Յերկար ժամանակ վիճում եյին նրանք և նրանց վորդիք Ալեքսանդրի ժառանգության համար: Անտիգոնոս, Պտղոմեոս, Սելեկոս և միքանի ուրիշ զորավարներ թագավոր հայտարարեցին իրանց և կազմեցին միքանի հունական պետություններ, վորոնցից գլխավորներն եյին Մակեդոնիան, Յեգիպտոսը և Սյուրիան: Հույն զինվորները, առևտրականներն ու արհեստավորները մեծ խմբերով ուղևորվեցին դեպի Արևելք, թողնելով իրենց աղքատացած և յերկպառակություններից ավերված հայրենիքը:

Ալեքսանդրի արշավանքից 100 տարի անց պարսից թագավորության նախկին արևմտյան սատրապիաներում՝ Փոքր Ասիայում, Սյուրիայում, Միջագետքում, Բաբելաստանում, Յեգիպտոսում ավելի հույն եր ապրում, քան հայրենիքում՝ Յեվրոպայում: Նոր առաջ յեկան ահագին քաղաքներ, վորոնց բնակչությունը գերազանցապես հույներից եր կազմված—**Ալեքսանդրիա** Յեգիպտոսում (Նեղոսի թևի վրա, ծովի մոտ) և Անտիոքեն Սյուրիայում,

Որոնտ գետի վրա, Յեփրատից Միջերկրական ծովը տանող քարավանային ճանապարհի ծայրին: Հույների մայր հայրենիքը, Բալկանյան թերակղզու հարավային մասի քաղաքներն ու շրջանները չհարստացան պարսից պետության նվաճումից: Վորոշ հարստություն Աթենքում պահպանվեց. գեղարվեստական շենքերով և արձաններով լի և իր թատրոնով հռչակավոր քաղաքը շարունակում եր գրավել ոտարերկրացիներին. գիտնականները դպրոցներ եյին հիմնում այնտեղ: Զարգացավ նույնպես Կրետեյի և Փոքր-Ասիայի միջև գտնվող **Ռոդոս** կղզու առևտուրը: Բայց այդ քաղաքները պահպանվում եյին միայն շնորհիվ մեծ միապետությունների՝ Յեգիպտոսի և Մակեդոնիայի բարեկամության:

Պտղոմեոսը Յեգիպտոսում: Հունական պետություններից ամենահարուստն Արևելքում Յեգիպտոսն եր Պտղոմեոսների ընտանիքից դուրս յեկած թագավորների իշխանության տակ: Հունական թագավորները կարողացան շատ մեծ յեկամուտ ստանալ այդ հարուստ և խտաբնակ յերկրից: Պաշտոնյաների միջոցով նրանք պահում եյին ճիշտ հաշիվը ազգաբնակության, մշակված հողերի քանակության, արհեստավորական և առևտրական հիմնարկությունների մեծության: Ամեն մի տնատեր պարտավոր եր ամենամանրամասն տեղեկություններ տալ այն մասին, թե վորքան մարդ ե ապրում նրա տանը կամ կալվածում, ինչպիսի հասակ և զբաղմունք ունեն նրանք, վորքան նա բանվոր և վորքան գույք ու յեկամուտ ունի: Տուրքերը գանձվում եյին դրամով և մտնում պետական գանձարանը կամ իրերով՝ հացով, բանջարեղենով և կամ մտնում թագավորի ամբարները զորքի համար. յուղը, կտավատի գործվածքները պատրաստվում եյին բացառապես թագավորական գործարաններում, իսկ այդ արդյունքների արտադրության համար անհրաժեշտ բույսերը բերվում եյին թագավորի համար յերկրի ամեն կողմից: Պտղոմեոսները, հին Յեգիպտոսի փարավոնների նման, աստվածների շարքը դասվեցին. այդ հիման վրա նրանք սեփականացրին տաճարներին պատկանող մեծ կալվածները, վորոնք բազմաթիվ մարդիկ եյին կերակրում, և այդ կալվածների յեկամուտները մտցրին իրենց գանձարկղը:

Հարուստ գանձարանը հնարավորություն տվեց Պտղոմեոսներին Միջերկրական ծովում լավագույն նավատորմ պահելու: Պտղոմեոս I և նրա վորդին՝ Պտղոմեոս II Ֆիլադելֆոսը (նրանց կառավարման շրջանը՝ 321-243 թ. Ք. ծ. առաջ) նվաճեցին Փյունիկեն, Կիպրոս կղզին, Փոքր Ասիայի ափերի մի մասը, Ցիկլադյան կղզիները և գերիշխանություն ձեռք բերին Հունաստանի առևտրի նկատմամբ Լեվանտի հետ, այսինքն Միջերկրական ծովի արևելյան ծայրի հետ: Այդ առևտրի կենտրոնը դարձավ Պտղոմեոսների մայրաքաղաք Ալեքսանդրիան, վոր նսեմացրեց Աթենքը, Կորնթոսը և փյունիկական Տիրը: Վորոշ պլանով կառուցված՝ Ալեքսանդրիան իր ամբողջ յերկարությամբ բաժանված եր 14 սաժեն լայնություն և 6 վերստ յերկարություն ունեցող փողոցով:

Նավահանգիստը փակված եր նեղ յերկար կղզիով, վոր միանում եր ափին մի վերստից ավելի յերկարություն ունեցող քարե լայն պատնեշով. կղզու ծայրին գտնվում եր մի մեծ մարմարե աշտարակ, վոր ծառայում եր վորպես փարոս. նրա վերևում վառվող կրակը ծովի մեջ յերևում եր 60

վերստ հեռավորությունից։ Հաստատվելով Յեգիպտոսում, հույն ձեռնարկու առևտրականներն սկսեցին հարաբերություն Արաբական ծոցով Յերջանիկ Արաբիայի հետ, Հնդկաստանի և Չինաստանի—այնպիսի ճանապարհներով, վորոնք առաջ միայն փյունիկեցիներին եյին հայտնի։

Սելևկիդները Սյուրիայում յեվ Հրեաստանը։ Իր մեծությամբ ավելի խոշոր, քան Յեգիպտոսը, բայց վոչ այնքան հաստատուն եր Հաղթող կոչված Սելևկոսի հիմնած պետությունն Առաջավոր Ասիայում։ Նա պարփակում եր իր մեջ Սյուրիան, Փոքր Ասիայի մեծ մասը, և Յեփրատ ու Տիգրիս գետերի տափարակը և Իրանի ամբողջ բարձրավանդակը մինչև Հնդկաստան։ Նրա մայրաքաղաքն եր Անտիոքեն, վորի ազգաբնակության կեսը հույներն եյին կազմում, կեսը հրեաները, Սելևկոսի ժառանգ թագավոր Անտիոք III Մեծը (223—187 թ. Ք. ծ. առաջ) խլեց Պտղոմեոսներից Փյունիկեն և Պաղեստինը և նպատակ ուներ Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպպոսի դաշնակցությամբ բաժանել Յեգիպտոսը, բայց Պտղոմեոսներին ոգնություն ցույց տվեց հռոմեական հզոր հանրապետությունը, և Փոքր Ասիայում հռոմեական լեգեոնները ջարդ տվին Անտիոքի զորքին։ Անտիոքի մահից հետո սյուրիական պետությունն սկսեց քայքայվել։ Տիգրիս, Ինդոս և Ամուդարիա գետերի միջև գտնվող արևելյան մարզերը գրավեցին **պարթևները**, մի կիսավաչկատուն ժողովուրդ, վոր պարսիկների նման ձիավարժ եր և նետաձիգ։ Պաղեստինը նույնպես անջատվեց։ Քանի վոր յերկիրը պատկանում եր Պտղոմեոսներին, հրեաների հավատը չեր յենթարկվում վոչ մի հալածանքի, բայց սյուրիական թագավորները, վոր յուրացրել եյին Փրկիչների, Յերևցած աստվածների և այլ փայլուն տիտղոսներ, սկսեցին պահանջ դնել, վոր հրեաները Յերուսաղեմի տաճարում հարգանք մատուցանեն հունական աստվածություններին։ Հավատի պայքարի պատրվակով Մատաթիա քահանան և իր զավակներն ապստամբեցին. Նրանց անվանեցին Մակկաբեյներ (դյուցազուններ)։ Սիմոն Մակկաբեյն իր զորքով գրավեց Յերուսաղեմը, իսկ ժողովուրդը ճանաչեց նրան քահանայապետ (142 թ. Ք. ծ. առաջ), «մինչև այն ժամանակ, յերբ հանդես կգա վստահության արժանի մարգարեն»։ Նրա ժառանգները միացրին քահանայապետի ու թագավորի տիտղոսները և վերականգնեցին Դավթի ու Սողոմոնի պետությունը։

Պաղեստինն այդ ժամանակ հրեական ժողովրդի միայն մի մասն եր պարփակում իր մեջ։ Բաբելական գերության ժամանակից ի վեր նա մեծապես աճեց։ Հողից զրկված՝ հրեաներն զբաղվեցին գերազանցապես արհեստով և առևտրով. շատերն աշխատանք եյին փնտրում ոտար յերկրներում, գաղթում եյին Յեգիպտոսի, Փոքր Ասիայի, Հունաստանի, Իտալիայի ծովափնյա քաղաքները։ Հրեական գաղթականները կամ «ցրված հրեաներն» ամենուրեք միանում եյին, կազմելով համայնքներ. Նրանք կապ եյին պահպանում իրենց ցեղակիցների հետ և պարգևներ ու նվիրաբերություններ եյին ուղարկում Յերուսաղեմում գտնվող իրենց միակ մեծ տաճարին։

Հույների գիտությունը։ Հույների դեպի Արևելք շարժվելու ժամանակ նրանց մոտ կուտակված եյին բազմաթիվ աշխարհագրական, ֆիզիկական և պատմական տեղեկություններ։ Արիստոտելեսը (ծն. 383 թ.), Պլատոնի աշակերտը, միտք հղացավ այդ գիտելիքները հավաքելու, նրանց կարգի բերելու, նման յերևույթները համեմատելու և յեզրակացություններ դուրս բերելու։ Արիստոտելեսը ծագումով մակեդոնական ափիցն եր և մի ժամանակ գտնվում եր մակեդոնական արքունիքում վորպես Ալեքսանդրի դաստիարակը, բայց իր կյանքի մեծ մասն անցկացրեց Աթենքում (մեռավ 322 թ.)։ Նա ահագին տեղեկություններ ուներ գրեթե բոլոր գիտություններից։ Նա մի մեծ հավաքածու ուներ բնագիտությունից, վորի մեջ շատ հետաքրքրական նյութեր եր մտցրել Ալեքսանդրն իր արշավանքից։ Արիստոտելեսի աշակերտները նրա ղեկավարությամբ նկարագրեցին բազմաթիվ հույն և ոտարազգի համայնքների կազմակերպությունը։

Արիստոտելեսը գնաց բոլորովին այլ ճանապարհով, քան Պլատոնը. նա չունի բանաստեղծական հղացում՝ բացատրելու համար կյանքի յերևույթները յերկրագնդիս վրա. Նա ուզում ե հենվել միայն ճշգրիտ դիտողությունների և փորձի վրա։ Արիստոտելեսը չեր բարձրացնում յեռանդուն կերպով իր ձայնը վոչ թեր և վոչ ել դեմ ժողովրդավարության. Նա միայն վերլուծում եր լրջորեն կառավարության զանազան ձևերի՝ միապետության, ազնվապետության և ժողովրդապետության առավելություններն ու պակասությունները։

Հույն գիտնականների գիտելիքներն ավելի ես ընդարձակվեցին հետագա յերկու դարերի ընթացքում (300—100 թ. թ. Ք. ծ. առաջ)։ Աշխարհագրողները կազմեցին յերկրագնդիս մակերևույթի մանրամասն նկարագրություններ. հույների հորիզոնն այժմ առնվազը հինգ անգամ ավելի լայն եր, քան հույն-պարսկական պատերազմների ժամանակ. հունական ծովագնացները հասնում եյին Մադագասկար, Հնդկաչին և նույնիսկ Չինաստան։ Նրանք ծանոթ եյին դեպի Չինաստան տանող վոչ միայն ծովային ճանապարհին, վոր Ասիայի շուրջն ե անցնում, այլ և ցամաքային ճանապարհին, վոր անցնում եր միջին-ասիական լեռների միջով, ուր սարքված եյին մետաքսի շուկաներ։ Փղոսկրը բերում եյին Նեղոսի ակունքի մոտ գտնվող մեծ լճերից։ Հին Աշխարհի կեսը հույներին հայտնի յեր։

Հույն գիտնականներն այն յեզրակացությանն արին, վոր յերկիրը մի գունդ ե, թեև նրանք չկարողացան այդ միտքը փորձի միջոցով ստուգել, ինչպես հետո արին յեվրոպացիները, վոր նավով անցան յերկրագնդի շուրջը։ Տիեզերքը, հույների գիտության համաձայն, նույնպես գնդաձև ե։ Հավասարակշռության շնորհիվ ե, վոր պահպանվում ե նրա մեջտեղում յերկրագունդը, վորովհետև նա հավասարաչափ հեռու յե կանգնած յերկնքի բոլոր ծայրերից։ Հույն գիտնականները մեծ ուշադրություն դարձրին նաև յերկնային լուսատուների շարժման վրա։ Մոտավորապես 250 թ. Արիստարքոսը, ծագումով Սամոս կղզուց, առաջինն եր, վոր համարձակություն ունեցավ ասելու, վոր վոչ թե արևն ու մոլորակներն են պտույտ գալիս անշարժ յերկրի շուրջը, այլ ընդհակառակը, յերկիրն ու բոլոր մոլորակներն են պտույտ գալիս արևի շուրջը։ Արիստարքոսը մի մեծ գյուտ ես արեց. մինչ այդ արևը յերկրագնդից շատ ավելի փոքր եյին համարում, որինակ՝ մոտավորապես Պելոպոնեսի մեծության. Արիստարքոսը հայտնեց, վոր արևը յերկրագնդից շատ ավելի մեծ ե, այդ պատճառով ել հենց յերկրագունդը պիտի պտտվի արևի շուրջը։

Գիտնականներին ամենից ավելի գնահատում եյին հույն-յեգիպտական Ալեքսանդրիայում։ Այդ քաղաքը դարձավ այժմ հույների համար այն, ինչ վոր եր առաջ Աթենքը։ Պտղոմեոս II Ֆիլադելֆոս թագավորն Ալեքսանդրիայում հիմնեց մի թանգարան, **մուզեյում** (այսինքն **մուզաների**՝ գիտությունների ու արվեստները պաշտպանող աստվածուհիների տուն), ուր տեղավորված եյին կենդանաբանական և բուսաբանական հավաքածուներ, անատոմիական դահլիճ, քիմիական աշխատանոց։ Թանգարանում հավաքված եր նաև մի ահագին գրադարան հին և նոր հունական գրքերի․ այստեղ պահպանում եյին ի միջի այլոց նաև Հոմերոսի գրի անցկացրած յերգերը։ Յեգիպտոս բերվող ամեն մի գիրք պետք է թանգարան մտներ․ նրանից հանում եյին պատճենը և գիրքը վերադարձնում եյին տիրոջը։

Բազմաթիվ գրքեր արտագրվում եյին մեծաքանակ որինակներով և տարածվում եյին հասարակության մեջ։ Հունարեն լեզուն դարձավ կրթված մարդկանց լեզուն Արևելքում։ Ալեքսանդրիա տեղափոխվեցին բազմաթիվ հրեաներ․ նրանք սկսեցին մոռանալ իրենց մայրենի լեզուն և թարգմանեցին Աստվածաշունչը հունարեն (նա կոչվում է յոթանասուն մեկնիչների թարգմանություն)։ Բաբելական և յեգիպտական քուրմերը հունարեն եյին գրում իրենց ժողովրդի պատմությունը։

Էպիկուրյաններն ու ստոյիկյանները։ Վորքան ավելի յեր ընդարձակվում հույների աշխարհայեցողությունը, այնքան ավելի եյին փոխվում նրանց հասկացողությունները ուրիշ ժողովուրդների մասին։ Առաջ նրանց թվում եր, թե նրանց և բարբարոսների միջև անջնջելի տարբերություն կա, վորովհետև նրանք տարբեր են ծագումով, արյունով։ Այժմ նրանք հազարավոր անգամներ, յուրաքանչյուր քայլափոխին, պատահում եյին ուրիշ արյան մարդիկ և տեսնում եյին, թե ինչպես այդ մարդիկ, սովորելով հունական գիտությունը, ընդունելով հունական սովորությունները, հույներին նման են դառնում․ հետևաբար, արյան տարբերությունը չունի մեծ նշանակություն։ Մարդկանց պետք է զանազանել վոչ թե ըստ ցեղի, այլ ըստ լավ կամ վատ հատկությունների․ բարբարոսի և հույնի միջև յեղած տարբերությունը կրթության մեջ է, իսկ կրթությունը կարող է ամեն մի մարդու մատչելի լինել։ Նշանակում է, վոր բոլոր մարդիկ յերկրագնդիս վրա կարող են իրար հավասարվել, կարող են կազմել մի մեծ ընտանիք։

Այդ եր Եպիկուրի (ծագում եր Սամոս կղզուց) ուսմունքը։ 300 թ. մոտ Եպիկուրը շատ ունկնդիրներ եր հավաքում իր պարտեզում Աթենքի մեջ. նա ասում եր, վոր գլխավոր բարիքը աշխարհիս յերեսին բարեկամությունն է, և վոր պետք է այն վորքան կարելի յե լայնորեն տարածել շրջապատող մարդկանց վրա, նրանց բոլորի վրա, վորոնց հետ կյանքը մեզ հանդիպել է տալիս։ Ո՞վ է մեզ բարեկամ— Ամենից առաջ նրանք, վոր մեզ գաղափարակից են։ Բայց մարդ չպետք է սահմանափակվի միայն մերձավորներով, այլ պետք է հավասարաչափ բաժանի իր ոգնությունը շատ մարդկանց մեջ։ Յես ունեմ բարեկամ ամեն տեղ, ուր յես կարող եմ ձեռք մեկնել կյանքի ուղեկցին, ուր յես կարող եմ ասել թեկուզ մի փաղաքշական խոսք։ Թող մարդս չմոռանա, վոր ավելի մեծ յերջանկություն կա, յերբ նա ինքն է բարի գործ անում, քան յերբ իրեն են բարի գործ անում։ Բարեկամության

մեջ այն ամենը, ինչ վոր իմն է, քոնն է նաև, և այն ամենը, ինչ վոր քոնն է, իմն է նաև։ Յերբ տերն ազատ է արձակում ստրուկին, նա ինքը կարծես վերապրում է այդ ազատագրումը։

Փոխվեց նույնպես հայացքը ստրուկների նկատմամբ։ Առաջ այն կարծիքն եյին հայտնում, վոր ստրուկները մի առանձին ցեղ են կազմում, մարդկանց ստորին տեսակը․ ազատների և ստրուկների միջև անանցանելի անդունդ կա․ ստրուկները այն մարդիկն են, վոր իրենց զուրկ են խելքից և կամքից․ նրանք կարող են միայն ծառայել և սողալ։ Հարկավ, պատահում է, վոր ազնիվ, իրեն ազատ մարդը ստրուկ է դառնում․ բայց ստրուկների մեծ մասը պիտի ստրուկ էլ մնա․ յեթե նրանց ազատեք, նրանք իսկույն նորից ծառայության կմտնեն և ուրիշին կենթարկվեն։ Այժմ շատերը Հունաստանում այն համոզման յեկան, վոր ստրուկներն իրենց վոչնչով չեն տարբերվում ուրիշ մարդկանցից։ Բոլոր մարդկային արարածների բնածին հավասարության ուսմունքն առանձնապես համառորեն քարոզում եյին ստոյիկյանները․ այսպես եյին կոչվում Զենոնի (ծագ. Կիպրոս կղզուց) ունկնդիրներն ու հետևողները, վոր ուսուցանում եր Աթենքի **Ստոա** գալլերեայում Եպիկուրի հետ գրեթե միաժամանակ։ Ստոյիկյանների կարծիքով, բոլոր մարդիկ իրար նկատմամբ յեղբայրներ են։ Աստված սիրում է մարդկանց, ինչպես իր յերեխաներին։ Չկա մի մարդ, վորի մասին մենք ասեյինք, թե նա չափազանց ցածր է կանգնած և չի կարող մեզանից սեր և արդարություն պահանջել իր վերաբերմամբ․ ստրուկն էլ մարդ է, նա էլ նույն իրավունքն ունի։ Ամբողջ աշխարհում տիրում է մի օրենք, մի հոգի։ Աշխարհի հոգին կազմում է մեծ բոցը, վոր վառվում է նրա մեջտեղում․ ամեն մի մարդու մեջ վառվում է մի կայծ, վոր այդ բոցից է։

Թե եպիկուրյանները և թե ստոյիկյանները կազմում եյին խմբակներ, ընկերական խմբակցություններ, Սոկրատեսի աշակերտների, կինիկոսների և պլատոնականների նման։ Այդպիսի խմբակցության մեջ մտնում եյին խաղաղ պարապմունքի տեր ամեն տեսակ մարդիկ՝ արհեստավորներ, արվեստագետներ, գիտնականներ, առևտրականներ, նավատերեր։ Խմբակցության անդամները ժամանակ-առ-ժամանակ ընդհանուր խրախճանքի եյին հավաքվում․ իր հարուստ անդամների միջոցներից խմբակցությունը նպաստ եր տալիս աղքատ և չունևոր անդամներին։ Յուրաքանչյուր խմբակցություն իր համար հովանավոր եր ընտրում հանձին վորևէ աստծու, հերոսի կամ սրբի։

Ալեքսանդրի դեպի Արևելք կատարած արշավանքից հետո հույն ժողովուրդը կարծես յերկու մասի յեր բաժանվել։ Վոմանք ծառայում եյին զորքի մեջ, լցնում եյին Ալեքսանդրի ժառանգների հիմնած բերդերի պահակազորքերը, կամ ծառայում եյին, վորպես պաշտոնյաներ, Արևելքի մեծ միապետությանց վարչության մեջ։ Մյուսները խուսափելով ամեն տեսակ ծառայությունից, խորասուզվում եյին իրենց մասնավոր, խմբակցական կյանքի մեջ։ Թե նրանք, թե սրանք չեյին հետաքրքրվում այլևս քաղաքականությամբ։ Դադարեցին համայնական ժողովներն իրենց կրքոտ վեճերով։ Հույների մեջ չկային արդեն ազատության և ժողովրդավարության կողմնակիցներ․ մասամբ նրանք միապետականներ եյին, մասամբ անտարբեր դար-

ձան պետական գործերի նկատմամբ, հոգս քաշելով միայն իրենց ընտանիքի կամ խմբակցության մասին, մտածելով գիտության, արվեստի, արհեստի կամ իրենց հոգու փրկության մասին։

VII
ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Ալեքսանդրի մեծ արշավանքի ժամանակներում մոտավորապես հույներն առաջին անգամ սկսեցին խոսել մի նոր ռազմիկ ժողովրդի մասին արևմուտքում. այդ **հռոմայեցիք** էյին Իտալիայում։

Հին Իտալիան։ Բալկանյան թերակղզու պես՝ Իտալիան յեվրոպական ցամաքից բաժանված է լեռնաշղթայով՝ Ալպերով։ Նրա հյուսիսային մասը կազմում է մի արգավանդ տափարակ, վոր վոռոգվում է Պո գետով և վոր իր դիրքով նման է Թեսսալիային։ Այստեղից դեպի հարավ յերկիրը տարածվում է մի յերկար թերակղզու ձևով Ապեննինյան լեռնաշղթայի յերկարությամբ։ Ապեննինյան լեռները ներկայացնում են թեթև կորպով ծռված մի աղեղ, վոր սկսվում է արևմտյան՝ Տիրրենյան ծովի ափից, իր միջին մասով հենվում է արևելյան՝ Ադրիական ծովի ափին և կրկին վերադառնում է արևմուտք, կազմելով Բրուցիումը (այժմյան Կալաբրիան)՝ յերկու նեղ յեզրույրներից մեկը, վորոնց բաժանվում է թերակղզին։ Ապեննինյան լեռների գլխավոր շարքի և ծովի միջև մնում են ազատ տարածություններ, յերբեմն ընդարձակ տափարակներ։

Այդպիսով Իտալիայում ավելի դյուրին է շարժվել, քան Հունաստանում, և յերկիրը լեռներով այնքան էլ բաժան-բաժան յեղած չէ, ինչպես Հունաստանը։ Սակայն Իտալիան չունի այնպիսի լավ պաշտպանություն, ինչպես Բալկանյան թերակղզու հարավային մասը։ Ալպերը, ճիշտ է, մի բարձր պատ են կազմում, բայց նրանց դյուրին է մոտենալ հյուսիսի կողմից, ուր լեռների փեշերը թեք են, մինչդեռ հարավի կողմից, ընդհակառակը, դժվար է պաշտպանել լեռների գրեթե պատի պես ուղիղ լանջերը։ Այդ պատճառով Ալպերի այն կողմից շատ անգամներ Իտալիա էյին խուժում ռազմիկ վայրենի ցեղեր, մանավանդ **գալլերը**, վորոնք բռնեցին Պո գետի տափարակը։ Իտալիայում կարելի յե ավելի մեծ հաջողությամբ, քան Հունաստանում, պարապել հողագործությամբ և այգեգործությամբ։ Ինքը յերկիրը կարող է ավելի բազմաթիվ ժողովուրդ կերակրել, քան Հունաստանը, և Իտալիայի ազգաբնակությունը յերկար ժամանակ կարիք չուներ սնունդ փնտռելու ծովի այն կողմը։ Դրանից է, վոր Իտալիայի բնակիչներն ավելի պինդ էյին կապված հնությանն և այնքան դյուրավ յուրացնող չէյին, ինչպես հույները։

Իտալիան ներկայումս անտառներ չունի. նրա կլիման չոր է. նրա գլխավոր բույսերն են խաղողը, բրինձը, սիմինդրը, հարավային մրգերը. կա շաքարեղեգ, բամբակենի, արմավենի։ Բացի խաղողից այդ բոլոր բույսերն էլ Իտալիա էյին բերված մոտիկ ժամանակներում. նրանց մեծ մասը փոխադրել են այստեղ արաբները 900 տարի մեր ժամանակից առաջ։ Յերկու հազար տարի սրանից առաջ, հռոմայեցիների ժամանակ, Իտալիան բոլորովին

այլ տեսք ուներ, քան այժմ։ Նրա գլխավոր բույսերն էյին յեվրոպական հացահատիկներ, ամենից ավելի վոչ թե ցորեն էյին ցանում, այլ գարի, վոր այժմ միայն հյուսիսային յերկրներում են ցանում։ Անտառներ շատ կային, և կլիման ավելի խոնավ ու սառն էր, քան այժմ։ Իտալիայի գետերն ավելի խոշոր են, քան Հունաստանում, իսկ հնումը, անտառների շնորհիվ, նրանք ավելի ջրառատ էյին։ Բայց նրանք նավագնաց չէյին, սաստիկ շատ սահանքներ ու սահանքաժայռեր ունեյին. գարնանը վարարման ժամանակ գետը, արագորեն վայր թափվելով լեռներից, ինքն իր ճանապարհն է փակում իր հետ տարած աղբակույտերով և հեղեղվում է, լճեր ու ճահիճներ գոյացնելով. նրանց ջուրը յերկար կանգնած մնալուց նեխվում է և վարակում օդը տենդով։ Դրանից է, վոր ծովին մոտիկ քիչ բնակչություն կար. ժողովուրդն ստիպված էր բարձր տեղերում բնակություն հաստատել և բլուրների վրա շինել իր գյուղերը։

Միևնույն ժամանակ ծովն Իտալիայում այնքան բարեհամբույր չէ, վորքան Հունաստանում։ Միայն հարավում Յոնիական ծովի Տարենտոնյան ծոցը նավահանգստի համար մի շարք լավ ծովախորշեր ունի, վորոնց շուրջը հենց բնակություն էյին հաստատել յեկվոր հույն գաղթականները։ Արևելյան՝ Ադրիական ծովը փոթորկոտ է և նավահանգիստներից զուրկ։ Այստեղ ոտարերկրյա նավեր գրեթե չէյին յերևում. Ապեննինյան լեռների փեշերին, Ադրիական ծովի մոտ ապրող փոքրիկ ժողովուրդներ ծանոթ չէյին ծովագնացության և իրենց բոլոր մտքերով դեպի արևմուտք էյին ձգտում։ Իտալիայի գլխավոր կյանքը յեռում էր ծովի կողմից ավելի մատչելի՝ արևմտյան՝ Տիրրենյան ծովի ափի վրա։ Այստեղ Ապեննինյան լեռնաշղթայի կազմած աղեղի ներսում ծավալվում էյին արգավանդ, խառնակ շրջաններ՝ Ետրուրիան (ետրուսկների յերկիրը), Լացիումը (լատինների յերկիրը) և Կամպանիան։ Իտալիայի արևմտյան ծայրամասի մոտ գտնվում են Կորսիկա, Սարդինիա, Սիցիլիա կղզիները, վորոնք ներկայացնում են կայաններ ուրիշ յերկրներ գնալու ճանապարհին։ Այստեղ առևտուր սկսվեց ոտարազգիների՝ հույների և կարթագենացիների հետ։ Այստեղից հետո ծովով շարժվեցին նաև իրենք՝ Իտալիայի բնակիչները։ Վերջապես, նույն արևմտյան կողմում ծագում առավ հռոմեական համայնքը, վորը միացրեց Իտալիան և նվաճեց Միջերկրականի շուրջը գտնվող ամբողջ աշխարհը։

Այդ պատճառով կարելի յե ասել, վոր Իտալիան իր յերեսը դեպի արևմուտք է դարձրած, մինչդեռ Հունաստանը արևելքին է նայում։ Հույներն արևելքից էյին ավելի շատ ապրանքներ և տեղեկություններ ստանում. հույներն արևելք ավելի շատ էյին գաղթում իրենց հայրենիքից, քան արևմուտք։ Իտալիայի բնակիչներն, ընդհակառակը, յերկար ժամանակ զբաղեցնում էյին իրենցից արևմուտք գտնվող յերկրները՝ Սպանիան, Ֆրանսիան, հյուսիս-արևմտյան Աֆրիկան. Միջերկրական ծովի արևմտյան մասի նվաճումից հետո միայն նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի արևելք։

Հռոմի սկզբնավորությունը։ Արևմտյան ցեղերից ամենից առաջ աչքի ընկան ծովային առևտրով **ետրուսկները** կամ **տուսկերը** (նրանց անունով այժմ էլ յերկիրը Տոսկանա յե կոչվում)։ Աթենական Պիզիստրատյանների ժամանակներում ետրուսկները՝ միացած կարթագենացիներին՝ ջարդեցին հույն-

րի մեծ նավատորմը և դուրս քշեցին հույն առևտրականներին Տիրրենյան ծովից: Էտրուսկները գրավեցին ծովափնյա տեղերը Լացիումում և Կամպանիայում. մի ժամանակ նրանց յենթարկվեց նաև Հռոմը՝ լատին ցեղի գլխավոր բնակատեղին Տիբեր գետի վարի հոսանքի վրա (Հռոմի հիմնադրությունը համարվում է 754 թ. Ք. ծ. առաջ): Սակայն Հռոմը շուտով թոթափեց էտրուսկների իշխանությունը, միացրեց լատինների դաշնակցության մեջ և իր վրա վերցրեց նրանց պաշտպանությունը ծովի կողմից: Հռոմայեցիք դաշն կապեցին արևմուտքի ծովային հզոր պետության՝ Կարթագենի հետ. կարթագենացիք պարտավորվեցին Իտալիայի ափերի վրա չհարձակվել և ամրություններ չշինել այնտեղ. իրենց կողմից հռոմայեցիք խոստացան չանհանգստացնել Աֆրիկան և Կարթագենի մյուս տիրույթները, այլ միայն իրենց ապրանքները խաղաղ կերպով տանել-հանձնել Սիցիլիա և Սարդինիա, ուր գտնվում եյին կարթագենացիների շուկաները:

Իրենց համայնքի սկզբնավորության մասին հռոմայեցիք վոչինչ հավաստի բան չեյին կարող պատմել: Նրանք պատմում եյին միայն առասպելներ, վորոնք ժողովրդի ռազմական բնավորությունն եյին բացահայտում:

Հռոմի հիմնադիրներ եյին համարվում յերկվորյակ-յեղբայրներ Հռոմուլուս և Հռեմուսը՝ Մարս աստծու զավակները, վորոնք լքված եյին մորից և սնված վայրենի գազանից՝ գայլից: Հռոմ քաղաքը արյան վրա յե շինված. յեղբայրները կռվեցին իրար հետ, և Հռոմուլուսն սպանեց Հռեմուսին: Նշանակելի յե նաև մի մռայլ ավանդություն: Մի անգամ հռոմայեցիք իրենց վեճը լատինական Ալբա քաղաքի հետ պիտի լուծեյին յերեք Հորացիուս յեղբայրների մենամարտով յերեք Կուրիացիուսների հետ: Մենամարտի ժամանակ կենդանի մնաց միայն Հորացիուսներից մեկը, վոր սպանեց բոլոր յերեք Կուրիացիուսներին էլ. տուն վերադառնալով, նա պատահեց իր քրոջը, վոր սկսեց վողբալ իր նշանածին՝ Կուրիացիուսներից մեկին. այն ժամանակ հաղթողը դաշունահար արեց իր քրոջը:

Այն, ինչ-վոր մենք գիտենք հռոմայեցիների հին սովորությանց մասին, համապատասխանում է նրանց պատմություններին: Նրանց մոտ յերկար պահպանվեցին մարդկային զոհաբերությունները. Տիբերի վարարումների ժամանակ մարդկանց գետն եյին գցում, վորպեսզի նրա աստծու գութը շարժեն. յերբ յերկրաշարժ եր լինում, և գետնի մեջ ճեղքվածքներ եյին բացվում, կենդանի թաղում եյին միքանի մարդ, նրանց զոհաբերելով ստորերկրյա սարսափելի աստվածներին:

Յերկար պահպանվեցին Հռոմում դատաստանական հին սովորությունները, վորոնք ինքնադատաստանն եյին հիշեցնում. կարելի յեր հակառակորդին բռնի կերպով քաշել-տանել դատարան կամ հափշտակել նրանից ցանկացած իրը, վորպեսզի նա հարկադրված լինի պատասխանատու դառնալ դատարանի առաջ. պարտատերը կարող եր ձերբակալել սնանկ պարտապանին և, ցույց տալով դատարանին, տանել նրան իր մոտ ստրկության կամ գլխատել. պարտապանին ցուցադրում եյին հրապարակի վրա և հարց եյին տալիս, չի՞ յերաշխավորի արդյոք նրա համար վորևե մեկը. յեթե վոչ-վոք յերաշխավոր դուրս չեր գալիս, պարտատերը կարող եր սպանել պարտապանին և, ինչպես ասում եր հին սովորությունը, իրար մեջ բաժանել նրա դիակը:

Գանգատավորը դատարանում պարտավոր չեր վորևե բան ապացուցել. յեթե նա ճշտորեն գիտեր արտասանել յերդման բոլոր անհրաժեշտ խոսքերը, այդքանը բավական եր, վոր իր ցանկացած իրն իրեն տրվի:

Հայրն ընտանիքի մեջ անսահման իշխանություն ուներ. կինն ու յերեխաները, ստրուկների և կենդանիների հետ հավասարապես, կազմում եյին նրա գույքը (այն բոլորը միասին, վոր նրա ձեռքի տակ եր գտնվում, կոչվում եր **Ֆամիլիա**, իսկ ինքը գլուխը՝ «ֆամիլիայի հայր»). Նա կարող եր իր նորածին զավակին ընդունել կամ չընդունել, այսինքն հրամայել դուրս գցել նրան, կարող եր զրկել իր վորդուն ժառանգությունից: Կինն ամբողջովին ամուսնու կամքին եր յենթակա, իսկ վերջինիս մահից հետո ամեն բանում նա յենթարկվում եր իր ավագ վորդուն, վոր հոր տեղն եր բռնում:

Հռոմայեցիների հավատը: Հռոմայեցիներին խորթ եյին կենդանի և պայծառ հունական աստվածների պատկերները: Նրանց միքանի աստվածների անունները համապատասխանում են մարդկային վորոշ գործողությանց. փոքրիկ յերեխային քայլել, բղավել և խոսել սովորեցնում են քայլելու, բղավելու և խոսելու հատուկ աստվածները. տների դռներն ու քաղաքի դարպասները պահպանում է Բացանող աստվածը (Յանուսը): Կա Հավատարմության, կա Խոսք Կատարող աստված և այլն: Գլխավոր ուժը ներկայացնում են ռազմիկ-աստված Մարսը և մեծ-հայր Յուպիտերը: Աստվածներին ծառայում եյին քուրմերի ընկերակցությունները: Քուրմ և գուշակող եյին ընտրում այնպիսի մարդկանցից, վորոնք իմանում եյին աստվածների լեզուն. այդ լեզուն կարելի յեր հասկանալ թռչունների թռիչքի և ճիչի, կայծակների և կենդանիների փորոտիքների հատուկ նշանների հիման վրա:

Հռոմայեցիների հավատացողությամբ, մարդկանց և աստծու միջև պայման է կապված. յերբ մարդիկ ճշտությամբ կատարում են բոլոր, ամենաաննշան իսկ ծեսերը, աստված նրանց ոգնություն է հասցնում. յերբ նա չի ոգնում, դա նշանակում է, վոր ծեսը կատարելու ժամանակ ինչ-վոր մի բան մոռացել են կամ սխալ են արել: Պետք է աչալրջորեն ամեն բանի հետևել. յեթե գինին աստծու համար ածելու ժամանակ մարդ մոռանա ասել. «Ընդունիր գինին, վոր յես քեզ եմ նվիրաբերում», աստված կարող է կարծել, թե նրան խոստացված է մառանում գտնված ամբողջ գինին, և այն ժամանակ պետք կլինի այդ բոլորը տալ: Բայց մարդիկ կարող են նույնպես ոգտվել պայմանագրի մեջ բաց թողնված վորևե կետից կամ մեկնել այն ի նպաստ իրենց: Որինակ, յեթե ծեսը պահանջում եր, վոր զոհաբերվի մի հազվագյուտ կենդանի, վոր շատ դժվար եր ճարել, շինում եյին նրա կաղապարը խմորից կամ ավազից և նվիրաբերում եյին աստծուն:

Կարելի յեր թշնամիներին ոգնող աստծուն իր կողմը գրավել քաղաքի պաշարման ժամանակ. պետք եր միայն իմանալ աստծու իսկական անունը, վոր բնիկները ծածկում եյին ոտարներից, և աղոթել նրա անունով: Յեթե հաջողվում եր վերցնել քաղաքը, պետք է աստծուն փոխադրեյին իրենց մոտ, ոտարից նրան հայրենի դարձնեյին, այլապես նա թշնամի կըմնար. ընդհակառակը, յեթե նա գնում եր հաղթողների մոտ, նա պետք է ավելացներ նրանց ուժը: Աշխատում եյին բոլոր ծեսերը կատարել առանց շտապելու, հանդարտ, խորը լռության մեջ. հռոմայեցիք չեյին սիրում խան-

դավառություն, ավելորդ զգացումներ և հուզում. այդ բոլորը նրանք անվանում եյին անհավատություն:

Մեծ նշանակություն ունեյին գուշակումները, առանց վորոնց չեյին սկսում վորևե կարևոր գործ: Պատերազմ սկսելուց առաջ, քաղաքի հիմքը դնելուց առաջ, հրամանատարներ ընտրելուց առաջ, քուրմերն աղոթում եյին և գուշակում սրբազան քառանկյունների ներսում: Իր կեռ գավազանով գուշակողը խաչաձև յերկու գիծ եր քաշում հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք և կանգնում եր նրանց խաչաձևման կետում՝ յերեսը դեպի հարավ դարձրած: Իր գլխավերևը գտնվող յերկինքն իր մտքում նա բաժանում եր նույնպիսի գծերով: Իրենից դեպի ձախ գտնվող նշանները նա համարում եր նպաստավոր, իսկ դեպի աջ գտնվողները՝ աննպաստ, վատ: Յեթե նշանները վատ եյին, գուշակողն ասում եր հավաքված ժողովրդին կամ նրա առաջնորդին. «Մինչև հետևյալ որը»: Դա նշանակում եր, վոր պետք ե սպասել կամ պետք ե բոլորովին հրաժարվել գործից: Յեթե նշանները լավ եյին, գուշակողը պահանջում եր լիակատար լռություն. ապա նա դիտում եր յերկինքը և աստվածներից սպասում եր իր դրած հարցերի պատասխանը:

Զինվորական բանակատեղին ճանապարհի վրա կամ նոր քաղաքը որհնում եյին՝ ըստ նույն սովորության: Գուշակողներն այս դեպքում դառնում եյին հողաչափներ: Նրանք տեղավորում եյին բանակատեղին կամ քաղաքի գլխավոր փողոցներն այն ակոսների ուղղությամբ, վոր նրանք անց եյին կացնում հիմք դնելու ժամանակ, աստվածների ոգնությունը հայցելով: Նրանց խաչաձևման կետի վրա բանակատեղիում դնում եյին բագինը, վորի առջև խփում եյին զորավարի վրանը, և վորի մոտ զինվորների հավաքատեղին եր լինում, իսկ քաղաքում սարքվում եր շուկայի մեծ հրապարակը, **Ֆորումը**: Ամեն մի գործ հռոմայեցիների մոտ գուշակումից եր սկսվում. գլխավոր քուրմերը (**պոնտիֆիկները**) գուշակում եյին մի ամբողջ տարվա համար և առաջուց վորոշում եյին բարի և չար որերը, յերբ կարելի յեր և յերբ չեր կարելի գործ սկսել. դրա մեջ եր հենց կայանում հռոմայեցիների հին որացույցը:

Հռոմայեցիների նախնական կազմակերպությունը: Սկզբում Հռոմում իշխում եյին թագավորներ, ինչպես Հունաստանում Հոմերոսի ժամանակ: Նրանք խորհրդակցում եյին **սենատի** (այսինքն ծերունիների խորհրդի) հետ: Ավանդությունը պատմում ե, վոր ժողովուրդն արտաքսեց Տարկվինիուս Հըպարտ վերջին թագավորին նրա դաժան կառավարության պատճառով (թըվում ե, թե հռոմայեցիք այս պատմությունը հույներից են վերցրել, վորովհետև Տարկվինիուսի աքսորման տարին ել—510—զուգադիպում ե Հիպպիասին Աթենքից արտաքսելու տարվան): Թագավորներին փոխարինեցին ամեն տարի ընտրվող **յերկու կոնսուլները**: Կոնսուլների իշխանությունը մեծ եր: Նրանք զորքի հրամանատարներն եյին, հրահանգներ եյին հրատարակում, հանցավորներին մահվան կամ մարմնային պատժի եյին դատապարտում. դատավճիռն իսկույն ևեթ կատարում եյին նրանց ծառաները՝ լիկտորները, վորոնք իրենց ձեռքում պատրաստ ունեյին ճիպոտների կապոցի մեջ պահված տապարներ: Կոնսուլները զինվորական ծառայության նպատակների համար քաղաքացիներին բաժանում եյին վորոշ **դասակարգերի**:

Քաղաքացիները զինվում եյին իրենց հաշվին, ամեն մեկն իր կարողության համաձայն: Առաջին դասակարգի մեջ մտնում եյին հարուստները և ունևորները. նրանց ծառայությունը ձիով կամ ծանր սպառազինությամբ, ճակատամարտի մեջ առաջին շարքերում—ամենադժվար և ամենապատվավոր ծառայությունն եր համարվում: Ով հող չուներ, նա իր աղքատության պատճառով չեր ծառայում ռազմաշարքում, այլ գնում եր բանակի յետևից, վորպես յերաժիշտ կամ արհեստավոր: Յեթե քաղաքացին նկատված եր վորևե ամոթաբեր արարք անելիս, նրան դուրս եյին գցում զինվորական դասակարգից. այն ժամանակ նա տուգանք եր վճարում և ձայնից զրկվում եր զինվորական ժողովներում:

Ամենակարևոր գործերում, յերբ պետք եր պատերազմի խնդիր լուծել, կամ յերբ պետք եր կոնսուլներ ընտրել, ժողովի եյին հրավիրվում բոլոր քաղաքացի-զինվորները: Այդ ժողովը նման չեր հույն համայնական ժողովներին: Հավաքվում եյին զինվորական փողի ձայնով քաղաքից դուրս Մարսյան դաշտում, այսինքն զինվորական վարժությունների հրապարակում: Բլրի վրա պարզում եյին զինվորական դրոշը: Զինվորները զինված եյին գալիս և կանգնում եյին, ինչպես ռազմաշարքում, հարյուրյակներով—յուրաքանչյուր հարյուրյակը (**ցենտուրիա**) իր նշանով և իր հարյուրապետի գլխավորությամբ: Ճառեր և վեճեր այստեղ չեյին լինում: Կոնսուլը հարցնում եր, համաձայն են պատերազմել թե վոչ. ընտրություններ կատարելու դեպքում նա ինքն եր տալիս **կանդիդատների** (թեկնածուների), այսինքն այն մարդկանց անունները, վորոնց կարելի յեր ընտրել (կանդիդատ նշանակում ե սպիտակ շոր հագած մարդ, վորով նա աչքի յեր ընկնում մյուսների միջից): Սկզբում պատասխանում եյին բարձրագույն դասակարգերի, այսինքն հեծյալների և ծանր սպառազինված հետևակների հարյուրյակները. յեթե նրանք իրար մեջ համաձայն եյին, գործը վճռված եր համարվում. այն ժամանակ մնացած հարյուրյակների ձայնը չեյին հարցնում արդեն: Ամեն ինչ տեղի յեր ունենում, ինչպես զորահանդեսի ժամանակ, զինվորական կարգապահությամբ:

Սկզբում գործերը կառավարում եյին, ինչպես հնումը Հունաստանի մեջ, ազնվատոհմ, բազմընտանիք հարուստ մարդիկ՝ **պատրիցիուսները**. նրանց շրջապատում եյին ծառաներ, ճորտեր, արհեստավորներ և մանր առևտրականներ, վորոնք նրանց հովանավորության տակ եյին մտել (**կլիենտները**): Պատրիցիական տոհմերն իրենց յենթակա ժողովրդի հետ միասին շատ մեծ թիվ եյին կազմում: Որինակ, մի անգամ Ֆաբիուսների տոհմն իր պատասխանատվությամբ կռիվ սկսեց ետրուսկական Վեյ քաղաքի դեմ. կռվի մեջ ընկան բոլոր Ֆաբիուսները, թվով 306 հոգի, բացի մեկից, վոր կենդանի մնաց և յեղավ տոհմի շարունակողը: Պատրիցիուսների մեջ կային ուրիշ շրջանների ընիկներ, վորոնք Հռոմ եյին յեկած, հրապուրվելով հռոմեական համայնքի ուժից և հաջողություններից. այսպես լեռնային Սաբինք շրջանից, վոր Տիբեր գետի ակունքների վրա յե գտնվում, Հռոմ տեղափոխվեց Ապպիուս Կլավդիուսն իր ամբողջ տոհմով ու կլիենտներով: Պատրիցիական ընտանիքների գլուխները կազմում եյին սենատը, և միայն նրանց միջից կարող եյին ընտրվել կոնսուլներ, քուրմեր և ուրիշ պաշտոնական անձինք:

Հռոմին միացած ազատ մարդկանց մնացյալ մասսան կոչվում էր **պլեբեյներ**։ Նրանց մեծամասնությունը կազմում էին հողագործներն ու անասնապահները, լատինական և սաբինական գյուղաքաղաքների ու գյուղերի բնակիչները։ Պլեբեյները պատրիցիուսների հանդեպ աննպաստ պայմանների մեջ էին գտնվում։ Տոներին, յերբ բազար էր լինում, նրանք քաղաք էին գալիս գործիքներ, տնային պիտույքներ գնելու և իրենց հողագործական արդյունքները ծախելու համար։ Ծանր էր պատրիցիուսների հետ դատ ունենալը. պատրիցիուսները գործը տանում էին, իրենց հետ վորպես վկա դատարան բերելով բազմաթիվ ազգականներ և կլիենտներ. դյուրին չէր հասարակ մարդու համար, վոր անծանոթ էր ծեսերին ու աղոթքներին, սովորել յերդման խոսքերն այնպես, վոր կարողանար արտասանել այն առանց սխալի։ Առանձնապես պլեբեյները տուժում էին այն բանից, վոր պատրիցիուսները քուրմերի միջոցով կարգադրում էին համայնական ժողովների գործն իրենց ուզածի պես—քուրմերից էր կախված այնպիսի օրեր նշանակել, յերբ գյուղացիների համար դժվար էր քաղաք գալ. քուրմերը կարող էին հայտնել, թե այն մարդը, վորին իշխանավոր էին ուզում ընտրել, հաճելի չէ աստվածներին, և ընտրությունը բեկանվում էր։

Այդ պատճառով պլեբեյներն իրենց միջից ընտրել սկսեցին **տրիբուններ**, վորոնք դատարան էին գալիս պաշտպանելու պլեբեյներին, դառնում էին յերաշխավոր պարտապանների կամ այն պլեբեյների համար, վորոնց պատրաստվում էր լիկտորը ձերբակալել կոնսուլի հրամանով։ Տրիբունները Հռոմի մյուս պաշտոնակատար անձերից տարբերվում էին նրանով, վոր չէին յենթարկվում կոնսուլներին. Նրանք բոլոր պլեբեյների անունից հանձըն էին առնում համարձակորեն արտահայտելու ժողովրդի ցանկությունները։

Հռոմայեցիների պատերազմներն ու նրանց կազմակերպության փոփոխությունը 400—300 թթ. Ք. ծ. առաջ։ Հռոմից վոչ-հեռու Տիբեր գետի մյուս կողմում գտնվում էր էտրուսկական **Վեյք** քաղաքը, վոր հռոմայեցիների հինավուրց մրցակիցն էր։ Աթենական պետության անկման ժամանակներում հռոմայեցիք սկսեցին Վեյքի պաշարումը, վոր 10 տարի տևեց։ Այդ պատերազմի մասին հետո պատմում էին միայն ավանդություններ։ Հաղթությունը տարավ **դիկտատոր** (այսինքն միահեծան հրամանատարը, վոր ընտրվել էր յերկու կոնսուլների փոխարեն) Կամիլլուսը, վորովհետև նա հրաշալի կերպով մտավ Վեյք քաղաքի հովանավոր-աստվածուհու՝ Յունոնայի տաճարը և նրան իր կողմը գրավեց։ Վեյքն այրվեց. բնակիչներն ստրկության ծախվեցին, բայց Կամիլլուսն զգուշորեն Հռոմ փոխադրեց Յունոնայի արձանը, վորպեսզի իր հայրենիքին անցնի նրա որհնյալ ուժը։ Կամիլլուսն առաջինն էր, վոր հաղթական մուտք (**տրիումֆ**) գործեց Կապիտոլիումի վրա (ամրացած բլուր Հռոմի մեջ՝ նման Աթենքի ակրոպոլիսին) չորս սպիտակ ձիերով լծված կառքով։

Այդ հաջողությունից հետո Հռոմի գլխին ծանր դժբախտություն յեկավ։ Հյուսիսից, Ապենինյան լեռների այն կողմից ներս խուժեցին գալլերի բազմաքանակ հորդաները, ջարդեցին հռոմեական զորքերը և գրավեցին անպաշտպան Հռոմը։ Անձնատուր չեղավ միայն Կապիտոլիումը, սա-

կայն հռոմայեցիք ստիպված էին վճարել 1000 ֆունտ վոսկի, վորպես փրկանք։ Վորովհետև բարբարոսներն ի վիճակի չէին հաստատվելու ծովափի մոտ, հաջողվեց հետո նրանց կրկին քշել դեպի հյուսիս։ Գալլերի արշավանքն ամենից առաջ հարկադրեց հռոմայեցիներին քաղաքի շուրջը մի լայն պատ քաշել. Հռոմը դարձավ մի անմատչելի բերդ։ Հետզհետե նրանք վերականգնեցին իրենց իշխանությունը Թերակղզու միջին մասում։ Ալեքսանդրի արևելյան արշավանքի ժամանակներում սկսվեցին հռոմայեցիների համար ծանր **սամնիտական** պատերազմները։

Սամնիտները ռազմիկ լեռնցիներ էին, վոր ապրում էին լատիններից հարավ, Կամպանիայի կողքին։ Վորպես սքանչելի զինվորներ, նրանք ամեն տեղ ընդունվում էին մեծ հաճույքով. իրենց զորքի մեջ ծառայեցնելու համար սամնիտներին վարձում էին և կարթագենացիք, և Սիրակուզայի Դիոնիսիոսը։ Սամնիտները ձգտում էին գրավել Կամպանիայի **Կապուա** առևտրական մեծ քաղաքը, վոր գտնվում էր Նեապոլից վոչ-հեռու։ Սամնիտների վախից դրդված՝ կապուացիք դաշն կապեցին Հռոմի հետ. Իտալիայի յերկու խոշորագույն քաղաքները միացան մի համայնքի մեջ։ Սամնիտների դեմ Կամպանիայի համար մղվող կռվում հռոմայեցիք ստիպված էին խիստ լարել իրենց ուժերը։ Միքանի անգամ նրանք պարտություն կրեցին։ Մի անգամ սամնիտների զորավար Պոնցիուսը փակեց հռոմեական զորքը յերկու կոնսուլների հետ միասին Կավդինյան կիրճում. հռոմայեցիք անձնատուր յեղան և հարկադրվեցին **լծի տակից** անցնել, այսինքն կիսամերկ, ինչպես ստրուկները, կորացած՝ սողալով անցնել գետնի մեջ խրված նիզակների տակով։

Պատերազմը մղվում էր ամենամեծ կատաղությամբ։ Յերբ հռոմայեցիներին հաջողվեց հաղթել Պոնցիուսին և գերի վերցնել սամնիտական հերոսին, նրան շղթայակապ տարան հաղթողի կառքի յետևից և խեղդեցին։ Վճռական մեծ ճակատամարտից առաջ սամնիտները մի սարսափելի ծես կատարեցին. փակ վրանը մեկ-մեկ մտցնում էին զինվորներին և ստիպում նրանց անհաշտ արյունոտ կռվի յերդում տալ. ով վոր հրաժարվում էր յերդում տալ, տեղն ու տեղն սպանում էին, նրանց զոհ բերելով վրեժխնդրության աստվածներին։ Չնայած իրենց ամբողջ քաջության՝ սամնիտները, սակայն, բաժան-բաժան էին կռվում և չունեյին այնպիսի անմատչելի ամրացած մայրաքաղաք, ինչպես Հռոմն էր. այդ պատճառով Կամպանիան հռոմայեցիների ձեռքը մնաց, իսկ սամնիտները լեռները քշվեցին։

Յերկարատև ծանր պատերազմը ստիպեց Հռոմի կառավարիչներին բավականաչափ զիջումներ անել զորքին։ Նրանք ստիպված յեղան ռոճիկ նշանակել զինվորներին. բացի դրանից՝ հաջող արշավանքներից հետո, սկսեցին ավարը բաժանել նրանց մեջ։ Յուրաքանչյուր զինվորի բաժինը վորոշելու նպատակով սկսեցին մանրամասնորեն ցուցակագրել քաղաքացիներին. մի հատուկ բարձր պաշտոնյայի՝ **ցենզորին** հանձնեցին պետական գանձարանի պահպանությունը և պարգևների բաշխումը։ Հաղթվածներից խլում էին հողի մի մասը և բաժանում **վետերաններին**, այսինքն վաստակավոր զինվորներին։ Զորքը հասկանում էր, թե ինչպես են կառավարիչները գնահատում նրան։ Պլեբեյները շատ անգամներ պատրիցիուսներին զգալ

ավին իրենց նշանակությունը համայնքում: Իրենց հերթին պատրիցիուսներից անջատվում էին փառասեր մարդիկ, որոնք, հունական բռնապետների նման, աշխատում էին սիրաշահել ժողովուրդը և վնասել ազնվականությանը: Այսպես էր Ապպիուս Կլավդիուսը, որ 312 թ. ցենզոր դարձավ: Նա միացրեց Հռոմը Կապուայի հետ մի սքանչելի խճուղիով և Հռոմ անցկացրեց մի մեծ ջրմուղ: Պատրիցիուսներին ստորացնելու նպատակով Ապպիուս Կլավդիուսը սենատորների ցանկի մեջ մտցրեց նախկին ստրուկների զավակներ: Նրա սեփական նախկին ստրուկներից մեկը՝ Ֆլավիուսը, հայտնաբերեց ժողովրդին այն խորամանկ միջոցները, որոնց օգնությամբ քուրմերը փոխում էին, տոն օրերը ի վնաս պլեբեյների. Նույնպես նա ցուցադրեց Ֆորումի վրա դատարանական յերդումների բանաձևերը, որ պահում էին ժողովրդից պատրիցիուսները:

Պլեբեյների գլուխն անցան տրիբունները, որոնք ձգտում էին հասարակ ժողովրդի իրավունքները հավասարեցնել ազնվականության հետ: Ըստ ավանդության՝ պլեբեյները տասը տարի անընդհատ տրիբուն էին ընտրում Լիցինիուսին և Սեքստիուսին, որոնք յերդվել էին չգիջել, մինչև որ պատրիցիուսները թույլ կտան նրանց եւ կոնսուլ ընտրել. վերջապես Սեքստիուսը կոնսուլ դարձավ: Դրանից հետո տրիբուններն իրավունք ստացան նույնպես, որ պլեբեյները կարողանան քուրմերի պաշտոն եւ ստանձնել:

Տրիբունները մի նոր ուժ ստացան այժմ պետության մեջ: Նրանք սկսեցին հավաքել ժողովուրդն առանձին ժողովների, որոնց պլեբեյները մասնակցում էին ոչ թե ըստ զենքի տեսակի, այլ ըստ գյուղախմբերի (**տրիբների**). յուրաքանչյուր բաժանմունքի մեջ միասին ձայն էին տալիս իրար մոտիկից ճանաչող հարևանները, և այստեղ չկային հատուկ պատվավոր բաժանմունքներ, որոնց ձայնը կարող էր մյուսներին գերակշռել: Իշխանությունն ակամայից հարկադրված էր լինում նկատի առնել **պլեբիսցիտները**, այսինքն պլեբեյների ժողովների վորոշումները, որ տրիբունների միջոցով հայտնվում էին կոնսուլներին և սենատին:

Ավելին. տրիբուններին թույլ էին տալիս մտնել սենատ, ուր նրանք ժողովի մյուս անդամներից առանձին էին նստում: Յեթե տրիբունները գտնում էին, որ իշխանությունը ժողովրդի համար վնասակար այս կամ այն կարգադրությունն է արել, նրանք իրավունք ունեյին բոլոր գործերի վրա արգելք դնելու և նույնիսկ պետական գանձարանը կնքելու, մինչև որ սենատը կբեկաներ իր վորոշումը:

Աղքատ հետեվակ՝ զինված միայն քարերով:

Պլեբեյների մեջ առաջ յեկան իրենց նշանավոր, ազնվատոհմ մարդիկ: Այն պլեբեյները, որոնց հաջողվել էր բարձր պաշտոններ ունենալ, սենատոր էին դառնում պատրիցիուսների հետ հավասար կերպով. Նրանք իրենց շուրջն էին հավաքում իրենց ազգականներին ու կլիենտներին, և այդպիսով պլեբեյական նոր տոհմերը միացան պատրիցիական հին տոհմերին:

Հռոմայեցիք կարող էին այժմ ասել, որ նրանց մոտ բոլոր քաղաքացիներն էլ հավասար իրավունքներ ունեն, որ ամեն մարդ էլ կարող է ամեն դիրք գրավել: Պետությունը **հռոմայեցիների հանրապետություն** (**ռեսպուբլիկա**—հանրային գործ) էր կոչվում: Բայց նրանց իրավակարգը կարելի չէ ժողովրդավարություն անվանել: Համայնական ժողովներում քննություն և վեճեր չեյին լինում, քաղաքացիների միջից հռետորներ դուրս չեյին գալիս. միայն կոնսուլներն ու տրիբունները կարդում էին ժողովրդին իր[illegible] առաջարկները, իսկ ժողովականներն ասում էին «այո» կամ «ոչ»: ուխր

Իտալիայի նվաճումը: Սամնիտների վրա տարած հաղթանակից հետո Հռոմն ամենախոշոր ուժը դարձավ Իտալիայում: Իր ձեռքը վերցնելով արևմտյան ծովափի լավագույն մասը, հռոմայեցիք կտրեցին ծովի ճանապարհը Թերակղզու մյուս բոլոր փոքրիկ ժողովուրդների համար: Ընդհանուր վտանգը միացրեց բոլոր տուժողներին. ապստամբեցին սամնիտները, նրանց միացան էտրուսկները, ապա միացան Հռոմի վաղեմի դաշնակից սաբինները և վերջապես՝ գալլերը: Այդ դժվարին պատերազմը Հռոմի համար հաջողությամբ վերջացրեց Կուրիուս Դենտատուսը՝ իշխող տոհմերի շարքը մտած պլեբեյներից մեկը (290 թ.): Թերակղզու բոլոր ցեղերը, բացի հարավում գտնվող մի քանի հույն համայնքներից, Հռոմին յենթարկվեցին:

Հռոմայեցիք ինքնահատուկ կերպով կազմակերպեցին իրենց իշխանությունը: Հռոմեական համայնքին պատկանող հողը (**հռոմեական դաշտը**) բռնում էր Թերակղզու արևմտյան մասի տափարակներն ու ափերը, իսկ բացի դրանից նա տարածվում էր Թերակղզու լայնությամբ՝ Տիրրենյան ծովից դեպի Ադրիականն անցնող շերտով. հռոմեական տիրույթների այդ շերտը բաժանում էր հյուսիսային իտալացիներին հարավայիններից և ապահովում Հռոմի տիրապետությունը նրանց վրա: Հռոմեական դաշտի սահմաններում բոլոր ազատ մարդիկ **հռոմեական քաղաքացիներ** էին համարվում: Ոչ բոլոր քաղաքացիները հավասար իրավունքներ էին վայելում. Նրանք, որոնց ավելի ուշ էին ընդունել համայնքի մեջ, ինչպես, օրինակ, Կապուայի բնակիչները, չեյին կարող մասնակցել հռոմեական համայնական ժողովներին:

Իտալիայի բոլոր մյուս փոքրիկ ժողովուրդները **հռոմեական ժողովրդի դաշնակիցները** դարձան: Հռոմայեցիք նրանց ներքին գործերին չեյին խառնվում. դաշնակիցների քաղաքներն ու համայնքները կառավարվում էին իրենց հին սովորություններով, ընտրում էին հրամանատարներ և դատավորներ, ունեյին իրենց ծերերի խորհուրդները: Հռոմայեցիք նրանցից միայն զինվորական ծառայություն էին պահանջում, իրենց բանակին միացնելով նրանց զորախմբերը: Դաշնակիցներին արգելվում էր իրար հետ պայմանագրեր կապել. Նրանք պարտավոր էին ամեն մեկն առանձին միայն Հռոմի հետ գործ ունենալ: Հռոմեական կառավարության գլխավոր սկզբունքն արտահայտվում էր «բաժանիր և տիրիր» խոսքերի մեջ: Դաշնակիցներին հսկելու և յերկյուղի մեջ պահելու համար հռոմեացիք ամբողջ Իտալիայում հիմնեցին **զինվորական գաղութներ**. դրանք բերդեր էին, վո-

րոնց պահակազորքը լավ հողաբաժիններ էր ստանում. Հռոմից դեպի գաղութներն անց էին կացված ռազմական ճանապարհներ, վորոնցով արագորեն շարժվում էին զորքերը, փոխադրվում էր ռազմամթերք, գնում էր փոստը։ Այդ ճանապարհները մինչև այսօր էլ ճարտարապետական արվեստի հրաշք են համարվում. ճանապարհներն ըստ կարելույն ուղիղ շինելու համար՝ հռոմայեցիք կամուրջներ էին գցում կիրճերի վրայով, քարե լայն հիմքեր էին դնում ճահճային տեղերում, ահագին պատերով էին ամրացնում ճանապարհի կողքերը զառիվայրերի վրա, թուններ էին ճեղքում լեռների միջով։ Ինքը ճանապարհը, հաստատուն լինելու հ[illegible], շինվում էր պատի նման։ մոտ մի սաժեն խորություն ունեցող փոսի մեջ տաշված քարեր էին դարսում իրար վրա, իսկ վրան ծածկում էին մեծ սալաքարերով։

Գալլերի, սամնիտների և ուրիշ ժողովուրդների հետ ունեցած պատերազմներում հռոմայեցիք իրենց սեփական ռազմական արվեստը մշակեցին. յուրաքանչյուր հակառակորդից նրանք յուրացրին զենքի վորևե գործածություն կամ զենքի վորևե տեսակ։ Առանձնապես նշանավոր էր բանակատեղի շինելու նրանց սովորությունը, վոր նրանք ամրացնում էին փոսով, հողապատնեշով և պատի մեջ թաղած ծակերով։ Այսպիսի բանակատեղին զինվորներին տալիս էր անխորտակելի պաշտպանությունը, յերբ նրանք շրջապատված էին լինում թշնամուց։ Զինվորները պարտավորված էին իրենք կատարելու ճարտարապետության աշխատանքները, հող փորելը և այլն. այդ պատճառով պատերազմի գնալու ժամանակ նրանք վերցնում էին իրենց հետ, բացի զենքից, գործիքներ և բրեր։

Հարավում գտնվող անկախ հունական համայնքներից ամենաուժեղը հարուստ առևտրական **Տարենտոն** քաղաքն էր։ Մի անգամ տարենտացիք՝ նստած իրենց ծովի կողմից բաց թատրոնում՝ տեսան հռոմեական զինվորական նավատորմը, վոր գրգռիչ հանդգնությամբ ներս մտավ նավահանգիստը. անմիջապես նրանք նստեցին իրենց նավերը և խորտակեցին հռոմեական նավատորմը։ Բայց նրանք ուժ չունեյին ցամաքի վրա կռիվ մղելու Հռոմի դեմ և այդ պատճառով նրանք իրենց ծառայության կանչեցին Եպյուրոսի թագավոր Պյուրրոսին, վոր Ալեքսանդր Մակեդոնացու ազգականն էր (Եպյուրոսը գտնվում է Ադրիական ծովի մոտ Թեսսալիայից դեպի արևմուտք)։

Հռոմեական սպառազինված զինվոր։

Պյուրրոսն Իտալիա բերեց մակեդոնական փալանգան, թեսսալիական հեծելազորքը և 20 ռազմական փղերը։ Առաջին ճակատամարտում Պյուրրոսը հաղթություն տարավ հռոմեական **լեգեոնների** (կորպուսների) վրա. հռոմեական դաշնակիցներից միքանիսը Հռոմից անջատվեցին և նրան միացան։

Սակայն հռոմայեցիք այնքան համառ կերպով էին կռվում, վոր ինքը Պյուրրոսը նրանց հաշտություն առաջարկեց այն պայմանով, վոր Տարենտոնի

անկախությունն անձեռնմխելի մնա։ Նրա դեսպանը՝ հունական հռետոր Կինեասն իր ճառով գրավեց սենատը։ Բայց հաշտության դեմ թագավորի հետ հանկարծ ձայն բարձրացրեց հռչակավոր ցենզոր Ապպիուս Կլավդիուսը, այժմ կուրացած մի ծերունի. Նա ասաց, վոր յերբեք հռոմայեցիք համաձայնության չեն յեկել թշնամու հետ, քանի նա կանգնած է յեղել իրենց հողի վրա։ Այդ խոսքերի տպավորության տակ սենատը մերժողական պատասխան տվեց։ Այնուհետև Պյուրրոսի ձեռնարկն անհաջող գնաց։ Նա մտադրություն ունեցավ նվաճելու Սիցիլիան, բայց ջարդվեց այնտեղ կարթագենացիներից։ Մինչ այդ հռոմայեցիք յետ վերցրին իրենց կորցրած հողերն Իտալիայում։ Նրանց գլուխը կրկին անցավ հին փորձված զորավար Կուրիուս Դենտատուսը։ Հռոմայեցիք հետո պատմում էին, վոր Պյուրրոսն իբր թե փորձ արեց կաշառելու Կուրիուսին. սակայն թագավորական պատվիրակներն ապշած մնացին, յերբ մի խրճիթում օջախի առաջ տեսան անճոռնի պատմուճանով մի ծերունի, վոր նստած էր փայտե նստարանի վրա և իրեն շաղգամ էր յեփում ընթրիքի համար. տեսնելով նվերները, Կուրիուսն ասաց. «Ավելի լավ է, վոր յես կարողանամ իշխել հարուստների վրա, քան յես ինքս հարուստ լինեմ»։

Կուրիուսը ջարդեց Պյուրրոսին և ստիպեց նրան Հունաստան վերադառնալ։ Տարենտոնն անպաշտպան մնաց և անձնատուր յեղավ հռոմայեցիներին (272 թ.)։ Այժմ հռոմեական տիրապետությունը տարածվում էր ամբողջ թերակղզու վրա՝ սկսած Ապեննինյան լեռնաշղթայի հյուսիսային պտույտից մինչև Յոնիական ծովն ու Մեսսինյան նեղուցը, վոր բաժանում է Իտալիան Սիցիլիայից. հռոմայեցիք անմիջապես մոտեցան կարթագենական մեծ պետության տիրապետություններին։

VIII.

ՀՌՈՄԸ, ԿԱՐԹԱԳԵՆԸ ՅԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ.

Կարթագենական պետությունը։ Աֆրիկա գաղթած փյունիկեցիք պահպանեցին իրենց ցեղի զբաղմունքներն ու սովորությունները։ Նրանց առևտրական ճանապարհորդությունները ծավալվում էին Գիբրալտարի նեղուցից այն կողմը, հեռավոր յերկրներ, դեպի հյուսիս՝ Բրիտանիա, դեպի հարավ՝ Կանարյան կղզիներն ու Գվինեայի ափերը։ Աֆրիկայի ամբողջ հյուսիսային ծովափը, սկսած Հունական Կիրենայից մինչև Գիբրալտար (այժմյան Տրիպոլին, Տունիսը, Ալժիրը, Մարոկկոն) ծածկված էր փյունիկական գաղութներով։ Շատ փյունիկեցի գաղթականներ ամուսնանում էին բնիկ **լիվիացիների** հետ. բայց խառն ցեղի ժառանգների (**լիվա-փյունիկեցիների**) վրա նայում էին, վորպես օտար տեսակի մարդկանց վրա. նրանց չէյին տալիս պաշտոններ իրերի վարչության մեջ, և գործերի գլուխը կանգնած էին մնում մաքուր փյունիկական ծագում ունեցող վաճառականներն ու նավատերերը։

Փյունիկական տիրույթների կարևորագույն մասը կազմում էր այժմյան Տունիսը, վորը և կոչվում էր հնում **Աֆրիկա** (մինչդեռ ամբողջ մայր-ցա-

մաքի անունը **Լիվիա յեր**)։ Այստեղ Բագրադ գետի հացառատ հովտի ծայրին, խորը ծովային փակ ծոցի մոտ փռված եր հսկայական Կարթագենը, վոր հնության ամենամարդաշատ քաղաքն եր։ Կարթագենի իրավակարգը նման եր հռոմեականին. սակայն ազնվականությունն այստեղ ժողովրդական զանգվածի հանդեպ ավելի մեծ գերակշռություն ուներ, և մայրաքաղաքն ավելի ևս մեծ իշխանություն ուներ մյուս քաղաքների նկատմամբ։ Գերագույն պաշտոնը վարում եյին յուրաքանչյուր տարի ընտրվող **յերկու սուֆետները** (այս տիտղոսը նույնն ե նշանակում, ինչ վոր իսրայելական դատավորները Սամուելից ու Դավիթից առաջ)։ Բոլոր գործերը քննվում եյին յերեսուն ծերունիների և հարյուրի խորհրդի գաղտնի նիստերում։ Ամենակարևոր դեպքերում միայն ժողովի յեր հրավիրվում ամբողջ ժողովուրդը. բայց հարցնում եյին միայն մայրաքաղաքի ազգաբնակությունը։ Փյունիկական մյուս մեծ քաղաքների՝ Ուտիկայի, Հիպպոնի և այլոց բնակիչները ձայն չունեյին ընդհանուր գործերում և ամեն բանում Կարթագենին եյին յենթարկվում։ Ամբողջ առևտուրն ոտար յերկրների հետ մայրաքաղաքի միջոցով եր տեղի ունենում, և կարթագենացիք իրենց ձեռքում եյին պահում ամբողջ նավատորմը։

Բնիկ նստակյաց լիվիացիները, վոր հողագործությամբ եյին զբաղվում, պարտավոր եյին հետևակ զինվորներ տալ Կարթագենին։ Վաչկատուն **նումիդիացիները** (այժմյան բերբերները), վոր տափաստաններում եյին ապրում անապատի ծայրին, հեծելազորք եյին տալիս,—մի բան, վորի համար կարթագենացիք առատորեն վարձատրում եյին նրանց առաջնորդներին։ Կարթագենի դրամական միջոցները շատ մեծ եյին. արտասահման գնացող կամ յերկրի ներսում ծախվող յուրաքանչյուր ապրանքից մաքս եր վերցվում. բացի դրանից՝ լավ յեկամուտներ եյին տալիս որինակելի կալվածքները, վորոնք մշակում եյին հացի դաշտեր, պտղատու այգիներ, արմավի անտառներ։ Պետական հարուստ գանձարանը հնարավորություն եր տալիս Կարթագենին զինվորական ուժեր վարձել իբերներից (Սպանիայի ցեղերից), Սիցիլիա, Սարդինիա և Բալեարյան կղզիների բնակիչներից, ինչպես նաև հույներից։ Բանակի մեջ կարթագենացիք ծառայում եյին միայն վորպես սպաներ։ Քաղաքը կառավարող վաճառականությունը տհաճությամբ եր պատերազմներ սկսում. նա պատրաստ եր հեռավոր ռազմական ձեռնարկները թողնելու համարձակ զինվորների անձնական պատասխանատվությանը։

Կարթագենն զգալապես գերազանցում եր Հռոմին իր տիրույթների ընդարձակությամբ, ինչպես նաև դրամական միջոցների հարստությամբ. սակայն փյունիկեցիների պետությունն ավելի թույլ եր. նրա գլխավոր նեցուկն եյին վարձկան զինվորները, մեծ մասամբ այլազգիներ, վորոնք կռվում եյին խորթ գործի համար։

Առաջին պունիկական պատերազմն ու նրա հետևանքները։ Մինչև Տարենտոնի նվաճումը Հռոմը և Կարթագենը պահպանում եյին բարեկամական հարաբերություններ։ Յերկու պետություններից յուրաքանչյուրն իր շրջանով եր սահմանափակվում և մյուսի գործերին չեր խառնվում։ Հռոմը թույլ չեր տալիս, վոր մի ոտար ուժ հաստատվի Իտալիայում. Կարթագենը չեր հանդուրժում մրցակիցներ Միջերկրական ծովի արևմտյան մասում, և

կարթագենացիք խորտակում եյին ամեն մի նավ, վոր հանդիպում եր յերևալ Սարդինիայի մոտ կամ դեպի Մելկարտի սյուները տանող ճանապարհի վրա։ Յեկավ վայրկյանը, յերբ յերկու պետություններն իրար հանդիպեցին յերես առ յերես։

Կարթագենն արդեն վաղուց եր վոր պատերազմ եր մղում Սիրակուզայի հույների դեմ Սիցիլիա կղզուն տիրանալու համար, և հույներն սկսեցին թուլանալ աֆրիկացիների գրոհի տակ։ Սիրակուզայի բռնապետի նախկին վարձկաններից կազմված մի մեծ զորաբանակ, այսպես կոչված **մամերտացիք** (այսինքն պատերազմի աստծու՝ Մարսի զավակները), նահանջելով կարթագենացիների առաջ, գրավեց Մեսսանան (այժմյան Մեսսինան), վոր գտնվում ե Սիցիլիան Իտալիայից բաժանող նեղուցի մոտ հենց։ Յերբ այստեղ ել կարթագենացիք սկսեցին նրանց նեղը գցել, մամերտացիք, վոր մեծ մասամբ ծագումով իտալացի եյին, ոգնություն խնդրեցին Հռոմից։ Հռոմայեցիք մի շատ կարևոր քայլ պիտի վորոշեյին՝ դնել ոտքը ծովի այն կողմը։ Մինչ այդ բոլոր պատերազմները մղվում եյին ցամաքային ճանապարհների վրա, և պլեբեյները շատ քիչ եյին տրամադրված պատերազմ մղելու ծովի այն կողմը։ Նրանց վոգևորեցին նոր անլուր ավարի խոստումով։ Սկսեցին մի կռիվ, վորին վիճակված չեր վերջանալ, մինչև վոր ընդհարվող մեծ ուժերից մեկը գտավ իր կատարյալ կործանումը։ Յերեք մեծ պատերազմներին, վորոնք տևեցին 118 տարի (264—146 թվ. Ք. ծ. առաջ), հռոմայեցիք **պունիկական** անունը տվին (հռոմեական արտասանությամբ՝ փյունիկական—պունիկական)։

Դժվար չեր հռոմեական լեգեոնները նեղուցով Սիցիլիա փոխադրել. քաղաքների մեծ մասը նրանց ձեռքն անցավ։ Բայց քանի վոր կարթագենացիք կղզու ամեն մի անկյունում ծովի կողմից կարող եյին զորք դուրս բերել ափը, հռոմայեցիներին չհաջողվեց հիմնապես հաստատվել Սիցիլիայում։ Հռոմի ակամայից ստիպված յեղավ նոր ռազմանավեր շինել։ Հռոմայեցիք աշխատում եյին, սակայն, ծովային պատերազմն ել ցամաքային դարձնել. Նրանք



Հռոմեական ռազմանավի հին նկար։

մոտեցնում եյին իրենց նավերը թշնամու նավերին այնպես, վոր նրանց կողքերը դիպչում եյին իրար, և կռվում եյին տախտակամածների վրա։

Թե Հռոմը և թե Կարթագենը հսկայական կորուստներ ունեցան։ Հռոմայեցիների յերեք մեծ նավատորմերը խորտակում կրեցին փոթորկից։ Նախքան Աֆրիկայի ափը զորք դուրս բերելը, հռոմայեցիների փոխադրական նավատորմը ընդհարվեց կարթագենական նավատորմի հետ Եկնոմ հրվանդանի մոտ, Սիցիլիայի հարավային կողմում. յերկու կողմից ճակատամարտին մասնակցում եյին մոտ 700 նավեր։ Նավերը շատ խոշոր եյին, և թիավարները նստած եյին հինգհարկանի ձևով մի շարքը մյուսի վրա։ Նավերի վրա մարդիկ այնքան խիտ եյին տեղավորված, վոր նրանց խորտակման դեպքում սովորաբար խեղդվում եյին բոլոր նավի վրա գտնվողները։

Կոնսուլ Ռեգուլուսը վորոշեց մի համարձակ քայլ անել—զորքը Աֆրիկա փոխադրել և Կարթագենի վրա հարձակվել։ Շուտով պարզվեց, վոր հռոմեական կարգերը բնավ նպաստավոր չեն այդպիսի հեռավոր ձեռնարկի համար։ Իտալիայի սահմաններում կարճատև արշավանքների սովոր զինվորները չեյին կամենում Աֆրիկայում մնալ. հարկադրված յեղան զորքի կեսը տուն արձակել։ Ինքը կոնսուլը սենատին գրած իր նամակում գանգատվում եր, վոր նրա փոքրիկ կալվածքն Իտալիայում անտեր-անտիրական է մնացել և կատարյալ քայքայման վիճակի մեջ է. գործակատարը մեռել է, իսկ բատրակը հեռացել է, վերցնելով իր հետ գործիքները։ Աֆրիկայում շատ քիչ հռոմայեցիներ մնացին. նրանք էլ ջարդվեցին Կարթագենի՝ սպարտացի Քսանտիպպոսի հրամանատարության տակ կռվող վարձկան հույն զորքից, իսկ Ռեգուլուսը գերի ընկավ։

Քսանչորս տարի (264—241) փոփոխական հաջողությամբ. տևեց այդ ծանր պատերազմը Սիցիլիայի պատճառով։ Այդ պատերազմի վերջին կռվող զինվորները տակավին ծնված չեյին նրա սկզբին։ Յերկու կողմերն էլ պետական միջոցների սպառման պատճառով դադարեցին նավեր շինելուց։ Ի վերջո կարթագենացիների մոտ յերևան յեկավ մի տաղանդավոր զորավար Համիլկարը, վոր ստացել եր Բարկա (կայծակ) անունը։ Պանորմայի (այժմյան Պալերմոյի մոտ) գտնվող անմատչելի ժայռոտ փոքրիկ կղզու վրա ամրանալով, Համիլկարն այնտեղից դուրս եր գալիս իր թեթև ծովային նավերով և աշխատում եր վնասել հռոմայեցիներին Իտալիայի ափերն ավերելով. Համիլկարը, սակայն, փող չուներ վարձկաններին վճարելու։ Յերբ պատրաստվում եյին օգնություն և զենք հասցնել նրան Կարթագենից, Հռոմը մի վերջին ճիգ ևս արեց. մասնավոր միջոցներով, քաղաքացիների նպաստներով մի մեծ նավատորմ պատրաստեցին, և կոնսուլ Լուտացիուս Կատուլուսը վոչնչացրեց կարթագենացիների ուժանդակ նավատորմը։ Համիլկարն ստիպված յեղավ հաշտություն կնքել և Սիցիլիան հռոմայեցիների ձեռքը թողնել. կարթագենական վաճառականներն այլևս չեյին կամենում կռվել, վորովհետև պատերազմը քայքայում եր նրանց առևտուրը։

Հաշտությունը կնքելուց հետո Կարթագենն զգաց վարձկան զինվորության ամբողջ անձեռնտվությունը. Սիցիլիայից վերադարձող զինվորներն իրենց ռոճիկը պահանջեցին նախորդ տարիների ծառայության համար և, մերժում ստանալով, գնացին մայրաքաղաքի վրա։ Նրանց ապշեցրած պիտի

լինեյին վոսկե հարուստ զարդարանքները մեծ տաճարի գմբեթների վրա. լուրերին նայած, տաճարի մեջ գտնվում եր Կարթագենի աստծու արձանը, վոր 1000 տաղանդ ծանրություն ունեցող մաքուր վոսկուց եր շինված։ Վարձկաններն իրենց առաջնորդ ընտրեցին լիվիական գյուղացի Մաթոսին և Կամպանիայի բնակիչ Սպենդիուսին։ Համիլկարին դժվարությամբ հաջողվեց բաժանել ապստամբների մասսաները և ճնշել ապստամբությունը։ Վարձկանների դեմ յերեք տարի մղվող կռիվն այն հետևանքն ունեցավ, վոր Կարթագենը զրկվեց Սարդինիայից. հռոմայեցիք, առիթից օգտվելով, առանց պատերազմի գրավեցին կղզին։

Անդրծովյան մեծ պատերազմը ուժեղ դժգոհություն հարուցեց նաև Հռոմի գյուղացիների մեջ։ Նրանց առաջնորդը՝ Ֆլամինիուս տրիբունը բարձրաձայն հարձակվում եր ազնվականության վրա, վոր մեծ շահ եր ստանում Կարթագենի ձեռքից խլված ծովային առևտրից։ Ֆլամինիուսը պահանջում եր, վոր պատերազմը առաջվա պես ցամաքի վրա մղվի և լավ հողաբաժիններ ձեռք բերվեն չքավոր գյուղացիների համար։ Յերբ ժողովուրդը նրան կոնսուլ ընտրեց, նա ջարդեց գալլերին Պո գետի հովտում, գրավեց նրանց հողը գյուղացիներին բաժանելու համար և անցկացրեց հյուսիս տանող առաջին ռազմական ճանապարհը։ Ֆլամինիուսը «նոր մարդ» եր. պաշտոնավարելու և սենատում նստելու սովոր հին ընտանիքներն այդ անունը սալիս եյին այն մարդկանց, վորոնք նրանց չեյին պատկանում և իրենց սեփական ուժերով եյին դիրք գրավել։ Ֆլամինիուսի վրա ուժեղ հարձակումներ յեղան սենատում, բայց ժողովուրդը յեռանդուն կերպով պաշտպանից իր առաջնորդին և թույլ չտվեց, վոր նրան վնաս հասցնեն։

Յերկրորդ պատերազմը Կարթագենի հետ: Համիլկարը գործունեյության նոր ասպարեզ գտավ իր համար Սպանիայում։ Իր անձնական պատասխանատվությամբ նա նվաճեց Պիրենեյան թերակղզու կեսից ավելին և Միջերկրական ծովի ափին հիմնեց **Նոր Կարթագենը** (այժմյան Կարթագենան)։ Սպանիան դարձավ Բարկայի ընտանիքի մի տեսակ սեփական իշխանությունը։

Համիլկարի վորդին՝ Հաննիբալն սպանացիներից և աֆրիկական վարձկաններից մի մեծ զորք հավաքեց ու վարժեցրեց։ Նրա ծրագիրն եր՝ վրեժական հարված հասցնել Հռոմին ցամաքի կողմից։ Ավելի վտանգավոր թշնամի հռոմայեցիք չեն ունեցել վոչ դրանից առաջ, վոչ էլ հետո։ Հաննիբալն անսահման հնարագետ մարդ եր, գիտեր կառավարել իր կիսավայրենի մարդկանց, գիտեր արագորեն ուսումնասիրել թշնամուն և լավագույն կերպով օգտագործել նրա թուլությունները։ Նրա խորամանկության մասին հրաշքներ եյին պատմում, իբրև թե նա, շորերը փոխած, կեղծ մորուքով ներս եր մտնում թշնամու բանակը։ Նրա լրտեսներն ամեն տեղ եյին և նույնիսկ Հռոմի մեջ։

218 թ. Հաննիբալը հյուսիսային Իտալիա տարավ իր զորքը հեռավոր շրջապտույտ անող ճանապարհով Միջերկրական ծովի ափով, Սպանիայի, Պիրենեյի, հարավային Ֆրանսիայի, Ալպերի վրայով։ Լեռների միջով անցնելը շատ դժվար եր և ահագին կորուստների հետ եր կապված. ռազմական բոլոր փղերն ընկան Ալպերում։ Բայց Հաննիբալի յերևալը հյուսիսում մի

սարսափելի վտանգ էր Հռոմի համար։ Պո գետի հովտում նրա կողմն անցան գալլերը, վորոնք նոր էյին միայն նվաճված Ֆլամինիուսի ձեռքով. դուրս քշվեցին հռոմեական գյուղացիները, այդ յերկրի նոր բնակիչները։ Հաննիբալը ջարդեց մեկը մյուսի յետևից յերկու հռոմեական բանակներ։ Հռոմում ժողովուրդն իրարանցման մեջ ընկավ. ասում էյին, վոր սենատում նստած մեծատոհմ մարդիկ իրենց դանդաղկոտությամբ փչացնում են գործը. պետք է ամեն բան վերջացնել մի վճռական հարվածով։ Ժողովուրդը կոնսուլ ընտրեց իր սիրելի Ֆլամինիուսին։ Հաղթության ջերմ հավատով Ֆլամինիուսն ընդառաջ գնաց Հաննիբալին և ուժեղ դիրք բռնեց Ապեննինների բարձունքներում։ Բայց Հաննիբալը, պտույտ անելով, նրա թիկունքն անցավ. միքանի որ նա անցնում էր սարսափելի ճահիճների միջով. Նրա զինվորները քայլում էյին ջրի մեջ և կարող էյին հանգստանալ միայն սատկած ձիերի դիակների վրա. հանկարծ Ֆլամինիուսը տեսավ Հաննիբալին իր յետևում դեպի Հռոմ տանող ճանապարհի վրա։ Կոնսուլը յետ շարժվեց. առավոտը յերբ նրա բանակը յերկարաձգված շարքով արագորեն քայլում էր Տրազիմենյան լճի ափով, Հաննիբալի զինվորները գրոհ տվին մշուշով ծածկված բարձունքներից և կոտորեցին գրեթե բոլոր հռոմայեցիներին։ Ֆլամինիուսին սպանեց մի գալլ։

Հռոմ տանող ճանապարհը բաց էր։ Սենատն այժմ ամբողջ փրկությունը զգուշավորության մեջ էր տեսնում։ Դիկտատոր նշանակեցին հին ընտանիքից ծագող մի մարդու՝ Ֆաբիուսին։ Նա աշխատում էր խուսափել բացարձակ ճակատամարտներից, վորոնց մեջ Հաննիբալն անհաղթելի յեր, և դժվարացնել թշնամու համար պարենավորման գործը։ Կրկին ժողովուրդն սկսեց աղմկել Ֆաբիուսի դանդաղկոտության դեմ։ Կրկին զիջում արին, փոխեցին դիկտատորին. կոնսուլներից մեկն ընտրվեց ժողովրդական առաջնորդ Վարրոնը, մի մսագործի տղա։ Կոնսուլները Հաննիբալի հետ մի ճակատամարտ ունեցան **Կաննեյի** մոտ. այդ ճակատամարտը վերջացավ հռոմայեցիների կատարյալ պարտությամբ։ Հռոմը, թվում էր, պիտի կործանվեր։ Հաննիբալի կողմն անցան հարավային Իտալիայի հռոմեական դաշնակիցներն ու Իտալիայի յերկրորդ քաղաքը՝ Կապուան։ Սիցիլիան անջատվեց։

Հաննիբալի բոլոր հաջողությունները տեղի ունեցան առանց վորևէ ոգնության Կարթագենի կողմից։ Այն ինչ նրա զորքը շատ էր նվազել, և անկարելի յեր նույնիսկ մտածել Հռոմի վրա հարձակվելու մասին։ Հաննիբալին ոգնության մի հույս էր մնում տակավին, վոր Սպանիայից բերում էր նրա յեղբայր Հասդրուբալը։ Սակայն հռոմայեցիք չթողին, վոր նրանք միանան. Կլավդիուս Ներոն կոնսուլը, վոր իր զորքով կանգնած էր Հաննիբալի դեմ հարավային Իտալիայում, գիշեր ժամանակ աննկատելիորեն շարժվեց դեպի հյուսիս, անսպասելի կերպով հարձակվեց Հասդրուբալի վրա, ջարդեց նրան և, վերադառնալով, հրամայեց, վոր խրամատների այն կողմը Հաննիբալի մոտ գցեն նրա յեղբոր գլուխը։

Հաննիբալի դեմ արգելառիթ զորք թողնելով, հռոմայեցիք առաջ շարժվեցին Իտալիայի սահմաններից դուրս։ Յերիտասարդ Կոռնելիուս Սցիպիոնը վերցրեց Նոր Կարթագենը և գրավեց Սպանիան նրա ունեցած հանքերով և ուժեղ զինվորացու մարդկանց մեծ պաշարով։ Հռոմում ժողովուրդն սկսեց

հավատալ Սցիպիոնին, հանրապետության փրկիչ համարելով նրան. մասնավոր նվիրատվություններով նա մի նավատորմ պատրաստեց և Աֆրիկայում զորք իջեցրեց ափը։ Այստեղ նա իր կողմը գրավեց նումիդիացիներին և նրանցից կազմակերպեց հրաշալի հեծելազորք, վորից հռոմայեցիք զուրկ էյին։ Սցիպիոնը, վոր նման չեր հին հռոմայեցիներին, մեղմ էր իր հարաբերությունների մեջ, սնված էր հունական գիտությամբ, գիտեր մարդկանց իր կողմը գրավել։ Նա գիտեր նույնպես վարվել նոր յերկրում անծանոթ ցեղերի հետ։ Այժմ, ընդհակառակը, Կարթագենն էր, վոր ընկած էր հուսահատական վիճակի մեջ։ Հայրենասերները կամենում էյին փրկել քաղաքը, Հաննիբալին Իտալիայից կանչելով։ Բայց նրան տվին մեծ մասամբ նոր, անվարժ զորքեր։ Սցիպիոնը ջարդեց նրան Բագրադ գետի հովտում, Կարթագենից վոչ հեռու (202 թ.)։ Հռոմը թշնամուն թելադրեց ծանր պայմաններ— հանձնել ամբողջ ռազմանավատորմը այրելու համար, տալ բոլոր տիրույթները, բացի քաղաքի մոտ գտնված փոքրիկ շրջանից, վճարել 50 տարի շարունակ ահագին տուրք և ուրիշ պետությունների հետ հարաբերության մեջ չմտնել առանց Հռոմի գիտության և հավանության։ Մեծ հանդիսավորությամբ Իտալիա վերադարձավ Սցիպիոնը, վոր «Աֆրիկացի» մականունն ստացավ։

Հռոմեական հանրապետության հզորությունը 200 թ. հետո։ Կարթագենի ուժը կատարելապես վոչնչացված էր, և Հռոմի ձեռքն անցան նրա հարստություններն ու յեկամուտները, վոր ստացվում էյին Սպանիայում և Սիցիլիայում։ Հռոմեական հանրապետությունը դարձավ այն ժամանակվա աշխարհի ամենահզոր պետությունը։

Անխոնջ Հաննիբալն այժմ էլ, պարտությունից հետո յել դեռ փորձ էր անում վերականգնել Կարթագենը։ Հռոմայեցիներին հանգստացնելու նպատակով նա ուղարկում էր նրանց աֆրիկական հացի մեծ պաշարներ, իսկ միաժամանակ նա զինում էր Հռոմի դեմ Ֆիլիպպոս Մակեդոնացի և Անտիոք III Սյուրիացի թագավորներին։ Առաջին անգամն էր, վոր հռոմայեցիք զորք էյին ուղարկում դեպի արևելք։ Յերկարատև պունիկյան պատերազմից հոգնած ժողովուրդը յերկար ժամանակ չէր համաձայնվում նոր ձեռնարկին. տրիբուններն առարկում էյին լեգիոններ ուղարկելու դեմ դեպի Բալկանյան թերակղզին։ Հարցը վճռեց ամենահզոր Սցիպիոն Աֆրիկացու կարծիքը, վոր կոնսուլ ընտրել տվեց իր բարեկամ Կվինկցիուս Ֆլամինինուսին։ Հռոմայեցիք վարպետորեն բարեկամներ ձեռք բերին արևելքում հանձին Եգիպտական Պտղոմեոսների և Հունաստանի քաղաքների մեծ մասի։ Ֆլամինինուսը ջարդեց մակեդոնական փալանգան Թեսսալիայում բլուրների մեջ, վոր «Շան գլուխներ» են կոչվում. հռոմեական լեգիոնները, վոր վարպետորեն կռվել գիտեյին, ցրիվ շարքերով ու սուսերամարտի մեջ շատ ավելի դյուրաշարժ էյին, քան հունական զինվորները, վորոնք միայն խիտ շարքով էյին կարողանում կռվել։ Ապա Ֆլամինինուսը գնաց Ոլիմպիական խաղերին և հայտարարեց Հունաստանի ազատագրումը մակեդոնական լծից։ Միևնույն ժամանակ Հաննիբալը, վորին հռոմայեցիք հարկադրել էյին Կարթագենից փախչել, խորհուրդ էր տալիս Անտիոք թագավորին հարձակվելու Իտալիայի վրա։ Սյուրիական թագավորը, սակայն, կորցրեց թանգագին ժա-

մանակը, իսկ հռոմայեցիք ժամանակ ունեցան Բալկանյան թերակղզուց Հելլեսպոնտոսի վրայով Փոքր Ասիա փոխադրել իրենց զորքերը։ Այդ արշավանքին էլ մասնակցեց Սցիպիոն Աֆրիկացին, վորպես խորհրդատու ուղեկցելով իր յեղբորը՝ կոնսուլին։ Յերկու պարտված թագավորներն էլ մեծ տուգանք վճարեցին վոսկով և պարտավորվեցին չխառնվել Հունաստանի գործերին։ Հաննիբալը, ամեն տեղ հալածվելով հռոմայեցիներից, թույն ընդունեց (183 թ.)։

Ճիշտ նույնպիսի անհաջողություն ունեցավ Ֆիլիպպոսի վորդի Պերսեոսը, վոր փորձ արեց հույներին իր կողմը գրավել և խախտել տալ նրանց դաշնը Հռոմի հետ. Նրան ջարդեց Եմիլիուս Պավլուս կոնսուլը, կրկին Սցիպիոնների ընտանիքի բարեկամներից մեկը։ Այս անգամ վորոշվեց վոչնչացնել մակեդոնական թագավորությունը։ Մակեդոնիան բաժանեցին չորս թույլ շրջանների և փակեցին նրա հանքերը։ Հունաստանի հետ այս անգամ ավելի խիստ վարվեցին. հունական քաղաքներն ստիպված եյին Իտալիա ուղարկել միքանի հազար հարուստ քաղաքացիներ, վորպես պատանդներ։

Հռոմն իր կամքն եր թելադրում արևելյան իշխանավորներին և ժողովուրդներին։ Յերբ սյուրիական թագավոր Անտիոք Եպիֆանոսն իր բանակով մտավ Հռոմին դաշնակից Յեգիպտոս, հռոմեական սենատը պահանջեց, վոր նա անմիջապես յետ դառնա։ Յեգիպտոս յեկավ հռոմեական դեսպանությունը։ Սենատոր Պոպիլիուսը, չպատասխանելով Անտիոք թագավորի վողջույնին, լռելյայն հանձնեց նրան սենատի գրությունը։ Թագավորը միքիչ ժամանակ խնդրեց՝ հարցը իր մերձավորների հետ քննության առնելու համար։ Ավազի վրա, ուր կանգնած եր թագավորը, Պոպիլիուսն իր ձեռնափայտով մի շրջան քաշեց նրա շուրջը և ասաց. «Դու այս շրջանից դուրս չես գա, մինչև վոր պատասխան չտաս»։ Սյուրիական թագավորի դեմ ապստամբած հրեաները Հռոմ ուղարկեցին մի թանգագին վոսկե վահան և խնդրեցին նրա հովանավորությունը. սենատը նամակներ ուղարկեց այն ժամանակ հայտնի աշխարհի բոլոր իշխաններին, հրեաների պաշտպանությունը պահանջելով։

Հռոմեական անունը սարսափ եր ազդում Միջերկրական ծովի շուրջը գտնվող բոլոր յերկրներում. ասում եյին, թե ոտար յերկրում բավական է վոր մեկն անվանե իրեն հռոմեական քաղաքացի, և բոլորն էլ կսկսեն նրան հարգել և նրանից վախենալ. Հռոմը թույլ չի տա, վոր նրա քաղաքացիներից վորևե մեկի մազին անգամ ձեռք տան. չե վոր ամենուրեք կարող են յերևալ նրա սարսափելի լեգիոնները։

Մինչև Կարթագենի հետ ունեցած պատերազմը Իտալիան մի գյուղացիական յերկիր եր. հին հռոմեական սենատորներն ու կոնսուլներն իրենց հասկացողություններով և կենցաղով քիչ եյին տարբերվում գյուղացիներից. առևտուրը մեծ մասամբ ոտարերկրացիների ձեռքին եր. հռոմեական գանձարանում քիչ փող կար, տների ներքին կարգ ու սարքը աչքի յեր ընկնում իր պարզ և անպաճույճ բնավորությամբ։ Մեծ հաղթանակներից հետո Հռոմի և Իտալիայի ամբողջ կյանքը յենթարկվեց խոշոր փոփոխության։

Այժմ ամեն կողմից Հռոմում սկսեց հավաքվել մի հսկայական ավար՝ թանգագին իրեր, վոսկի և արծաթ դրամ։ Հռոմեական ժողովուրդն ունեցավ իր սեփական ծովային տիրույթները՝ Սիցիլիան, Սարդինիան, Կորսիկան,

Սպանիան։ Այդ յերկրները հարկ եյին վճարում հաճախ ապրանքներով. որինակ՝ արգավանդ Սիցիլիան հաց եր ուղարկում։ Իտալիայից դուրս գտնվող միքանի քաղաքներ միայն, վոր անձնատուր եյին յեղել հռոմայեցիներին, պահպանեցին իրենց անկախությունը։ Այն յերկրներին, ուր վոտք եյին կոխում հռոմեական զորքերը, Հռոմը մեծ մասամբ **պրովինցիա** անունն եր տալիս, այսինքն մի շրջան, վոր զինվորական հրամանատարության տակ է գտնվում. Պրովինցիան կառավարելու համար զինվորական հրամանատարի, **պրոկոնսուլի** պաշտոնով ուղարկում եյին նախկին հռոմեական կոնսուլներից մեկին։ Նա կառավարում եր միահեծանորեն։ Բնիկները պարտավոր եյին կերակրել նրա արքունիքն ու շքախումբը։ Նա կարող եր ճնշել նրանց մեծ տուրքերով։ Նրա դեմ վիճել շատ դժվար եր. քանի նա կառավարում եր պրովինցիան, նրա դեմ Հռոմում գանգատ չեյին ընդունում։

Հռոմեական կապալառուները։ Հռոմեական քաղաքացիներից և դաշնակիցներից պրովինցիայի բնակիչները տարբերվում եյին նրանով, վոր հարկ եյին վճարում, հարկատու եյին։ Ժամանակակից յեվրոպական պետություններում հարկերը հավաքում, հաշվում և ստուգում են կառավարությունից նշանակված պաշտոնյաները. դրա համար պետք է լինում շատ ծառայողներ պահել և ռոճիկներ վճարել նրանց։ Հռոմեական կառավարիչները չեյին ուզում իրենց վրա այլ և այլ հոգսեր և ծախսեր վերցնել հարկահանության համար։ Նրանք անում եյին այն, ինչ վոր անում է կալվածատերը, յերբ նա չի ուզում ինքը տնտեսությամբ զբաղվել. նրանք տալիս եյին կալվածքները կապալով։

Հրավիրվում եյին միքանի խոշոր արդյունաբերողներ, վորոնք միացնում եյին իրենց դրամագլուխը և մի ընկերություն եյին կազմում։ Պետական գանձարանից նրանք կապալով եյին վերցնում պրովինցիան. կանխավ վճարում եյին կապալագինը և իրավունք եյին ստանում հարկեր հավաքել պրովինցիայից իրենց համար շահավետ կերպով։ Նրանք կարծես գնում եյին ամբողջ շրջանը միանգամից և հետո մաս-մաս վորոշ շահով յետ եյին ստանում իրենց ծախսը, հավաքելով փողը քաղաքներից և գյուղերից։

Այդ դրամատերերը, **կապալառուները**, ինչպես նրանց անվանում եյին Հռոմում, արդեն իրենց կողմից վարձում եյին բազմաթիվ հարկահաններ, հաշվապահներ, գրագիրներ, բաց եյին անում գրասենյակներ, սարքում եյին պահեստատեղեր. Հռոմից, ուր նստած եյին լինում ընկերության դիրեկտորները (վարիչները), ուղարկվում եյին բազմաթիվ գործավարական նամակներ պրովինցիայի զանազան տեղերը, ինչպես և այդ տեղերից Հռոմ. այդ նպատակով կազմակերպված եր կանոնավոր փոստ, վոր նույնպես գտնվում եր այդ դրամատերերի ձեռքում։ Նրանց ծառայողները մեծ մասամբ ստրուկներ կամ ստրկությունից ազատված մարդիկ եյին։ Կապալառուները պետական գանձարանից կապալով վերցնում եյին նույնպես հանքեր, անտառներ, արոտատեղեր, աղահանքեր, մաքսահավաքումը նավահանգիստներում, հացի փոխադրությունը՝ մայրաքաղաք։

Ունեոր մարդիկ Հռոմում աշխատում եյին դրամատերերի ոգնությամբ նույնպես ոգուտ ստանալ պրովինցիաներից. ինչպես վոր մեզանում փողը պահ են տալիս բանկերում, այնպես էլ Հռոմում այն պահ եյին տալիս կա-

պալատուններին խնայողական կամ շահագիտական նպատակով. խնայողը վորոշ տոկոս էր ստանում իր պահ տված փողի համար։ Վորևէ ձեռնարկություն սկսելուց առաջ, որինակ, մի մեծ հանք մշակել սկսելուց առաջ բազմաթիվ մարդիկ իրենց դրամները կանխավ տալիս եյին գործը կազմակերպելու և կարգի գցելու համար. իրենց դրամի փոխարեն նրանք ձեռնարկության մեջ ստանում եյին մի բաժին, մի փայ կամ միքանի փայ. հաջողության դեպքում բոլոր փայատերերին վճարվում էր վաստակ՝ յուրաքանչյուրի մուծած դրամագլխի համապատասխան։ Հռոմում քաղաքացիներն սկսեցին վիճել և տաքանալ զանազան շահավետ հեռու յերկրներում գտնվող գործերի առիթով. Ֆորումի վրա, առևտրական մեծ հրապարակում բորսա կազմակերպվեց. սեղանների մոտ նստում եյին բանկատերերը, վորոնք գնում և ծախում եյին փայեր, փոխանակում եյին զանազան յերկրներից բերած դրամներ, պարտքով փող եյին տալիս։

Դրամատերերը քաղաքացիների մեջ բազմաթիվ հանձնարարուներ և պարտապաններ ունեյին. սենատում և համայնական ժողովներում դրամատերերը հեշտությամբ կարող եյին իրենց ձեռքը գցել վորևէ նոր արդյունավետ յերկիր։ Իրենց առևտրական մրցակիցներին հռոմեական կապալառուներն ու բանկիրները վոչնչացնում եյին անխնայորեն։ Ի հաճույս նրանց, Հաննիբալի հետ ունեցած պատերազմից 50 տարի անց, սենատը վորոշեց վերջ դնել Կարթագենի գոյությանը։

Կարթագենի յեվ Հունաստանի անկումը։ Կարթագենացիք միքանի անգամ իրենց գլուխն ազատեցին վերահաս դժբախտությունից, վճարելով փրկանք, կատարելով Հռոմի բոլոր պահանջները. Նրանք հանձնեցին նույնիսկ իրենց ամբողջ զինամթերքը։ Բայց յերբ Աֆրիկայում ափ դուրս յեկավ հռոմեական զորքը, և կարթագենացիք հրաման ստացան, վոր իրենք իրենց ձեռքով քանդեն իրենց քաղաքը և գաղթեն ծովից յերկու մղոն հեռու գտնվող մի վայր, այսինքն բոլորովին հրաժարվեն ծովային առևտրից, քաղաքում բոլորը խենթացան ցասումից։ Հուսահատության հասած՝ Կարթագենն արագորեն զինվեց։ Հռոմայեցիք իրենց առջև գտան բարձր պատեր չորսհարկանի աշտարակներով, այնքան ընդարձակ, վոր նրանց մեջ տեղավորվում եյին ախոռներ ամբողջ հեծելազորքի ու բազմաթիվ փղերի համար և զորանոցներ՝ մեծաքանակ զորքի համար։ **Յերրորդ պունիկական պատերազմը** իրոք Կարթագենի պաշարումն էր։ Յերեք տարի նա տևեց, և պետք էր լավագույն զորավարի՝ Սցիպիոն Եմիլիանուսի (Եմիլիուս Պավլուսի վորդին, վոր վորդեգրված էր Սցիպիոնների ընտանիքից) ամբողջ ռազմական արվեստը՝ Կարթագենը վերցնելու համար։ Հռոմայեցիք քանդեցին քաղաքը, հիմնահատակ անելով այն (146 թ.), իսկ նրա շրջանը դարձրին պրովինցիա **Աֆրիկա.** կարթագենական հարուստների հոյակապ կալվածքները հռոմեական սենատորների ձեռքն ընկան։

Կարթագենի տակ հռոմայեցիների հանդիպած դժվարություններից օգտվեցին մակեդոնացիք, ինչպես նաև **աքեական դաշնակցության** հույները (Աքեան գտնվում է Պելոպոնեսի հյուսիսում, Կորնթական ծովի մոտ) և անջատվեցին Հռոմից։ Բայց հռոմայեցիք շուտով ճնշեցին ապստամբությունը և այս անգամ վոչնչացրին Հունաստանի ազատությունը։ Անկախ

թողնվեցին միայն Աթենքն ու Սպարտան, վորոնք թույլ և անվտանգ եյին Հռոմի համար. Մնացած Հունաստանը հռոմեական պրովինցիա դարձավ։ Հռոմայեցիք քանդեցին աքեական դաշնակցության մայրաքաղաքը՝ Կորնթոսը (նույն տարին, յերբ Կարթագենը), բնակիչներին ստրկության ծախեցին, հարստությունները, իմիջի այլոց հունական արվեստի բազմաթիվ արտադրությունները, տարան Իտալիա։ Ադրիատիկի ափին գտնվող Դիրրաքիից մինչև Եգեյան ծովի ափին գտնվող Սալոնիկը, Բալկանյան թերակղզու լայնությամբ կտրելով լեռներն ու հովիտները, հռոմայեցիք շինեցին մի ռազմական ճանապարհ, վորպեսզի արագ ու անարգել կերպով կարողանան դեպի արևելք փոխադրել իրենց լեգիոնները։

Առանց պատերազմի Հռոմն ստացավ **Պերգամի** թագավորությունը, այսինքն Փոքր Ասիայի արևմտյան մասը Եգեյանի ափին գտնվող հարուստ հունական քաղաքներով, վորոնք մի ժամանակ Աթենական պետության եյին պատկանում։ Պերգամի թագավոր Ատտալն ակամայից ահարկու Հռոմի դաշնակիցն էր. ստիպված լինելով մեծ տուրք վճարել, նա պարտքերի մեջ խրվեց հռոմեական բանկատերերի մոտ, և նրան ուրիշ բան չէր մնում, յեթե վոչ կտակել իր ամբողջ յերկիրն ու բոլոր հարստություններն իր պարտատիրոջը։ Թագավորի մահից հետո Պերգամ (վոր պրովինցիա **Ասիա** դարձավ) յեկան հռոմեական կապալառուները. սենատը նրանց ձեռքը տվեց բոլոր հարկերի գանձումը, և նրանք լիովին յետ ստացան իրենց տված պարտքը, ստրկացնելով յերկրի աշխատասեր և բարեկեցիկ ազգաբնակությունը։

Հույն ժողովուրդը, վոր ընդարձակորեն տարածված էր ամբողջ արևելքում, առանց մեծ դիմադրության զիջեց գերիշխանությունը հռոմայեցիներին։ Հունաստանը դատարկվեց ռազմիկ յերիտասարդների արևելք գնալու պատճառով։ Նրա քաղաքներում մնացին սակավաթիվ մարդիկ, վորոնք պատրաստ եյին պաշտպանել իրենց հայրենիքի անկախությունն ու ժողովրդավարությունը։ Ծաղող աշխատանքի ներկայացուցիչները՝ արդյունաբերողները, արհեստավորները, գիտնականները, արվեստագետները, դասատուները համաձայն եյին յենթարկվելու ամեն մի իշխանավորի. Նրանցից շատերը Հռոմ գնացին գործունեության նոր ասպարեզ գտնելու հույսով մի բարբարոս ժողովրդի մեջ, վոր թարմ և սովորելու ընդունակ էր թվում նրանց։ Հռոմի ապագային հավատացող այդպիսի հույներից մեկն էր Պոլիբիոսը, վոր Եմիլիուս Պավլուսի հրամանով Իտալիա յեր բերված իբրև 1000 աքեական պատանդներից։ Պոլիբիոսին հաջողվեց Եմիլիուս Պավլուսի տան մեջ մտերմանալ նրա վորդու՝ Կարթագենի ապագա նվաճողի հետ։ Հետո, Կարթագենի պաշարման ժամանակ, նա մի ուրիշ հույնի՝ ստոյիկյան Պանետիոսի հետ հանձնարարություն ստացավ Սցիպիոնից ուսումնասիրելու ամբողջ աֆրիկական ծովափը մինչև Գիբրալթար։ Պատրաստելով մի մեծ շարադրություն պունիկական պատերազմների մասին, Պոլիբիոսը միքանի ճանապարհորդություն ևս կատարեց արևմուտքի յերկրներում, ուր կռիվներ եյին տեղի ունենում հռոմայեցիների և կարթագենացիների միջև։ Իր գրքում նա նկարագրում է հռոմեական պետության արագ, ապշեցուցիչ աճումը. հռոմայեցիների հաջողությանը, նրա կարծիքով, նպաստեց նրանց յերևելի ռազմական կազմակերպությունը։ Պոլիբիոսը գովաբանում է նույնպես այն

բանի վրա, վոր Հռոմում ազնվականության և ժողովրդի միջև կռիվ չկա, ինչպես այդ տեղի յեր ունենում հունական քաղաքներում. սենատն ու պաշտոնական անձինք գիտեն և կառավարել ժողովուրդը, և սիրաշահել նրան:

Յերևելիները (Նոբիլները): 130 թ. հռոմեական իշխանության տակ եյին գտնվում Յեվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի բոլոր թերակղզիները, վորոնք Միջերկրական ծովն են դուրս գալիս: Բացի Իտալիայից, վորի քաղաքները պահպանում եյին իրենց անկախ վարչությունը, այդ բոլոր յերկրամասերը պրովինցիաներ եյին, կամ՝ ուրիշ խոսքով՝ կազմում եյին **Հռոմի կայսրությունը**, այսինքն նրանք կառավարվում եյին հռոմեական փոխարքաների միջոցով պատերազմական ձևով:

Հռոմեական ազնվականության այն ընտանիքները, վորոնց միջից դուրս եյին գալիս հեռավոր արշավանքների հրամանատարներն ու պրովինցիաների փոխարքաները, մեծ ուժ և հարստություն ձեռք բերին: Միևնույն ժամանակ փոխվեց նրանց ծառայության բնույթը: Նախկին պատերազմներում, վոր մղվում եյին Իտալիայում, զորահրամանատարներից գլխավորապես տոկունություն և բարեխղճություն եր պահանջվում. պատերազմում գործադրում եյին հնավանդ և միակերպ յեղանակներ ու կարգեր, վորովհետև հակառակորդները քչով եյին տարբերվում հռոմայեցիներից: Այդպես չեր այժմ, յերբ սկսվեցին ծովային պատերազմները, յերբ լեգիոններն Սպանիա, Աֆրիկա, Հունաստան, Ասիա եյին ուղարկվում կռվելու զանազան սովորություն և բնավորություն ունեցող ժողովուրդների դեմ: Հրամանատարը պետք է ցուցահաներ մեծ ճարպկություն և օտար մարդկանց հետ վարվելու մեծ հմտություն. նա հարկադրված եր լինում արագորեն սովորել նոր տեղերը, հնարել կամ ուրիշներից յուրացնել ռազմական նոր ձևեր:

Այդպիսի մարդկանց եյին հանձնարարում հռոմեացիք պատերազմից հետո կարգի բերել նվաճված պրովինցիան և կառավարել այն սկզբնական շրջանում: Այդ փոխարքաներն զգում եյին իրենց վորպես թագավորներ նվաճված բնակիչների հանդեպ. նրանք արձակում եյին հրամաններ, նրանց ձեռքով եյին անցնում ավարի և հարկի ահագին գումարներ: Զորքը հայտնում եր նրանց իր հավատարմությունը, յերբեմն զինվորներն իրենց զորավարին բարձրաձայն **իմպերատոր**, կայսր եյին հայտարարում. դա հաղթողի պատվավոր տիտղոսն եր:

Յերբ Հռոմ եր վերադառնում հաղթողը, նրան հանդիսավոր ընդունելություն, **տրիումֆ** եյին սարքում: Կայսրն իր զինվորների ուղեկցությամբ, վորոնք հաղթական յերգեր եյին յերգում, անցնում եր ամբողջ քաղաքի միջով՝ նստած իր զարդարված և կլոր աշտարակի տեսք ունեցող կառքում, հագին՝ վառ-կարմիր պատմուճան վոսկե բոլորքով, գլխին՝ դափնե պսակ և ձեռքերին՝ ապարանջան: Նրա գլխի վերևը մի ստրուկ բռնած ուներ թանկագին քարերով ծածկված վոսկե թագ և կրկնում եր. «Յետ նայիր», այսինքն մի հպարտանա: Առջևից տանում եյին նրա ավարը՝ վոսկի և արծաթ, հազվագյուտ իրեր, չտեսնված բույսեր և կենդանիներ, տանում եյին շղթայակապ գերիներ և նրանց թվում յերբեմն նաև պարտված թագավորներ. տանում եյին մեծ պատկերներ, վորոնց վրա նկարված եյին լինում նրա տարած հաղթությունները, նրա վերցրած բերդերը, նրա նվաճած լեռները,

դետերը, ծովերը, քաղաքները: Մակեդոնիայի հաղթողը՝ Եմիլիուս Պավլուսը իր ավարը տանում եր յերեք որ շարունակ. առաջին որը 250 ահագին կառքերի վրա անցան հույներից վերցված արձաններն ու պատկերները. յերկրորդ որը յերեցավ զենքի մի ամբողջ արսենալ և միքանի հազար մարդ իրենց ուսերի վրա տանում եյին արծաթե դրամով լի ամաններ. յերրորդ որը տանում եյին պարտված թագավորի վոսկին դրամով, վոսկե ամանեղեն և այլն: Բոլոր փողոցներում կանգնած եր ժողովուրդը, վոր հագած եր տոնական սպիտակ պատմուճաններ: Թափորը դիմում եր դեպի **Կապիտոլիում**, Հռոմի ներսում գտնվող հին բերդը, Յուպիտերի տաճարը, ուր աղոթում եյին աստծուն և նվիրաբերում եյին լավագույն իրերը:

Նախկին զորավարը Հռոմում կարևոր դիրք եր պահպանում. հաճախ նրա ազնվության յերկրորդ անգամ եյին դիմում: Սցիպիոնը, Հաննիբալին հաղթելուց հետո, հեշտությամբ ձեռք բերեց պաշտոններ իր մերձավոր ընկերների և ազգականների համար,— Կվինկցիուս Ֆլամինինուսի համար Մակեդոնական պատերազմի ժամանակ և իր յեղբոր համար Անտիոքի դեմ մղվող պատերազմի ժամանակ: Եմիլիուս Պավլուսը նույնպես մոտ եր Սցիպիոն Ավագին. Եմիլիուսի վորդին, իր հոր մահից հետո, վորդեգրվեց Սցիպիոնների ընտանիքից և ստացավ նրա անունը (այդ Սցիպիոն Եմիլիանուսը կոչվում է նաև Սցիպիոն Աֆրիկացի կրտսեր): Վաստակավոր մարդկանց ընտանիքներն ու տոհմերը Հռոմում՝ Կլավդիուսները, Կորնելիուսները, Ֆաբիուսները, Եմիլիուսները, Կվինկցիուսները և այլն սկսեցին նոբիլներ (այսինքն յերևելիներ, նշանավորներ) կոչվել:

Հռոմայեցին վերարկուով (տոգայով):

Յերևելիները Հռոմում մի առանձնահատուկ իրավունք ունեյին. յերևելիի տանը պահպանվում եյին մեղրամոմից շինված դիմակներ, վոր պաշտոնավարած բոլոր նախնիքների դեմքերից եյին հանված. դիմակները դրվում եյին գլխավոր դահլիճում պահարանների մեջ պատերի յերկարությամբ, իսկ նրանց միջև պատի վրա նկարվում եյին գծեր, վորոնք միացնում եյին նրանց. կազմելով մի մեծ տոհմաբանական ծառ. ամեն մի դիմակի վրա մի մակագրություն կար, վոր պատմում եր մեռյալի քաջագործությունների և շքանշանների մասին. յեթե յերևելիի տոհմի մեջ կային կայսրներ, այն ժամանակ ի պատիվ նրանց տան մեջ արձաններ եյին դրվում: Տոն որերին բացվում եյին պահարանները, և դիմակները դափնիներով եյին պսակվում:

Յերբ յերևելին մեռնում եր, նրա թաղման ժամանակ ժողովրդին ցույց եյին տալիս տոհմը իր ամբողջ փայլով. դագաղի առաջից կառքերի մեջ նստած գնում եյին մարդիկ, վորոնք հանգուցյալի նախնիքների դիմակներն

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ 10.

էին դրած լինում և հին կոնսուլական և հանդիսավոր շորեր հագած լինում:
Ֆորումի վրա այդ հուղարկավորությունը կանգ էր առնում. Ննջեցյալին
բարձրացնում էին պատգամբակի վրա. նախնիքներին ներկայացնող դերա-
սանները նստում էին բազկաթոռների վրա, և ազգականներից մեկն ար-
տասանում էր մի ներբողական ճառ՝ նվիրված հանգուցյալին և նշանավոր
տոհմի բոլոր անդամներին, վորոնք նրա շուրջը կարծես հարություն առած
լինեյին:

Յերևելիները մեծ թիվ էին կազմում **սենատում**: Սենատում ժողով-
վում էր սկզբում 300, հետո 600 մարդ: Կոնսուլը հայտնում էր քննության
առնվելիք խնդիրը և հրավիրում էր սենատորներին, վոր կարգով իրենց
կարծիքը հայտնեն: Մեկը մյուսի յետևից նրանք վեր էին կենում, և ով
վոր կարող էր, մանրամասնորեն բացատրում էր իր հայացքը. սակայն խո-
սում էին միայն նրանք, վորոնք յերբևէ պաշտոնավարած էին կամ, ինչ-
պես հռոմայեցիք էին ասում, աթոռ էին ունեցել կոնսուլները, դատա-
վորները և ուրիշ պաշտոնյաներ ժողովրդի առջև նստում էին բազկաթոռի
վրա, վոր ծածկված էր լինում փղոսկրով): Մնացածները լռելյայն միանում
էին խոսողներին: Իմանալու համար, թե վորի կողմն է մեծամասնությունը,
կոնսուլն առաջարկում էր իրարից բաժանվել. աջ էին նստում այն ժամա-
նակ վորոշ կարծիքի կողմնակից սենատորները, իսկ ձախ՝ նրանք, վորոնք
հակառակ կարծիք ունեյին:

Յերևելիներն իրար մեջ հերթ էին սահմանում պրովինցիաները կա-
ռավարելու համար: Պրովինցիաներից նրանք անհագին հարստություններ
էին բերում: Բայց փոխարքա դառնալու համար պետք էր նախորոք պաշ-
տոնավարած լինել Հռոմում վորպես կոնսուլ կամ դատավոր (**պրետոր**), իսկ
այդ պաշտոնյաներն ընտրվում էին ժողովրդից: Յերևելին բոլոր միջոցնե-
րով աշխատում էր ժողովրդի համակրանքը գրավել. սարքում էր ընդհանուր
մեծ ճաշկերույթներ փողոցներում քաղաքի զանազան մասերում, զվարճա-
ցնում էր ժողովուրդը թատրոնական և կրկեսային տեսարաններով, հաճախ
հատուկ գանձապահների միջոցով ուղղակի փող էր բաժանում հարյուրավոր
և հազարավոր մարդկանց: Ագահի յեղանակով յերևելին ասես ապագայի
համար գնում էր մի արդյունաբեր պրովինցիա, իսկ յերբեմն հարստության
սպասելով, նա բոլորովին էր սնանկանում: Յերևելին իր համար անարժան
էր համարում անձամբ զբաղվել առևտրով, ծովագնացությամբ, բայց նա
սովորաբար իր դրամագլուխը տալիս էր ստրուկներին կամ ստրկությունից
ազատվածներին. սրանք ձեռնարկում էին մի վորևէ գործի՝ խանութ էին
բացում, տոկոսով պարտք էին տալիս, ծովով ապրանք բերում. վաստակի
խոշոր մասը հանձնվում էր տիրոջը:

Բազմաթիվ մարդիկ յերևելիների մոտ աշխատանք, նպաստ կամ վո-
ղորմություն էին փնտրում. ծառաների մի ամբողջ ամբոխ լցնում էր յե-
րևելիի մեծ տունը. նա բազմաթիվ ավելորդ ստրուկներ էր պահում շքե-
ղության, փայլի համար. մեկը բաց էր անում դուռը, մյուսը հայտնում էր,
թե ինչ կերակուր են տալիս ճաշին, յերրորդը ծաղրածուի դեր էր կատա-
րում և այլն: Նրանց թիվը տան մեջ լինում էր միքանի հարյուր: Յերևե-
լիի նախասենյակում և նրա դրսի դռան առջև սպասում էին կլիենտները:

Յերբ նա դուրս էր գալիս, նրան շնորհավորում էին, նրանից հանձնարա-
րություններ էին խնդրում: Նա հաճախ չէր էլ ճանաչում իր ամբողջ շքա-
խումբը. մի հատուկ ստրուկ հայտնում էր նրան յեկողների անունները:
Յերբեմն նրանց բաժանում էին դրամ, հին պատմուճաններ, կերակրում
էին տիրոջ սեղանից և այլն:

Մեծ կալվածները յեվ ստրուկները: Յերևելին պարծանք էր համարում
ըստ կարելույն շատ հող ունենալը. հաճախ նա գնում էր սնանկացած
գյուղացիների կամ մանր կալվածատերերի հողերը: Կազմվում էր մի ահա-
գին կալվածք միքանի հազար դեսիատին տարածությամբ:

Յերբեմն այդպիսի կալվածքի մեջ տնտեսություն չկար. տերը շինում
էր իր համար մի շքեղ ամառանոց, թողնում էր մի մեծ տարածություն
պարտեզի, վորսորդության համար, կամ հողը մշակելու փոխարեն նա թող-
նում էր անհագին տարածություններ, վորպես արոտատեղի. մեծ ամայի
տարածությունների վրա, ուր առաջ մարդաշատ գյուղեր կային, մանավանդ
Իտալիայի հարավում, սկսեցին թափառել մեծաքանակ հոտեր, իսկ նրանց
հսկում էին կիսավայրենի ստրուկ-հովիվներ, վորոնք զինված էին լինում
գազանների հարձակման դեմ. այդ հովիվները հաճախ ավազակներ էին
դառնում և հարձակվում էին անցորդների վրա: Շատ հողեր այսպես ա-
պարդյուն կերպով կորչում էին: Բայց յերևելիներից վոմանք իրենց կալ-
վածում պահում էին ընդարձակ տնտեսություն—տնկում էին խաղող և
ձիթապտուղ, պահում էին հավանոց, ձկանոց, ծաղկանոց և այլն: Ազատ
մարդկանց նրանք աշխատում էին չվերցնել իրենց մոտ աշխատանքի,
վորովհետև պետք էր նրանց վճարել. մինչդեռ նրանք փնտրում էին աժե-
նաժան մշակներ, ստրուկներ, վորոնց պետք էր լինում միայն կերակրել
և մի անկյուն տեղ տալ քնելու:

Ստրուկներին կարելի յեր այժմ գնել մեծ քանակությամբ. յուրաքան-
չյուր պատերազմ վերջանում էր բազմաթիվ ստրուկների վաճառքով. բացի
դրանից՝ Միջերկրական ծովում առաջ յեկավ մի նոր զբաղմունք—ծովային
ավազակները մարդ էին փախցնում ծովափնյա գյուղերից: Այդ բոլոր գե-
րիներին, տաժանակիր աշխատանքների դատապարտվածներին կամ գողաց-
ված մարդկանց խմբերով բերում էին շուկաները. Դելոս կղզու վրա, ուր
գտնվում էր այդպիսի շուկաներից մեկը, մի օրվա ընթացքում ափ էին
դուրս բերում, ծախում և յերեկոյան դեմ ուրիշ նավեր էին նստեցնում
զանազան յերկրներ տանելու համար մինչև 10,000 գերիներ:

Հռոմայեցիք, վոր մի խստաբարո ժողովուրդ էին, ավելի դաժան էին
վարվում ստրուկների հետ, քան հույները: Պորցիուս Կատոնը, այդ գործ-
նական հռոմայեցի կալվածատերը, ասում էր, վոր ստրուկին պետք է շատ
ջահել ժամանակը գնել, վորպեսզի նա եժան նստի, և կարելի լինի նրան
կրթել իր ձեռքի տակ. յերբ նա կսկսի պառավել, պետք է նրան գլխից ռադ
անել, ծախել նրան, քանի նա տակավին բեռ չի դարձել: Մի ուրիշ խոր-
հուրդ էլ տալիս էին—ստիպել ստրուկին աշխատել մինչև այն
աստիճան, վոր նա վոչ մի բանի մասին չկարողանա մտածել, բացի ուտե-
լուց և քնելուց: Ստրուկը չէ՞ վոր մարդ էլ չէ, նա տնտեսական գործիք է:
կա անձայն գործիք, օրինակ, գութանը, կա կիսաձայն գործիք՝ տավարը,
կա ձայնավոր գործիք. դա ստրուկն է:

Մեծ կալվածներում (վիլլաներում) ստրուկներին սովորաբար թույլ չէին տալիս ընտանիք ունենալ. նրանք ապրում էին կազարմաներում (հանրակացարաններում): Վորևէ հանցանք գործողներին շղթայում էին և բանտ նստեցնում, ուր անկարելի յէր հատակից ձեռքով հասնել պատի մեջ յեղած նեղ պատուհաններին: Ստրուկներին աշխատանքի էին դուրս բերում խմբերով, հաճախ շղթայակապ. առջևից գընում էր տանապետը մտրակը կամ սրածայր գավազանը ձեռքին՝ ծույլերին քշելու համար: Նրանք մի տեղ էին դարսում վրայի հագուստները, վորոնց հսկում էր մի հատուկ պահապան: Տերերն իրենց դաժան վարվեցողությունը նրանով էին արդարացնում, վոր նրանց շուրջը ստրուկների անհագին մասսա կա, և վոր ստրուկներն օտար, այլակրոն, այլազգի մարդիկ են. ապրում ես՝ կարծես թշնամիներով շրջապատված. այլ կերպ կարելի չե պահել նրանց յերկյուղի մեջ, յեթե վոչ անողոք դաժանությամբ: Հազվադեպ չէին տերերի սպանության դեպքերն ստրուկների կողմից: Այդ պատճառով յերևելիները սենատում ստրուկներին ահաբեկելու նպատակով մի հատուկ օրենք հրատարակեցին. այն դեպքում, յերբ տերն սպանված գտնվի իր տան մեջ կամ ճանապարհորդության ժամանակ, տանջանքի և գլխատման կդատապարտվին տան մեջ ապրող կամ սպանվածի հետ ճանապարհին յեղած բոլոր ստրուկները, թեկուզ նրանք միքանի տասնյակ կամ հարյուր մարդ լինեն:

Ստրուկ սպասուհի:

Ստրուկների թիվը մեծ կալվածում կարող էր միքանի հազարի հասնել: Տերն աշխատում էր իր ստրուկներին կտրված պահել մնացյալ աշխարհից. նա չէր թողնում, վոր իր գավիթն օտար ստրուկներ մտնեն. ստրուկներն իրենք պետք է իրենց համար հագուստ կարեյին, ամաններ շինեյին (ստրուկների մեծ արհեստանոցը կալվածի մեջ կոչվում էր Ֆաբրիկա): Գավթի մուտքի մոտ նստած էր լինում դռնապանը, վոր խստորեն հետևում էր ներս մտնողներին և դուրս յեկողներին. իսկ մեծ տան դարպասի վրա շինված էր լինում մի պատուհան, վորից դուրս էր նայում կառավարիչը՝ հսկելու համար դռնապանի վրա:

Շղթայակապ ստրուկ բանվոր:

Ստրուկների ապստամբությունները: Հասկանալի յե, վոր այնտեղ, ուր բազմաթիվ ստրուկներ էին կուտակվում, նրանք պատրաստ էին լինում ապստամբելու: Նրանց միջև ուժեղ մարդիկ կային, օրինակ, հովիվները հարավային Իտալիայում կամ գլադիատորները, այսինքն ստրուկները, վոր զինվորական վարժություն էին ձեռք բերել հռոմեական թատրոններում խաղալու համար:

140 թ. ամբողջ Սիցիլիան, ուր առանձնապես խոշոր կալվածներ կային, բռնկված էր ստրուկների ապստամբությամբ. դրանք բոլորն այլազգի մարդիկ էին, ծագումով արևելցիներ: Ապստամբությունն սկսվեց դավադրությամբ, վոր նյութել էին մի խոշոր կալվածատիրոջ ծառաները. նա ստրուկների հայտնի տանջիչ էր: Ստրուկների ամբոխը խուժեց հարևան քաղաքը, ուր գտնվում էր նրանց տերը, և սպանեց նրան թատրոնում: Ամբողջ կղզու վրա կոտորեցին տերերին. ստրուկներին միացան աղքատացած ազատ մարդիկ: Մի սյուրիական ստրուկ Եվն անունով, վորին տերը դուրս էր բերում վորպես ձեռնածուի և ծաղրածուի, իսկ ընկերները հարգում էին վորպես գուշակողի, թագավոր ընտրվեց ստրուկներից: Յերեք տարի իշխում էին նրանք Սիցիլիայում, և հռոմեական ամբողջ բանակներ կոնսուլների գլխավորությամբ վոչինչ չէին կարողանում անել նրանց դեմ: Վերջապես նրանց հաղթեցին, և դատաստանը սոսկալի դաժան էր. 20,000 ստրուկներ խաչվեցին:

Հռոմ քաղաքը: Մեծ նվաճումներից հետո բոլորովին փոխվեց Հռոմ քաղաքի տեսքը: Առաջ քաղաքը բաղկացած էր անկանոն կերպով ցիրուցան ընկած ցած տներից, վորոնք իրարից բաժանվում էին ամայի մեծ տարածություններով: Միայն բազարի օրերում, ինչպես նաև յերբ թշնամուց վտանգ էր սպառնում, քաղաքը լցվում էր գյուղերից յեկած ժողովրդով, այլապես նրա մեջ փոքրաթիվ սեփական ազգաբնակություն և փոքրիկ շարժում կար:

Բոլորովին այլ էր պատկերը, յերբ Հռոմը Միջերկրական ծովի շուրջը գտնվող բոլոր յերկրների մայրաքաղաքը դարձավ: Քաղաք էին գալիս բազմաթիվ օտարերկրացիներ—ուրիշ պետությունների դեսպաններ իրենց շքախմբերով, առևտրականներ, արվեստագետներ, ուսուցիչներ, բժիշկներ: Կապալառուները բնակություն էին հաստատում այնտեղ իրենց գրասենյակներով և սուրհանդակներով: Յերևելիների շուրջը մեծ քանակությամբ կլիենտներ էին հավաքվում: Այդ բոլոր այլ և այլ յեկվորների, ծառայողների, ծառաների, ստրուկների համար պետք էր պատրաստել և բերել կենսամթերքներ, հագուստեղեն, ամանեղեն, կահկարասի, պերճանքի առարկաներ. բազմաթիվ արհեստավորներ, խանութպաններ, կառապաններ և բեռնակիրներ սկսեցին վաստակ ստանալ Հռոմում:

Նախկին ազգաբնակության փոխարեն, վոր միքանի տասնյակ հազար էր միայն, Հռոմի ազգաբնակության թիվը մի միլիոնի հասավ: Ամայի տարածությունները ծածկվեցին շինություններով, շենքերը գալլերի ժամանակ շինված պատերի սահմանից շատ հեռու դուրս յեկան: Այժմ կարիք յեղավ շինել դեպի վերև բարձրացող բազմահարկանի տներ: Ճիշտ է, հրապարակների, տաճարների, կրկեսների, թատրոնների, սենատի դահլիճների շենքերին ընդարձակ տարածություններ էին հատկացնում. մեծ տեղ էին գրավում նաև յերևելիների պալատները՝ նրանց շրջապատող ընդարձակ պարտեզներով: Բայց դրանից ավելի ևս սաստկանում էր նեղվածքն այն թաղերում, ուր ապրում էր աղքատ դասակարգը: Այստեղ բարձրանում էին զորանոցների տեսք ունեցող վեց-յոթհարկանի հսկաներ, վորոնք ներքևում բաժանված էին լինում խանութների և արհեստանոցների, վերևում

բազմաթիվ մանր բնակարանների և անկյունների աղքատ ժողովրդի համար: Աղքատը հաճախ ստիպված էր 200 աստիճան վեր բարձրանալ, կամ, ընդհակառակը, 10—20 աստիճան վայր իջնել՝ մտնելու համար իր գետնահարկը:

Կեղտոտ, վտառողջ և վտանգավոր էր կյանքը այդ «բերդերի» մեջ (Հռոմում այդպիսի տները «կղզիներ» էին կոչվում, վորովհետև բռնում էին ամբողջ թաղեր, մեծ փողոցների միջև ասես կղզիներ կազմելով). Նրանց միջև սողում էին նեղ, ծուռումուռ փոքրիկ փողոցներ, ուր չէին հասնում արևի շողերը: Տների բարձր հարկերը հապճեպ կերպով փայտից էին կառուցվում. հրդեհի դեպքում բազմաթիվ կուտակված տներից վառվում էր մի իսկական խարույկ: Հրդեհները Հռոմում հաճախ էին պատահում. այդ դեպքում այրվում էին քաղաքի ամբողջ մասեր, և լինում էին բազմաթիվ մարդկային զոհեր:

Օտար սովորույթները, հավատն ու կրթությունը: Հռոմի ազգաբնակությունը չափազանց խայտաբղետ դարձավ: Բացի այն, վոր մայրաքաղաք էին գալիս շատ յեկվորներ, քաղաքացիների կազմն իսկ շատ փոխվել էր: Հաղթողները բերում էին իրենց հետ գերված ստրուկների հոծ բազմություններ: Մեծ քանակությամբ նրանց հետո ազատ էին արձակում: Ազատ արձակվածը, ապրելով Հռոմում, կարող էր Հռոմի քաղաքացի դառնալ: Այդ պատճառով հռոմայեցիների միշտ նույն հին անվան տակ Հռոմում կուտակվում էր մի բազմացեղ ամբոխ՝ սպանացիներ, աֆրիկացիներ, գալլեր, հույներ, սյուրիացիներ և այլն: Ուրիշ դեմքեր էին այժմ յերևում համայնական ժողովում. ուրիշ բարքեր էին մտել այստեղ. լուրջ, ծանրաբարո գյուղացի-պլեբեյների փոխարեն սկսեցին ազդել քաղաքային աշխույժ բնակիչները. սովորություն դարձան վեճերը, ընդհարումները, գրգռիչ ճառերը: Մի անգամ, յերբ Կարթագենի հռչակավոր հաղթողին՝ Սցիպիոնին կրտսերին սկսեցին ընդհատել համայնական ժողովում, նա բարկացած բղավեց. «Լռեցեք, ստրուկներ, վորոնց յես յերեկ էի, վոր շղթայակապ բերի Հռոմ»:

Օտարերկրացիների հետ միասին Հռոմ մտավ նաև օտար հավատը. գաղթականները բերում էին իրենց աստվածներին, վորոնց յետևից գալիս էին քարոզիչներն ու քուրմերը: Հույների՝ Իտալիայի հետ ունեցած հինավուրց հարաբերությունների շնորհիվ հունական աստվածները պաշտվում էին ամենուրեք Ապեննինյան թերակղզու վրա. հռոմայեցիք մեծ մասամբ նրանց նույնացնում էին իրենց աստվածներին, ինչպես, որինակ, Զևսին նույնացնում էին Յուպիտերին, Հերային՝ Յունոնային և այլն: Հույն ճարտարապետները հունական որինակների համաձայն էին շինում այժմ հռոմեական աստվածների տաճարները. հույն արվեստագետները կերտում էին նրանց արձանները:

Հռոմայեցիների՝ հեռավոր յերկրներ կատարած արշավանքներից հետո Իտալիայում յերևան յեկան նույնպես այդ հեռավոր յերկրների աստվածները: 205 թ., յերբ կարթագենական արշավանքի վտանգը դեռ անցած չէր, և Հաննիբալը տակավին գտնվում էր հարավում, Բրուցիայում, հռոմեական ժողովուրդը սարսափահար էր յեղած քարե կարկտից: Քուրմերը դիմեցին

Սիվիլլայի (հին գուշակուհու) գրքերին. այնտեղ նրանք կարդացին, վոր Հռոմի փրկության համար պետք է Հռոմ բերել աստվածների մեծ մորը, վոր պաշտվում է Իդա լեռան վրա Փոքր Ասիայում (հույներն այդ աստվածուհուն Կիբելա անունն էին տալիս): Պերգամի թագավորը, վորի տիրապետության սահմաններում գտնվում էր աստվածուհու սև քարը, համաձայնություն տվեց, վոր սրբությունը Հռոմ տարվի. հանդիսավոր կերպով և խնկարկություններով նա ընդունվեց ամբողջ ժողովրդի կողմից և փոխադրվեց մի հատուկ տաճար հռոմեական մատրոնաների (նշանավոր ընտանիքների կանանց) ձեռքով: Հռոմայեցիք նկատեցին, վոր հենց նույն տարին սկսվեց Սցիպիոն Աֆրիկացու հաջող ձեռնարկը, վոր առմիշտ ազատեց Հռոմը կարթագենական վտանգից: Կիբելայի յերկրպագուների աստվածապաշտությունն ամենևին նման չէր հռոմեական ծեսերին. նրանք բարձրացնում էին դափերի խլացուցիչ դմբդմբոց, զենքի շառաչ, վայրենի ձայներ և կատաղի պարեր, աշխատելով հիացման վիճակի մեջ գցել ինքնիրենց: Հռոմեական կրոնին նույնքան խորթ էր նաև յեգիպտական աստվածների պաշտությունը, վորի ժամանակ սպիտակ, կտավե շորեր հագած քուրմերը՝ չրխկչրխկանները ձեռքներին՝ բարձրաձայն վողբում էին իրենց մեռած Օզիրիս աստծուն: Պտղոմեոսների հետ ունեցած հռոմայեցոց բարեկամության հետևանքով էր վոր այս ծեսերը յերևան յեկան Իտալիայում:

Հարավային Իտալիայի հունական քաղաքների նվաճումից հետո հռոմայեցիների մոտ ծայր է տալիս վոգևորությունը հունական կրթությամբ: Յերևելիների շրջանում մոդային խոսակցական լեզուն դառնում է հունականը: Հաննիբալի դեմ մղած պատերազմի ժամանակներում նշանավոր Ֆաբիուսներից մեկը, Պիկտորուս (նկարիչ) մականունով, հունարեն լեզվով գրեց Հռոմի առաջին պատմությունը: Յերկու Սցիպիոններն էլ՝ Ֆլամինինուսը և Էմիլլուս Պավլուսը Հունաստանի մեծ յերկրպագուներն էին: Յերևելիներն իրենց յերեխաների համար ուսուցիչներ էին նշանակում կրթված հույն ստրուկներից: Նրանք սիրում էին զվարճանալ հունական վոտանավորների ընթերցանությամբ, սովորում էին հռետորական արվեստը Հռոմ յեկող հույն նշանավոր հռետորներից և իրենք գնում էին Ռոդոս կղզին սովորելու համար այնտեղի պերճախոսության դպրոցում:

Հույների ազդեցության տակ էր, վոր հռոմայեցիների մոտ գրականություն առաջ յեկավ: Հնում հռոմայեցիք գիտեին միայն միակերպ անպաճույճ յերգեր, վոր խնջույքների ժամանակ յերգում էր մի վորևէ պատանի: Այժմ «գերված Հունաստանը գերել էր վայրենի-հաղթողին և բերել արվեստները գյուղացիական Լացիումը» (հռոմեական բանաստեղծ Հորացիուսի խոսքերը): Նվաճված ու յեկվոր հույների մեջ յերևան յեկան թարգմանիչներ, վորոնք փորձում էին գրել լատիներեն լեզվով. ստրկությունից ազատ արձակված Լիվիուս Անդրոնիկուսը թարգմանեց Հոմերոսի Ոդիսականը, Էննիուսը մի յերկար դյուցազներգության մեջ ներբողեց Սցիպիոն Աֆրիկացի Մեծի գործերը: Բայց Հռոմում գրականությունը չէր կարող զարգանալ այնքան համարձակ և անկախ կերպով, վորքան հույների մոտ: Յերբ բանաստեղծ Նեվիուսը մի կատակերգության մեջ ծաղրեց Սցիպիոնին և ուրիշ նշանավոր մարդկանց, նրա պիեսն արգելեցին, իսկ հեղինակին աքսորեցին Հռոմից:

Հռոմայեցիք գրականության վրա նայում եյին վորպես զվարճալիքի վրա. նույնպես նրանք վերաբերվում եյին գիտության և փիլիսոփայության։ Նրանք մեծ տեխնիկներ, ճարտարապետներ ու զինվորներ եյին, մեծ վարպետներ եյին յերկրներ կառավարելու գործում. բայց նրանք շատ քիչ եյին հետաքրքրվում տիեզերքի կազմության կամ մարդկային հոգու վերաբերող խնդիրներով, վորոնց մեջ այնքան խորասուզվում եյին հույները։

IX.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆՆ ՈՒ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՀՌՈՄՈՒՄ.

Իտալիայի ավերումը։ Այն ժամանակ, յերբ Հռոմը հաղթանում եր և նրա աշխարհակալությունն աճում, Իտալիան ավերվում եր։ Սարսափելի ավերեցին յերկիրը Հաննիբալի բարբարոսներն այն 14 տարիների ընթացքում, վոր նրանք այնտեղ անցկացրին։ Շատ շրջաններ այնուհետև չկարողացան այլևս վերականգնել։ Հռոմայեցիք նույնիսկ ուժ տվին ավերմանը նրանով, վոր խլեցին Հաննիբալի կողմն անցած դաշնակիցների հողերը։ Այդ ժամանակից իվեր այդ հողերն արքունական եյին համարվում։ Նրանք **հասարակական դաշտ** անունն ստացան։ Մեծ մասամբ նրանք ընկան յերևելիների ձեռքը փոքրիկ վճարումով ի նպաստ արքունի գանձարանի։

Ամենուրեք, ուր յերկիրն ավերման եր յենթարկվել, կամ ուր հողերը գրավել եյին, այլևս գյուղացիներ չկային։ Իր տունն ու հողը կորցրած մանր հողատերը վաստակ փնտրելու եր գնում Հռոմ կամ մի ուրիշ քաղաք, ծառայության եր մտնում նավատորմի մեջ, գնում եր մի ուրիշ յերկիր։ Նա դառնում եր **պրոլետար**, այսինքն, մի մարդ, վորի վաղվան որը ապահովված չեր։

Իրենց հողի վրա մնացած գյուղացիների կացությունն ել ծանրացավ։ Նրանք չեյին կարող այլևս իրենց հացը Հռոմ և ուրիշ ծովափնյա խոշոր քաղաքներ արտահանել, թեև հենց այժմ այնտեղ հացի շատ ավելի մեծ կարիք կար, քան առաջ։ Բանն այն ե, վոր հռոմայեցիք իրենց ձեռքը վերցրին ծովային ճանապարհները և հեռավոր հարուստ յերկրները և այնտեղից ձրի հաց եյին բերում. Սիցիլիան, Աֆրիկան, իսկ ավելի ուշ նաև Յեգիպտոսը հացով պետք ե տուրք վճարեյին իրենց տիրոջը։ Այդ հացի միայն փոխադրությունը փող արժեր. այդ պատճառով ոտար, հեռավոր յերկրի հացը շատ ավելի եժան եր նստում, քան տեղայինը, իտալականը։ Իտալական գյուղացին տեղ չուներ, վոր արտահաներ իր դաշտերի բերքը։ Դրա շնորհիվ շատ գյուղացիներ ծախում եյին իրենց հողաբաժինները, և գյուղերի բնակչությունը հետզհետե նվազում եր։

Պոպուլյարներն ու ոպտիմատները։ Իտալական գյուղացիների ավերումն ամբողջ պետության համար մի սպառնալից վտանգ եր ներկայացնում, դատարկվող գյուղերի մեջ դժվար եր բավական թվով զինվորներ գտնել։ Միևնույն ժամանակ պրոլետարներից հավաքված զինվորները տհա-

ճությամբ եյին կատարում ծանր ծառայությունը, քանի վոր նրանց սպասում եր անտուն և անհաց ծերությունը։

Յերևելիների շրջանում հանդես յեկան **պոպուլյարները**, այսինքն ժողովրդասերները, վորոնք անհրաժեշտ եյին համարում հանգստացնել հուզված զինվորների մասսան, չունևորներին հող տալ և վերականգնել գյուղացիությունն Իտալիայում։ Նրանք տեսնում եյին պարզորեն, վոր սենատի միջոցով անկարելի յե այդ նպատակին հասնել. այնտեղ հենց նստած եյին խոշոր կալվածատերերը, վորոնք գնել կամ խլել են գյուղացիներից հողը։ Պոպուլյարներն իրենց հարցը դնում եյին համայնական ընդհանուր ժողովներում և ձգտում եյին տրիբունների պաշտոն գրավել, վորպեսզի հնարավորություն ունենան ներգործելու ժողովրդի մասսայի վրա։ Ամենաականավոր պոպուլյարներն եյին յեղբայրներ Գրակքուսները՝ Սցիպիոն Աֆրիկացի Մեծի թոռները մոր կողմից (134—121 թ.թ. Ք. ծ. առաջ)։ Գրակքուսները ծանոթ եյին հունական գիտության, կարդացել եյին հռչակավոր հույն հռետորների և դեմագոգների ճառերը. նրանց շրջապատում եյին կրթված հույներ, վորոնք խորհուրդ եյին տալիս նրանց **Աթենքի նման Հռոմում յեվս ժողովրդավարություն մտցնել։**

Գրակքուսներից ավագը՝ Տիբերիուսը, մի անգամ Ետրուրիայով անցնելիս՝ ապշած եր մնացել, տեսնելով գյուղական կյանքի ծանր պատկերը. խոշոր կալվածներում աշխատում եյին շղթայակապ ստրուկները, մինչդեռ հազարավոր աղքատացած գյուղացիներ անգործ եյին մնում։ «Գազաններն ու թռչունները,—ասում եր նա հետո համայնական ժողովում,—բներ ունեն, իսկ ամբողջ աշխարհը նվաճած մարդիկ տեղ չունեն իրենց գլուխը դնելու»։ 134 թ. տրիբուն դառնալով, Տիբերիուս Գրակքուսը վորոշեց անցկացնել **հողային որենք**, այսինքն չունեվորներին հողաբաժիններ տալ։ Նրա կարծիքով, պետք եր ոգտվել հասարակական դաշտից, ինչպես համայն ժողովրդի ընդհանուր սեփականությունից. բայց նա չեր ուզում նույնպես վնասած լինել յերևելիներին, վորոնք իրար մեջ եյին բաժանել արքունական հողերը։ Ուստի նա առաջարկեց ընդունել, վորպես որենք, վոր վոչ-վոք իր ձեռքում չպահի 250 դեսյատինից ավելի հասարակական հող և վոչ-վոք հանրային արոտատեղիներում չարածացնի 1000 անասունից ավելի։ Այդ չափից ավելի հող ունեցող յերևելիները պարտավոր եյին յետ տալ ավելորդ մասը. իսկ նրանցից յետ գրաված հողերը յենթադրվում եր բաժանել $7\frac{1}{2}$ դեսյատինանոց կտորների և բաշխել աղքատներին։

Ժողովուրդն ընդունեց Գրակքուսի հողային որենքը, իսկ սենատը չհամարձակվեց առարկել նրա դեմ։ Նշանակեցին յերեք անձերից կազմված մի հանձնաժողով, վորի մեջ մտնում եյին ինքը Տիբերիուսը, նրա կրտսեր յեղբայր Կայուսը և նրա աները՝ Ապպիուս Կլավդիուսը։ Այդ հանձնաժողովը պետք ե յերևելիներից գրավեր ավելորդ հողաբաժինները և վերջիններից գյուղացիական հողաբաժիններ կտրեր։ Սենատորների մեծ մասը սաստիկ գրգռված եր, վոր կտրտում են նրանց մեծ կալվածները։ Պոպուլյարների դեմ կռվելու համար դժգոհները կազմեցին **ոպտիմատների** (այս խոսքը նույն նշանակությունն ունի, ինչ վոր հունական՝ արիստոկրատիան) կուսակցությունը։ Ոպտիմատները վորոշեցին իրենց բոլոր ուժերով խանգարել Տիբերիուս Գրակքուսի յերկրորդ անգամ տրիբուն ընտրվելուն։

Ընտրության օրը Գրակքուսի միքանի բարեկամներ փորձ արին նրան տանը պահելու, մատնանշելով, որ յերկնքի նախագուշակ նշանները վատ են, և որ չարագուշակ թռչուններ յեն յերևում. բայց նույն Բլոսսիոսը, մի համարձակ և վճռական մարդ, ծաղրեց հռոմայեցիների սնահավատությունը, ասելով՝ «Ամոթ է, որ մի ժողովրդական առաջնորդ վախենա ինչ-որ ագռավից, յերբ քաղաքացիներն ընդհանուր գործի պաշտպանության են կանչում նրան»: Սենատում Գրակքուսի կատաղի հակառակորդներից մեկը՝ Սցիպիոն Նազիկան հայտնեց, որ Տիբերիուսն ապստամբություն է պատրաստում, կամենալով Հռոմի բռնապետը դառնալ. Թող հանրապետության բոլոր պաշտպանները միանան նրա դեմ: Օպտիմատներն իրենց ձեռքը վերցրին այն ամենը, ինչ որ գտան սենատի դահլիճում, աթոռների փայտեր ու ձեռնափայտեր և դուրս յեկան հրապարակ. ամբոխը տեղի տվեց բարձրաստիճան մարդկանց առաջ, և նրանք հեշտությամբ կոտորեցին անզեն Գրակքուսին ու նրա բարեկամների փոքրաթիվ խմբակը: Բլոսսիոսին բերին սենատ, և Սցիպիոն Նազիկան հարցրեց նրան՝ ճիշտ է արդյոք, որ Տիբերիուս Գրակքուսը հրամայել էր այրել Կապիտոլիումը: Բլոսսիոսը պատասխանեց. «Այդպիսի հրաման Գրակքուսը չէ տվել, բայց յեթե նա մի այդպիսի հրաման ինձ տար, յես ինձ համար պատիվ կհամարեյի կատարելու նրա տված հանձնարարությունը, որովհետև Տիբերիուսը կարող էր վճռել միայն այն, ինչ որ բարիք կբերեր ժողովրդին»:

Ավաղ Գրակքուսի մահից միայն տասը տարի անց նրա գործը վերսկըսեց նրա կրտսեր յեղբայր Կայուսը: Օպտիմատների դիմադրությունը հաղթահարելու համար նա իր կողմը գրավեց կապալառուներին: Կայուս Գրակքուսի առաջարկով ժողովուրդը կապալառուներին դատավոր նշանակեց պրովինցիաների փոխարքաների վրա: Պրովինցիայից վերադարձող յուրաքանչյուր փոխարքայից հաշիվ էյին պահանջում նրա կառավարության մասին. նրանց մեծ մասը զանազան զեղծումներ և բռնություններ էր կատարում նվաճված ժողովուրդների նկատմամբ, հարստանում էր ապօրինի կերպով. յերևելիների այդ հանցանքներն այժմ պետք է բացվեյին կապալառուների աչքի առաջ դատարանում: Գրակքուսը նրանց հանձնեց, բացի դրանից, նաև հարկահավաքման գործը Ասիայում և խոստացավ վերականգնել առևտրական նավահանգիստը Կարթագենում: Նա աշխատում էր նույնպես իր կողմը գրավել մայրաքաղաքի աղքատ դասակարգը, հաստատելով դրսից բերվող հացի եժանագին բաշխում և արքունական միջոցներով նավահանգստում շինելով հացի անագին ամբարներ:

Ժողովուրդը Գրակքուսի կողմն էր և նրան յերկրորդ տարին էլ տրիբուն ընտրեց: Կայուս Գրակքուսն սկսեց կարգադրություններ անել Հռոմում, Իտալիայում և պրովինցիաներում, որպես մի միահեծան իշխանավոր. օտար պետությանց դեսպանները, հռոմեական պետության բոլոր կողմերից յեկող խնդրատուներն ու գանգատավորները նրան էյին դիմում, դանց առնելով սենատը: Թվում էր, թե այժմ հաջողությամբ կարելի յե անցկացնել Տիբերիուսի ծրագիրը չունեորներին հող բաժանելու մասին:

Օպտիմատները, սակայն, միջոցներ գտան տապալելու Կայուս Գրակքուսին: 10 տրիբուն կար. Գրակքուսի հետ միասին տրիբուն ընտրեցին

Լիվիուս Դրուզին՝ մի օպտիմատի, որ պոպուլյար էր ձևանում, բայց համաձայն չէր Գրակքուսի առաջարկներին. Գրակքուսը կամենում էր, որ նոր հող ստացող գյուղացիներն արքունիքին կապալագին վճարեն իրենց հողաբաժինների համար. Լիվիուս Դրուզն առաջարկում էր հողը ձրի տալ գյուղացիներին: Շատերն սկսեցին սառչել Կայուս Գրակքուսի նկատմամբ, և նա յերրորդ տարին տրիբուն չընտրվեց: Կամենալով իր յեղբոր բախտից խուսափել, նա զինվեց և իր կողմնակիցների հետ դիրքեր բռնեց Հռոմի բլուրներից մեկի վրա: Բայց սենատը կոնսուլ Օպիմիուսին օժտեց անսահման իշխանությամբ, իրավունք տալով նրան զենքի դիմել քաղաքացիների դեմ մայրաքաղաքում: Անողոք ընդհարման ժամանակ Կայուս Գրակքուսն սպանվեց (121 թ.): Օպտիմատներն շտապեցին յետ գնել հողերը նոր հողաբաժին ստացած գյուղացիներից և վոչնչացնել հասարակական դաշտն Իտալիայում, բաժանելով այն իրար մեջ խոշոր կալվածների: Նրանք գտան, որ լավ կլինի, պահպանվի Կայուս Գրակքուսի մտցրած մի կարգադրությունը, որպեսզի քաղաքային ամբոխը չմիանա գյուղացիներին, այսինքն նրանք համաձայնություն տվին, որ քաղաքում **ձրի հաց** բաժանվի: 300,000-ից ավելի մարդիկ Հռոմում սկսեցին դրսից բերվող հացն ստանալ արքունական ամբարներից. ամեն ամիս յուրաքանչյուր մարդ մոտ յերկու փութ հաց էր ստանում հատուկ տոմսակներով:

Յերկպառակությունները Իտալիայում յեվ զինվորական միապետության սկիզբը: Սպանելով յերկու Գրակքուսներին էլ և հաստատելով մայրաքաղաքի աղքատ դասի կերակրումը, օպտիմատները յերկար ժամանակով չէ որ վերականգնեցին անդորրությունը: Շուտով զինվորների մեջ ծայր տվեց նրանց համար մի վտանգավոր տրամադրություն:

Մեծ նվաճումների ժամանակաշրջանում բանակի մեջ խոշոր փոփոխություններ տեղի ունեցան: Հին ժամանակի զինվորները ժամանակավոր զորակոչվածներ էյին. պատերազմից հետո նրանց տուն էյին արձակում, և նրանք չէյին կտրվում միանգամայն իրենց տնտեսությունից կամ արհեստից: Հեռավոր յերկրներում մղվող յերկարատև պատերազմների ընթացքում լեգիոնները չարձակվող, մշտական զորք դարձան. զինվորները բոլորովին խորթանում էյին իրենց տնային աշխատանքին և դառնում էյին ռազմա-բանակային գործի մասնագետներ: Իրենց հասկացողություններով զինվորները նույնպես տարբերվում էյին մնացյալ ազգաբնակությունից. նրանք իրենց համարում էյին քաղաքացիներից բարձր և վիրավորվում էյին, յերբ նրանց քաղաքացի էյին անվանում: Նրանք գործ չունեյին սենատի կամ ժողովրդի հետ: Իրենց հրամանատարին նրանք ճանաչում էյին որպես իրենց միակ իշխանավորը. դրա փոխարեն նա պարտավոր էր նրանց հետ բաժանել պատերազմում ձեռք բերված ամբողջ ավարը:

Արշավանքների ժամանակ և բանակի հանգստատեղերում զորավարները նրանցից ծանր աշխատանք էյին պահանջում. զինվորներն իրենք վոչ միայն սարքում էյին իրենց բանակատեղին, այլ և բերդեր ու նավեր էյին շինում, ճանապարհներ սալահատակում, ջրանցքներ էյին կառուցում: Հանցանքների համար նրանց սպառնում էյին ամենածանր պատիժները — խարազան, մորակ, խարան մարմնի վրա. պատերազմի դաշտից ամբողջ զորախըմ-

բի փախչելու դեպքում գլխատում եյին ամեն մի տասներորդ զինվորին: Բայց և զինվորները սովորել եյին իրենց պահանջներն առաջադրել հրամանատարին. բանակատեղում միշտ հավաքում եյին զինվորների և սպաների ժողովներ: Հրամանատարը դուրս եր գալիս նրանց մոտ, արտասանում եր նրանց առջև ճառեր, ինչպես համայնական ժողովում, հաղորդում եր իր դիտավորությունները, տալիս եր խոստումներ: Վետերանները, այսինքն զինվորները, վորոնց ծառայության ժամանակաշրջանը լրանալու վրա յեր, սպասում եյին, վոր հրամանատարը տուն վերադառնալուց հետո նրանց համար կենսաթոշակ կպահանջե կամ նրանց համար հողաբաժիններ ձեռք բերել կտա:

Շուտով, Կայուս Գրակքուսի մահից հետո, Հռոմը յերկու ծանր պատերազմներ ունեցավ, մեկը՝ հարավում, Աֆրիկայում, Նումիդիական թագավոր Յուգուրտայի դեմ, վոր քիչ մնաց խլեր հռոմայեցիներից նախկին Կարթագենի ամենահարուստ շրջանը: Մյուսը՝ հյուսիսում Ալպերի յետևից Իտալիայի վրա խուժող կիմվրների և տևտոնների բազմաքանակ հորդաների դեմ: Յերկու պատերազմներում էլ պետության փրկիչը կամ, ինչպես ասում եյին, Հռոմի յերկրորդ հիմնադիրը յեղավ Մարիուսը, մի զինվորական առաջնորդ, վոր զինվորներին կառավարելու և նրանց հետ վարվելու մեծ շնորհք ուներ: Մարիուսն ազնվական ծագում չուներ, հասարակ զինվորությունից եր բարձրացել, զուրկ եր կրթությունից, վորով պարծենում եյին յերևելիները. նրանց աչքում նա «նոր մարդ» եր, այսինքն ստորին խավերից դուրս պրծած մեկը: Կոնսուլ դառնալու և Յուգուրտայի դեմ կռվող զորքի հրամանատարությունը ստանալու համար՝ Մարիուսը պետք է ընտրությունների ժամանակ հաղթեր յերևելիների շարքից դուրս յեկած մրցակիցներին, վորոնք մեծ դրամներ եյին ծախսում ժողովրդի համար: Մարիուսն իր հերթին հարկադրված յեղավ սիրաշահել քաղաքային ամբոխը Հռոմում՝ նրա համակրանքը գրավելու համար. Մարիուսին այդ բանում ոգնեցին պոպուլյարներն ու կապալառուները. պոպուլյարները հույս ունեյին նրա ոգնությամբ վերահաստատել Գրակքուսի հողային որենքը, իսկ կապալառուները հույս ունեյին նոր ոգուտներ ստանալ Աֆրիկայում:

Հաղիվ եր Մարիուսը վերջացրել պատերազմը Յուգուրտայի դեմ և Հռոմ բերել գերված Նումիդիական թագավորին, յերբ հյուսիսից խուժեցին կիմվրներն ու տևտոնները: Իտալիայում չափազանցված լուրեր եյին պըտըտում նրանց ուժի մասին. իբրև թե նրանք կարող են վազել սրարշավ ձիու հետ միասին. տևտոնների առաջնորդը ցատկում է իրար կողքի կանգնած վեց ձիերի վրայով. խրելով նիզակը թշնամու մարմինը, բարբարոսը կարող է բարձրացնել նրան նիզակի վրա: Ճակատամարտի ժամանակ նրանք կատաղում եյին, գետնից դուրս եյին պոկում ծառերը արմատի հետ միասին, ձեռքերով ջարդում-փշրում եյին ժայռերի կտորներ և նետում եյին թշնամիների վրա, թափում եյին գետի մեջ ամբողջ հողակույտեր, այնպես վոր ջուրը դուրս եր գալիս իր ափերից: Նրանց կանայք, լինելով դիմացկուն, ինչպես նրանց ամուսինները, կռվի դաշտից զինվորների փախչելու դեպքում դիմավորում եյին նրանց՝ զենքը ձեռքներին և ստիպում նրանց կրկին կռվի գնալ: Բարբարոսները բնակության համար նոր վայրեր եյին փնտրում

Պո և Ռոնա գետերի տափարակներում, ուր հռոմեական գաղթականներն ու հռոմայեցիներին յենթարկված գալլերն եյին ապրում:

Այս բարբարոսների դեմ պետք յեղավ մի յերկարատև և համառ պատերազմ մղել, ամրություններ շինել, հոգնեցուցիչ արշավանքներ կատարել լեռների միջով: Միայն Մարիուսն եր (վորին կրկին կոնսուլ ընտրեցին), վոր գիտեր ստիպել զինվորներին անընդհատ արշավանքների ժամանակ ծանրագույն աշխատանքներ կատարել. իզուր չեր, վոր նրա զինվորներին Մարիուսի բեռնակիր անասուններ եյին անվանում: Այդ պատճառով անհրաժեշտ յեղավ թողնել նրա ձեռքում հրամանատարությունը 5 տարվա ընթացքում և իրար յետևից 5 անգամ կոնսուլ ընտրել նրան, մի բան, վոր առաջ թույլ չեյին տալիս հռոմեական սովորությունները: Ընտրությունների ժամանակ ամենից ավելի Մարիուսին ոգնեց տրիբուն Ապպուլեյուս Սատուրնինը, վոր նրա զինվորներին հողաբաժիններ խոստացավ:

Յերբ Մարիուսը հաղթական մուտք գործեց Հռոմ և տեղ ստացավ սենատում, Սատուրնինը վորոշեց ուժով իր նպատակին հասնել: Նա Հռոմ կանչեց Իտալիայի հողազուրկ գյուղացիներին ու նրանց թվում նաև Մարիուսի բազմաթիվ վետերաններին և փորձ արեց հարկադրելու սենատը, վոր իր համաձայնությունը տա մտցնելու հողային որենքը՝ նման Գրակքուսների որենքին: Բայց անզեն, հրամանատարից զուրկ զինվորները սարսափելի չեյին սենատի համար: Օպտիմատները, բացի դրանից, կարողացել եյին շոյել Մարիուսի սնափառությունը և գրավել նրան իրենց կողմը: Սենատը հանձնարարեց նրան ձերբակալել Սատուրնինին. Մարիուսը պաշարեց իր նախկին բարեկամներին Կապիտոլիումի վրա և կոտորեց նրանց (100 թ.)

Օպտիմատներն այս անգամ էլ վտանգից ազատվեցին, միայն վորոշ ժամանակով: Ժողովրդական խռովությունները, վոր ծայր տվին Գրակքուսների ժամանակ, տարածվեցին բովանդակ Իտալիայում: Հռոմեական ժողովրդի դաշնակիցները, այսինքն իտալացիների մեծ մասը, պահանջեցին իրենց համար հռոմեական քաղաքացիների հետ հավասար իրավունքներ. նրանք մատնանշում եյին այն հանգամանքը, վոր պատերազմների ժամանակ նույն ծառայությունն են կատարում, ինչ վոր հռոմեական պլեբեյները, մինչդեռ վոչ ձրի հաց են ստանում, վոչ էլ վորևե ուրիշ նպաստներ. իսկ յեթե մըտադրություն կա հող տալ հռոմեական պրոլետարներին, այդ դեպքում վորքան ավելի իրավունք ունեն հող ստանալու իտալացիները, վորոնցից ժամանակին խլել եյին հողը՝ հասարակական դաշտ կազմելու համար:

Վորովհետև սենատը մերժեց կատարել դաշնակիցների պահանջները, 90 թ. նրանք անջատվեցին, ընտրեցին իրենց կոնսուլներին ու իրենց սենատը և իրենց մայրաքաղաք ընտրեցին Կորֆինի քաղաքը, վոր գտնվում եր Հռոմի դիմաց, Ապեննինների այն կողմը և վորին Իտալիա անունը տըվին: Ապստամբ դաշնակիցների բանակում գերակշռում եյին միջին և հարավային Իտալիայի լեռնցիները, և առաջին տեղը բռնեցին հռոմայեցիների հին մրցակիցները՝ սամնիտները: Այդ ներքին դաշնակցական պատերազմի մեջ Հռոմն ստիպված յեղավ լարել իր բոլոր ուժերը: Յերկու տարի յեռում եր կատաղի կռիվը ամբողջ թերակղզու վրա: Թեև Հռոմին հաջողվեց ջարդել դաշնակիցների զորքերը, այնուամենայնիվ նրանք, վոր իրենց զենքը

վայր դրին, ստացան հռոմեական քաղաքացու իրավունքները։ Ամբողջ Իտալիան այժմ մտավ հռոմեական համայնքի կազմի մեջ։

Դաշնակիցների դեմ մղված պատերազմի ժամանակ ամենից ավելի մեծ ծառայություններ մատուցեց Հռոմին Կոռնելիուս Սուլլան, հին ազնվական ընտանիքից ծագող մի մարդ։ Սուլլան ընդհարվեց Մարիուսի հետ, յերբ խնդիր ծագեց, թե ով պետք ե լինի գլխավոր հրամանատարը արևելքում այն պատերազմի ժամանակ, վոր հայտարարել եր Հռոմին Միհրդատը՝ Պոնտոսի թագավորը։

Պոնտոսը բռնում եր Փոքր Ասիայի հյուսիսային մասը, վոր Սև ծովին ե յեզերում. Նրա ծովափնյա քաղաքները՝ Սինոպն ու Տրապիզոնը հունական գաղութներ եյին. յերկրի ներսն ապրում եյին բարբարոս ցեղեր։ Միհրդատն իր տոհմը դուրս եր բերում պարսից Դարեհ մեծ թագավորից. նրան շրջապատում եր պարսկական ազնվականությունը, և նրանք յերկրպագում եյին պարսից աստծուն՝ անհաղթելի Միհրին։ Օգտվելով Հռոմի դժվարություններից դաշնակիցների հետ ունեցած կռվում, Միհրդատը գրավեց հռոմեական Ասիա պրովինցիան. այդ յերկրի ազգաբնակությունը՝ հռոմեական կապալառուների կեղեքումներից զզված՝ ապստամբեց և կոտորեց միքանի տասնյակ հազար հռոմեական գաղթականներ։ Միհրդատը նավատորմ շինեց Եգեյան ծովում և հարձակվեց յեվրոպական Հունաստանի վրա. այդպիսով հռոմայեցիք կորցրին իրենց պետության ամբողջ արևելյան մասը։

Մարիուսի և Սուլլայի միջև բռնկած վեճը բոլոր հռոմեական քաղաքացիներին բաժանեց յերկու կատաղորեն իրար թշնամի կողմերի։ Յոթանասուն տարեկան ծերունի Մարիուսին հրամանատար նշանակելու կողմնակից եյին կապալառուներն ու պոպուլյարների կուսակցությունը. Սուլլայի կողմն եյին յերևելիները։ Յերևելիների մեջ բազմաթիվ սնանկացած մարդիկ կային. յերևելիներից շատերն առանց պաշտոնի եյին մնում. այդ պատճառով յերևելիները խմբվում եյին Սուլլայի շուրջը, հույս ունենալով, վոր նրանից կստանան օգտավետ հանձնարարություններ պրովինցիաներում և պատերազմի ժամանակ։ Սենատը Սուլլային նշանակեց արևելյան պատերազմի գլխավոր հրամանատար. պոպուլյարներն առաջարկեցին համայնական ժողովին խլել իշխանությունն ազնվականության ընտրյալից և հանձնել այն Մարիուսին։ Սուլլան ավելի նպաստավոր վիճակի մեջ եր, վորովհետև նրա հրամանատարության տակ եր արդեն զորքը, վոր պատրաստ եր արևելք մեկնելու և վոր հավատում եր նրա բախտավոր աստղին։ Զինվորներն իրենք պահանջեցին, վոր Սուլլան նրանց Հռոմ առաջնորդե։

Մի չլսված բան տեղի ունեցավ։ Առաջին անգամ Հռոմի յերկար կյանքի ընթացքում զորքը մտավ քաղաքի պատերից ներս և իր կամքը թելադրեց հռոմեական ժողովրդին։ Մարիուսը և նրա կողմնակիցները փախուստի դիմեցին և, հակառակ իրենց բացակայության, մահվան դատապարտվեցին։ Այսպես սկսվեց **առաջին քաղաքացիական պատերազմը**։

Արևելքում Սուլլան կատարյալ հաջողություն ունեցավ, Միհրդատից խլեց Բալկանյան թերակղզին ու Փոքր Ասիան և վերականգնեց Հռոմի նախկին տիրույթները։ Հունաստանը մի անգամ ևս թալանի յենթարկվեց.

Սուլլան թալանեց Դելֆերի և Օլիմպիայի հարստությունները և թույլ տվեց իր զինվորներին ամեն տեսակ անիրավություններ կատարել։ Նրա բացակայության ժամանակ Հռոմ վերադարձան պոպուլյարները, իսկ նրա մոտ արևելք փախան յերևելիները, վորոնք վախեցան պրոլետարների շարժումից։ Յերբ Սուլլան, իր տարած հաղթություններից հետո, վերադարձավ Իտալիա, սկսվեց իր հերթին օպտիմատների ցնծությունը։ Սենատը Սուլլային ճանաչեց **դիկտատոր անսահման ժամանակով հանրապետության գործերը կարգի գցելու համար**։ Սուլլան ճնշեց համայնական ժողովները, խլեց իշխանությունը տրիբուններից և ամբողջ կառավարությունը հանձնեց սենատին։ Վերադարձած յերևելիների վրեժխնդրությանը կատարյալ ազատություն տվեց Սուլլան։ Կազմվեցին **պրոսկրիպցիաներ** (դատապարտյալների ցուցակներ). ով վոր մտել եր այդ ցուցակների մեջ, զրկվում եր դատարանի և օրենքների պաշտպանությունից. ամեն մարդ կարող եր սպանել դատապարտյալին. Նրա կյանքը ծախվում եր աճուրդով։ Շատերն ընկնում եյին այդ ցուցակների մեջ իրենց անձնական թշնամիների գաղտնի չարախոսությամբ. Սուլլայի շուրջը վխտում եյին մարդիկ, վորոնք հարըստանում եյին արագորեն, չնչին գնով ձեռք բերելով դատապարտյալների կայքը։ Մարիուսի կողմնակիցներից գրավված կալվածքներից Սուլլան լավ հողաբաժիններ հանեց իր զինվորների համար։ Նրա բիրտ և անհարկու վետերանները շատ վայրերում իրենք դուրս քշեցին նախկին հողատերերին։ Նրանց յետևից շատ օպտիմատ-սուլլականներ, իրենց հետ վերցնելով ստրուկներ և ծառաներ, ներս եյին խուժում իրենց մանր հարևանների մոտ, խլում նրանց կայքը և նրանց դուրս շպրտում (82 թ.)։

Հռոմի անսահման իշխանավորը՝ իր մշտական հաջողությամբ վոգևորված՝ հրամայեց համայնական ժողովին ամենից աչքի ընկնող տեղում դնել իր վոսկեզօծ արձանը՝ ձիու վրա նստած, հետևյալ մակագրությամբ. «Կոռնելիուս Սուլլա, բախտավոր հրամանատար»։ Նուրբ կրթության տեր մարդ լինելով, նա զուրկ եր ագահությունից և ատելությունից թշնամիների հանդեպ. բայց նա չեր խանգարում ուրիշների թալանին ու անիրավությանը և չեր ուզում վորևե լավ բան արած լինել։ Իր կուսակցության ու իր վետերանների գործերը կարգի գցելով, նա հեռացավ հանգստյան։ Յերբ պաշտոնը թողնելուց հետո շուտով Սուլլան մեռավ, նրան թաղեցին թագավորական շքով։ Հեռավոր կալվածքից ամբողջ Իտալիայի վրայով բերին նրա աճյունը վոսկի մահճի վրա. ընդառաջ յելան սենատն իր ամբողջ կազմով և բոլոր քուրմերն իրենց տոնական հագուստներով. Նրա չորս կողմից վոսկեզօծ դրոշակներով ու արծաթե զենքերով գնում եյին նրա մոտ ծառայած զինվորները, շնչահեղձ հետևում եր հուղարկավորության անծայրածիր ամբոխը, վոր վախենում եր Սուլլայի զինվորներից և կարծես նույնիսկ ննջեցյալ Սուլլայից։

Իշխանության կռիվը Սուլլայի հաջորդների միջև։ Սուլլայի մահից փոքր անց նրա կողմնակիցներից մեկին՝ Լիցինիուս Կրասսուսին, վոր հսկայական հարստություն եր դիզել ի հաշիվ դատապարտյալների, վիճակվեց փրկել օպտիմատների կայքերն ստրուկների ապստամբության փոթորկից։

Մարիուսի և Սուլլայի պատերազմներն Իտալիա բերին բարբարոս

ստրուկների, իմիջի այլոց կիմվրների ու Թրակիացիների մասսաներ: Զափազանց պետական ծանր աշխատանքների համար վիլլաներում, այդ ստրուկները սարսափելի եյին դառնում, յերբ հավաքվում եյին մի տեղ մեծ քանակությամբ: Ամենաուժեղ ու ամենագեղեցիկ ստրուկների մի մասը հռոմայեցիք պատրաստում եյին գլադիատորների դպրոցներում զվարճամարտի համար կրկեսում: Թրակիացի Սպարտակն առաջարկեց իր ընկերներին, վոր ավելի լավ է մեռնել ազատության, քան թե ամբոխի զվարճության համար: Հռոմում յերկար ժամանակ վոչ-վոք չեր համարձակվում լեգիոնի գլուխն անցնել ապստամբ ստրուկների դեմ կռվելու համար, մինչև վոր հրապարակ յելավ Կրասսուսը: Մեծ դժվարություններով նա ճնշեց ապստամբությունը և իր հաղթանակը հավերժացրեց միքանի հազար ստրուկ խաչելով:

Կրասսուսին շուտով գերազանցեց այլ սուլլական Պոմպեոսը: Ստրուկների մեծ պահանջը Հռոմում առաջ բերեց մի հատուկ ավազակային գործ Միջերկրական ծովի արևելյան մասում. փախստական ստրուկները ծովային ավազակներ եյին դառնում, դուրս եյին գալիս Հունաստանի և Փոքր Ասիայի ափը, թալանում եյին գյուղերը, գերի եյին վերցնում բնակիչներին և տանում եյին նրանց ծախելու ստրուկների շուկայում Դելոս կղզում: Կրետե և Կիպրոս կղզիների վրա ավազակները ծածուկ կայաններ ունեյին նավերի համար և անմատչելի բերդեր, ուր նրանք պահում եյին թալանած հարըստությունները: Միջերկրական ծովի ամբողջ առևտուրը քայքայվեց այդ ավազակների հարձակումների շնորհիվ. կորչում եյին Հռոմ ուղևորվող հացի բեռները, և պրոլետարներին սով եր սպառնում: Պոմպեոսը հանձնարարություն ստացավ կործանել ծովային ավազակների պետությունը, իսկ այդ նպատակի համար նրան անսահման իշխանություն տվին Միջերկրական ծովի բոլոր կղզիների և ափերի նկատմամբ: Շատ յերևելիներ, վորոնք Հռոմում պաշտոն չեյին գտնում, ծառայության մտան Պոմպեոսի մոտ, պարգևներ ստացան նրանից և կազմեցին նրա հավատարիմ շքախումբը:

Հռոմեական նվաճողների համար արևելքի հարուստ յերկրները, ինչպես և առաջ, գլխավոր հրապուրանքն եյին ներկայացնում: Այստեղ կրկին վոտքի յելավ Միհրդատ Պոնտացին, սպառնալով հռոմայեցիներից Ասիան խլել: Նրա դեմ հրամանատար նշանակվեց Պոմպեոսը, և նույնպես, ինչպես ծովային ավազակների հետ ունեցած պատերազմում, նա անսահման լիազորություններ ստացավ զորք հավաքելու և տեղակալներ նշանակելու համար. կրկին նրա մոտ վազեցին, ինչպես մի միապետի մոտ, նրա հավատարիմ կողմնակիցները յերևելիներից և կապալառուներից: Պոմպեոսը տարավ հաղթություն հաղթության յետևից: Նա վոչ միայն խլեց Միհրդատից բովանդակ Փոքր Ասիան, այլ և հասավ մինչև Կասպից ծովը ու Յեփրատը և գրավեց Սյուրիական թագավորությունը, ուր յերբեմն իշխում եյին փայլուն Սելևկոսներն ու Անտիոքները: Ապա նա մտավ Հրեաստան և վճռեց այստեղ մակաբեյների տան ժառանգների վեճը. Յերուսաղեմում, համարելով, վոր հռոմեական հաղթողին թույլատրելի յե ամեն ինչ, Պոմպեոսն իր շքախմբով—ի մեծ սարսափ հավատացող հրեաների—մտավ տաճարի Սրբություն սրբոցը, ուր մուտք ուներ միայն քահանայապետը:

Պոմպեոսին նախանձող Կրասսն ամեն տեսակ միջոցներ եր փնտռում տապալելու իր մրցակցին, իմիջի այլոց նա պատրաստ եր միանալու սուլլական Սերգիուս Կատիլինայի հետ, վոր յերևելիների հին տոհմից եր, մի շնորհալի մարդ, բայց վոր պրոսկրիպցիաների ժամանակ արատավորել եր իրան մի շարք չարագործություններով: Կատիլինան և միքանի խելառ գլուխներ դավադրություն կազմեցին. յենթադրվում եր գործի մեջ քաշել ավարի անհանգիստ սիրահարներին, վորոնք այնքան շատացել եյին քաղաքացիական պատերազմի ընթացքում, զինել ստրուկներին Իտալիայի դանազան ծայրերում, սարսափ գցել Հռոմի վրա հրդեհներով ու սպանություններով, ձերբակալել ու կոտորել ականավոր սենատորներին և դիկտատոր նշանակել Կրասսին: Վորպես դիկտատորի ոգնականի Կատիլինան նկատի ուներ Յուլիուս Ցեզարին, վոր նույնպես ծագում եր Մարիուսի հետ խնամիացած մի հին պատրիցիական ընտանիքից. լավ կրթություն ստացած, հմայիչ վարվեցողություն ունեցող մարդկանց հետ՝ Ցեզարը հայտնի յեր վորպես մի անհոգ, պճնամոլ և շռայլ մարդ. միանալով պոպուլյարների կուսակցության, նա աշխատում եր սիրաշահել մայրաքաղաքի ամբոխը շքեղ խաղերով կրկեսում, վոր նա սարքում եր վորպես եդիլ (քաղաքային բարեկարգության կառավարիչ):

Կատիլինան հետո փոխեց իր ծրագիրը և վորոշեց ինքը կոնսուլ դառնալ: Ընտրությունների ժամանակ, սակայն, հաղթող դուրս յեկավ Ցիցերոնը, վոր մի փայլուն հռետոր եր, Պոմպեոսի բարեկամը: Ցիցերոնին հաջողվեց հռոմեական քաղաքացիների ամբողջ ունևոր մասը լարել Կատիլինայի դավադրության դեմ: Կատիլինան հարկադրվեց Հռոմից հեռանալ ավելի շուտ, քան դավադիրներն ի վիճակի յեղան պատրաստելու ապստամբությունը. նա կամենում եր փախչել Գալլիա, բայց ընկավ կառավարական զորքերի հետ ունեցած կատաղի կռվում (63 թ.):

Մինչայդ Ասիայից վերադառնում եր Պոմպեոսը: Իր մատուցած ծառայության գիտակցությամբ տոգորված՝ նա սպասում եր, վոր իրան մեծագույն պատիվներ կտան, իսկ իր զինվորներին, ինչպես ժամանակին Սուլլայի վետերաններին, հողաբաժիններ կբաշխեյին: Բայց ոպտիմատները վախենում եյին, վոր կկրկնվի սուլլական միապետությունը. այդ պատճառով սենատը մերժեց կատարել Պոմպեոսի ցանկությունները: Անհաջողության այդ պահին Պոմպեոսին իր ոգնությունն առաջարկեց Ցեզարը. նրա ծրագրի համաձայն պետք եր կազմակերպել ազդեցիկ մարդկանց մի դաշինք-միություն և իրար մեջ բաժանել իշխանությունը: Ցեզարը հաշտեցրեց Պոմպեոսին Կրասսի հետ, իր աղջիկը ամուսնության տվեց Պոմպեոսին և իր յերկու նոր բարեկամների ոգնությամբ կոնսուլ դարձավ 59 թ.: Վորպես կոնսուլ, Ցեզարը, հակառակ սենատի կամքին, հեշտությամբ կարողացավ ստանալ ժողովրդի համաձայնությունը, վոր Պոմպեոսի վետերաններին հող տրվի, իսկ իր համար նա ստացավ փոխարքայության պաշտոնը յերկու Գալլիաներում:

Հռոմայեցիք Գալլիա եյին անվանում այն յերկրները, վորոնց բնակչությունը կազմում եյին կելտերի ցեղերը. Նախաալպյան Գալլիա եյին կոչում Պո գետի տափարակը, անդրալպյան Գալլիա՝ այժմյան Ֆրանսիան:

Վերջինում հունական Մասսիլիա քաղաքի յերկու կողմերն ընկնող հարավային ափն եր միայն պատկանում Հռոմին. յերկրի մնացած մասը բաժանված եր բազմաթիվ անկախ շրջանների ու ժողովուրդների: Ցեզարը վորոշեց նվաճել այդ ամբողջ ընդարձակ յերկիրը, վոր հայտնի յեր իր վոսկու հեքյաթային առատությամբ: Նրա ընկերները՝ Պոմպեուսն ու Կրասսը նույնպես մի շահավետ պրովինցիա իրենց ձեռքը գցեցին. առաջինը՝ Սպանիան, յերկրորդը՝ Սյուրիան, այն հաշվով վոր մի արշավանք կպատրաստե Յեփրատի այն կողմը, դեպի Բաբելոն: Բոլոր յերեքն ել հավաքվեցին Իտալիայի և Նախաալպյան Գալլիայի սահմանի վրա գտնվող Լուկկա քաղաքում՝ իրենց միությունն ամրացնելու համար. յուրաքանչյուրին ուղեկցում եր նրան հավատարիմ յերևելիներից կազմված մի մեծ շքախումբ: Հռոմեական սենատն ու համայնական ժողովը մնացին միայն վորպես ստվերներ նախկին հանրապետության. ամեն ինչ կատարվում եր ամենազոր **տրիումվիրատի** կամքով, այսինքն այն յերեք անձերի միության, վորոնք իրենց պահում եյին վորպես թագավորներ, դեսպանություններ եյին փոխանակում, լեգիոններ եյին ուղարկում իրար (56 թ. Ք. ծ. առաջ):

Ցեզարն 8 տարի անցկացրեց Գալլիայում (58-50 թ.թ.) գրեթե անընդհատ կռիվների մեջ և նվաճեց բովանդակ յերկիրը մինչև Հռենոս գետը, Հյուսիսային ծովն ու նեղուցը, վոր բաժանում ե ցամաքը Բրիտանիայից: Նա ստիպված յեղավ նույնպես Բրիտանիա անցնել՝ ջախջախելու համար այն կելտերին, վորոնք ոգնում եյին Գալլիայում ապրող իրենց ցեղակիցներին ու կրոնակիցներին, ինչպես նաև Հռենոսի այն կողմը գնալ ջարդելու համար գերմանացիներին, վորոնք կռվում եյին նրա դեմ Գալլիայի տիրապետության համար:

Լինելով քաջ և յեռանդուն կռվողներ, գալլերը կարող եյին ճզմել հռոմայեցիներին իրենց քանակով, բայց առանձին ցեղերի միջև քիչ համաձայնություն կար. ամենուրեք Ցեզարը ձեռք բերեց բարեկամներ ու կողմնակիցներ, վորոնց վոգևորում եր ծառայությունը հռոմայեցիների մոտ: Գալլերին միացնում եր միայն հոգևոր կապը, վոր պահպանում եյին գիտնական քուրմերը, **դրուիդները**, ամբողջ յերկրում մի միություն կազմելով: Դրուիդները տարին մի անգամ հավաքվում եյին ընդհանուր ժողովի Գալլիայի ներսը գտնվող մի սրբազան տեղում. այստեղ նրանք քննում եյին դատական վեճերը. սովորությունները խախտողներին և նրանց վորոշումները չկատարողներին նրանք բանադրում եյին, արգելելով նրանց մասնակցել աղոթքներին և զոհաբերություններին: Դրուիդների՝ կրոնական գործերում չափազանց ուժեղ կազմակերպությունը անկարող եր նպաստել ժողովրդի միության. անկախ ազգ դառնալու կամքը շատ ուշ զարթնեց գալլերի մեջ, այն ժամանակ միայն, յերբ նվաճողը բաժան-բաժան եր արել արդեն նրանց ուժերը:

52 թ. Ք. ծ. առաջ ապստամբության գլուխն անցավ հռոմայեցիների դեմ Վերցինգետորիկսը, վոր արվերնների ցեղից եր (լեռնային Ովերնը Ֆրանսիայի մեջտեղում): Գալլերը դիրքեր բռնեցին այժմյան Կլերմոնի մոտ. Վերցինգետորիկսի բանակի վրա հարձակվելու ժամանակ Ցեզարը պարտություն կրեց: Նա ստիպված յեղավ հավաքել բոլոր հռոմեական ուժերը՝ թըշնամուն **Ալեսիայում** պաշարելու համար. զանազան կողմերից գալլերը ոգնության յեկան, բայց հռոմայեցիք ջարդեցին նրանց Հռենոսի այն կողմից բերված գերմանական հեծելազորքի միջոցով: Պաշարվածներն սկսեցին սովից տառապել, և ինքը Վերցինգետորիկսը փայլուն սպառազինությամբ յեկավ Ցեզարի մոտ և հաղթողի մեծահոգության անձնատուր յեղավ: Ցեզարն իր հետ վերցրեց Վերցինգետորիկսին, վորպես զարդարանք իր հաղթական մուտքի համար, իսկ հետո գերին մեռավ բանտի մեջ: Այդ համառ կռվից հետո Գալլիան Ցեզարի իսկական թագավորությունը դարձավ:

Մինչ այդ տրիումվիրատը քայքայվեց: Կրասսն սպանվեց պարթևների դեմ կատարված մի անհաջող արշավանքում Յեփրատի այն կողմը, իսկ Պոմպեուսը, մնալով Հռոմում, չեր կամենում այլևս բաժանել իշխանությունը Ցեզարի հետ: Սենատում կազմվեց հանրապետության փրկության կուսակցություն, վորի գլուխն անցավ Կատոնը, խստաբարո, ուղղամիտ և ճըշմարտասեր մարդ. այդ կուսակցությունը պահանջում եր, վոր յերկու իշխանություններն ել հրաժարվեն իրենց լիազորություններից: Յերբ սենատը Ցեզարից պահանջեց, վոր նա հրաժարվի իր պրովինցիայից, Ցեզարը Սուլլայի նման պատերազմ հայտարարեց Հռոմին և Իտալիայի վրա տարավ գալլական կռիվներում փորձված լեգիոնները: Այժմ հանրապետականները, նրանց թվում նաև Կատոնը, միացան Պոմպեուսին և նրան հանձնեցին գըլխավոր հրամանատարությունը Ցեզարի դեմ. նրանք, սակայն, ստիպված եյին թողնել Հռոմը, ուր պրոլետարները Ցեզարի կողմն եյին, և արևելք փախչել: Սկսվեց **յերկրորդ քաղաքացիական պատերազմը**:

Ցեզարը չեր թագցնում հանրապետական իրավակարգը վոչնչացնելու իր դիտավորությունը: Նա գրավեց պետական գանձարանը Հռոմում. յերբ տրիբուն Մետելլուսը փորձեց նրա առաջ կտրել ճանապարհը դեպի Կապիտոլիում, ուր գտնվում եր վոսկին, Ցեզարը մահվամբ սպառնաց նրան, թեև հին որենքով տրիբունի անձն անձեռնմխելի յեր համարվում:

Ցեզարի միահեծան իշխանությունը: Չորս տարի (49—45 թ. թ. Ք. ծ. առաջ) տևեց պատերազմը Ցեզարի և նրա հակառակորդների միջև: Սկըզբում հանրապետականները և Պոմպեուսի կողմնակիցները ջարդվեցին **Փարսալի մոտ**, Թեսսալիայում, ինքը Պոմպեուսը փախավ Յեգիպտոս Պտոլեմեոս թագավորի մոտ, բայց սպանվեց, վոտքը դեռ ափը չդրած: Ցեզարը նրա յետևից գնաց Ալեքսանդրիա: Նույնպես, ինչպես և նախկին հռոմեական նվաճողները, նա յենթարկվեց ամենահարուստ արևելյան յերկրի ու նրա փայլուն հունական մայրաքաղաքի հմայքին և վորոշեց միացնել Յեգիպտոսը հռոմեական կայսրության. տապալելով Պտոլեմեոսին, նա հանձնեց իշխանությունը թագավորի քրոջ՝ Կլեոպատրային, մի շատ խելացի և իշխանասեր կնոջ, չնայելով սրա յերիտասարդ հասակին: Մինչ այդ պոմպեականներն ու հանրապետականները, սրանց թվում և Կատոնը, հավաքվեցին Աֆրիկայում. նրանք կրկին ջարդ կրեցին Ցեզարից, և Կատոնը կորած համարելով հանրապետության գործը, ինքն իրան սրախողխող արեց: Վերջին անգամ փորձեցին դիմադրություն ցույց տալ Պոմպեուսի վորդիք Սպանիայում: Բայց Ցեզարն ամենուրեք հաղթող եր դուրս գալիս: Սակայն վորքան ավելի մեծ ջանքեր եր պահանջում կռիվը, այնքան ավելի խոստումներ

էր նա տալիս իր զինվորներին: Գրեթե յուրաքանչյուր արշավանք սկսվում էր զինվորների ապստամբությունով. Նրանք հրաժարվում էին ծառայությունից, կանչում էին կայսրին իրենց ժողովին և առաջադրում էին նրան իրենց միշտ ավելի ու ավելի բարձրացող պահանջները փողով և հողով նրանց ստանալիք վարձատրության մասին:

Իր տարած հաղթություններից հետո 45 թ. Հռոմ վերադառնալով, Ցեսարն ահագին վարձատրություն տվեց իր զինվորներին, հողեր բաժանեց նրանց Իտալիայում և պրովինցիաներում: Նույնպես, ինչպես և Սուլլան, Ցեսարը ճանաչվեց դիկտատոր անսահման ժամանակով, այսինքն ճանաչվեց **միահեծան միապետ**. այն ամենը, ինչ որ առաջ վճռում էին սենատն ու ժողովուրդը,—պատերազմի հայտարարում, հաշտության կնքում, բոլոր պաշտոնյաների նշանակում, օրենքների հրատարակում, պրովինցիաների անօրինում—այդ բոլորն անցավ նրա ձեռքը: Արգելվեցին քաղաքացիների ամեն տեսակ համախմբումները՝ արտելներ, միություններ, ընկերակցություններ: Ի նշան իր միապետական մեծության Ցեսարը հրապարակ էր դուրս գալիս՝ հաղթական ծիրանագույն պատմուճան հագած, արհամարհանքով էր վերաբերվում սենատին, ոտքի չէր ելնում նրա առջև, ինչպես այդ անում էին առաջ պաշտոնյաները, սենատոր նշանակեց գալլիական պատերազմին մասնակցող բազմաթիվ զինվորների: Նա թույլ էր տալիս իրան արհամարհանքով ասելու՝ «Հանրապետությունը դատարկ խոսք է առանց իմաստի և բովանդակության»:

Իր հաղթողի դրության մեջ Ցեսարն իրան ավելի լավ պահեց, քան Սուլլան. Նա իր հակառակորդներից վրեժ չէր լուծում և աշխատում էր նրանցից շատերին, օրինակ Ցիցերոնին, իր կողմը գրավել: Յերևելիները մեծ մասամբ նրա կողմն էին անցնում, դառնում էին ասես նրա պալատականները և ստանում էին պաշտոններ նրա ողորմածությամբ, նշանակումով, որովհետև ժողովուրդ հավաքում էին միայն այն նպատակով, որ ձևի համար ընտրի դիկտատորի մատնանշած թեկնածուներին: Սակայն յերևելիների մեջ էլ գտնվեցին ուժեղ, անկախ բնավորություններ, որոնք չկամեցան ստորանալ: Նրանց մեջ դավադրություն կազմվեց՝ սպանելու համար Ցեսարին որպես բռնապետի. դավադիրների գլուխն էին կանգնած Ցեսարին անձնատուր յեղած պոմպեականներ Բրուտուսը և Կասսիուսը:

Ցեսարը հանրապետականներին ավելի ևս գրգռեց թագավորական պատվանշանները յուրացնելու իր բացահայտ ձգտումով: Նրա սիրելի Անտոնիուսը մի անգամ համայնական ժողովում նրան ոսկե թագ առաջարկեց. Հռոմում խոսք կար, որ Ցեսարը Կլեոպատրայի գալուն է սպասում և պատրաստվում է պսակվել յեգիպտական թագուհու հետ: Ցեսարը մի մեծ արշավանքի յեր պատրաստվում պարթևների դեմ և հրամայեց գտնել մի գուշակություն, որի համաձայն արևելյան պատերազմը հաղթականորեն պիտի վերջացնե հռոմեական թագավորը: Դավադիրներն շտապեցին իրագործել իրենց ծրագիրը և, շրջապատելով Ցեսարին սենատում, դաշունահար արին նրան (44 թ. Ք. ծ. առաջ):

Կռիվը Ցեսարի հաջորդների միջև. Յերբ Բրուտուսն ու Կասսիուսը դուրս յեկան ժողովրդին հայտարարելու, որ նա ազատ է արդեն բռնապետի

լծից, ամբոխը լռությամբ պատասխանեց նրանց: Շուտով ճարպիկ Անտոնիուսը դուրս հանեց Ցեսարի կտակը, և ժողովուրդն իմացավ, որ նրան կտակված են հարուստ նվերներ և շքեղ պարտեզներ: Քաղաքում գտնվում էին Ցեսարի բազմաթիվ վետերաններ, որոնք մնացել էին Հռոմում հող ստանալու հույսով և իրենց հրամանատարի մահով խորտակված էին տեսնում իրենց բոլոր հույսերն ու հաշիվները: Պրոլետարների և զինվորների գրգռումը Ցեսարին սպանող դավադիրներին ստիպեց փախչել արևելք: Զգտելով Ցեսարի տեղը բռնել, Անտոնիուսը ձեռք գցեց նրա գանձարանից, ինչքան որ կարող էր, և սկսեց իր կողմը գրավել Ցեսարի լեգիոնները: Բայց Անտոնիուսի դեմ դուրս յեկավ մի մրցակից հանձին 18 տարեկան Օկտավիանուսի, որ Ցեսարի քրոջ որդին և որդեգիրն էր: Օկտավիանուսն իր հերթին սկսեց փող բաժանել զինվորներին: Նա հանրապետական ձևացավ և վստահություն ներշնչեց Ցիցերոնին իր դիտավորությունների անկեղծության նկատմամբ: Ցիցերոնի՝ սենատում արտասանած հռչակավոր ճառերից հետո, Անտոնիուսին հայրենիքի թշնամի հայտարարեցին և Օկտավիանուսին հանձնեցին նրա դեմ պատերազմ մղելու հրամանատարությունը: Անտոնիուսի և Օկտավիանուսի լեգիոնների միջև տեղի ունեցավ մի մեծ ճակատամարտ Հյուսիսային Իտալիայում Մուտինայի պատերի տակ: Զինվորները հեռացրին իրենց հրամանատարներին և սկսեցին կռվել իրենց սեփական պլանի համաձայն, առաջի շարքերում դնելով **պրետորյաններին** (այսինքն պատվավոր գվարդիան): Անտոնիուսը պարտություն կրեց, բայց Օկտավիանուսի բանակը չէր կամենում հալածել նրան: Յերկու բանակի զինվորները, անկախ իրենց զորավարներից, փոխադարձ դաշն կապեցին, Անտոնիուսին և Օկտավիանուսին ստիպեցին, որ հաշտվեն, ընդունեն մի յերրորդ անձ ևս՝ Եմիլիուս Լեպիդին իրենց նոր **տրիումվիրատի** մեջ և ապա Հռոմի վրա գնան՝ վրեժ լուծելու սպանված դիկտատորի թշնամիներից: Սա **յերրորդ քաղաքացիական պատերազմն է**:

Կրկնվեց այն ամենը, ինչ որ տեղի ունեցավ Սուլլայի ժամանակներում. տրիումվիրատի անդամները կազմեցին պրոսկրիպցիաներ (դատապարտյալների ցուցակներ) և առաջինների թվում գլխատեցին Ցիցերոնին: Նրանք թալանեցին հարուստ մարդկանց Հռոմում, ավար վերցրին Իտալիայի քաղաքներից և այդ միջոցներով պատերազմ սկսեցին Բրուտուսի և Կասսիուսի դեմ, որոնք հաստատվել էին Մակեդոնիայում:

Փիլիպպի քաղաքի մոտ տեղի ունեցան միքանի կռիվներ, որոնցից Ցեսարի ժառանգները հաղթող դուրս յեկան: Հանրապետությունը փրկելու հույսը կորցրած՝ Կասսիուսը և Բրուտուսը Կատոնի նման իրենք իրենց սրախողխող արին: Նրանց անունով սկսեցին այնուհետև կոչել վերջին հանրապետականներին: Մյուս կողմից Ցեսարի անունով սկսեցին կոչել հետագա թագավորներին (կայսր). Նրանք ընդունում էին այն որպես տիտղոս: Ցեսարի ժառանգները նրան աստված հայտարարեցին. Նրա աճյունն այրելու տեղում դրվեց մի բագին, որ աստվածների տաճարների հետ հավասար՝ ապաստան ճանաչվեց ոճրագործների և փախստական ստրուկների համար: Ամբողջ Իտալիայում հողերը գրավվեցին տերերից և հանձնվեցին նոր իշխանավորների զինվորներին:

Հանրապետությունը Հռոմում չկարողացավ պահպանվել: Ամեն մի նոր

զինվորական առաջնորդ նույնպես կվարվեր, ինչպես վարվեցին Սուլլան, Ցեզարը, Անտոնիուսը և Օկտավիանուսը։ Ամբողջ խնդիրն այն եր միայն, թե լեգեոնների առաջնորդներից վո՞րը կկարողանա հաղթել մյուսներին։

Անտոնիուսն ու Օկտավիանուսը, գործերից հեռացնելով աննշան Լեպիդին, իրար մեջ բաժանեցին կայսրությունը. Անտոնիուսը վերցրեց արևելյան պրովինցիաները՝ Հունաստանը, Փոքր Ասիան, Սիրիան, ամուսնացավ յեգիպտական թագուհի Կլեոպատրայի հետ և սկսեց ապրել Ալեքսանդրիայում, իսկ Օկտավիանուսը մնաց Հռոմում։ Նրանց միջև յերբեք բարեկամություն չկար. նրանցից յուրաքանչյուրը միահեծան իշխանության եր ձգտում։ Օկտավիանուսը հարձակվեց Անտոնիուսի և Կլեոպատրայի միացյալ նավատորմի վրա **Ակցիումի** մոտ, Հունաստանի արևմտյան ափերի դիմաց։ Ճակատամարտի ժամանակ Կլեոպատրան յետ կանչեց իր նավատորմը, նրա յետևից Անտոնիուսը թողեց կռվի դաշտը, և դրա շնորհիվ հաղթանակը տարավ Օկտավիանուսը։ Կորցնելով իր հենարանը Յեգիպտոսում, Անտոնիուսը հուսահատությունից ինքնասպանություն գործեց։ Կլեոպատրան փորձեց փրկել իր թագավորությունը, բայց Օկտավիանուսը միացրեց Յեգիպտոսն իր պետության (30 թ. ք. ծ. առաջ)։ Այսպիսով Միջերկրական ծովի շուրջը գտնվող բոլոր յերկրները մտան հռոմեական կայսրության կազմի մեջ։

Պրինցիպատ կամ չափավոր միապետության կազմակերպությունը։ Օկտավիանուսը հասավ նույն նպատակին, ինչ վոր և Ցեզարը։ Նա նվազ շնորհալի յեր թվում, տեսքով մարդ չեր, քաշվող եր և գաղտնապահ. նա չուներ նաև Ցեզարի ռազմական տաղանդը։ Միապետություն հաստատելու մեջ նրան մասամբ նպաստեցին հանգամանքները, մասամբ ինքն էլ հայտնաբերեց համբերություն, զգուշություն և հռոմայեցիների հասկացողության ու սովորությանց հարմարվելու շնորհք։

Հանգամանքները կայանում եյին նրանում, վոր յերկար պատերազմը հոգնեցրել եր մարդկանց մեծ մասը Միջերկրականի շուրջը գտնվող բոլոր յերկրներում. շատ շատերը հանգիստ եյին փնտրում և փարում եյին ամենազոր մարդու, նրա պաշտպանությունը փնտրելով։ Այդպես փարեց Օկտավիանուսին բանաստեղծ Հորացիուսը, վոր հանուն հանրապետության կռվել եր Բրուտուսի և Կասսիուսի հրամանատարության տակ։ Մի վոտանավորի մեջ Հորացիուսը հետո հիշում եր, վոր «վատաբար վայր նետեց իր վահանը», այսինքն փախավ ռազմադաշտից. բայց նա յեռանդուն կերպով խորհուրդ եր տալիս իր բարեկամներին թողնել պատերազմը և չմասնակցել խռովություններին՝ բոլոր վտանգներից խուսափելու համար։ Միևնույն ժամանակ կռվի մեջ ընկան մեծ մասամբ անկախ և հպարտ յերևելիները, վորոնք չեյին ուզում իրենց գլխին վոչ մի տեր ճանաչել։ Պրովինցիաների բնակիչները սովորել եյին Հռոմին յենթարկվել. նրանց համար միևնույն եր, թե ով կուղարկե նրանց կառավարչին՝ հռոմեական սենատը թե Հռոմի զինվորական պետը։ Ինքը Հռոմի ազգաբնակությունը հաշտվում եր այն իշխանավորի հետ, վորը պատրաստ եր ամենից ավելի նվերներ տալ նրան։

Օկտավիանուսի հմտությունն արտահայտվեց այն բանում, վոր նա խուսափեց այնպիսի տիտղոսներից և կարգուսարքից, վորոնք կարող եյին հիշեցնել թագավորական իշխանությունը։ Նա չընդունեց դիկտատորի անունը,

վոր հիշեցնում եր Սուլլայի և Ցեզարի իշխանությունը, այլ իրեն կոնսուլ, տրիբուն և ցենզոր անվանեց։ Ընդսմին Օկտավիանուսը միշտ կրկնում եր, թե նրա գլխավոր հոգսն ե՝ վերականգնել Հռոմում հինավուրց իրավակարգը։

Նա աշխատում եր շրջապատել իրեն հին ազնվական ընտանիքների

Օկտավիանոս կայսեր արձանը՝ կայսերական զգեստով։

մնացորդներով։ Յուլիուս Ցեզարից վորդեգրված, Օկտավիանուսն ազգակցական կապերով կապվեց նշանավոր Կլավդիուսների հետ։ Նրա արքունիքում լավ ընդունված եր պատմաբան Տիտուս Լիվիուսը, վոր իր հսկայական աշ-

խատության մեջ փառաբանեց հանրապետությունը, հռետորական բարձր ոճով նկարագրելով նրա բախտը հնագույն ժամանակներից սկսած։ Բոլորն էլ շատ լավ էին հասկանում, որ կառավարիչն ամենազոր է, և որ նրա իշխանությունը զորքի վրա յի հենվում։ Սակայն հռոմայեցիների սովորական հասկացողությունները չխախտելու համար Օկտավիանուսը զինվորներին Իտալիայից ուղարկեց պետության սահմանները. իր անձնական պաշտպանության համար Հռոմում նա թողեց միայն պրետորյանների զորախումբը (գվարդիան)։ Իտալիայում Օկտավիանոսը համարվում էր **պրինցեպս**, այսինքն պետության առաջին մարդը։ Նա ասես բաժանել էր իշխանությունը հին կառավարության՝ սենատի հետ։

Վորոշվեց, որ առաջվա պես սենատը կարգադրություններ կանե հին պրովինցիաների վերաբերմամբ. սենատը կուղարկե այնտեղ փոխարքաներ իր շարքերից։ Նոր գրավված, սահմանակից շրջանները մնացին Օկտավիանուսի ձեռքի տակ—Գալլիան, Ցեսարի նախկին տիրույթը, հարուստ Սյուրիան և Յեգիպտոսը, որ նվաճել էր ինքը Օկտավիանուսը։ Այդ յերկրամասերում կանգնած էին բոլոր հռոմեական զորքերը, մոտ 250.000՝ հնազանդության մեջ պահելու համար նոր նվաճված բնակիչներին և պաշտպանելու համար սահմանները։ Զորքերը յենթարկված էին բացառապես Օկտավիանուսին, զինվորները միայն նրա անունով էին յերդում տալիս։ Զինվորական **իմպերատորի**



Կրկեսի հատակագիծը։ Վազքը կատարվում էր մեջտեղի բարձրության շուրջը, վորի վրա դրված էին սյուներ, արձաններ յեվ այլն։ A—սկսելու տեղը, OO—շրջող մուրքի կողմը, P—գլխավոր դարպասները, CC—զոմը։

հին տիտղոսը միայն նա կարող էր կրել. դա նշանակում էր այժմ գերագույն հրամանատարի իշխանություն։ Իմպերատոր էին կոչում նրան պրովինցիաներում։ Իր մարդերը Օկտավիանուսն ուղարկում էր, վորպես կառավարիչներ, իր սպաներին (լեգատներին) և գործակատարներին (պրոկուրատորներին)։ Ժողովրդին այլևս չէին հավաքում ժողովների։ Սակայն նոր իշխանավորը նույնպես պետք է սիրաշահեր մայրաքաղաքի բնակչությունը, ինչպես այդ անում էին առաջ ժողովրդական առաջնորդները կամ սենատը։ Նա մենակ իր վրա վերցրեց այն բոլոր ծախսերը, վոր առաջ ժողովրդի օգտին անում էին զանազան մարդիկ։ Պրինցեպսն իր վրա վերցրեց մայրաքաղաքի պրոլետարներին հացով կերակրելու հոգսը. նրա պաշտոնյաները պատրաստում էին, ծովով բերում էին անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ, դարսում էին ահագին պահեստատեղերում, վորոնք մի ամբողջ թաղ էին բռնում քաղաքում նավահանգստի դիմաց, և կատարում էին բաշխումը։

Պրինցեպսը վերցրեց իր վրա նույնպես զվարճությունների կազմակերպումը։ Դրանք զանազան խաղեր և հանդեսներ էին տոն օրերին,

Տոների թիվը շատ մեծ էր և հավասար էր տարվա մեջ յեղած բոլոր օրերի մի յերրորդին, իսկ հետո նույնիսկ կեսին։ Ժամանակ-առ-ժամանակ, ի նշան առանձին հանդեսների, օրինակ, հաջող պատերազմի վերջանալուց հետո, ժողովրդի համար սարքում էին անընդհատ տոնախմբություն, որ տևում էր մեկ կամ նույնիսկ յերկու, յերեք ամիս։

Հռոմեական ժողովրդի ճաշակը շատ ավելի գռեհիկ էր, քան հույներինը։ Թատրոններում յերաժշտություն, վոտանավորների ընթերցանություն և ճառերի արտասանում չէր լինում։ Պիեսները բարձր տեսակի չէին. ամենից ավելի սիրում էին **պանտոմիմներ**, այսինքն ներկայացումներ առանց խոսքերի, բալետ և ֆեերիաներ։ Բայց առանձնապես ընդունված



Ամֆիթատրոնի հատվածքը. ներքևի ծվածքը—ներկայացումների բեմը, շուրջը աստիճանավոր բարձրանում են հանդիսատեսների տեղերը. կտուր չունի։

էին կառքերի վազքի մրցություններ և զանազան արյունահեղ մարտեր։ Առաջինները տեղի էին ունենում կրկեսներում, յերկրորդները՝ ամֆիթատրոններում։ Յեվ այս և այն շենքերն իրենց չափերով շատ մեծ էին։ Հռոկայական ամֆիթատրոնը, վոր կոչվում էր Կոլիզեում և վոր կիսով չափ պահպանվել է մինչև մեր օրերը, կարող էր տեղավորել իր մեջ յերկու հարյուր հազար մարդ։ Բայց, այնուամենայնիվ, տեղեր գրավելու համար, ամբողջ հաճախ հավաքվում էր ներկայացման նախօրյակին և սպասում էր ամբողջ գիշերը։

Ներկայացումն սկսվում էր հանդիսավոր ծեսով։ Յերկար թափորն իջնում էր Կապիտոլիումից և ֆորումի վրայով մտնում էր կրկեսի դարպասը։ Առաջից գնում էր խաղերը բաց անող բարձրաստիճան պաշտոնյան. զարդարված կառքերի վրա, վորոնց յերբեմն լծված էին լինում փղեր, տանում էին աստվածների և աստվածացրած կայսրների պատկերներ, նրանց չորս կողմից քայլում էին քուրմերը։ Կրկեսում պատվավոր տեղերում նստում էին պրինցեպսը, նրա շքախումբը և սենատորները։ Դա մի հանդիսավոր հանդիպում էր պրինցեպսի և ժողովրդի միջև։

Ժողովուրդը վողջունում էր նրան ցնծության աղաղակներով։ Բայց ժողովուրդը յերբեմն արտահայտում էր նրան նույնպես և իր դժգոհությունը, բարձրաձայն գանգատվում էր վորևէ հալածանքի առիթով։ Պրինցեպսը կրկեսում ծանոթանում էր ժողովրդի տրամադրության և, յեթե անհրաժեշտ էր, շտապում էր այն հանգստացնել։ Կրկեսը կարծես փոխարինում էր հասարակական ժողովները, վորոնք այլևս չէին հրավիրվում։ Պրինցեպսը և ժողովուրդը միասին էին կարգադրություններ անում կրկեսում. պրինցեպ-

սը հրաման էր արձակում, վոր սկսվեն խաղերը, վոր տեղի ունենան այս կամ այն փոփոխությունները ու գործողությունները. ժողովուրդը կուսակցությունների յեր բաժանվում, բարձրաձայն արտահայտում էր իր համակրանքն իր սիրելիներին կառապանների և գլադիատորների շարքից: Կրկեսում կառապանները բաժանվում եյին՝ իրենց հագուստի գույնի համաձայն՝ կարմիրների, սպիտակների, կանաչների և կապույտների: Հանդիսատեսները, մինչև իսկ ինքը պրինցեպսը, ընտրում եյին իրենց համար նույնպես գույներ, աղմկում եյին, հուզվում եյին, գրազ եյին գալիս կառապանների և ձիերի համար, ջերմորեն վողջունում եյին վոմանց, անեծքներ եյին ուղղում մյուսների հասցեյին. շատերը նախորոք հարցնում եյին գուշակողներին խաղերի յելքի մասին:

Հռոմի առանձնահատկությունն եյին կազմում գլադիատորական մարտերը: Նրանք առաջ եյին յեկել մեռած առաջնորդների հիշատակը հարգելու նպատակով բերվող մարդկային զոհերի հնավանդ սովորությունից. գերեզմանի վրա մորթում եյին գերիներ և ստրուկներ կամ նրանց ստիպում եյին զույգ-զույգ կռվել իրար դեմ: Ապա այդ կռիվներն սկսեցին կրկնել զանազան տոնախմբությունների ժամանակ և հետզհետե ավելացնում եյին կռվող զույգերի թիվը: Ցեսարն ապշեցրեց ժողովուրդը, կռվի դուրս բերել տալով 600-ից ավելի գլադիատորներ: Հետո նրանց թիվը հասնում էր յերբեմն 10,000-ի: Գլադիատորների մեջ կային դատապարտված վոճրագործներ. վոմանց ազատ եյին արձակում միքանի տարի կռիվներին մասնակցել տալուց հետո: Նրանց մեծ մասին սովորեցնում եյին հատուկ դպրոցներում:

Յերկու գլադիատորի կռիվը: Յերրորդը գրգռում է նրանց:

Նրանց դուրս եյին բերում կռվի տարօրինակ զրահով. մերթ «կույր» սաղավարտով, վոր ծածկում էր աչքերը. մերթ, օրինակ, լիակատար կերպով սպառազինված կռվողի դեմ դուրս էր գալիս մեկ ուրիշը, վոր բոլորովին մերկ էր, իր ձեռքում բռնած ուներ մի յեռաժանի միայն, բայց նրա ձեռքին մի մեծ ցանց կար նաև, վոր նա աշխատում էր գցել հակառակորդի վրա և կաշկանդել նրան: Հակառակորդին գետին գլորելուց հետո հաղթող գլադիատորը դնում էր նրա վրա իր վոտքը և շուռ էր գալիս դեպի հանդիսատեսները. յեթե նրանք փողփողացնում եյին թաշկինակները, դա նշանակում էր, վոր պետք է խնայել պարտվածին, իսկ յեթե հանդիսականները վայր եյին իջեցնում իրենց մեծ մատը, այդ դեպքում գլադիատորը տեղնուտեղը սպանում էր հակառակորդին:

Օկտավիանոսին հաջորդող պրինցեպսները ժողովրդի համար զվարճությունների նորանոր տեսակներ եյին հնարում. նրանք բերել եյին տալիս մեծ քանակությամբ վայրենի և չտեսնված գազաններ ու թռչուններ. ամֆիթատրոններում հրապարակ եյին գալիս առյուծներ, վագրեր, փղեր,

ընգեղջյուրներ, կոկորդիլոսներ, ընձուղտներ, ջայլամներ. Նրանց պահում եյին կրկեսի գետնահարկում վանդակների մեջ և միանգամից մեծ քանակությամբ դուրս եյին բերում մեջտեղը, ասպարեզ: Նրանց դեմ դուրս եյին գալիս վորսորդներ զենքով կամ նրանց բերանն եյին գցում գերիներին և դատապարտյալներին. ամֆիթատրոնը հրապարակային մահապատժի տեղ էր: Կամ գետնի տակից հանկարծ բարձրանում եյին արհեստական անտառներ և նրանց մեջ դուրս եյին գալիս յեղջերուներ, վարազներ, քարայծներ. ճյուղերի վրա յերևում եյին թռչուններ, և ժողովրդին թույլ եյին տալիս նրանց վորսալու. կրկեսի շուրջն անցկացված ջրանցքները լցվում եյին ջրով, և նրանց մեջ լողում եյին հատկապես վարժեցրած ձկներ: Յերբեմն տեսարանն ստանում էր անլուր չափեր. կրկեսի ամբողջ կենտրոնը դարձնում եյին մի խոր լիճ, նրա մեջ մտցնում եյին իսկական ծովանավեր ստրուկներից վարժված նավաստիներով և սարքում եյին մի կատարյալ ծովային կռիվ, վոր վերջանում էր նավերի խորտակումով և մարդկանց վոչնչացումով:

Տոների և ներկայացումների օրերին ժողովուրդն ասես պրինցեպսի հյուրն էր համարվում: Մի անգամ 5000 ստրուկներ վառվող ճրագներով ճանապարհ դրին հանդիսականներին իրենց տները: Ներկայացման հետե-վում էր վորևէ հյուրասիրություն, նվերների բաշխում. մերթ ասպարեզի վրա դնում եյին մսի կտորներ, մերթ վերևից ամբոխի վրա գցում եյին թռչունների, աֆրիկական հավերի, յեգիպտական բադերի և այլն յե-միրամներ, մերթ հրապարակի մեջտեղը գցում եյին պատմուճանների մի ահագին կույտ: Վորովհետև հրհրոցի և բռնցքակռվի շնորհիվ, վոր անխուսափելիորեն ծայր էր տալիս, իրերը կտոր-կտոր եյին լինում, միջոց հղացան ամբոխի մեջ միայն նշաններ, փայտե գնդիկներ գցել: Այդպիսի տոմսակներով կարելի յեր հետո ստանալ միս, հաց, շոր, վոսկի, մարգարիտ, թանկագին քարեր, նկարներ, ստրուկներ, տնային կենդանիներ, ընտանիացած վագրեր ու առյուծներ և նույնիսկ նավեր, տներ և հողաբաժիններ:

Կայսեր յերկրպագումը: Յերբ նոր իրավակարգը հաստատվեց, Օկտավիանոսն ընդունեց նաև Օգոստոսի (այսինքն սրբազանի) նոր տիտղոսը: Այդ տիտղոսն նրա անունը դարձավ. կառավարիչը կարծես բարձրացավ բոլորի վրա, ինչպես մի բարձրագույն եյակ: Շատ բանով նրան պարտական մարդկանցից բանաստեղծ Վիրգիլիուսը, վոր յերկու անգամ իր կալվածքից արտաքսվել էր անհարկու զինվորների ձեռքով, փրկվել էր Օգոստոսի շնորհիվ և նրա մոտ ապաստան էր գտել, խանդավառորեն վողջունեց աստվածացրած Ցեսարին և իրան՝ Օգոստոսին:

Վիրգիլիուսը գրեց մի մեծ դյուցազներգություն՝ **Էնեիդան**, ի նմանողություն Հոմերոսի. Նրա բովանդակությունը Տրովադայի հերոս Էնեասի բախտն է, վոր կարողացել էր վողջ մնալ հույների ավերած Տրովադայի հրդեհից և կործանումից. յերկար թափառումներից հետո Էնեասը Իտալիա յե հասնում և իր տրովադացիների հետ դառնում է հռոմեական ժողովրդի նախահայրը. աստվածները գուշակում են նրան հռոմայեցիների մեծ ապագան: Վիրգիլիուսի դյուցազներգությունը Հռոմի հետ միասին փառաբանում էր նաև վերջին յերկու մեծ կայսրներին, վորովհետև Էնեասը համարվում էր Յուլիուս Ցեսարի և Օգոստոսի նախահայրը:

Քաղաքացիական պատերազմների զարհուրելի պահին, յերբ կռվին մասնակցողներն ագահորեն ընկած էյին ավարի յետևից, հին հավատը սաստիկ խախտվեց։ Բազմաթիվ հռոմայեցիներ ամենևին չէյին կատարում այլևս ծեսերը և չէյին աղոթում․ հավատացնում էյին, վոր իրենք քուրմերն ու գուշակողներն առանց ծիծաղի չեն կարողանում իրար յերես նայել։ Անհավատների թվում էր նաև Յուլիուս Ցեսարը, վոր շատ անգամ բացահայտորեն ասում էր, թե չի ճանաչում հոգու անմահությունը։ Յերկարատև խռովությունների բերած աղետներն ու քայքայումները փոխեցին մարդկանց տրամադրությունը․ պատերազմից հոգնած մարդիկ սկսեցին մխիթարություն փնտրել ուխտագնացությունների մեջ, դիմել գուշակողներին, վորոնել հին սրբավայրեր։ Վիրգիլիուսը բաժանում էր այդ զգացումները։ Նրա Էնեասը դուրս է բերված վորպես մի բարեպաշտ հերոս․ նա ամեն ինչ անում է այնպես, ինչպես հրահանգում են աստվածները․ այդ պատճառով նա ամենուրեք հաջողություն ունի․ ասես նա կոչված էր հռոմայեցիներին հիշեցնելու, վոր Հռոմի ամբողջ մեծությունը աստվածներն են ստեղծել։ Օգոստոսը կամենում էր պահպանել այդ տրամադրությունը և ցույց տալ, վոր և նա, գերագույն կառավարիչը, ամենուրեք և միշտ աստվածների հետ միաբան է․ գերագույն քուրմի տիտղոսն ընդունելով, նա յեռանդուն կերպով սկսեց ծեսեր սահմանել։

Հռոմում փողոցների յուրաքանչյուր անկյունում դրված էյին թաղի պահպանիչ աստվածների՝ **լարերի** բագինները․ ժամանակ-առ-ժամանակ նրանց մոտ ժողովուրդը հավաքվում էր տոներին, ծաղիկներով ու կանաչով էր զարդարում բագինն ու փոքրիկ հրապարակը, խմբապար էր բռնում։ Օգոստոսի հրահանգով, աղոթքների մեջ լարերի անվան հետ միասին պարտավոր էյին հիշել կայսեր «հանճարին», այսինքն նրա հովանավոր-վոգուն։

Բոլոր պրովինցիաներին առաջարկվում էր, վոր աղոթեն Օգոստոսի հանճարին և Ռոմա աստվածուհուն (Հռոմ—լատիներեն Ռոմա)։ Յուրաքանչյուր հպատակ ժողովուրդ միացնում էր Օգոստոսին և Ռոմային իրենց աստվածների հետ և պաշտում էր նրանց իր լեզվով և իր առանձնահատուկ ծեսերով։ Այդ պաշտամունքի իմաստն այն էր, վոր բոլորը հնազանդություն էյին ցույց տալիս Հռոմին և նրա կառավարչին․ Ռոմայից և Օգոստոսից պիտի սպասեյին բոլորը նաև ամեն տեսակ բարիքներ։ Յուրաքանչյուր յերկրամասում ամենահարուստ և ականավոր ընտանիքներից միքանի քուրմեր էյին ընտրում՝ հանդիսավոր ծեսեր կատարելու և խաղեր կազմակերպելու համար ի պատիվ այդ աստվածների․ արևելքում, հունարեն լեզվով խոսող յերկրներում նրանք **արխիերեոս** էյին կոչվում, արևմուտքում—լատիներեն **ֆլամինուսներ**։ Տոների ժամանակ զանազան վայրերից ընտրյալները հավաքվում էյին պրովինցիայի գլխավոր քաղաքը՝ **միտրոպոլիան** (նույնն է, ինչ վոր հին արտասանությամբ մետրոպոլիան) և կազմում էյին վողջույնի մի գիր՝ ուղղված կայսեր։ Կայսեր հանճարը ներկայացնող արձանին հաղորդում էյին կայսեր գծերը, և այսպիսով հռոմայեցիք սովորեցնում էյին պրովինցիաների բնակիչներին պաշտել կայսրին, վորպես աստծու։

X

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ․

Յուլիուս-Կլավդիուսների հարստությունը։ 44 տարի (սկսած 30 թ. Ք. Ծ. առաջ մինչև 14 թ. Ք. Ծ. հետո) Օգոստոսը կառավարեց պետությունը առանց ախոյանների։ Նրա կարևորագույն հենարանն էյին լեգիոնները։ Ճիշտ է, նա արդեն չէր դուրս գալիս իբրև հրամանատար, բայց դրա փոխարեն վորպես հրամանատար ուղարկում էր բացառապես իր ժառանգներին, թոռներին և խորթ զավակներին։

Քանի վոր Օգոստոսի հարազատ ժառանգները Յուլիուսի տնից բոլորն էլ մեռան նրանից առաջ, կայսեր իշխանությունն անցավ նրա խորթ վորդուն՝ Տիբերիուսին, վոր Կլավդիուսների տոհմից էր։

Օգոստոսի ժամանակ դեռ պահպանվում էր հանրապետության վորոշ յերևույթը։ Տիբերիուսն ամենևին վերացրեց համայնական ժողովները, մայրաքաղաքի ամբողջ վարչությունը հանձնվեց **պրեֆեկտին** (քաղաքապետին), վորին կայսրն էր նշանակում․ կոնսուլների, պրետորների, էդիլների անունները մնացին միայն, վորպես պատվավոր տիտղոսներ, «նորին գերազանցության» նման։ Տիբերիուսը շարունակում էր գումարել սենատը և նրա հանդեպ հարգանքի նշաններ արտահայտել․ սակայն ընդմին աչալրջորեն հետևում էր, վոր հարգանք չհայտնվի հանրապետության հանդեպ։ Հաճույքով նա ընդունում էր գաղտնի ամբաստանագրեր՝ ուղղված Կատոնի, Բրուտուսի և Կասսիուսի հիշատակը հարգող յերևելիների դեմ, առատորեն վարձատրում էր կլիենտներին և ստրուկներին, վորոնք ծածուկ կերպով լսում էյին խոսակցությունները տներում և մատնում էյին իրենց տերերին։ Նրանց, վորոնց վրա կասկած էր ընկնում, մեղադրում էյին «թագավորի մեծությունը վիրավորելու» մեջ, աքսոր էյին ուղարկում, մահապատժի էյին յենթարկում։ Ամբաստանիչներն ստանում էյին դատապարտյալի կարողության քառորդ մասը։ Այդպիսի դատավճիռներից ամենամեծ օգուտն ստանում էր ինքը կայսրը․ նրա ձեռքն էյին անցնում մեծ կալվածքներ ստրուկների ընդարձակ ընտանիքներով հանդերձ․ ամբողջ Իտալիայում և բոլոր պրովինցիաներում աճում էր թագավորի **պատրիմոնիումը** (արքունական կալվածքները), և էլ ավելի ուժեղանում էր նրա իշխանությունը։

Հռոմում հաստատվեցին կարգեր, վորոնք միանգամայն հիշեցնում էյին արևելյան յերկրների կենցաղը, ուր հպատակները ներկայացնում էյին մի հոտ, վոր անմռունչ յենթարկվում էր բռնապետի քմայքներին։ Տիբերիուսի հաջորդը՝ խենթ Կայուս Կալիգուլան իր արքունիքում մտցրեց խորին յերկրպագություններ, միապետի վոտքերի համբույրումներ։ Նա արդեն չէր բավականանում **ապոթեոզով**, այսինքն մեռած կայսրին աստվածների շարքը դասելով, այլ կամեցավ, վոր իր կենդանի ժամանակն արդեն աստվածային պատիվներ մատուցանեն իրեն, համեմատում էր ինքն իրեն Յուպիտերի հետ և պահանջեց, վոր հրեաները տեղավորեն նրա արձանը իրենց տաճարում։ «Ցեսարական խենթության» նշաններ ուներ նաև Յուլիուսի տան

վերջին կայսրը՝ Ներոնը, վոր իրան մեծ արտիստ յերևակայեց: Յերբ նա դուրս եր գալիս Թատրոնում վորպես յերգիչ, սարսափից դողացող հասարակությունն ստիպված եր նրան դիմավորել շառաչալից խանդավառությամբ: Ներոնն իր դեմ զինեց նույնիսկ հռոմեական ամբոխը, վորին ցեսարներն աշխատում եյին սիրաշահել: Պատմում եյին, վոր մի անգամ, յերբ



Հռոմեական ջրմուղի մնացորդները սպանական մի քաղաքում:

դրսից ստացվող հացի պակասությունից մայրաքաղաքին սով եր սպառնում, և յերբ ժողովուրդն անհամբերությամբ սպասում եր, չե՞ն մոտենում արդյոք Յեգիպտոսից յեկող փրկարար նավերը, ծովի վրա խոռք յերևաց Ալեքսանդրիայից յեկող մի նավ. բայց նա Ներոնի հրամանով բերում եր Նեղոսի նուրբ ավազը Թատրոնական բեմի համար: Պատմում եյին նույնպես, վոր, յերբ Հռոմում մի հսկայական հրդեհ բռնկվեց, և այրվեցին աղքատների ահագին թաղերը, Ներոնն իր պատշգամբից հրճվում եր հրային ծովի տեսարանով և հոմերական վոտանավորներով յերգում եր Հռոմի հրդեհը:

Ընդհանուր ստորաքարշության մեջ քիչ եյին պատահում անկախ բնավորության տեր մարդիկ, վորոնք վոգևորվում եյին հռոմայեցիների հնավանդ հպարտությամբ: Նրանք յուրացրել եյին հույն ստոյիկյանների մաքերը. մարդկային գոյության նպատակը վոչ թե կարճատև յերկրային կյանքն և իր փութանցիկ ուրախություններով, այլ հոգու փրկությունը հավիտենական կյանքի համար, այսինքն նրա մաքուր, անարատ պահպանությունը: Այդպես եր սենատոր Տրազեա Պետուսը, վոր Ներոնի ժամանակ ձայն բարձրացրեց ի պաշտպանություն սենատի արժանապատվության: Իր համառությամբ մատնիչների և իրան՝ Ներոնի ագահությունը

գրգռելով, Տրազեան մահվան դատապարտվեց. վորպես վերջին վողորմություն, նրան թույլ տվին ինքնասպանությամբ վերջ դնել իր կյանքին: Նախքան վաննան մտնելը, ուր նա պիտի կտրեր իր յերակը, Տրազեան ընդունեց մահվան վողջերթ մի Թափառական քարոզչից՝ կինիկոս Դեմետրիուսից. ապա նա ինքն իր արյունը շաղ տվեց ներկա յեղողների վրա, վորպես որհնություն մեռնողի: Տրազեայի մարտիրոսական վախճանի հիշատակը յերկար ժամանակ հետո ծառայում եր վորպես սփոփանք նրանց բոլորի համար, վորոնք բաժանում եյին ստոյիկյանների հայացքները և ձգտում եյին մաքուր, արժանավոր կյանքի:

Ներոնը պահպանում եր իր դիրքը հաստատուն կերպով, քանի դեռ պրետորյանների դվարդիան նրա կողմն եր, և քանի դեռ հանգիստ եյին լեգիոնները: Բայց յերբ խռովություն սկսվեց զինվորների մեջ, նրա իշխանությունը խախտվեց: Բանակը լավ եր հիշում, վոր կայսրը Հռոմում գոյություն ունի նրա վողորմածությամբ: 68 թ. Սպանիայում և Հռենոսի վրա կանգնած զորքերը կայսր հռչակեցին իրենց հրամանատարներին և Հռոմի վրա շարժվեցին. Ներոնը հուսահատությունից ինքնասպանություն գործեց: Մինչ այդ պրետորյանները նույնպես ընտրեցին իրենց կայսրին, իսկ սյուրիական զորքը կայսր հայտարարեց իր հրամանատարին՝ Ֆլավիուս Վեսպասիանին: Հաղթությունը տարավ Վեսպասիանը, վոր այդ ժամանակ հրեական մեծ ապստամբության ճնշումով եր զբաղված:

Հրեաստանը Հռոմի իշխանության տակ: Քրիստոսի ծննդյան ժամանակի մոտ. հրեաները կազմում եյին մի բազմաթիվ, հարուստ և լուսավորված ուժ: Նրանց մի մասը գտնվում եր պարթևների պետության մեջ Յեփրատի վրա, մյուս մասը՝ հռոմեական տերության սահմաններում, ընդ սմին «ցրված հրեաները» կամ գաղթականները տարածված եյին Յեգիպտոսում, Կիրենայում, Սյուրիայում, Փոքր Ասիայում, Հունաստանում և Իտալիայում. մի մեծ հրեական գաղութ կար նաև Հռոմում: Հրեաները զրույցի, աղոթքի և ուսման համար հավաքվում եյին **սինագոգներում**, վորոնք զարմացնում եյին ոտարներին ամեն տեսակ զարդարանքների և պատկերների բացակայությամբ: Հեռու Յերուսաղեմի իրենց մեծ տաճարից՝ նրանք սերտ հարաբերություններ եյին պահպանում իրենց հայրենիքի հետ, և կանոնավոր կերպով տուրք եյին ուղարկում այդ տաճարին՝ մարդ-գլուխ յերկուական արծաթե դահեկան: Սակայն Պաղեստինի հրեաներից գաղթական հրեաները նկատելի կերպով տարբերվում եյին «հեթանոսների» հանդեպ ունեցած վերաբերմունքով (հրեական «ժողովուրդներ» բառն ենք մենք թարգմանում այդպես, վոր ընդգրկում եր ուրիշ հավատի և լեզվի պատկանող բոլոր ժողովուրդները, բացի իսրայելացիներից, վորոնք ճշմարիտ հավատ եյին դավանում): Այն ժամանակ, յերբ Պաղեստինի հրեաներն իրենց հեռու եյին պահում այլազգիներից, գաղութների գրողներն ու քարոզիչները ձգտում եյին հրեական հավատին դարձնել հեթանոսներին. հրեական համայնքներն ընդունում եյին **պրոզելիտներին**, այսինքն հավատափոխ հույներին, հռոմայեցիներին և այլոց, վորոնք համաձայնվել եյին կատարել հրեական ծեսերն ու սովորությունները: Հրեական կրոնով սկսեցին տարվել նույնիսկ նշանավոր հռոմեական յերևելիները. հավատափոխների թվում եր Ներոնի կինը՝ Պոպպեա Սաբինան:

Մինչ հրեական հավատալիքները ընդարձակորեն տարածվում եյին բովանդակ կայսրության մեջ, Պաղեստինի հրեաների հետ հռոմայեցիք չեյին կարողանում հաշտ ապրել։

Սկզբում հրեաները սահմանափակվեցին Հրեաստանի հպատակությամբ, յերկրի կառավարությունը թողնելով տեղական իշխանների ձեռքը։ Այսպես եր Հերովդեսը, վոր ստեպի վայրենի ցեղերից եր և բռնի ուժով գրավել եր քահանայապետ-թագավորի տեղը Մակկաբեականների տոհմից։ Նա շատ հմտորեն հաճոյանում եր, քաղաքացիական պատերազմների ժամանակ, մերթ Պոմպեուսին, մերթ Ցեսարին, մերթ Բրուտուսին և Կասսիուսին, մերթ Անտոնիուսին, մերթ, վերջապես, Օկտավիանուս-Օգոստոսին։ Քծնելով հռոմայեցիների առաջ, Հերովդեսը (40—4 թ.թ. Ք. ծ. առաջ) զետեղեց հռոմեական վոսկե արծիվը տաճարի դարպասի վրա և աշխատում եր Յերուսաղեմը դարձնել մի արեմտյան քաղաք թատրոնով, խաղերով, մարմնամարզական դպրոցներով։ Ամեն տեղ նա շինել տվեց Կեսարիաներ, այսինքն իպատիվ կայսրների սրբավայրեր ունեցող քաղաքներ. ամեն տեղ ժողովրդին ահաբեկելու համար նա կառուցել տվեց բերդեր, ուր շղթայակապ տանջվում եյին նաև նրա իշխանության հակառակորդները։ Չնայելով վոր Հերովդեսը իր հերթին աշխատում եր տաճարը զարդարելով, աստվածպաշտության համար առատ նվերներ տալով հաշտեցնել իր հետ հրեաներին, այնուամենայնիվ ժողովուրդն ատում եր նրան. անօրեն թագավորը թվում եր կատարյալ հակապատկերը Մեսսիայի՝ այն մեծ և սուրբ առաջնորդի, վորին հրեաներն սպասում եյին Մակկաբեականների ապստամբության ժամանակներից իվեր։ (Մեսսիա նշանակում ե օծյալ և հունարեն թարգմանվում ե Քրիստոս բառով)։

Հերովդեսի մահից հետո Օգոստոսը վորոշեց Պաղեստինը միացնել կայսրության և ուղարկել այնտեղ պրոկուրատորներ։ Հրեական ժողովուրդն զգաց իրեն ասես գերության մեջ հռոմայեցիների մոտ։ Զորանոցներում տաճարի մոտ տեղավորվեց հռոմեական պահակազորքը. մեծ տոներին, յերբ տաճարի սյունաշարքերն ու գավիթները լիքն եյին աղոթողների անծայր բազմությամբ, զինվորները զենքերը ձեռքերին պատրաստ կանգնած եյին. վոր գրոհ տան ամբոխի վրա, յեթե կոչ լինի ապստամբության։ Հռոմայեցիք յերկրում մտցրին ծանր հարկեր։ Տուրքերից ավերված գյուղացիներն սկսեցին թողնել իրենց գյուղերը և մտնել ավազակային խմբերի մեջ։ Խիզախ հանրապետական Հուդա Գալիլեացին իր վորդիների հետ դժգոհ թափառաշրջիկներից և ավազակներից խմբեր կազմեց և ապստամբության առաջին օրինակը տվեց կայսրության դեմ, հայտարարելով, վոր, աստծուց զատ, հրեական ժողովուրդը չպիտի ունենա վորևե այլ կառավարիչ։

Հռոմեական պաշտոնյաներն իրենց անպատշաճ յեռանդով ամենախաղաղ հրեաների մեջ իսկ գրգռում եյին հարուցում։ Պրոկուրատոր Պոնտիոս Պիղատոսը, իր պաշտոնն ստանձնելով, վորոշեց Յերուսաղեմում մտցնել հռոմեական զինանշաններ կայսեր արծաթե պատկերով։ Նա հրամայեց գիշերն աննկատելի կերպով դնել այդ զինանշանները տաճարի մոտ։ Առավոտից սարսափելի հուզում սկսվեց. մի ահագին ամբոխ ռաբբիների գլխավորությամբ ուղևորվեց պրոկուրատորի մոտ Կեսարիա ծովափնյա քաղաքը,

վոր Յերուսաղեմից միքանի տասնյակ վերստի վրա յեր գտնվում։ Հինգ որ ու գիշեր նա կանգնած մնաց Պիղատոսի տան առջև, աղմուկով պահանջելով հռոմեական զինանշանների հեռացումը տաճարից։ Պիղատոսը հրամայեց յեկողներին կրկես գնալ իբր թե նրա համար, վոր խոսի նրանց հետ. այստեղ նա շրջապատեց ամբոխը զինվորներով և հրամայեց մերկացնել զենքերը։ Այն ժամանակ հրեաները գետին ընկան և բացին իրենց վզերը գլխատման համար. նրանք հայտարարեցին, վոր ավելի լավ ե մեռնել, քան թույլ տալ, վոր խախտվի օրենքը. Պիղատոսը՝ շփոթված՝ ստիպվեց զիջել։

Վորքան ավելի եյին յենթարկվում հրեաները հալածանքների, այնքան ավելի յեր աճում նրանց հավատը, վոր կգա հրաշալի փրկությունը, կգա Մեսսիան՝ մեծ ժողովրդական առաջնորդը, վոր Դավիթ թագավորին նման կլինի և նրա տոհմից։ Հարուստ ընտանիքները, վորոնց միջից քահանայապետ եյին ընտրում (**սադուկեցիների** կուսակցությունը), չեյին բաժանում Մեսսիայի հավատը. կազմելով սինեդրիոնը, այսինքն բարձրագույն հոգևոր խորհուրդը, նրանք գոհ եյին այն բանով, վոր բովանդակ կայսրության մեջ տարածվում ե հրեական կրոնը, վոր աճում են Յերուսաղեմի տաճարի յեկամուտները, և չեյին կամենում գժտվել հռոմայեցիների հետ։ Այլ կերպ եյին մտածում միջակ կարողության տեր մարդիկ, գյուղացիներն ու աղքատները, ինչպես նաև հասարակ քահանաներն ու գիտնական դպիրների մեծ մասը։ Ժողովրդի այդ ամբողջ մասսան իր հերթին յերկու մասի յեր բաժանվում՝ խաղաղների և մարտականների։ Խաղաղները, **փարիսեցիների** վարդապետության համաձայն, աշխատում եյին հին սովորությանց մաքրությունը պահպանել և խստությամբ ծեսերը կատարել. Մեսսիայի գալուստը նրանք ընդունում եյին, վորպես խաղաղության և բարօրության թագավորության տիրապետությունը, վոր պիտի ուղարկե աստված իվարձատրություն ժողովրդի անլուր տառապանքների համար։ Ընդհակառակը, **զելոտները** (նախանձախնդիրները) կատաղի և անխնա կռվի եյին պատրաստվում օտարերկրացիների դեմ. Նրանց մեջ առաջ յեկան ռազմական խմբեր և միություններ, վորոնց անդամներն իրար սարսափելի յերդումներ եյին տալիս, վոր վոչ միայն բոլոր միջոցներով կվոչնչացնեն հռոմայեցիներին, այլ և կսպանեն իրենց հավատակիցներին, յեթե սրանք արգելք հանդիսանան ազատության գործին։

Փարիսեցիները զելոտներից տարբերվում եյին և այն բանով, վոր պահպանում եյին տաճարի և հին աստվածպաշտության սրբությունը, մինչդեռ անհաշտների կուսակցությունը կարծում եր, վոր ժողովուրդը կարող ե և առանց տաճարի ապրել։ Նույնպես անտարբեր եր տաճարի նկատմամբ և չորրորդ կուսակցությունը՝ **յեսսեյաններ**, վորոնց մեծ մասն ապրում եր վոչ թե քաղաքներում, այլ առանձին գյուղերում, [illegible] անապատի սահմանի վրա։ Յեսսեյանները կազմում եյին յեղբայրական համայնքներ, իրենց պահում եյին մնացած ժողովրդից հեռու, աչքի եյին ընկնում իրենց սպիտակ հագուստով և հաճախակի լվացումներով. Նրանցից շատերը կուսակրոնի խստակյաց կյանք եյին վարում, պաս եյին պահում, չեյին ամուսնանում։ Յեսսեյանների ծեսերն աչքի եյին ընկնում իրենց պարզությամբ. նրանք ամենևին սինագոգներ չունեյին. նրանք հավաքվում եյին

վաղ առավոտյան և սաղմոսերգությամբ եյին դիմավորում արևի ծագումը։

Հրեական մեծ ապստամբությունը։ 66 թ. Ներոնի ժամանակ զելոտները մեծ բազմությամբ Յերուսաղեմ մտան և պահանջեցին, վոր վերացվեն Օգոստոսի կարգադրությամբ կայսերական տան համար կատարվող ամենօրյա զոհաբերությունները։ Դա նշանակում եր կատարել խզում Հռոմի հետ։

Տաճարը կառավարող հարուստ քահանայական ընտանիքները, կամենալով փրկել Յերուսաղեմի գանձերը, ակամայից ստիպված եյին միանալ ժողովրդական շարժման. հռոմայեցիների դեմ ուղարկված զորքի գլուխը նրանք դրին յերիտասարդ գիտնական դպիր Հովսեփին՝ Մաթթիասի վորդուն, վոր Մակկաբեականների, նախկին թագավորական տան, ազգականն եր։ Մինչ այդ հյուսիսից վրա յեր գալիս հռոմեական փորձված հրամանատար Վեսպասիանը։ Հրեաները կանոնավոր զորք չունեյին, իսկ կամավորական խմբերը չեյին կարող բաց դաշտում կռվի դիմանալ հռոմեական լեգիոնների հետ։ Ամբողջ կռիվը վերածվեց Պաղեստինի բերդերի պաշտպանության։ Հովսեփը փակվեց Յոթապատում, վոր շինված եր Գալիլեայի բարձր ժայռերի վրա, և կատաղի դիմադրություն ցույց տվեց Վեսպասիանին։ Հռոմայեցիների գրոհն ստիպեց հանձնել բերդը, բայց ամենաքաջարի կռվողներն ուժով քաշեցին-տարան իրենց հետ Հովսեփին և պահվեցին մի այրում, ուր նրանք վորոշեցին սրախողխող անել իրար։ Հովսեփը կարողացավ այնպես անել, վոր ինքը մնաց վերջինը մի ընկերոջ հետ, և անձնատուր յեղավ հռոմայեցիներին։ Վեսպասիանն ընդունեց նրան իր կլիենտների շրջանը և նրան Ֆլավիուս ազգանունը տվավ։ Հետո Ֆլավիուսը, վորպես արքունական պատմաբան, փորձ արեց հռոմայեցիներին բացատրելու, վոր հրեական ժողովրդի մեծ մասը պատերազմի դեմ եր. նրա պատմությունից, ընդհակառակը, յերևում ե, վոր նրա հայրենակիցներից շատ-շատերը տարված եյին այն հավատով, թե մեծ Հրեաստանը պիտի իշխե ամբողջ աշխարհի վրա։

Վեսպասիանն արդեն պատրաստվում եր գնալ Յերուսաղեմի վրա, յերբ սկսվեցին խռովությունները կայսրության մեջ, և լեգիոնները նրան կայսր ընտրեցին։ Գրեթե յերկու տարով կանգ առավ պատերազմը Պաղեստինում, բայց հրեաները՝ բորբոքված փոխադարձ դաժան թշնամությունից, ժամանակ չունեցան վորևե բան անելու։ Յերբ Յերուսաղեմին մոտեցավ Վեսպասիանի վորդին՝ Տիտուսը, զելոտները, գործից հեռացնելով սադուկեցիներին, վիճակով քահանայապետ ընտրեցին, դրավեցին տաճարի վոսկին և բերդի պատնեշների համար վերցրին տաճարի շենքի սքանչելի մարմարն ու պորփյուրը։ Նրանց սեփական շրջանում յեռում եր կռիվը. յերբ Հուդա Գալիլիացու վորդի Մանաիմը, վոր Յերուսաղեմ եր յեկած իր խմբի հետ, հայտնաբերեց թագավորական ձգտումներ, հանրապետականները սպանեցին նրան։ Զելոտները կռվում եյին հուսահատ քաջությամբ, բայց ել ավելի, քան հռոմայեցիների դեմ, նրանք կատաղաբար կռվում եյին իրենց այն հավատակիցների դեմ, վորոնք առաջարկում եյին հանձնել քաղաքը և հաշտվել։ Յերբ հռոմայեցիք մեկը մյուսի յետևից գրոհով վերցրին Յերուսաղեմը շրջապատող յերկու պատերը, տաճարը դեռ շարունակում եր պաշտպանվել, վորպես մի անմատչելի ամրություն. ի մեծ սարսափ հավատա-

յալների՝ սրբատեղին մարդկային արյունով ներկվեց։ Վերջապես, յերբ պաշարվածները սովից ուժասպառ յեղան, տաճարի բոլոր գավիթներն ու դահլիճները կրակներով ծածկվեցին, հռոմայեցիք այրեցին հսկայական շենքը. տաճարի ծայրագույն անկյունում նրանք գտան 6000 մարդուց բաղկացած մի ամբոխ, նրանց թվում նաև կանայք ու յերեխաներ. նրանց հավաքել եր մարգարեն, վոր խանդավառել եր նրանց, խոստանալով, թե վերջին ամենասարսափելի վայրկյանին կկատարվի փրկության հրաշքը, և կգա Մեսսիան։ Հռոմում մինչև այժմ ել կանգնած են հրեաների վրա տարած արյունոտ հաղթանակի յերկու հուշարձանները—Տիտուսի հաղթական կամարը, վորի վրա ներկայացված ե, թե ինչպես հռոմեական զինվորները տանում են յոթճեռանի կանթեղը, վոր գրավել եյին Յերուսաղեմի տաճարի Սրբություն Սրբոցի մեջ, և Վեսպասիանի շինած Ֆլավիուսի ամֆիթատրոնը (Կոլոսսեյում կամ Կոլիզեյում), մեծագույնն ամբողջ աշխարհում, ուր հռոմեական ամբոխի վորոտալից աղմուկի տակ հրեական գերի ապստամբներին դցում եյին վայրենի գազանների բերանը։

Հաղթական կամար Հռոմում (Յերուսաղեմն ավերող Տիտոս կայսեր)։

Յերուսաղեմի անկումը հրեական ժողովրդի մեծ կործանումն եր։ Հռոմայեցիք սկսեցին գլխահարկ վերցնել հրեաներից, ինչպես ստրուկներից, և արգելեցին վերականգնել մեծ տաճարը՝ նրանց զրկելու համար կենտրոնատեղից։ Սինեդրիոնը և քահանայապետական ավանդականության տիրապետությունը վերջացավ. ցիրուցան յեղած հրեական համայնքներում մնացին միմիայն ռաբբիները, այսինքն դպիրներն ու վարժապետները։ Հրեաները յերկու մասի բաժանվեցին. մի մասը շարունակում եր հետևել Մովսեսի որենքին, հույսեր տածել աստծու ոգնության վրա տաճարի վերականգնման գործում ի վարձատրություն ժողովրդի՝ հնության հանդեպ ցույց տված հավատարմության (ժողովրդի այդ մասի ժառանգները ժամանակակից հրեությունն են կազմում)։ Մյուսները հրաժարվեցին և՛ յերկրային թագավոր Մեսսիայի հավատից և՛ հին որենքի պահպանումից. նրանց թվում

եյին յեսսեյանները, ինչպես նաև **հրեական-քրիստոնեական** համայնքները, վորոնք մոտ եյին յեսսեյաններին։ Պաղեստինում մինչև 70 թ. քրիստոնյաներ քիչ կային. Յերուսաղեմի անկումից հետո քրիստոնեությունն սկսեց տարածվել հրեա-գաղթականների մեջ, վորոնք առհասարակ քիչ եյին կապված հին ծեսերի հետ։

Հռոմի պայքարը բարբարոսների հետ։ Այն ժամանակ, յերբ տեղի եյին ունենում արյունահեղ դեպքերը արևելքում, հռոմայեցիք շարունակում եյին գրեթե անընդհատ կռիվը կայսրությունը հյուսիսից շրջապատող բարբարոսների աշխարհի դեմ։ Ներկայումս վայրենի և հետամնաց ցեղերը յեվրոպացիներից հեռու յեն ապրում և՝ համեմատած **կուլտուրական** ժողովուրդների հետ՝ ներկայացնում են մի աննշան բաժան-բաժան յեղած մաս։ Յերկու հազար տարի առաջ քաղաքակիրթ և վայրենի ժողովուրդների փոխհարաբերությունը գրեթե հակառակն եր։ Վայրենիները բռնում եյին Յեվրոպայի միջին մասը, հյուսիսը և արևելքը, ցամաքների մոտ $^4/_5$ մասը։ Նրանք կանգնած եյին քաղաքակիրթ աշխարհի հենց շեմքին. ժամանակ-առ-ժամանակ վորևե հորդա ներս եր խուժում հարավի մշակված յերկրները և սարսափելի ավերումներ եր կատարում այնտեղ։ Այդպես Իտալիայի և Միջերկրական ծովի վրա խուժեցին կիմվրներն և տևտոնները։

Սահմանամերձ լեռներում խիտ բուն եյին դրել ավազակային ցեղերը։ Հռոմայեցիք յերկար ժամանակ չեյին կարողանում ոգտվել ալպիական անցքերից՝ Իտալիայի և հարավային Գալլիայի միջև հարաբերությունը պահպանելու համար։ Ալպիական լեռնցիները հարձակվում եյին անցորդների վրա, բարձրություններից վայր եյին գլորում հսկայական քարակույտերը անցնող հռոմեական զորքերի վրա. մի անգամ նրանք թալանեցին արծաթով բեռնավորված մի ամբողջ սայլաշարք, վոր ուղարկված եր կայսրի համար։ Հռոմայեցիք սկսեցին անխնայորեն վոչնչացնել լեռնցիներին. 45.000 մարդուց բաղկացած մի ամբողջ ցեղ նրանք ստրկության ծախեցին այն պայմանով, վոր գնողները նրանց հեռավոր տեղեր տանեն և 20 տարուց առաջ նրանց չարձակեն։

Յերբ Ցեսարը նվաճեց անդրալպյան Գալլիան, նա ստիպված յեղավ գործ ունենալ խիստ ռազմասեր և անհանգիստ **գերմանացիների** հետ, վորոնք գալիս եյին Հռենոսի այն կողմերից։ Ցեսարի հաջորդները նույնպես հաստատուն չեյին համարում իրենց տիրապետությունը Գալլիայում, մինչև վոր չփակվեր ճանապարհն արևելքից յեկող գերմանական զորախմբերի առաջ։ Վայրենիների յերկիրն ինքնին քիչ եր գրավում գերմանացիներին, գերմանացիների բռնած յերկրամասը (այժմյան Գերմանիան, Բոհեմիան, Լեհաստանը, Հոլանդիան, Դանիան և Շվեցիայի հարավը) ծածկված եր անտառով և ճահիճներով։ Ահագին խիտ անտառները տարածվում եյին հարյուրավոր վերստերի վրա։ Հերցինյան անտառն սկսվում եր միջին Հռենոսից և ծավալվում դեպի արևելք, կազմելով ըստ լայնության յերկու ամսվա ճանապարհ (1500 վերստ)։

Ամեն անգամ, յերբ արշավանք եր սկսվում Գերմանիայի խորքը, հռոմայեցիները անհաջողություն եյին ունենում։ Ոգոստոսի իշխանության վերջին Տևտոբուրգյան անտառում յերեք լեգիոններ դարան ընկան, վոր սար-

քել եր Արմինիուսը խերուսկների ցեղից, և կոտորվեցին։ Տիբերիուսի ժամանակ նրա խորթ զավակը՝ Գերմանիկուսն աշխատում եր նվաճել յերկրի հյուսիսային մասը, ցամաքի ճանապարհով Հռենոսի և Վեզերի վրայով զորքեր տարավ մինչև Էլբա, ինչպես նաև նավատորմ ուղարկեց Հյուսիսային ծովի կողմից. բայց մեծ արշավանքի բոլոր հաջողություններն իզուր յեղան, հենց վոր նվաճողը յետ դարձավ։ Հռոմեական լեգիոններն իրենց սքանչելի զենքով և հրետանիով կանոնավոր ճակատամարտերում կատարյալ գերակշռություն ունեյին գերմանացիների հանդեպ։ Բարձրահասակ և ուժեղ վայրենիները քարե, ոսկրե, յեղջյուրե վատ զենք ունեյին. հաճախ միայն առաջին շարքում կանգնած եյին լինում բրոնզե կամ յերկաթե ծայր ունեցող յերկար նիզակներով զինված կռվողներ, մյուսները զինված եյին լինում նետերով և կարճ փայտե, կրակի վրա այրված ծայր ունեցող տեգերով։ Բայց վորովհետև յերկրի մեջ ճանապարհներ չկային և չեր կարելի պաշար ձեռք բերել, նրա նվաճումը դարձավ մի անհուսալի գործ։

Այդ պատճառով հռոմայեցիք փոխեցին իրենց գործողությունների յեղանակը։ Նրանք վորոշեցին կառուցանել մի զինվորական սահման՝ արշավանքներից պաշտպանելու համար դեպի Գալլիա և ալպիական անցքերը տանող ճանապարհները։ Մշտական բնակության համար այստեղ փոխադրեցին կայսրության բոլոր ռազմական ուժերի կեսից ավելին։ Ճանապարհների հանդիպման կետերում, գետերից անցնելու գլխավոր տեղերում բերդեր շինեցին. ապա հարավ-արևմտյան Գերմանիայի անկյունը ամրացրին հողապատնեշով ու փոսով. հողապատնեշի վրա բարձրանում եյին պահակակայաններ և առանձին փակ ամրություններ յետևում, վորպես պաշտպանողական յերկրորդ գիծ, իրարից վորոշ տարածության վրա հաստատում եյին մեծ բանակատեղիները։ Զինվորական այդ բնակությունների շուրջը շուտով ստեղծվեցին ամբողջ առևտրական արվարձաններ. գերմանացիք սկսեցին բերել այստեղ իրենց ապրանքները, մանավանդ կաշի, մուշտակեղեն, և փոխանակել հռոմեական դրամի հետ, վոր նրանց շատ եր դուր գալիս։ Սահմանամերձ հռոմեական քաղաքներից կազմվեցին այժմյան Քյոլնը, Ստրասբուրգը, Վիեննան, Բուդապեշտը։

Հռոմայեցիք նույնպես առաջ շարժվեցին և նույնպես պաշտպանվեցին հողապատնեշով Բրիտանիա կղզու վրա։ Այս յերկրում էլ ապրում եյին շատ հետամնաց ցեղեր. բրիտների մոտ գործածությունից դեռ դուրս չեյին յեկել ռազմակառքերը՝ նման այն ռազմակառքերին, վորոնց վրա կռվում եյին հոմերական հերոսները. սրբազան ծառերի տակ դրուիդները (քուրմերը) մորթելով զոհաբերում եյին գերիներին։ Յերբ բրիտական առաջնորդներից մեկին Հռոմ բերին և նրան ցույց տվին մայրաքաղաքի հոյակապ պալատները, նա զարմանքով հարցրեց, թե ինչու յեն պետք այդ հարստությունների տերերին նրա հայրենիքի խղճուկ խրճիթները։ Բրիտանիան հռոմայեցիների կողմից նվաճելու սկզբնական նպատակը նույնն եր, ինչ վոր եր Հռենոսի այն կողմը նրանց կատարած արշավանքների նպատակը՝ ապահովել իրենց տիրապետությունը Գալլիայում։ Բայց հետո նրանք գնահատեցին կղզու հանքային հարստությունները և մանավանդ սկսեցին մշակել կապարի հանքերը։ Արտահանության գլխավոր տեղը դարձավ **Լոնդինիում** (Լոնդոն) քաղաքը Թեմզա

գետի բերանի մոտ։ Հռոմայեցիք ուժ չունեյին բովանդակ կղզին նվաճելու համար. բայց կղզու հարավային և միջին մասին հանգիստ տիրելու համար նրանք պետք ե պաշտպանվեյին հյուսիսի ամենավայրենի ցեղերից, վորոնք այժմյան Շոտլանդիայումն եյին ապրում։ Պատնեշը, վոր հռոմայեցիք բարձրացրին Իրլանդական և Հյուսիսային ծովերի միջև յեղած լայն պարանոցի վրա, մի իսկական, բարձր և անմատչելի պատ եր ներկայացնում։ Առևտուր չեյին անում այստեղ, ինչպես հարավային Գերմանիայի սահմանների վրա։

Բրիտանիայի նվաճումը տեղի ունեցավ Վեսպասիանի յերկրորդ վորդու՝ Դոմիցիան կայսրի ժամանակ։ Վախկոտ և նախանձոտ Դոմիցիանը շտապեց պատերազմի դաշտից յետ կանչել կղզին նվաճող Ագրիկոլային, յերկյուղ կրելով նրա ռազմական փառքից։ Միևնույն ժամանակ Դոմիցիանը խոշոր անհաջողություն ունեցավ կայսրության մի ուրիշ, հյուսիս-արևելյան ծայրում։ Այստեղ Կարպատների, Դանուբի և Սև ծովի միջև, այժմյան Ռումանիայում և Տրանսիլվանիայում գոյացել եր **դակիացիների** պետությունը, վորոնք սկսեցին սպառնալ **Իլլիրիայի** (այժմյան Դալմացիայի, Բոսնիայի և Սերբիայի) և **Մեզիայի** (այժմյան Բուլղարիայի) հռոմեական պրովինցիաներին։ Դակիական ձիավորներն իրենց՝ գայլի գլխից շինված փափախներով, կոպիտ ձայներով և կատաղի հայացքով հռոմեական բանաստեղծին թվում եյին «վայրենի Մարսի իսկական պատկերը»։ Սկզբում Դոմիցիանը մեծ աղմուկով ու հանդիսավորությամբ ինքը շարժվեց դակիացիների դեմ, բայց շուտով յետ փախավ Հռոմ և հրահանգեց իր գլխավոր հրամանատարներին հաշտություն կնքել դակիացիների հետ, խոստանալով ինժեներներ, արվեստագետներ և արհեստավորներ ուղարկել նրանց թագավորին, ինչպես նաև առատ նվերներ կայսերական գանձարանից։

Դոմիցիանն սպանվեց իր սեփական ծառաների ձեռքով. նրանով վերջացավ **Ֆլավիուսների հարստությունը** (70—96)։ Կայսր հռչակված ծերունի սենատոր Ներվան շտապեց վորդեգրել և իրեն ժառանգ հայտարարել վերին (այսինքն հարավային) Գերմանիայի փոխարքա Ուլպիուս Տրայանուսին։

Հանձին Տրայանուսի (98—117 թ. թ. Ք. ծ. հետո) հռոմեական կայսրությունն ստացավ Պոմպեուսի և Ցեսարի նման մի նվաճող, վոր զբաղված եր արշավանքների ու խոշոր ռազմական կառուցումների լայն ծրագրերով և վոր մի անդուլ ու անխնա մարդ եր, ինչպես եյին հին հռոմեական կոնսուլները։ Պատրաստվելով վերսկսել պատերազմը դակիացիների հետ, Տրայանուսը մի քարե կամուրջ շինեց Դանուբի վրա Յերկաթե Դռների մոտ, ուր գետը հոսում ե, ճեղքելով ժայռոտ բարձրությունները։ Ապա սկսվեց բնաջնջման մի պատերազմ, վորից հետո կենդանի մնացած բարբարոսներին հռոմայեցիք տեղափոխեցին կայսրության ներքին մարզերը, իսկ քշվածների տեղում նրանք բնակեցրին կայսրության զանազան կողմերից բերված գաղթականներ. այստեղ բնակեցրին նաև բազմաթիվ հռոմեական զինվորներ իրենց ընտանիքներով։ Բնիկների հետ խառնված հռոմեական այդ գաղթականներից ե ծագում այժմյան **ռումանացիների** (ռումանացի—հռոմայեցի) ժողովուրդը։ Վաչկատուն ցեղերի հարձակման դեմ, վորոնք հեշտությամբ կարող եյին ներս խուժել սառրին Դանուբի տափարակներով, հռոմայեցիք կառուցեցին մի շարք ամրություններ ու պատնեշներ, վորոնք Պրուտ գետից

տարածվում են մինչև Սև ծովը. նրանցից մեկը մինչև այժմ ել կոչվում ե Տրայանուսի պատնեշ։

Վորպես հուշարձան Դանուբի այն կողմը կատարված հռոմեական արշավանքների մնացել ե Հռոմում Տրայանուսի սյունը, վոր շինված ե սպի-

Հռոմայեցի զինվորներն ավերում են բարբարոսների գյուղը (Տրայանուսի կոթողից)։

տակ մարմարից և 100 ֆուտ բարձրություն ունի. նրա վրա ցցուն պատկերներով ներկայացված են հռոմեական լեգիոնների ճակատամարտները, կամուրջներից նրանց անցնելը, կայսեր դիմումը զորքին, հռոմայեցիների հարձակումները բարբարոսների վրա և այլն։

Բարբարոսների աշխարհը շատ եր հետաքրքրում հռոմայեցիներին։ Տրայանուսի մերձավորներից մեկը՝ պատմաբան Տակիտոսը 98 թ. նրա կայսր դառնալու առիթով կազմեց գերմանացիների կենցաղի նկարագրությունը։ Իր ժամանակից դժգոհ, Ներոնի և Դոմիցիանի քմայքները հլու հնազանդությամբ տանող հռոմայեցիներին փչացած և մանրացած ժողովուրդ համարելով, Տակիտոսն աշխատում եր նրանց հակադրել բարբարոսներին. գերմանացիներին ու բրիտներին, վորպես ուժի, զգաստության, թարմության, նկարագրի շիտակության և ազատության սիրո օրինակ։

Յերկրորդ ապստամբությունը Հրեաստանում։ Հաղթելով դակիացիներին, Տրայանուսը վորոշեց մի ընդարձակ արշավանք կատարել դեպի արևելք, վոր Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի կրկնությունը պիտի լիներ։ Նրան հաջողվեց նվաճել Հայաստանը և պարթևների ձեռքից խլել Միջագետքը. ապա նա գրավեց Բաբելոնը և պարթևական մայրաքաղաք **Կտեսիֆոնը** Տիգրիս գետի վրա. վերջապես նա շարժվեց Պարսկաստանի խորքը։ Նրա բոլոր հաջողությունները, սակայն, ի դերև յելան հրեաների սարսափելի ապստամբության պատճառով, վոր բռնկվեց նվաճողի թիկունքում.

միաժամանակ ապստամբեցին և՛ այն հրեաները, որոնք ապրում էին կայսրության մեջ, Եգիպտոսում, Կիրենայում և Կիպրոս կղզու վրա, և՛ այն հրեաները, որոնք ապրում էին պարթևական պետության մեջ Եփրատ գետի վրա։ Այդ անհարկու դեպքերի ժամանակ Տրայանոսը մեռավ, իսկ նրա հաջորդը, նրա որդեգիրը՝ Ելիոս Ադրիանոսը (117—138 թ.թ. ք. ծ. հետո) շտապեց պարթևներին յետ տալ Տրայանոսի արած բոլոր նվաճումները։

Հռոմայեցիների դժվարությունները դրանով չվերջացան։ Պաղեստինում նույնպես հավաքվել էին ապստամբներ. նրանց գլուխն էր անցել Սիմեոն Բարկոխեբան («աստղի որդի»), որին գիտնական ռաբբի փարիսեցի Ակիբան հռչակեց ճշմարիտ Մեսսիա։ Սիմեոնը դուրս քշեց հռոմեական զորքը ավերված Երուսաղեմի տեղից, ուր նրա կայանն էր գտնվում. նրա կտրած դրամների վրա փայլում էր «Ազատության համար» մակագրությունը։ Ադրիանոսն ստիպված եղավ ամբողջ կայսրությունից զորքեր բերել Պաղեստին, և միայն երեք տարուց հետո հռոմայեցիք ճնշեցին ապստամբությունը (135 թ. ք. ծ. հետո)։ Հաղթողն էլ ավելի դաժան վարվեց, քան Տիտոսը։ Վորոշվեց Պաղեստինում արմատախիլ անել այն ամենը, ինչ-որ հիշեցնում էր հնությունը։ Այրեցին հազարի չափ հրեական գյուղեր։ Երուսաղեմի տեղում շինեցին մի քաղաք՝ բոլորովին նոր ձևով, բնակեցրին այն ոտարերկրացիներով և կոչեցին Ելիա Կապիտոլինա՝ կայսեր անունով և ի պատիվ հռոմեական գերագույն աստծու՝ Կապիտոլիական Յուպիտերի։ Մահապատժի սպառնալիքով հրեաներին արգելվեց ոտք կոխել Պաղեստինի հողը։ Այդ ժամանակից ի վեր նրանք այլևս հայրենիք չունեին։

Կայսրությունը Անտոնինների ժամանակաշրջանում։ Ոչ Տրայանոսը, ոչ Ադրիանոսն անմիջական ժառանգներ չունեին։ Վորպեսզի իշխանությունը չընդհատվեր, նրանք իրենք նշանակեցին իրենց համար ժառանգներ։ Ադրիանոսը որդեգրեց Անտոնին Պիուսին (138—161). Անտոնինը՝ Մարկոս Ավրելիոսին (161—180)։ Այդ բոլոր կայսրները, սկսած Ներվայից, **Անտոնիններ** են կոչվում նրանցից չորրորդի անունով։

Անտոնինների ժամանակ (96—192 թ. թ. ք. ծ. հետո) հռոմեական կայսրությունն իր ամենամեծ չափերն ստացավ։ Նրա կազմի մեջ Իտալիայից զատ մտնում էին այժմյան — Սպանիան Պորտուգալիայի հետ, Ֆրանսիան Բելգիայի հետ, Անգլիան, հարավ-արևմտյան Գերմանիան, Շվեյցարիան, Ավստրո-Հունգարիայի մեծ մասը, Բալկանյան թերակղզու բոլոր երկրները, Փոքր Ասիան և Սյուրիան, Եգիպտոսը և հյուսիսային Աֆրիկայի ամբողջ ծովափնյա շերտը, հաշվելով Մարոկկոն (ըստ հռոմայեցիների՝ **Մավրիտանիան**)։ Հռոմայեցիների տիրապետության տակ գտնվում էին ոչ պակաս քան 20 ժողովուրդներ. նրանցից ամենակարևորներն էին հույները, իլլիրիացիք, որ ապրում էին Ադրիական ծովի և Դանուբի միջև, սյուրիացիք, հրեաները, եգիպտացիք, աֆրիկացիք (փյունիկեցի գաղթականների ժառանգներն ու նումիդիացիք), գալլերը, սպանացիք։ Հռոմեական կայսրությունը պարփակում էր իր մեջ այն ժամանակ հայտնի երկրների մեծ մասը. նրանից դեպի հյուսիս բարբարոսների անանցանելի անտառներն էին, դեպի արևմուտք՝ օվկիանոսը, որի այն կողմը միանգամայն անհայտ էր, դեպի հարավ՝ Սահարայի անծայրածիր ավազները։ Հռոմեական զենքը,

ինչպես ասում էր Հորացիուսը, «հասավ աշխարհի վերջին սահմաններին, ուր մի ծայրում միջօրեական կրակ է ժայթքում, իսկ մյուսում՝ տիրում է հավիտենական մառախուղն ու անձրևը»։

Հռոմայեցիք հավատացած էին, որ նրանց կոչումն է՝ նվաճել ամբողջ աշխարհը և բոլորի համար կարգ ու օրենք սահմանել. հռոմեական դրամների վրա լինում էր «Հավիտենական Հռոմ» մակագրությունը։ Հռոմայեցիք պարծենում էին նաև այն բանով, որ հաղթելով բոլորին, նրանք վոչնչացրին պատերազմը և ամենքին հաստատուն խաղաղություն տվին կամ «հռոմեական խաղաղությունը»։ Եվ իրոք, Միջերկրական ծովի վրա բոլոր ուղղություններով հանգիստ անցնում էին բազմաթիվ վաճառականական նավեր. կայսրության բոլոր պրովինցիաները փոխանակում էին իրենց արդյունքները. Սպանիան տալիս էր իր մետաղի հանքը, Ասիան՝ բուրդ, Աֆրիկան ու Եգիպտոսը՝ հաց, հույն արդյունաբերական քաղաքները Հռոմին մատակարարում էին ամանեղեն, ակնագործական իրեր, արվեստի և պերճանքի առարկաներ։ Հռոմայեցիք կարող էին մատնանշել նաև իրենց մի այլ ծառայությունը. իրենց նվաճած բարբարոս երկրներում նրանք ճանապարհներ հարթեցին և քաղաքներ շինեցին։ Այդ քաղաքները Հռոմի փոքրիկ կրկնություններն էին. յուրաքանչյուրի մեջ կար սենատ՝ հռոմեական [illegible] հիշեցնող ականավոր մարդկանցից կազմված, և ամեն տարի ընտրվող երկու էդիլներ (քաղաքագլուխներ), որոնք հիշեցնում էին հռոմեական կոնսուլներին. ավելի խոշոր քաղաքներում շինում էին կրկես, ամֆիթատրոն, ֆորումի շուրջը կամարակապ սրահներ, **թերմաներ** (բաղնիքներ ջրի ավազաններով և մարմնամարզական դահլիճներով), **բազիլիկաներ** (շենքեր դատարանի, բորսայի և առևտրի համար). հռոմայեցիներին այդ գործերում հատուկ վարպետությամբ կառուցվում էր ջրանցք։ Շինությունների և խաղերի ծախսերն իրենց միջոցներից անում էին հարուստ մարդիկ, որոնք կամենում էին քաղաքագլուխ ընտրվել և կամ կառավարական պաշտոններ ստանձնել. նրանք կրկնում էին այն, ինչ որ մայրաքաղաքի ամբողջ համար անում էր պրինցեպսը Հռոմում։

Անտոնինների տան հռոմեական կայսրները մեծ մասամբ շատ լավ մարդիկ էին։ Իզուր չէր, որ ժողովուրդը հետագա ժամանակներում նոր ընտրված կայսրին ողջունում էր հետևյալ բարեմաղթությամբ. «Եղիր Օգոստոսից երջանիկ, Տրայանոսից ավելի լավ»։ Մարկոս Ավրելիոս կայսրը աչքի յէր ընկնում իր նկարագրի հազվագյուտ մեղմությամբ և զարմանալի բարեխղճությամբ. ստոյիկյանների հայացքներով սնված՝ նա իր «Ինքն իրան վերստուգելու մասին» խորագիրը կրող գրքի մեջ շարադրեց կանոններ, թե ինչպես մարդս անընդհատ պետք է վերլուծե իր կյանքի ամենաաննշան քայլերն ու հակումները։ Կայսրների այդ անձնական արժանիքները, սակայն, նշանակություն ունեն միայն նրանց անմիջապես մոտիկ մարդկանց համար. ընդարձակ կայսրության կարգերը, ժողովրդական մասսաների կենցաղն ու զգացումներն ամենևին չէին ազդվում կայսրների անձնական հատկություններից։

Հռոմայեցիների տիրապետությունն ինքնին մի ծանր լուծ էր. հարկերն ու տուրքերն անչափ մեծ էին, պրովինցիաների ազգաբնակությունը վոչ մի

ձայն չուներ կառավարական գործերում, չէր կարող գանգատվել Հռոմից ուղարկվող պաշտոնյաների վրա։ Հպատակներին ոչ միայն թույլ չէին տալիս հավաքվելու հանրային գործերի քննության համար, այլև արգելում էին նույնիսկ ամեն տեսակ միությունների և ընկերությունների կազմակերպումը, երկյուղ կրելով, որ նրանք կսկսեն դավադրություններ կազմել և փորձ կանեն տապալելու Հռոմի իշխանությունը։ Կյանքի բոլոր մանրամասնություններին աչալրջորեն պիտի հետևեր հռոմեական փոխարքան և ամեն մի կասկածելի կամ անհասկանալի երևույթի մասին պիտի գրեր կայսերական դիվանին։ Տրայանոսի ժամանակ Բյութանիայի փոխարքա Փոքր Ասիայում նշանակվեց գիտնական գրող Պլինիոսը։ Իր պաշտոնի պահանջների համաձայն՝ նա ի միջի այլոց հարցնում էր կայսրին, կարելի՞ է թույլ տալ արդյոք պրովինցիայի մայրաքաղաքում՝ Նիկոմիդիայում 150 հյուսներից կազմված մի հրդեհաշեջ խմբի կազմակերպումը. հռոմեական դիվանից պատասխան եկավ՝ «Թույլ չտալ»։ Նույն Պլինիոսը հարցնում էր Տրայանոսին, ինչպես վարվել Բյութանիայում ապրող բազմաթիվ քրիստոնյաների հետ, որոնք լրտեսներից մեղադրվում էին այն բանում, որ հրաժարվում են երկրպագել կայսեր արձանին. փոխարքան մանրամասն նկարագրել էր այն ամենը, ինչ որ նրան հայտնի էր քրիստոնյաների մասին, նրանց ծեսերն ու կենցաղը, որ հիշեցնում են յեսսեյաններին, նրանց՝ հավատալիքների և սովորությունների մեջ ցույց տված համառությունը։ Տրայանոսը, որ պարծենում էր այն բանով, որ մայրաքաղաքից արտաքսել էր Դոմիցիանոսին ծառայող լրտեսներին, պատասխանեց, թե հռոմեական կառավարության համար արժանի չէ հետևել լրտեսների գրություններին. մնացած հարցերի նկատմամբ նա հաստատեց Պլինիոսի կարգադրությունները, որ մահապատժի էր ենթարկել նրանց, որոնք չէին կամենում երկրպագել կայսեր բագինին և արձանին։

Այդպիսի ժամանակներում, երբ հպատակներին արգելվում էր զբաղվել քաղաքականությամբ, այսինքն երբ բոլորը պարտավոր էին հլու հնազանդությամբ իրենց բախտը հանձնել իշխանությունների ձեռքը, շատերը փակվում էին իրենց հոգևոր մենակության մեջ, ընկնում էին վշտի և վհատության գիրկը, կամ դիմում էին նոր, անծանոթ ծեսերի։

Կրոնական հավատալիքները Անտոնինների ժամանակաշրջանում: Թեև հռոմեական զենքի հաղթությունները ընդլայնեցին հռոմեական աստվածների արտաքին տիրապետության սահմանները, սակայն հռոմայեցիների հավատալիքները կայսրության սկզբին արդեն մեծ փոփոխության էին ենթարկվել։ Նվաճող ժողովուրդն սկսեց պաշտել հպատակ ցեղերի և ազգերի աստվածներին։ Հռոմ փոխադրված բոլոր նոր աստվածների միացման համար Օգոստոսի ժամանակ կառուցվեց մի ընդարձակ **Պանթեոն** (բոլոր աստվածների տաճար)։ Իր հսկայական կիսագնդաձև կամարով (20 սաժեն տրամագիծ) հռոմեական ճարտարապետության հրաշքն է նա ներկայացնում։

Ոչ միայն հռոմեական, այլ և հունական կրոնը քայքայման ենթարկվեց։ Ռազմասեր, կրքերի ենթակա մարդկանց նմանվող աստվածների հին առասպելները երեխայական հեքյաթներ էին թվում արդեն փիլիսոփաների մոտ սովորած և կրթված մարդկանց։ Հասարակ ժողովուրդը, թեև ա-

վելի դյուրահավատ ու սնահավատ, այնուամենայնիվ հոգևոր մխիթարություն չէր գտնում Ապոլլոնի, Դիոնիսիոսի և ուրիշ աստվածների պաշտամունքի մեջ, որոնք համապատասխանում էին հինավուրց արձակ ու պարզ կենցաղին. դադարեցին նախկին՝ աթենական դիոնիսիաների և Լենեոսի տոների նման հարուստ և ժողովրդական տոները։

Ամեն տեսակ կոչումի տեր մարդիկ փնտրում էին աստծուն, որից մխիթարություն էին սպասում իրենց ծանր փորձությունների մեջ, որից հայցում էին իրենց հիվանդությունների բուժումը և նոր ավելի լավ կյանքի լույս։ Փրկչին գտնելու փափագն այնքան մեծ էր, որ երկրային աստված իրենց համարող կայսրերը յուրացրին և այդ անունը, որպես տիտղոս։ Բանաստեղծները «Աշխարհի Փրկիչ» մեծ խոսքերը, նրանց ներշնչմամբ, մտցնում էին թագավորին փառաբանող ոտանավորների մեջ. ամեն տեղ, ուր որ կարելի էր միայն, այդ խոսքերը փորագրում էին քարի կամ պղնձի վրա՝ այլ աստվածային մականունների կողքին։ Բոլորը հասկանում էին, որ դա մի հարկադրյալ շողոքորթություն է ամենազոր իշխանավորների հանդեպ. իրենք այդ իշխանավորներն էլ, իրենց հպատակների հետ հավասար, գերագույն ուժերի հովանավորությունն էին փնտրում, նույնպես դիմելով նոր, անհայտ, հեռվից եկած աստվածներին։

Ամենից առաջ հռոմայեցիք ճանաչեցին Փոքր Ասիայում պաշտվող աստվածներին։ Տակավին հանրապետության օրերում Հռոմ բերին Փոքր Ասիայից աստվածների Մեծ մորը։ Ներոնի նախորդ Կլավդիոս կայսրը նրա պաշտամունքին միացրեց մի տոն ի պատիվ նույն երկրի մի ուրիշ աստծու՝ Ատտիսի և հրամայեց քրմապետներին մտցնել այդ տոնը հռոմեական օրացույցի մեջ։ Տոնն ընկնում էր 15-27 մարտի երկու շաբաթների վրա և բաղկացած էր լինում երկու մասից. ողբում էին մեռած աստծուն, թաղում էին նրան,—դա մի սոճի էր, որ փաթաթված էր լինում ժապավեններով ու կերպասներով, ապա աղմկալից ու ցնծագին կերպով տոնում էին աստծու հարությունը նոր կյանքի համար, աշխատելով խանդավառ տրամադրություն առաջ բերել բոլոր հանդիսականների մեջ։ Ատտիսի մոտապատկերի հետ կապում էին վառ հույսեր ապագայի նկատմամբ. հավատում էին, որ ճիշտ այնպես, ինչպես որ մութ ուժերի կռվում մեռած աստվածը հաղթեց մահին և հարություն առավ, նրա երկրպագուներն էլ իրենց մահից հետո կտեսնեն պայծառ անդրշիրիմյան աշխարհը։

Նույնպես արևելքից արևմուտք եկած մի այլ կրոն էր եգիպտական աստվածների՝ Իսիդայի և Օզիրիսի պաշտամունքը։ Եգիպտոսի հույն թագավորները՝ Պտղոմեոսները (նրանց ժամանակը՝ 323—30 թ. թ. ք. ծ. առաջ), աշխատելով իրենց կողմը գրավել տեղական ազգաբնակության համակրանքը, հարմարվեցին տեղական կրոնին և նրա ծեսերին ու տոներին մի առանձին փայլ հաղորդեցին։ Պտղոմեոս I Ալեքսանդրիայում կառուցեց մի հսկայական տաճար՝ նվիրված Օզիրիս աստծուն, որին այժմ Սերապիս էին կոչում։ Եգիպտական նավաստիները տակավին հանրապետության շրջանում այդ կրոնը տարան Իտալիա. Պուտեոլի կոչվող ծովափնյա մեծ քաղաքում Կապուայի մոտ նույնպես կառուցեցին Սերապիսի մի տաճար։ Երբ Օգոստոսը միացրեց Եգիպտոսն իր կայսրության, եգիպտական աս-

տվածների յերկրպագուների թիվը ել ավելի մեծացավ։ Տիբերիուսը Մարսի դաշտի վրա Հռոմում կառուցեց Իզիդայի մի մեծ տաճար, Դոմիցիանուսը շքեղորեն զարդարեց այն։ Յեգիպտական աստվածների սրբավայրեր յերևան յեկան ամենուրեք՝ Սպանիայում, Գալլիայում, Դանուբի վրա, Սահարայի սահմանի վրա։ Հանձին Սերապիսի պաշտում եյին յերկրային բարիքները բաշխողին, ինչպես նաև հոգիների ուղեցույցին և մեծ դատավորին մեռյալների թագավորության մեջ։ Ատտիսի նման ի պատիվ նրան կատարում եյին տխրության և խնդության կրկնակի տոնը, վոր նոյեմբերի մեջն եր գալիս (յեգիպտական նոյեմբերը համապատասխանում է յեվրոպական գարնան) ի հիշատակ այն բանի, վոր Իզիդան, յերկար տանջալից վորոնումներից հետո, գտնում է Ոզիրիսի մարմինը և կախարդության միջոցով վերադարձնում նրան կյանքը։ Բոլոր ծեսերն ու արարողությունները տաճարում բարեխղճորեն կատարելով, հավատացյալները հույս եյին տածում, վոր կարժանանան հավիտենական կյանքի։ Հին յեգիպտական գրության մեջ, վոր դրվում եր ննջեցյալի ձեռքը, ասված եր. «Ճիշտ այնպես, ինչպես ճշմարտապես կենդանի յե Ոզիրիսը, կենդանի յե և՛ ննջեցյալը. ինչպես ճշմարտապես չի մեռել Ոզիրիսը, և՛ նա չի մեռնի. ինչպես ճշմարտապես չի վոչնչացել Ոզիրիսը, և նա չի վոչնչանա»։

Յերրորդ կրոնը, վոր այդ ժամանակ մեծ ուժ եր ստացել, Անհաղթ-Արևի պաշտամունքն եր, վոր տարածված եր Սյուրիայում և սյուրիական վաճառականների միջոցով բերված արևմուտքի բոլոր յերկրները։ Սյուրիացիք այդ հավատը ժառանգեցին բաբելացիներից, յերկնքի և նրա լուսատուների այդ մեծ դիտողներից. արևը պաշտվում եր, վորպես աշխարհի Ամենակալը, մեծ թագավորը (ըստ բաբելացիների՝ Բելը, ըստ սյուրիացիների՝ Բաալը), վոր վարում է բյուրավոր աստղերի խմբապարը։ Աստվածպաշտության և տաճարների կահավորության մեջ սյուրիացիք սիրում եյին վոսկեզօծ իրեր, գունավոր քարեր, կլոր պայծառ վահաններ, ամեն կողմ ցրվող ճառագայթներով շրջապատված պսակներ, խունկի ծխում և այլն։

Վերջապես, չորրորդ կրոնը, վոր նույնպես, ինչպես մյուս յերեքը, արևելքից եր յեկել, ծագում եր կայսրության սահմաններից դուրս պարթևական պետության մեջ ապրող պարսիկ ժողովրդից։ Պարսից հավատին հատուկ են վառ մտապատկերները անդրշիրիմյան աշխարհի մասին, ինչպես նաև վերջին Սարսափելի դատաստանի մասին, յերբ փողի ձայնը վոտքի կըբարձրացնե մեռյալների անծայրածիր շարքերը, և նրանք կտեսնեն Ամենաբարձրյալի լուսապայծառ գահը, վոր շրջապատված է հրեշտակների բանակով։ Պարսիկների մոտ փրկիչ-աստված եր համարվում Միհրը, վոր հաղթում է խավարի և մահվան դիվային ուժերը։ Հռոմայեցիք առաջին անգամ ծանոթացան Միհրի հետ Միհրդատ Պոնտացու դեմ մղված պատերազմների ժամանակ, վորի պետության մեջ նա պաշտվում եր ջերմեռանդորեն։ Անվախ մարտնչող, հոգով զորեղին, մարմնով առկունին հաղթություն պարգևող Միհրի մտապատկերն առանձնապես գրավիչ եր զինվորների համար։ Միհրի հովանավորության տակ մտնելու համար պետք եր ծանր «մահապատիժների» կամ փորձությունների միջով անցնել — յերկար պաս պահել, ինքն իրեն խարազանել, միքանի որ պառկած մնալ ձյունի մեջ, հետո մեխերի վրա, զանազան սարսափների յենթարկվել, մերկացրած սրերի

միջով վազել, խավար բանտի մեջ նստել և այլն. յեթե նվիրվողը տոկունություն եր հայտնաբերում, նրան ընդունում եյին համայնքի մեջ, Միհրի զինվոր եյին հայտարարում և սրով ու պսակով եյին վարձատրում։ Հռոմեական լեգիոնները հեռու հյուսիս տարան արևելյան պաշտամունքը, դեպի Դանուբի ու Հռենոսի ափերը, ծովի այն կողմը՝ Բրիտանիա. ամենուրեք բանակատեղիների մոտ գտնվում եյին Միհրի բագինները և փոքրիկ տաճարները, վորոնք այրերի եյին նման և վորոնց մեջ ներկայացված եր փոքր ասիական շորեր հագած աստվածը, վոր խրում է սուրը հորթի մարմնի մեջ։

Բոլոր չորս կրոններին, վորքան ել տարբեր եյին նրանց ծեսերը, հատուկ են միքանի ընդհանուր գծեր։ Նրանք բոլորն ել իրենց պաշտած աստծուն դնում են աշխարհի մեջտեղը կամ նույնիսկ հանձին նրա ճանաչում են մարդկության Միասնական ճշմարիտ արարչին և պահպանիչին։ Նրանցից վոչ մեկը չի հաշտվում հինավուրց բազմաստվածության հետ (հունարեն՝ **պոլիթեիզմ**), նրանք բոլորն ել հանգում են միաստվածության (**մոնոթեիզմ**)։ Նրանք բոլորն ել վեհ գաղափար ունեյին աստվածության մասին. Գերագույն կամ Միասնական աստվածը հեռու յե մարդկային թուլություններից և պակասություններից. նա անմարմին մի եյակ է, Վոգի, վոր ապրում է յերկընքում կամ անտեսանելի կերպով ներկա յե բնության տարերքում և յերևույթների մեջ։ Նրա կամքը մարդկանց անհայտ է։ Նրա փրկարար ուժի վարդապետությունը մի մեծ գաղտնիք է, վոր բացվում է միմիայն նրանց, վորոնք անցել են փորձությունները կամ նվիրումները։ Հոգու փրկությունը հավիտենական կյանքի համար՝ այս է մեծ, վողորմած ողնությունը, վոր բերում է Աստված՝ տառապող մարդկության։

Արևելյան կրոնների այդ հասկացողությունները նրանց մերձեցնում եյին Իսրայելի ժողովրդի հավատին, մանավանդ հրեական մարգարեների վարդապետության։ Այդպիսով Ատտիսի, Ոզիրիսի, Արևի և Միհրի պաշտամունքը նախապատրաստական հող յեղավ քրիստոնեյության տարածման համար։ Քրիստոնեյական քարոզը բազմաթիվ մարդկանց մտքի և զգացումների մեջ գտավ հարցեր և ակնկալություններ, վորոնց նա պատասխան և մխիթարություն բերեց։

Քրիստոնեյության պաշտպանությունը և տարածումը։ Մինչև Յերուսաղեմի անկումը Միասնական աստծու անարատ վսեմ հավատի գլխավոր **միսիոնարները**, այսինքն տարածողներն եյին հրեաները։ Հրեական ապստամբությունից հետո համաշխարհային քարոզիչներ դարձան քրիստոնյաները։ Գաղթական հրեաների մեծ մասը քրիստոնեյություն ընդունեց։ Միաժամանակ Քրիստոսի վարդապետությունն սկսեց տարածվել հեթանոսների մեջ։ Քրիստոնեական գրողները դիմում են կայսրության կրթված հասարակության և կառավարիչներին կոչերով ու **ապոլոգիաներով** (պաշտպանողական ճառերով), վորոնք գրում են հռոմեական պետության մեջ ամենատարածված յերկու լեզվով՝ հունարեն և լատիներեն։

Առաջին քրիստոնեական ապոլոգիան գրել է ս. Հուստին մարտիրոսը մոտ 150 թ. Անտոնին Պիուս կայսեր ժամանակ։ Հուստինը ծագումով հույն եր և ծնված եր Ֆլավիա-Նեապոլիս քաղաքում, վոր հիմնել եր Վեսպասիանը Պաղեստինում Յերուսաղեմի կործանումից հետո։ Հեթանոսության մեջ կրթված, նա չափահաս ժամանակը քրիստոնեյություն ընդունեց Փոքր

Ասիայում, վարում եր թափառաշրջիկ փիլիսոփայի կյանք, ապա բնակություն հաստատեց Հռոմում, իրան շրջապատեց աշակերտներով և վեճեր եր ունենում կինիկոսների հետ։

Հուստինը կարծում է, թե հույներն էլ իմացան հայտնագործված ճշմարտությունը, վոր տվել եր աստված Իսրայելի ժողովրդին, սակայն միայն կցկտուր. շատ բան նրանք սխալ ըմբռնեցին, ինչպես այդ յերևում է նրանց առասպելներից. և չնայած բոլոր հեղաթյուրումներին, իրենց առասպելներով և փիլիսոփաների (մանավանդ Պլատոնի) ուսմունքով հեթանոսները նախապատրաստված են յուրացնելու ճշմարիտ հավատը։ Հուստինը կոչ է անում աշխարհիս կառավարիչներին և զորավարներին՝ լուսավորվել և ժողովուրդը լուսավորել, թող նրանք վոչնչացնեն կռապաշտ ծեսերը, արձանապաշտությունը, թող նրանք լայն ազատություն տան քրիստոնեական քարոզին։

Քրիստոնեական վարդապետությունը խաղաղության լուրն է բերում մարդկության։ «Սիոնից կծագե որենքը և Յերուսաղեմից՝ աստծու Խոսքը, կդատե հեթանոսներին և կխրատե բազմաթիվ ազգերի, և բոլոր ցեղերը իրենց սրերը գութան կդարձնեն, իսկ նիզակները՝ մանգաղ. ժողովուրդները զենք չեն բարձրացնի այլևս իրար դեմ և կմոռանան պատերազմելը»։ Յեսայի մարգարեյի այս խոսքերը բերելով, Հուստինը շարունակում է. «Ասվածը կատարվեց... Տասներկու այրեր, հասարակ, վոչ-պերճախոս մարդիկ դուրս յեկան Յերուսաղեմից։ Բայց հանուն աստուծո նրանք ավետեցին մարդկանց, վոր Քրիստոսից են ուղարկված՝ բոլորին սովորեցնելու աստուծո Խոսքը։ Յեվ ահա մենք, վոր առաջ գիտեյինք միայն կոտորել իրար փոխադարձորեն, վոչ միայն այլևս չենք կռվում մեր թշնամիների հետ, այլ, վորպեսզի սուտ չխոսենք և չխաբենք մեր դատավորներին, խնդությամբ մենք վկայում ենք Քրիստոսի մասին և մեռնում»։

Տարածելով քրիստոնեյությունը, նրա պաշտպանները հօգուտ նրա հաճախ պարզ վկայություններ եյին բերում։ Ամբողջ աշխարհում,—ասում եյին նրանք,—ցրված է խաչի սիմբոլը. նա յերևում է տան և բանակի դիրքի մեջ, նավի կմախքի, դրոշակի և սրի ձևի մեջ, աղոթքի ժամանակ ձեռքերը յերկարած մարդու կերպարանքի մեջ։ Քրիստոնեական գրող Տերտուլիանոսը, ծագումով աֆրիկացի, վոր ապրում եր 160 և 220 թ.թ. միջև, ասում է, թե յուրաքանչյուր մարդու հոգին, վորքան էլ նա մոլորված լինի կեղծ վարդապետությունից, ծարավի յէ աստծուն։ «Մեր հոգին իբնե քրիստոնյա յէ։ Յերբ հոգին ծանր վիճակի մեջ է, նա կանչում է վոչ թե աստվածներին, այլ աստծուն և արտասանում է այդ մեծ անունը միայն. նա դիմում է այն ժամանակ վոչ թե Կապիտոլիումին, այլ յերկնքին. նա գիտե, թե ուր է կենդանի աստծու գահը, նրանից և այնտեղից է նա յեկել»։

Կրթված մարդկանց քրիստոնեյություն ընդունելու համար նախապատրաստել եր հունական փիլիսոփայությունը, կինիկոսների ուսմունքը պարզ անձնուրաց կյանքի մասին և ստոյիկյանների ուսմունքը մարդկային ցեղի բոլոր ներկայացուցիչների յեղբայրության մասին։ Նրանք ընդունակ դարձան ըմբռնելու Պողոս առաքյալի մեծ խոսքը. «Մենք բոլորս՝ հրեաներն ու հույները, ստրուկներն ու ազատները տոգորված ենք միևնույն վոգով»։ Քրիստոնեյության ընդառաջ գնացին նույնպես փրկիչ գտնելու ծարավից արթնացած ժողովրդական մասսաները։ Քաղաքներում, ուր ավելի շատ մարդիկ եյին հանդիպում իրար, ուր դպրոցներ, սինագոգներ, խմբա-

կցությունների և ընկերակցությունների ժողովատեղիներ կային, քրիստոնեական վարդապետությունն ավելի շուտ տարածվեց, քան գյուղերում։ Վորովհետև հաղորդակցության գլխավոր միջոցներն եյին ծովային ճանապարհները, ամենից առաջ քրիստոնեյություն ընդունեցին ծովափնյա քաղաքներում։ Փյունիկեյից նա գնաց Փոքր Ասիայի ափերը, այնտեղից Եգեյան ծովի վրայով Հունաստանի ափերը։ Արևմուտքում, նախքան Իտալիան և Հռոմը նվաճելը, քրիստոնեյությունը մեծ ուժ ստացավ Աֆրիկայի քաղաքներում, այսինքն նախկին փյունիկական Կարթագենի շրջանում։

Հերձվածները ու տիեզերական յեկեղեցու կազմումը։ Քանի դեռ քրիստոնեյությունը տարածվում եր հրեաների մեջ, համայնքի անդամների միջև տարաձայնություն չեր ծագում վարդապետության մասին. բոլորն էլ իրենց ճանաչում եյին Քրիստոսի հետևողներ։ Դրությունը փոխվեց, յերբ քրիստոնեյություն սկսեցին ընդունել հեթանոսները, վորոնք զանազան ծեսեր և հասկացողություններ ունեյին. Նրանք իրենց հետ բերին նոր հավատին խորթ հասկացողություններ։ Հույն փիլիսոփաներից շատերը պահպանեցին իրենց նախկին համոզմունքները և նրանց համաձայն մեկնում եյին քրիստոնեական ուսմունքը։ Նրանք կարծում եյին, թե իրենք են ճշմարտության տերը, վոր անհայտ է անհաղորդներին և անվանում եյին այն՝ **գնոսիս** (գիտական ճանաչողություն)։ Ամենաականավոր **գնոստիկոսներն** եյին Վալենտինոսը և Մարկիոնը, վորոնք ուսուցանում եյին Ալեքսանդրիայում և Հռոմում։ Մարկիոնը Պողոս առաքյալի ջերմ հետևողն եր, բայց ընդունում եր Նոր Կտակարանի մեջ միայն այդ առաքյալի գրությունները և Ղուկասի Ավետարանը, վորովհետև այն գրել է Պողոս առաքյալի աշակերտը։

Գնոստիկոսները թշնամաբար եյին վերաբերվում հրեության և Հին Կտակարանին։ Նրանց հայացքով, յերկրային աշխարհի արարիչ-աստվածը վոչ թե Գերագույն Միասնական աստվածությունն է, այլ միայն վերջինը և ամենաթույլը տիեզերական վոգիներից (**էոններից**). Նրանից բարձր է նոր աշխարհի բարի և արդար աստվածը, վոր Հիսուս Քրիստոսին յերկիր ուղարկեց։ Գնոստիկոսներից շատերը բացասում եյին յերկրային կյանքը և Քրիստոսի տանջանքները, Ավետարանների պատմությունը խրատական նպատակով գրված մի պատմություն համարելով։

Սկզբում առաքելական ավանդություններին հետևող քրիստոնյաները քիչ գիտնականներ ունեյին, և նրանք դժվարությամբ եյին կռվում պերճախոս գնոստիկոսների դեմ, բայց փիլիսոփաների հետ ունեցած վեճն ինքնին մեծ օգուտ բերեց քրիստոնեական յեկեղեցուն։ Քրիստոնեյության ուսուցիչները նույնպես գիտությամբ զինվեցին. **յեկեղեցու** այդ գիտնական **հայրերի** մեջ աչքի յէ ընկնում ալեքսանդրիացի Որիգենեսը (ծն. 202 թ., մեռ. 254 թ.), վոր հաջողությամբ եր առարկում հեթանոսական փիլիսոփա Ցելզին, վորը հարձակվում եր քրիստոնեական հայտնության վրա և աշխատում եր ցույց տալ, թե քրիստոնեյության մեջ վոչ մի նոր բան չկա։ Յեկեղեցու հայրերը բաժանեցին **կանոնը** (այսինքն այն գրքերը, վորոնց մեջ շարադրված է ճշմարիտ ուսմունքը) **հերձվածներից** կամ անկանոն, առաքելական հավատին ու ավանդություններին անհամաձայն հայացքներից։ Ի հակադրություն հերձվածների տարաձայնության՝ նրանք հաստատեցին միասնական ուղղափառ **կաթոլիկ** յեկեղեցու գաղափարը։

Հավատի միությունն ամրացնելու նպատակով յեկեղեցու հայրերի գործադրած ջանքերը նպաստեցին հավատացյալների միացման, ինչպես նաև հնարավորություն տվին, վոր յուրաքանչյուր համայնք առանձին-առանձին սահմանե իր ներքին կազմակերպությունը և նրանց միջև միասնական կապ հաստատե: Համայնքներում ժողովրդի զանգվածից անջատվում է կղերը (ընտրյալները), վոր բաղկացած է ուսուցիչներից, քարոզիչներից, առաքելական հաջորդներից, վորոնք խորհուրդներն են կատարում և յեկեղեցական համայնքի ընդհանուր կայքն են կառավարում: Կղերի գլուխ է կանգնած յեպիսկոպոսը, վոր շրջապատված է յերեցների խորհրդով. ծխական տարությունների, աղքատներին նպաստ բաժանելու, ուրիշ վայրեր մեկնելու և այլ հանձնարարությունների համար գոյություն ունեին սարկավագներ յեվ սարկավագուհիներ:

Յեպիսկոպոսները շուտով ամենահարգելի և հզոր մարդիկը դարձան համայնքի մեջ: Նրանք կառավարում եյին մեծ հարստություններ, վորոնք կազմվում եյին նվիրատվություններից և վճարումներից: Համայնքի անդամները դիմում եյին իրենց յեպիսկոպոսին արդարադատության համար, նրանից սպասելով իրենց դատերի և վեճերի լուծումը, փոխանակ հեթանոսական դատավորներին դիմելու: Համայնքների փոխադարձ հարաբերություններին մեջ յեպիսկոպոսները հրապարակ են գալիս, վորպես գլխավոր միջնորդներ: Քրիստոնյան, վոր ոտար յերկիր եր գնում յեպիսկոպոսի վկայականով, ջերմ ընդունելություն եր գտնում իր հավատակիցների մոտ. նրան ապաստան եյին տալիս, վոտքերն եյին լվանում, առաջին տեղն եյին նստեցնում սեղանի մոտ: Վորպեսզի բոլոր համայնքները միաբանորեն միևնույն ուսմունքը դավանեն և միևնույն ծեսերը կատարեն, յուրաքանչյուր պրովինցիայի յեպիսկոպոսներն ու յերեցները հավաքվում եյին սինոդներ, ուր քննվում եյին վիճելի հարցերը: Սինոդների գլուխը կանգնած միտրոպոլիտները, այսինքն միտրոպոլիայի կամ պրովինցիայի գլխավոր քաղաքի յեպիսկոպոսները հաղորդում եյին իրար սինոդների վորոշումները: Ամենամեծ հարգանքը վայելում եյին խոշորագույն քաղաքների՝ Անտիոքի, Ալեքսանդրիայի, Հռոմի յեպիսկոպոսները. այդ պատրիարքների կամ պապերի կարծիքին առանձին կարևորություն եյին տալիս:

Մոտ 200 թ. քրիստոնեական համայնքները տարածվեցին կայսրության բոլոր պրովինցիաներում. միասնական յեկեղեցին կարող եր կոչվել նաև տիեզերական, վորովհետև նա համապատասխանում եր հռոմեական պետության, վորի մեջ պարփակված եր այն ժամանակվա բովանդակ կուլտուրական աշխարհը կամ, ինչպես հույներն եյին ասում, տիեզերքը:

Նախնական քրիստոնյաների կենցաղը ամենից ավելի հայտնի յե մեզ այն ժամանակվա գերեզմանների շնորհիվ:

Հարուստ մարդիկ հռոմայեցիների մեջ իրենց համար շինում եյին մեծ շիրիմներ, կտակով մեծ գումարներ եյին թողնում իրենց դամբարանի զարդարման և հոգու հիշատակության համար: Նվազ բարեկեցիկներն աշխատում եյին հոգու հիշատակությունը կատարել ընդհանուր ընկերակցական գանձարանից: Միքանի մարդիկ, որինակ, մի արհեստով զբաղվող մարդիկ, մի տիրոջ ստրուկներ միանում եյին և կազմում մի ընտանիք. ընկերներն իրար յեղբայրներ և քույրեր եյին անվանում, պարտավորվում եյին բոլորն էլ

ներկա լինել ննջեցյալ ընկերակցի թաղման և շինում եյին մի ընդհանուր մեծ գերեզման, սեպուլ: Դա լինում եր մի կլոր յերկհարկանի շենք. ստորին հարկը, ուր թաղում եյին ննջեցյալներին, գետնի տակ եր գտնվում. վերին հարկը ներկայացնում եր մի դահլիճ, ուր հավաքվում եյին հիշատակության որերին ընթրելու և աղոթելու համար: Յեղբայրակցություններից շատերը քաղաքից դուրս եյին փնտրում ստորերկրյա տեղեր, յերբեմն գերեզմանոցի համար ավելի խորը փորում եյին այն փոսերն ու անցքերը, վոր շինված եյին կավահանության համար: Ննջեցյալներին դնում եյին փոսերը, վորոնք փորված եյին լինում պատերի մեջ անցքերի յերկարությամբ: Այսպես գետնի տակ գոյացան յերկար, նեղ, վոլորապտույտ փողոցներ և միջափողոցներ կատակոմբներ: Յեթե Հռոմի գերեզմանային գալերեաները մի ուղիղ գծի վրա տեղավորվեն, նրանք կունենան 1000 վերստից ավելի յերկարություն:

Հիսուսի — բարի հովվի արձանը:

Քրիստոնյաներն ոգտվում եյին կատակոմբներից, հետևելով հին հեթանոսական յեղբայրակցությունների որինակին: Առանձնապես սիրելի գերեզմանների մոտ, ուր թաղված եյին լինում իրենց կյանքով, մարտիրոսության գործով նշանավոր և լավագույն մարդիկ, քրիստոնյաներն աղոթքի եյին հավաքվում: Հաճախ մի նշանավոր գերեզմանի վրա լինում եր մի փոքրիկ սենյակ, վոր դուրս եր գալիս գալերեա. այդ սենյակում մի սեղան եր դրվում հաղորդության համար, և նա դառնում եր մի աղոթատուն, նմանվելով սրբալյին: Քրիստոնեական կատակոմբների պատերն ու կամարները զարդարում եյին կենդանագիր նկարներով. առանձնապես հաճախ լինում եր Քրիստոսի պատկերը, վորին ներկայացնում եյին մոլորված վոչխարը

բռնած բարի հովվի կամ քնարի վրա նվագող աստվածային յերգչի կերպարանքով: Քրիստոսի այդ պատկերները շատ նման են հին նկարներին ու արձաններին, վորոնք ներկայացնում են հովվական աստծուն՝ Հերմեսին, կամ առասպելական յերգիչ Օրփեոսին. յերևում է, վոր վարպետներն ու պատվիրողները տակավին տոգորված են հեթանոսական հասկացողություններով և սովորություններով:

Քրիստոնյաների մեջ, սակայն, կային նույնպես խստաբարո մարդիկ, վորոնք ձգտում էյին կտրել իրենց ամեն տեսակ կապերը հեթանոսական կենցաղի հետ, վորովհետև վերջինս իր մեջ պարունակում է սատանայի գայթակղություններ: Այդպիսի նախանձախնդիրները կարծում էյին, վոր քրիստոնյան չպետք է թատրոն հաճախե կամ խաղերի ներկա լինի, քրիստոնյան չպետք է արվեստագետ լինի հենց այն պատճառով, վոր նա ստիպված պիտի լինի արձաններ կերտել հեթանոսական կուռքերի նման, նա չըպետք է դպրոց պահի, վորովհետև ստիպված կլինի պատմել հեթանոսական հերոսների մասին և բացատրել առասպելները. նա չպետք է կառավարական պաշտոն ստանձնե, վորովհետև այլապես ստիպված կլիներ ժողովըրդի առջև զոհաբերություն կատարել, կայսեր արձանի առջև յերդում տալ. նա չպետք է լինի զինվոր, վորովհետև դրոշակները հեթանոսական ծեսերով են օրհնված:

Մի առանձին նախանձախնդրություն էյին ցույց տալիս **մոնտանականները**՝ Մոնտանի հետևողները, վոր հրապարակ յեկավ փոքր Ասիայում Անտոնին Պիուս կայսրի ժամանակ: Մոնտանականներն աշխարհի վախճանի գալուստն էյին ավետում. ըստ նրանց ուսմունքի՝ կփրկվեն միայն արդար մարդիկ, վորոնք խուսափել են աշխարհիկ կյանքի մեղքերից՝. կղերականները, մեղավորներով լի համայնքների ղեկավարները պետք է տեղի տան Սուրբ Վոգով ներշնչված նոր մարգարեներին: Յեպիսկոպոսներն ու յերեցներն արտահայտվեցին մոնտանականների անչափ ջերմեռանդության դեմ. նրանք ղեկավարվում էյին այն հայացքով, վոր մարդկանց մեծ մասն անընդունակ է անընդհատ սխրագործության և անձնուրացության. պետք է ներել մեղքերը և, անմեղության մարդկային ուժից վեր պահանջների փոխարեն, պետք է համբերատար և անշեղ կրթել մարդկանց քրիստոնեական իդեալի վոգով:

Կայսրությունը արշավանքի փորձերի տակ: Տրայանոսի պատերազմները հռոմայեցիների վերջին հարձակողական պատերազմներն էյին: Շուտով կայսրությունն ստիպված յեղավ պաշտպանել իր նախկին սահմանները և նույնիսկ այդ սահմաններից յետ նահանջել: Տրայանոսից արդեն 50 տարի անց Դանուբի վրա անհանգստություն տիրեց. Մարկոս Ավրելիոսի ժամանակ այստեղ յերևացին բարբարոսների մեծ հորդաներ, և բոլորից առաջ **մարկոմանների** գերման ցեղը: Նրանք պատռեցին պաշտպանողական գիծը զանազան տեղերում, միքանի հարյուր հազար գերի վերցրին հռոմեական տիրույթներից, թալանեցին դանուբյան շրջանները և Ալպերի վրայով անցան հյուսիսային Իտալիա: Ճիշտ է, հռոմայեցիք նրանց յետ մղեցին, բայց դրա համար պետք յեղավ մոտ 15 տարի համառ կռիվ մղել: Ինքը կայսր Մարկոս Ավրելիոսը, վոր իր գիտական հակումների համար Փիլիսոփա յէ

կոչված, իբր ամբողջ քսան տարվա իշխանությունը անցկացրեց արշավանքներում. Դանուբի ու Յեփրատի վրա, և մեռավ (180 թ.) **Վինդոբոնա** (այժմյան Վիեննա) սահմանամերձ քաղաքում:

Մարկոմանական պատերազմն աղետի սկիզբն էր միայն: Միջին և արևելյան Յեվրոպան շարունակում էր ուղարկել մարդկանց նոր նվաճողական վիթխարի զանգվածներ, վորոնք դեպի հարավ և արևմուտք էյին գնում հող ձեռք բերելու համար: Հարկ յեղավ լեգիոնները հանել իրենց հաստատուն տեղերից և կրկին նրանց տանել հեռավոր արշավանքների՝ պաշտպանելու համար Բրիտանիան շոտլանդական լեռնցիներից, Հռենոսն ու Դանուբը գերմանացիներից և սև-ծովյան շրջանի վաչկատուն ցեղերից: Զինվորներն ու նրանց հրամանատարները վերստին առաջնակարգ կարևորություն ստացան պետության մեջ: Գրեթե յուրաքանչյուր արշավանք սկսվում էր նրանով, վոր խոստանում էյին ավելացնել նրանց ռոճիկը և ավելի առատ նվերներ տալ: Շուտով պետության բոլոր յեկամուտներն սկսեցին ծախսվել զորքի պահպանության համար: Լեգիոնները վերստին սկսեցին կայսրներ հռչակել ու տապալել:

Առաջին զինվորական կայսրներից մեկն էր Սեպտիմիուս Սևերը, վոր իշխանությունն իր տան ձեռքում հաստատեց (Սևերների ժամանակը՝ 193—235 թ. թ.): Յեփրատի այն կողմը պարթևների դեմ կատարած արշավանքից հետո նա ստիպված յեղավ անցնել կայսրության հակառակ ծայրը՝ Բրիտանիա, ուր և մեռավ սահմանի վրա **Էբորակում** (այժմյան Յորկում, հյուսիսային Անգլիայում): Սևերը ծագումով աֆրիկացի յեր, Հաննիբալի հայրենակիցը: Կայսերական ծիրանի կրողները, վոր նրան հաջորդեցին, արդեն հռոմայեցիներ չէյին, այլ նույնպես, ինչպես և ինքը, կայսրության մյուս ազգերի ներկայացուցիչներ՝ սյուրիացիներ, գալլեր, իլլիրիացիներ, թրակիացիներ, արաբներ: Այդ փոփոխության մեջ արտացոլում է առհասարակ հռոմեական ազգի անկումը. հռոմայեցիք տեղի յեն տալիս և՛ զորքի, և՛ վարչության մեջ. նրանց փոխարինում են պրովինցիաների բնակիչներն ու հռոմեական ծառայության մեջ մտած բարբարոսները: Շնորհիվ այն հանգամանքին, վոր հռոմայեցիների մեջ բազմաթիվ ոտարականներ մտան, լատինական լեզուն կոպտացավ. Սպանիայում, Գալլիայում, Դանուբի վրա, Իտալիայում իսկ նրանից առաջ յեկան **ռոմանական** բարբառներ, վորոնցից հետագայում կազմվեցին սպանական, ֆրանսիական, ռումանական և իտալական լեզուները:

Մինչ այդ արևելյան մեծ պետության մեջ մի կարևոր փոփոխություն տեղի ունեցավ. Պարսկաստանի կառավարիչ Արտաշիրը, վոր Սասանյանների ցեղից էր, տապալեց պարթևական հարստությունը (226 թ. Ք. ծ. հետո), և նրա հետ միասին կրկին վոտքի կանգնեցին պարսիկները, վորոնք 500 տարի առաջ յետ էյին մղված Ալեքսանդր Մակեդոնացու զորքով: Նոր պարսկական թագավորն ընդունեց «արքայից աստվածային արքա Անուրամազդայի սպասավորի» հին տիտղոսը: Պարթևական թագավորներն ապրում էյին հույների հիմնած քաղաքներում՝ Սելևկիայում և Կտեզիֆոնում Տիգրիս գետի վրա: Սասանյաններն իրենց մայրաքաղաք դարձրին Պերսեպոլիսը և սկսեցին դրամ կտրել, վորի վրա դրոշմված էր պար-

սիկների հին կրոնի սիմբոլը՝ անշեջ կրակը բագինի վրա։ Ըստ պարսկական ավանդության՝ Իսկանդերը (այսինքն Ալեքսանդրը՝ պարսիկների կործանիչը) այրեց մեծ մարգարե Զարատուստրայի (Զրադաշտի) սրբազան գրքերը, սակայն Արտաշիրի ժամանակ բարեպաշտ քահանաները վերականգնեցին նրանց։ Հոգևորականությունը (պարսկերեն՝ **մոբեդները**) մեծ ուժ ստացավ. նրա պետը (**մոբեդան-մոբեդը**) թագավորին համահավասար հարգանք եր վայելում և թագադրում եր նրան։ Պարսկական պետության վերածնունդը մի նոր վտանգ եր ներկայացնում հռոմեական կայսրության համար. Սասանյանները՝ Կյուրոսի և Դարեհի հավակնություններով տոգորված՝ պատերազմ սկսեցին Ասիան հռոմայեցիներից մաքրելու համար։

Կայսրության քայքայումը յեվ պրովինցիաների վայրենացումը: Տրայանոսից 150 տարի հետո հռոմեական կայսրությունը կորստյան անդունդի վրա յեր կանգնած։ Պարսիկներից ջարդված Վալերիանոս կայսրը գերի ընկավ նրանց ձեռքը (256 թ.). պարսից թագավորը ներս խուժեց Սյուրիա և գրավեց Անտիոքեն. հռոմեական գերիներին ստիպեցին ամբարտակներ և ջրանցքներ շինել Տիգրիսի այն կողմը։

Միևնույն ժամանակ գերմանական ցեղերը, մեծ միություններ կազմելով, սկսեցին գրոհ տալ սահմանի բաց տեղում, Դանուբի վրա։ Հռոմայեցիք հարկադրվեցին Դակիայից յետ քաշել իրենց լեգիոնները և ամենևին հրաժարվել այդ հեռավոր պրովինցիայից։ Սակայն Դանուբի այն կողմն ել հանգստություն չկար. գերմանացիների ավազակային խմբերը թալանեցին Հունաստանը, գրավեցին առևտրական նավերը Բյուզանդիոնում և անցան Փոքր Ասիա. վոմանք իրենց նավակներով հասան նույնիսկ Նեղոսի բերանը։

Ամրությանց գիծը սահմանի վրա վոչ մի տեղ չկարողացավ կանգնեցնել բարբարոսների գրոհը։ Հարկ յեղավ գրեթե յուրաքանչյուր քաղաք ամրացնել յերկրի ներսում։ Յերկիրը կարծես փշաքաղվեց ահարկու ամրությանց հողապատնեշներից և աշտարակներից։ Ամրացած քաղաքը դառնում եր յերեք—հինգ անգամ ավելի փոքր, քան նախկինը, բաց և խաղաղ քաղաքը, վոր կարող եր ազատորեն ծավալվել։ Պաշտպանվելու համար մարդիկ կուչ եյին գալիս հողի մի փոքրիկ կտորի վրա։ 3—4 սաժեն լայնություն ունեցող մռայլ պատերը, վորոնք յերբեմն քանդված հուշարձանների մարմարից եյին շինված լինում, ամեն կողմից ծածկում եյին հորիզոնը և, վորպես սավերներ, կախված եյին մնում նեղ փողոցների վրա։ Փողոցներն ուղղակի դեպի բերդի դարպասներն եյին դուրս գալիս. այդ դարպասները՝ ցածր ու մռայլ՝ ավելի շուտ նման եյին ստորերկրյա մուտքերի։ Յեթե քաղաքը մեծ գետի վրա յեր, գետի ափով պարիսպ եյին կանգնեցնում. քաղաքացիներն իրենց գետը չեյին տեսնում. նավերը, քաղաքի նավահանգիստը մտնելու համար, անցնում եյին պարսպի տակից։

Պետական գանձարանը միջոցներ չուներ շինելու և պահպանելու այդ ամրությունները. բոլոր ծախսերն ընկած եյին իրենց՝ քաղաքացիների վրա։ Այդ պատճառով շատ քաղաքներ բոլորովին սնանկացան։ Զքացավ այն ամենը, ինչ վոր առաջ գրավիչ եր դարձնում քաղաքը. Ջրմուղները յերեսի վրա թողնվեցին. միջոց չկար այլևս կառուցանելու տաճարների, բաղնիկաների, գրադարանների գեղեցիկ մեծ շենքերը. միջոց չկար այլևս պահպա-

նելու թատրոնն ու խաղերը. դպրոցները մեծ մասամբ փակվեցին։ Գեղարվեստական իրեր այլևս չեյին պահանջում. ճաշակը նրանց նկատմամբ կորավ, արվեստագետներ ել չկային այլևս. յերբ կայսեր արձանը կամ հուշարձանն եյին դնում շիրմի վրա, բավականանում եյին քարտաշի և պատանկարչի կոպիտ աշխատանքով։

Մարդիկ իրենց բոլոր հարմարություններից զրկվեցին, նրանց հորիզոնն աղքատացավ և բարքերը կոպտացան։ Սնանկացած գյուղացիք և հողատերերը թափառաշրջիկներ եյին դառնում, ավազակային խմբեր եյին կազմակերպում. նրանք այնքան շատ եյին, վոր ազգաբնակությունն ստիպված եր փրկանք վճարելով ազատվել նրանցից, ստիպված եր թողնել նրանց մոտ թալանված իրերը՝ մնացածը պահպանելու համար։

Մարդկանց կապվելը տեղին ու զբաղմունքներին: Պետության բոլոր ուժերը հարկ յեղավ կռվի համար լարել։ Քաղաքներից մեծ տուրքեր եյին հավաքում զորքի պահպանության, ռազմական կառուցումների համար. քաղաքային սենատը կազմող հարուստ մարդկանց ստիպում եյին իրենց կայքով պատասխանատու լինել բոլոր մնացած բնակիչների ճշտապահ հարկատվության համար. իսկ վորպեսզի այդ ականավոր քաղաքացիները չկարողանային իրենց պարտականությունը կատարելուց խուսափել, կառավարությունը նրանց պահում եր քաղաքում, վորպես ճորտերի։ Փախուստի փորձ անելու դեպքում դաժան պատիժ եր սպառնում նրանց։ Նույնպես իրենց տեղին կապեցին վաճառականներին և արհեստավորներին։ Նրանք իրավունք չունեյին փոխելու իրենց զբաղմունքներն ու բնակավայրը. վորդին պարտավոր եր շարունակել իր հոր զբաղմունքը։ Բացի պատվերներից, վոր նրանց վաստակ եյին տալիս, նրանք պարտավոր եյին ձրի աշխատել զորքի և արքունիքի համար—կոշիկ, հագուստ, զենք պատրաստել, հաց բերել։

Հարկ յեղավ զորքն ավելացնել. քանի վոր հռոմեական յերկրամասերում զինվորական ծառայության ընդունակ մարդկանց պակասություն կար, լեգիոնների մեջ սկսեցին հետզհետե ավելի մեծ քանակությամբ ընդունել բարբարոսներ, մանավանդ գերմանացիներ։ Յերբեմն հռոմայեցիք հարձակվող գերմանացիների հետ հաշտվում եյին այն պայմանով, վոր իրենց միջից նրանք զինվորներ տան։ Կամ գերմանացիներին սահմանի մոտ մի հողամաս եյին զիջում այն պայմանով, վոր հողաբաժին ստացած յուրաքանչյուր ընտանիք զինվորներ տար։ Քանի վոր զինվորների աշխատանքը ծանր եր, իսկ վարձատրությունը գոհացուցիչ չեր, վորոշեցին առհասարակ հող բաշխել զինվորներին։ Սահմանի ամբողջ գծի վրա գաղթական-զինվորներ տեղավորեցին։ Ազատ ժամանակ նրանք հող եյին վարում. արհեստը ժառանգական դարձավ, նրանց վորդիք պարտավոր եյին ծառայության գնալ։ Հետևաբար և զինվորները կարծես ճորտեր դարձան։ Յեթե հարկ եր լինում զինվորներ պահել յերկրի ներսում, այդ դեպքում նրանց տեղավորում եյին հողագործների մոտ։ Ամեն մի հողատեր պարտավոր եր զիջել նրանց իր հողի մի յերրորդ մասը կամ պահել նրանց իր յեկամուտների յերրորդ մասով։

Ծանր ժամանակներ սկսվեցին բոլորի համար։ Կալվածատերերը մեծ դժվարությամբ եյին այժմ ստրուկներ գնում։ Դատարկվեցին ստրուկների շուկաները, վորոնք հռոմայեցիների տիրապետության ժամանակ լեցուն եյին

զինվորական գերիներով և հափշտակված մարդկանցով։ Միշտ պատրաստի բանվորներ ունենալու նպատակով կալվածատերերն ամեն կերպ սկսեցին հարևան գյուղացիներին իրենց մոտ գրավել ճորտային աշխատանքի համար. գրավում էին մերթ վարկ արտոնություն տալով, հողաբաժին զիջելով կամ իրենցից փայտ վերցնելու իրավունք տալով, մերթ ուժով, բռնությամբ։ Գյուղացիները (**կոլոն**-ները) պարտավորվում էին ամենատաք ժամանակը միքանի օրով աշխատանքի գալ հողատերերի մոտ. սովորաբար նրանք գալիս էին յերեք անգամ—վարելու և փորելու հողը, քաղհան անելու բանջարանոցներում և այգիներում և հնձելու։ Յերբ կալվածատերը պահանջում էր, նրանք տրամադրում էին նույնպես իրենց սայլերն ու ձիերը՝ կալվածատիրոջ ապրանքները շուկա փոխադրելու համար։

Իր ստրուկներին կալվածատերը նույնպես բնակեցնում էր հողաբաժինների վրա. նրանից տալիս էր հող, խրճիթ, թույլ էր տալիս ունենալ ընտանիք, բանջարանոց, անասուն։ Ստրուկը տալիս էր իր տիրոջը հողաբաժնից հավաքած պտղի և հացի մի մասը, իսկ դրանից դատ վորոշ օրերին նա գնում էր տիրոջ մոտ աշխատելու։ Կալվածատերն աչալրջությամբ հետևում էր, վոր այն բոլոր մարդիկ, վորոնք պարտական էին նրա համար աշխատել, չխուսափեն իրենց պարտականություններից։ Նա գրում էր նրանց համար կանոնադրություն և փորագրում էր այն քարե սեղանի վրա, վոր դրվում էր կալվածի մեջտեղում։ Կալվածատերը նրանց տերն էր դառնում։ Կոլոնը արդեն չէր կարող մի ուրիշ տեղ գնալ. նա համարվում էր կալվածատիրոջ պարտապանը, վոր պարտավոր էր աշխատել պայմանի համաձայն. Նա նույնպիսի **ճորտ** մարդ դարձավ, ինչպես և հողի վրա նստած ստրուկը։ Ճորտի յերեխաները նույնպես կալվածքին էին պատկանում և մեծանում էին վորպես ճորտեր։ Հեռանալու փորձի համար ճորտերին պատժում էին ինչպես վոճրագործի։

Կալվածատերն սկսեց խառնվել նրանց բոլոր գործերին. Նա քննում էր ճորտերի միջև ծագող վեճերը, կարծես նրան դատավոր էին դրել նրանց գլխին. արգելում էր ճորտերին ուրիշ դասակարգից և նույնիսկ ուրիշ տեղից կին վերցնել, վորպեսզի ճորտը յետ չսովորի իր պարտադիր աշխատանքը. կալվածի համար քուրմ էր նշանակում և պահանջում, վոր իր շրջանում ապրող բոլոր մարդիկ մի հավատի լինեն։ Կալվածքում շաբաթը յերկու անգամ շուկա էին բաց անում, վորպեսզի ճորտերը կարիք չունենան քաղաք գնալու։ Կայսրները դրան չէին խանգարում. Նրանք բոլոր պրովինցիաներում հսկայական կալվածքներ և իրենց բազմաթիվ ճորտերն ունեին։ Նրանք պահանջում էին, վոր կալվածատերերն իրենց ճորտերի համար պատասխանատու լինեն. կալվածատերերը պետք է հետևեին, վոր ճորտերից կանոնավորապես տուրք ստացվի, և վոր նրանցից հարկավոր քանակությամբ զինվորներ հավաքվեն։

Խոշոր կալվածատերերը, յուրաքանչյուրն իր շրջանում, մի-մի թագավորներ դարձան կարծես։ Նրանց մեծ տները հաճախ շրջապատված էին հողապատնեշով ու պատով և իսկական ամրոց դարձրած։ Նրանք կարող էին իրենց սեփական ուժերով յետ մղել բարբարոսների հարձակումները։ Շատերը մտնում էին նրանց հովանավորության տակ, իրենց հոժար կամքով դառնում

էին նրանց ճորտերը. այդպես վարվում էին, օրինակ, քաղաքի առևտրականները՝ քաղաքային ծանր ծառայություններից խուսափելու համար։ Մի այդպիսի «հզոր» կալվածատեր, վոր ճորտ ծառաների և ստորադրյալ մարդկանց բազմությամբ էր շրջապատված, չէր թողնում իր մոտ պետական պաշտոնյաներին, հաճախ յերկարորեն տուրք չէր վճարում, իր կալվածքի շուրջ-բոլորը գրավում էր այն ամենը, ինչ վոր իրեն դուր էր գալիս։

Կայսրության վերականգնումը։ Ամենից ավելի դժվար էր կռվելը կայսրության թշնամիների հետ ստորին Դանուբի վրա, ուր Կարպատների և Սև ծովի միջև փռված տափարակը ներկայացնում է իրենից մեծ բաց դռներ։ Ծագումով սահմանամերձ դանուբյան շրջանից՝ Իլլիրիայից էին հենց այն կայսրները, վորոնք ավելի քան հարյուր տարով կրկին վերածնեցին գրեթե կործանված հռոմեական կայսրությունը,—Ավրելիանուսը, Դիոկլետիանուսը և Կոնստանդինը (սպանացի Թեոդոսիուսի հետ միասին նրանց ժամանակաշրջանն է 270—395 թ. թ.)։

Ավրելիանուսը, վոր Յերկաթե ձեռք մականունը ստացավ, կայսրության վերադարձրեց ասխական տիրույթները. վորովհետև բարբարոսները նորս էին խուժում կայսրության խորքը և սպառնում էին նույնիսկ Հռոմին, մայրաքաղաքը նա շրջապատեց մի ամուր պարսպով, վոր իր մեջ առավ արվարձանները և վոր չորս անգամ ավելի յերկար էր, քան հանրապետության ժամանակ շինված ամրության հին գիծը։ Ավրելիանուսը Անհաղթ Արևի յերկրպագու յեր և հրամայեց պաշտել Հռոմում սյուրիական աստծուն, վորպես կայսրության գլխավոր պահպանիչին։

Դիոկլետիանուսը (284—305) կայսր դարձավ յերկար խռովություններից հետո, յերբ կայսրներից գրեթե վոչ մեկը չէր մեռնում իր բնական մահով և յերբ կայսրության մի շրջանի լեգիոնները չէին կամենում ճանաչել մի ուրիշ զորքի ընտրյալին։ Պարզ էր, վոր մի կառավարչի համար անկարելի է ամեն տեղ հասնել. ավելի լավ է, վոր բաժանվի իշխանությունը և վոր միքանի կայսրներ գործեն միաբան, բայց զանազան տեղերում։ Այդ պատճառով Դիոկլետիանուսն իրեն գահակից նշանակեց Մաքսիմիանուսին. նրանք յերկուսն էլ իրենց օգոստոս անվանեցին և իրենց ընկերակից ընտրեցին Գալերիուսին և Կոնստանցիուս Խլորին, վորոնք կայսր տիտղոսն ստացան։ Բոլոր չորսն էլ հավասար հարգանք էին վայելում և հավասար իշխանություն ունեին։ Նրանք թողին Հռոմը և իրենց համար մայրաքաղաք ընդունեցին սահմանամերձ քաղաքներ. ինքը Դիոկլետիանուսը՝ **Նիկոմիդիան** Բյութինիայում, Սև ծով տանող Բոսֆորի նեղուցի մոտ, Գալերիուսը՝ **Սիրմիումը** (Դանուբին խառնվող Սավա գետի վրա, Բելգրադից վոչ հեռու), Մաքսիմիանուսը՝ **Միլանը** հյուսիսային Իտալիայում, Ալպիական անցքերի մոտ և Կոնստանցիուսը՝ **Տրիրը** Հռենոսի մոտ։

Դիոկլետիանուսը, վոր մի նախկին ստրուկի վորդի յեր, կայսր դառնալով, խիստ անմատչելի դարձավ։ Նրա արքունիքում ընդունվեց պարսկական ցերեմոնիալը։ Կայսեր մոտ ունկնդրություն ստացողն անցնում էր պահապան զինվորների, ծառաների և թիկնապահ զինվորների շարքերի միջից. 30 սպիտակ լեգեոնարներով (լռակյաց զինվորներով) պահպանվող թագավորական դահլիճի շեմքը կոխելուց հետո նա գետին էր փռվում, հագին համարձակվելով

նայել «սրբազան դեմքին»: Կայսրը հաղթողի ծիրանագույն պատմուճանը փոխարինեց քահանայապետի վոսկեզօծ հագուստով. իր գլխին նա ուներ մարգարիտներով ծածկված քրմական սպիտակ փաթթոց: Յերբ նրա պատկերն եյին նկարում, նրա գլխի շուրջը ճաճանչափայլ կամ ճաճանչապսակ եյին անում: Պաշտոնական թղթերի մեջ, հուշարձանների վրա թագավորին «սրբազնագույն», «անհաղթելի» անունն եյին տալիս, ասում եյին, վոր նա տեսանելի մարմնացյալ աստված ե, վոր նա կենդանի որենք ե յերկրիս վրա: Այն ամենը, ինչ վոր շրջապատում եր նրան, սրբազան բնույթ եր ստանում: Նրա մինիստրներին հանձնված եր «սրբազան պալատի և սրբազան ննջարանի» կառավարումը, «սրբազան վողորմությունների» բաշխումը:

Կայսրն այլևս չեր բաժանում իր իշխանությունը սենատի հետ, ինչպես Ոգոստոսի ժամանակ: Նա չեր համարվում ժողովրդի լիազոր. նա կառավարիչ եր աստվածային որենքով: Պրինցեպսի՝ պետության առաջին մարդու հին տիտղոսը, վոր կրում եր Ոգոստոսը, այլևս չեր համապատասխանում միապետին. նա անվանում եր իրեն «վեհապետ և աստված»:

Բազմաթիվ պաշտոնյաներ եյին նշանակված պրովինցիաներում՝ կարգ պահպանելու, տուրքերը հավաքելու, զորքի և արքունիքի համար հավաքվող հացի և այլ մթերքների մատակարարությունը վարելու: Ուրիշ պաշտոնյաներ նշանակված եյին՝ առաջիններին հետևելու և նրանց հանցանքները հայտնաբերելու համար. պաշտոնյաների մի նոր խումբ ես գտնվում եր մայրաքաղաքում, կայսեր մոտ. սրանք ընդունում եյին հաշիվներ, զեկուցագրեր ու տեղեկագրեր և սրանց հիման վրա զեկուցում եյին ներկայացնում թագավորին: Պաշտոնյաների այդ ամբողջ հսկայական բանակը պահելու համար պետք եր նոր մեծ հարկեր հավաքել ազգաբնակությունից, մինչդեռ նա առանց այն ել ավերված եր բարբարոսների արշավանքներից, քաղաքներն ամրացնելու և զինվորներին պահելու համար արած ահագին ծախսերից:

Քրիստոնեյության հալածանքը: Անտոնինների ժամանակից ի վեր անցած հարյուր տարվա ընթացքում քրիստոնյաների թիվը սաստիկ աճեց. նրանց մեջ բազմաթիվ հարուստ և ազդեցիկ մարդիկ կային, ի միջի այլոց կայսերական պաշտոնյաներ և պալատականներ: Տիեզերական յեկեղեցին 300 թ. կազմում եր մի մեծ միություն, վորի հզորությունն առանձնապես զգալի յեր կայսրության արևելյան մասում: Աշխատելով ամրապնդել ներքին կարգը հռոմեական պետության մեջ, Դիոկլետիանուսն ընդհարվեց քրիստոնյաների հետ: Իրենք կայսրներն ու նրանց փոխարքաներն ել պարզ տեսնում եյին, վոր քրիստոնյաների համար յեպիսկոպոսի ձայնն ավելի կարևոր ե, քան պետության պահանջները: Կառավարիչներին թվում եր, թե յեկեղեցին շեղում ե և՛ մարդկանց և՛ հարստությունները կայսրության ոգտին ծառայելուց: Մանավանդ վոր Դիոկլետիանուսը, լինելով բարեպաշտ մարդ, վախենում եր, թե նախնիքների պաշտած աստվածների վերաբերմամբ արհամարհանքը կկործանե յերկիրը: Ի պատասխան նրա յերկյուղներին՝ Ապոլլոնի հին պատգամախոսը Միլետում խորհուրդ տվեց վոչնչացնել բոլոր նրանց, վորոնք ժխտում են հին հավատը:

Դիոկլետիանուսը հրամաններ արձակեց, վորոնցով նա արգելում եր քրիստոնյաների ժողովները, հրահանգում եր փակել նրանց աղոթատները,

ղրավել և այրել նրանց գրքերը. այն յեպիսկոպոսները, յերեցներն ու սարկավագները, վորոնք կհրաժարվեն հանձնել գրքերն ու յեկեղեցական կայքը, բանտարկության կենթարկվեն: Դաժան վերաբերմունքի առաջին որինակը ցույց տվեց Դիոկլետիանուսի գվարդիայի պետը, վոր մի զորախումբ վերցնելով, գնաց քանդելու մի մեծ աղոթատուն Նիկոմիդիայում (303 թ.): Քրիստոնյաների մեջ բաժանում տեղի ունեցավ. վոմանք տատանվում եյին, համաձայնվեցին հեթանոսական զոհաբերություն անել և գրքերը հանձնել. մյուսները՝ անվախ քրիստոնյաները հրապարակ յեկան ել ավելի անհողդողդ վճռականությամբ: Անտիոքեյում մի դատավոր հարցրեց սուրբ Ռոմանոսին, թե ինչու նա չի յենթարկվում կայսրին և ստացավ պատասխան. «Միայն Քրիստոսն ե իմ թագավորը»: Այդ խոսքերի մեջ գտան նորին մեծության ուղղված վիրավորանք և մահվան դատապարտեցին մեղադրյալին: Քրիստոնյաների հալածանքն անհաջողության մատնվեց, և աղետյալ յեպիսկոպոսներն ավելի ևս պինդ կերպով հավաքեցին իրենց շուրջը յեկեղեցու հավատարիմ զավակներին: Կռվից հոգնած Դիոկլետիանուսը հրաժարվեց իշխանությունից և առանձնացավ իր հսկայական պալատում, վոր շինված եր Ադրիական ծովի իլլիրիական ափի վրա:

Կոնստանդինը յեվ քրիստոնեյության հաղթանակը: Դիոկլետիանուսի հրաժարումից հետո տեղի ունեցան խռովություններ, վորոնց մասնակցեցին նախկին Գալերիուս կայսրը և միքանի նոր կայսրներ. այդ կռիվների ընթացքում վերացրին Դիոկլետիանուսի հրովարտակները քրիստոնյաների հալածանքի վերաբերյալ: Մրցակիցների մեջ ամենից բախտավոր դուրս յեկավ Կոնստանցիուս Խլորի և քրիստոնեուհի Հեղինեյի վորդի Կոնստանդինը, ուժեղ մտքի և փայլուն ընդունակությունների տեր մի մարդ (ծն. 273 թ., թագավորեց 306—337 թ. թ.):

Կոնստանդինին ամենից առաջ հաջողվեց տիրանալ Հռոմին և ամբողջ Արևմուտքի կայսրը դառնալ: Լինելով քրիստոնեյության համակիր, Կոնստանդինը միևնույն ժամանակ տեսնում եր, թե ինչպիսի ոգնությո՛ւն կարող են նրան հասցնել յեպիսկոպոսներն իրենց ահագին ազդեցությամբ հավատացյալների վրա: **Միլանում** 313 թ. հրատարակած հրովարտակով Կոնստանդինը հայտարարեց **կրոնի ազատություն**. «Թող յուրաքանչյուր մարդ իր համար ընտրե այն կրոնը, վոր գրավում ե նրան, և թող ազատ կերպով կատարե նրա ծեսերը: Աստվածային գործերում չի կարելի վոչվոքի խանգարել, վոր գնա իր ընտրած ճանապարհով»: Քրիստոնեական հոգևորականներին Կոնստանդինը տվեց այն բոլոր առավելությունները, վոր ունեյին հեթանոսական քրմերը—հավատացյալների ոգտին նվիրաբերություն և ընծաներ ընդունելու իրավունք, ստրուկների արձակման հաստատության իրավունք, դատապարտյալներին սրբավայրերում ապաստան տալու իրավունք:

Վորովհետև կայսրը քրիստոնյաներին հովանավորում եր, յեկեղեցուն սկսեցին հարել մեծ բազմությամբ նորադարձներ: Ատիսի, Ոզիրիսի, Անհաղթ-Արևի յերկրպագուների համար դժվար չեր քրիստոնեյություն ընդունել. ամենից համառ դուրս յեկավ Միհրի կրոնը, վոր սաստիկ տարածված եր զինվորների մեջ:

Աղոթող քրիստոնյաների համար սկսում են շինել ընդարձակ «աստվածու տներ», տալով նրանց բազիլիկաների կերպարանք։ Շենքի խորքում, այնտեղ, ուր բազիլիկայի մեջ նստում էր կայսերական դատավորը, գահ էին դնում յեպիսկոպոսի համար. նրա առջև դնում էին մի սեղան սուրբ հաղորդության համար և մի սեղան նվիրաբերության համար, ուր ժողովուրդը դնում էր վոսկեղեն, արծաթեղեն և թանգագին իրեր, վորոնք պետք է ծառայեին կլերի և աղքատների պահպանության։ Ավելի հեռու կանգնած էին լինում մկրտվածները, մի կողմից՝ տղամարդիկ, մյուս կողմից՝ կանայք. նրանց յետևում՝ նորադարձները։ Յերկու կամ յերեք տարվա ընթացքում նորադարձներին թույլ էին տալիս միայն լսել ավետարանը և յեպիսկոպոսի խրատները. յերբ սկսվում էր ժամերգությունը, նրանք պետք է յեկեղեցուց դուրս գային և նրա շեմքի առաջ կանգնած մնային ապաշխարող մեղավորների հետ միասին։ Առաջին շրջանում տաճարները մութ էին և զուրկ ամեն տեսակ զարդարանքներից, հիշեցնելով այն ստորերկրյա տեղերը, վորոնցից լույս աշխարհ էր բարձրացել քրիստոնեական ժամերգությունը։ Ավելի ուշ ժամանակներում միայն նրանց մեջ յերևան յեկան վոսկեղենը, թանգագին պատկերները, հոգևորականների շքեղ զգեստները՝ Սյուրիայի և Յեգիպտոսի հին սովորության որինակով։

Քանի դեռ Կոնստանդինն Արևմուտքի կայսր էր, ուր քրիստոնյաները փոքրամասնություն էին կազմում, նա աշխատում էր հաշտեցնել զանազան դավանանքները և հաստատել այնպիսի ծեսեր ու սիմբոլներ, վորոնք կարողանային գոհացնել միաժամանակ աստվածության գերագույն հավատին ծառայող բոլոր մարդկանց։ Այդ պատճառով Սատուրնի որվա փոխարեն, վոր համապատասխանում է շաբաթ որվան, վորպես շաբաթական տոն, նա հաստատեց Արևի որը, վոր համապատասխանում է քրիստոնեական աստծու որվան կամ կիրակի որվան։ Այդ որը լեգիոններին կարդում էին նոր հաստատված աղոթքը, վոր համահավասար կերպով կարող էին ընդունել ինչպես Միհրի, Սերապիսի յերկրպագուները, այնպես էլ հավատացյալ քրիստոնյաները (մինչև այժմ էլ գերմաներեն և անգլիերեն լեզվով կիրակի որը Արևի որ է կոչվում)։

Առաջին տիեզերական ժողովն ու մայրաքաղաքի փոխադրությունը։ Բարեկամությունը քրիստոնյաների հետ ոգնեց Կոնստանդինին հաղթելու արևելյան կայսր Լիցինիուսին, վոր թշնամի յեր յեկեղեցուն։ Տիրանալով արևելքին, ուր քրիստոնյաները հզոր ուժ էին ներկայացնում, Կոնստանդինն ավելի վճռական կերպով նրանց կողմը թեքվեց։ Հոգևորականությունը նա ազատեց տուրքերից և արքունիքին հաց մատակարարելու ծանր պարտականությունից. յեպիսկոպոսներին նա սկսեց հրավիրել իր սեղանին և առատ նվերներ տալ յեկեղեցուն։ Յեպիսկոպոսները դարձան նրա կառավարության գլխավոր նեցուկը. իր յերեխաներին Կոնստանդինը կրթեց քրիստոնեական վոգով։

Յեկեղեցու մեջ սկսված տարաձայնությունները Կոնստանդինը շատ վտանգավոր էր համարում կայսրության համար։ Այդ ժամանակ քրիստոնեաների մեջ մի մեծ դավանաբանական վեճ ծագեց. ալեքսանդրիացի յերեց Արիոսը, առարկելով սուրբ Յերրորդության ուսմունքի դեմ, պաշտպանում էր այն հայացքը, թե աստծու վորդին հավասար չէ, այլ նման է հայր-աստծուն։

Արևելքում այդ հարցի առիթով յեկեղեցին գրեթե յերկու հավասար մասի բաժանվեց. հակառակորդները չսահմանափակվեցին գրքերի և խոսքի միջոցով վիճելով. փոխադարձ կատաղությունը յերբեմն փողոցային ընդհարումների յեր հասցնում։ Կամենալով վերջ դնել այդ յերկպառակության, Կոնստանդինը 325 թ. յեպիսկոպոսներին ընդհանուր **տիեզերական** ժողովի հրավիրեց Բոսֆորի մոտ գտնվող փոքր-ասիական **Նիկեա** քաղաքի մեծ բազիլիկայում։ Ժողովում գերակշռող թիվ էին կազմում արիոսականության հակառակորդները, վորոնց մեջ աչքի յեր ընկնում մի ուրիշ ալեքսանդրիացի յերեց՝ պերճախոս Աթանասիոսը. Արիոսի ուսմունքը դատապարտության յենթարկվեց, և ժողովի հայրերը հաստատեցին հավատո հանգանակը։ Կոնստանդինը միքանի անգամ նախագահեց ժողովում, նա իրան անվանում էր ընդհանրական յեպիսկոպոս, իսկ մյուս յեպիսկոպոսներին՝ յեղբայրներ ու աշխատակիցներ։

330 թ. Կոնստանդինը վորոշեց մայրաքաղաքը Հռոմից արևելք փոխադրել. նա ընտրեց սահմաններին մոտ գտնվող մի քաղաք՝ **Բյուզանդիոնը**, դեպի Սև ծովը տանող նույն նեղուցի մոտ, ինչպես և Նիկոմիդիան, վոր ընտրել էր Դիոկլետիանուսը, բայց միայն Յեվրոպայում։ Այդ քաղաքը, վոր ժամանակին աթենական պետության էր պատկանում, հիանալի դիրք էր գրավում. նրա մոտից անցնում էր կարևոր ծովային ուղին, վոր ասես կըտրում էր Դանուբից Յեփրատ տանող ցամաքային ճանապարհը. այստեղ Յեվրոպայից Ասիա անցնելու լավագույն տեղն էր։ Քաղաքը կանգնած էր փակ Մարմարյան ծովի և նեղուցի անկյունում. նաև հյուսիսում նա ուներ մի խորը յերկար նավահանգիստ՝ Վոսկեղջյուրը։

Բյուզանդիոնում, վոր այն ժամանակից իվեր **Կոստանդնուպոլիս**, այսինքն Կոնստանդինի քաղաք անունը ստացավ, միացան հեթանոսության և քրիստոնեյության սիմբոլները։ Ամեն կողմից նոր մայրաքաղաքն սկսեցին բերել հին սրբություններ և թանգագին իրեր. Դելֆերից վերցրին ոձակերպ սյունը, վորի վրա դրված էր յեռոտանին, 800 տարի դրանից առաջ Քսերքսեսին հաղթող հույների նվերը։ Կոստանդնուպոլսի սենատում, վոր շինեցին Հռոմի սենատի ձևով, տեղավորեցին քաղաքի յերջանիկ բախտի աստվածուհու՝ Տիքայի արձանը։ Ամեն տարի, Կոստանդնուպոլսի հիմնադրության որը աստվածուհու արձանը դնում էին Արևի կառքի վրա, վոր լծված էր լինում հրագույն ձիերով, և փայլուն զորքի ուղեկցությամբ տանում էին այն **հիպոդրոմ** կամ կրկես, ուր կայսրը պսակ էր դնում նրա գլխին. արձանի ճակատին Կոնստանդինը հրամայեց զարնել խաչի նշանը, իսկ կառքի առաջից գնում էին քրիստոնյա հոգևորականները յերգելով **Կյուրիե էլեյսոն** (Տեր վողորմյա)։

Վերադարձը հեթանոսության յեվ յեկեղեցու վերջնական հաղթանակը։ 337 թ., յերբ մեռավ Կոնստանդինը, վոչ քրիստոնյաները այնուամենայնիվ կազմում էին դեռ ազգաբնակության մեծամասնությունը կայսրության մեջ. սակայն, զանազան կրոնների միջև բաժանված լինելով, նրանք ի վիճակի չէին միանալու՝ ընդհանուր կռիվ մղելու համար քրիստոնեյության դեմ։ Հնության կողմնակիցները մի հույս միայն ունեին, այն է՝ սպանիչ յերկպառակությունները քրիստոնյաների մեջ։ Կոնստանդինի վորդին՝ Կոնստանցիուսը հովանավորում էր արիոսականներին և աքսոր ուղարկեց ուղղափառության գլխավոր պաշտպան ալեքսանդրիացի յեպիսկոպոս Աթանասիո-

Քրիստոնյաների մեջ տեղի ունեցած վեճերի տեսարանը ներշնչեց Կոնստանդինի քեռորդուն՝ Յուլիանուսին փորձ անել վերածնելու հեթանոսությունը։ Յուլիանուսը սովորել էր Աթենքում և տարվել Պլատոնի փիլիսոփայությամբ և հունական արվեստով. քրիստոնյաները թվում էին նրան թանգագին և գեղեցիկ հնության քանդիչներ։ Կայսրը լավ էր հասկանում, որ եկեղեցու ուժը կայանում է եպիսկոպոսների իշխանության, քրիստոնեական ուսուցիչների ու քարոզիչների պերճախոսության և կրթության մեջ. այդ պատճառով նա աշխատում էր՝ նրանց դեմ կռվելու համար՝ կրթված մարդկանց նշանակել քուրմերի դատարկ մնացած տեղերը հին տաճարների մեջ. Նա ինքը գրքեր ու ճառեր գրեց քրիստոնյաների դեմ և միևնույն ժամանակ քրիստոնյաներին արգելեց դասավանդել դպրոցներում։

Յուլիանուսը հաջողություն չունեցավ։ Այն ժամանակ, երբ եկեղեցու կողմն էին տաղանդն ու համոզմունքի ջերմությունը, կայսրը չէր կարող հարկավոր մարդիկ գտնել լքված հեթանոսությունը կենդանացնելու համար։ Յուլիանուսի բոլոր ծրագրերն իդերև ելան նրա մահվամբ, որ տեղի ունեցավ պարսիկների հետ ունեցած մի ճակատամարտում (363 թ.)։

Կոնստանդինի մահից 50 տարի հետո եկեղեցու ղեկավարներն սկսեցին վոչնչացնել բոլոր վոչ-քրիստոնեական դավանանքները։ Միլանի հզոր եպիսկոպոս Ամբրոսիուսը պահանջեց, որ կայսրը հրաժարվի հռոմեական քրմապետի—պոնտիֆիկի տիտղոսից։ Սենատի շենքից դուրս բերին Հաղթության աստվածուհու արձանը ի նշան այն բանի, որ պետք է հրաժարվել կեղծ աստվածներին ծառայող հռոմեական հնության հպարտ ավանդություններից։ Միլանի եպիսկոպոսի թելադրությանց ամենաջերմեռանդ կատարողն էր Թեոդոսիուս կայսրը (379 թ. սկսած Արևելքի կառավարիչն էր, 394 թ., իր մահից մի տարի առաջ, միավորեց ամբողջ կայսրությունը)։ Նա արգելեց զոհաբերություններ կատարել վոչ միայն հրապարակով, այլ և մասնավոր տներում. քուրմերը կորցրին իրենց բոլոր իրավունքները. տաճարներին պատկանող հողերն ու թանգագին իրերը հարքունիս գրավվեցին։ Տաճարների մեջ խաչ բարձրացրին և նրանց քրիստոնեական եկեղեցիներ դարձրին։

Այսպես՝ Պարթենոնն Աթենքում դարձավ աստվածամոր եկեղեցի։ Սերապիսի մեծ սրբարանը Ալեքսանդրիայում կատարյալ կործանման ենթարկվեց։

Թեոդոսիուսը հալածում էր նույնպես բոլոր նրանց, վորոնք շեղվում էին Նիկիո ժողովի հաստատած հավատո հանգանակից։ Արիոսականներից գրավվեցին եկեղեցիները. կայսերական հրովարտակով հերետիկոսների ժամերգությունը սրբապղծություն հայտարարվեց։ Ամբրոսիուսն այն միտքն էր պաշտպանում, որ խղճի գործերում հոգևորականությունը դատում է անգամ կայսրին և այդպիսի դատի որինակ տվեց։ Մակեդոնական մի մեծ քաղաքում՝ Թեսսալոնիկում (Սալոնիկում) գրգռված ամբոխն սպանել էր կայսերական զվարդիայի պետին։

Սարսափելի բարկացած Թեոդոսիուսը հրամայեց փակել ժողովուրդը կրկեսի մեջ, ուր և կոտորել տվեց միքանի հազար մարդ։ Յերբ Թեոդոսիուսը դրանից հետո Միլան վերադարձավ, Ամբրոսիուսը թույլ չտվեց նրան եկեղեցի մտնելու. կայսրն ստիպված եղավ բոլորի առաջ ապաշխարել իր կատարած արյունոտ գործի համար։

Հին պատմության վախճանը։ Կոնստանդինի ժամանակից ի վեր հռոմեական սահմանի վրա սկսեցին երևալ նոր գերմանական ցեղեր՝ երկաթե լավ զենքով զինված. առանձնապես աչքի էին ընկնում Հռենոսի վրա **Ֆրանկները**, Դանուբի վրա՝ **գոթերը**։ Վտանգից ազատվելու միակ միջոցն էր թողնել բարբարոսներին կայսրության սահմանները, վերցնել նրանց հռոմի ծառայության մեջ և նրանցից կազմել պատերազմական սահմանը։ Այդպես վարվեց Թեոդոսիուսը գոթերի հետ. երբ նրանք ներս խուժեցին Դանուբի և Բալկանների վրայով, ջարդեցին և սպանեցին նրա նախորդին Ադրիանուպոլսի տակ տեղի ունեցած ճակատամարտում, նա ակամայից հարկադրված եղավ հաղթողներին բնակեցնել հռոմեական պրովինցիայի հողի վրա և նրանց ձեռքը տալ կալվածները ճորտերի հետ միասին. գոթերն սկսեցին կայսրության **Ֆեդերատներ**, այսինքն դաշնակիցները համարվել։

Դա մի շատ վտանգավոր որինակ էր։ Գերմանական մի ցեղի հաջողությունը գրգռեց մյուսների ագահությունն ու նախանձը։ Գոթերի ետևից ներս խուժեցին նոր նվաճողներ, ձգտելով նույնպիսի եղանակով հաստատվել կայսրության սահմաններում։ Թեոդոսիուսի որդիք (Թեոդոսիուսը մեռավ 395 թ.) արդեն ի վիճակի չէին պահելու գերմանացիներին սահմանների վրա։ Նրա մահից 15 տարի հետո գոթերը վերցրին «Հավիտենական քաղաքը»՝ Հռոմը և թալանեցին այն։ Միքանի տասնամյակի ընթացքում կայսրության գրեթե բոլոր պրովինցիաները, բացառությամբ միայն Փոքր Ասիայի, Սյուրիայի և Յեգիպտոսի, հեղեղվեցին բարբարոսների հորդաներով, և կայսրը, ապաստան փնտռելով Կոստանդնուպոլսում, ստիպված էր նրանց թողնել ամբողջ Արևմուտքը։

Բարբարոսները միայն վոսկին, արծաթն ու զենքն էին գրավում հռոմայեցիներից, հույներից և հնության մյուս կուլտուրական ժողովուրդներից. մնացած բոլորը՝ քաղաքային կյանքը, թատրոնն ու տնային կահավորությունը, դպրոցները, արվեստն ու գրականությունը միանգամայն խորթ մնացին նրանց։

Յերկու դարի (200—400) ընթացքում տեղի ունեցած անընդհատ արշավանքներից քայքայվեց հույների, հռոմայեցիների, աֆրիկացիների, սյուրիացիների կուլտուրան, կրթության մակարդակն ընկավ, քաղաքները վայրենացան։ Խուժելով կայսրության ներսը, վայրենիները վերջացրին կենսական հարմարությունների և լուսավոր հասկացողությունների կործանումը։ Հին կուլտուրայի ժողովուրդները կորցրին իրենց ինքնուրույնությունը, սկսեցին կորչել նորեկների մեջ։

Այստեղ վերջանում է **հին ժողովուրդների պատմությունը** և սկսվում է միջին, հյուսիսային և արևելյան Յեվրոպայից դուրս յեկող նոր ժողովուրդների՝ կելտերի, գերմանացիների, սլավոնների պատմությունը. նրանց ընդառաջ Առաջավոր Ասիայից դուրս են գալիս նույնպես նոր ժողովուրդներ՝ արաբները, թուրքերը։ Այն ժամանակ, երբ յեվրոպական բարբարոսները քրիստոնեյություն են ընդունում, նոր արևելյան ժողովուրդները նույնպես ընդունում են մոնոթեիստական (միաստվածայնական) հավատ՝ իսլամը։ Յեվ թե նրանց և թե սրանց համար սկսվում է մի նոր կյանք, որ շատ կողմերով նման չէ հնության կենցաղին և կուլտուրային։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
անվան
Публичная библиотека

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Եջ.
I.	Քարադարը Յեվրոպայում	3
II.	Հին Արևելքի մեծ պետությունները	16
III.	Հին Հունաստանը	54
IV.	Հույները և պարսկական պետությունը	69
V.	Աթենքը հինգերորդ դարում Ք. ծ. առաջ	88
VI.	Հույներն Արևելքում. 400—100 Ք. ծ. առաջ	108
VII.	Հռոմեական պետության սկիզբը	122
VIII.	Հռոմը, Կարթագենը և Հունաստանը	133
IX.	Հանրապետության վախճանն ու կայսրության սկիզբը Հռոմում	152
X.	Հռոմեական կայսրությունը և քրիստոնեությունը	173

գինն է 1 ռ. 40 կ.

ՀՀ Ազգային գրադարան